

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԺԱՌԱ ՎԵՐՈ



ԼՈՒՄՆԻ ՇՈՒՐԳԸ



ՀԱՅՊԵՏԵՐԱՏ



30 MAY 2011

ՀԱՅՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

84 Ա.

4-46

ար.

ԺՅՈՒԼ ՎԵՌՆ

ԼՈՒՍՆԻ ՃՈՒՐՁԸ

«Յերկրից դեպի լուսին» վեպի յերկրորդ մասը

Յաներենից բարգմանեց՝  
Ս. ՏերստուրՅԱՆ

ՀԱՅՐՈՅԱԿԱՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1940

Ժյուլ Վենտի այս վեպի քարգմանությունը համապատասխան է ՀՀԿԸ Կենտկոմին կից «Մանկաբանի» 1937 թ. հքատարակությամբ:



305\*  
41

ЖЮЛЬ ВЕРН  
Вокруг Луны  
Армгиз, Ереван, 1940

## Գլուխ 1


### ՅԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԸ ՏԱՍՆ ԱՆՑ ՔՍԱՆ ՐՈՌԵՑԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՍՆ ԱՆՑ ՔԱՌԱՍՈՒԽ ՅՈԹ ՐՈՌԵ

Ժամի ուղիղ տառին, Միշել Արդանը, Բարբիկենն ու Նիկոլը հրաժեշտ տվին իրենց յերկրային բարեկամներին։ Այս յերկու չները, վորոնք հատկացված եյլն լուսնի վրա չների ցեղն առաջացնելու համար, արդեն տեղափոխվել եյլն արկի մեջ։ Յերեք ուղևորները մոտեցան չուգունի վիթխարի խողովակի բացվածքին, մի վերամբարձ նրանց իջեցրեց մինչև արկի կոնաձև պաղաթը։

Այնուղից նրանք մի անցքի միջոցով մտան ալյումինի վառ լոնի մեջ։ Վերամբարձի պարանները դրսից անջատվեցին, կուլումբիադի բերանն խկույն ազատվեց բոլոր փայտե մասերից։

Արկի մեջ տեղափորված նիկոլի ու իր ընկերների առաջին գործը յեղալ արկի անցքը փակել մի ամուր մետաղե տախտակով, վոր ներսից ամբացվում եր ուժեղ պառատակներով։ Ուրիշ նմանորինակ տախտակներ ամուր փակում եյլն լուսամուտների վոսպաճե առակիները։ Ուղևորները, ամեն կողմից պինդ փակված մետաղե բանտում, թաղվեցին խոր մթության մեջ։

— Ուրեմն այժմ, սիրելի բարեկամներ, — ասաց Միշել Արդանը, — մենք մեր տանն ենք, յես լավ ծանոթ եմ տնային գործերին։ Ամենից առաջ, պետք է հնարավոր վեղածին չափողովել մեր նոր բնակարանից ու տեղափորվել ինչպես հարկն է։ Նախ և առաջ մտածենք ավելի պարզ տեսնելու մասին։ Սատանան տանի, ողային գաղը մի՞թե նրա համար ե, վոր մենք իւրուղների նման ապրենք։



Ֆրանսիացին բոցավառված լուցկին մոտեցրեց գաղի կտուցին:

Այդ խոսքերից հետո, անհոգ Փրանսիացին մի լուցկի քսեց կոչկի կրունկին, բոցավառված լուցկին մոտեցրեց մի կտուցի, վորի մեջ գտնվում եր լուսավորող գազը, վորը միաժամանակ կարող եր լուսավորել ու տաքացնել արկը հարյուր քառասուն չորս ժամ, այսինքն վեց որ, վեց դիւներ:

Դազը բոցավառվեց: Արկի ներսը լուսավորվեց և ուղևորները տեսան մի լավ կահավորված սենյակ, պատերը զարդարված գեղեցիկ թափշով. սենյակն ուներ կամարաձև առաստաղ, պատերի մոտ դրված ելին շրջանաձև բազմոցներ:

Սենյակում յեղած բոլոր իրերը, — զենք, զործիքներ, ամանեղեն, — պինդ ամրացված ելին նրանց համար հատկացված տեղերում և փաթաթված ելին բամբակով, վորպեսզի կարողանային գիմանալ մեկնման պահին սոսաջանալիք ցնցումին: Մարդկային բոլոր հնարավոր միջոցները ճեռք ելին առնված այլպիսի մի հանդուզն ճեռնարկություն հաջող կերպով գլուխ բերելու համար:

Միշել Արդանն ամեն ինչ զննեց և հպյունեց, վոր դուռ և նոր բնակարանից:

— Սա մի բանտ ե, — ասաց նա, — բայց մի բանտ, վոր ճամբորդում ե, և յեթե հնարավոր լիներ լուսամուտից դուրս նայել, յես հոժարությամբ հարյուր տարվա ճանապարհորդության պայման կկապեցի: Դու ծիծաղում ես, Բարբիկեն: Զվնի՞ թե մտածում ես, վոր այս բանտը կարող ե մեր գերեզմանը լինել: Գերեզմա՞ն, թող լինի, բայց յես այն չեմ փոխի Մոհամեդի գերեզմանի հետ, վոր սավառնում ե անհունության մեջ, բայց առաջ չի շարժվում:

Մինչդեռ Միշել Արդանը այլպիս խոսում եր, Բարբիկենն ու Նիկոլը վերջին պատրաստություններն ելին տեսնում:

Յերբ յերեք ուղևորները վերջնականացես վակվեցին արկի մեջ, Նիկոլի խրոնոմետրով ժամը տասն անց ել քսան րոպե: Խրոնոմետրն ուղղել ելին ինժեներ Մերչիզոնի խրոնոմետրի վրա: Բարբիկենը նայեց նրան ու ասաց:

— Բարեկամներ, ժամը տասն անց ե քսան րոպե: Ժամը տասն անց քառասուն յոթ րոպեյին Մերչիզոնը բաց կլոպնի ելեկտրական կայծն ույն լարով, վոր միացված ե կոլումբիակի պայմանութիւն նյութի հետ: Ճիշտ այդ բոպեյին մենք կհեռանանք

մեր յերկրագնդից : Ուրեմն զեռմու քսան յոթ ըովել կմնանք յերկրի վրա :

— Քսան վեց ըովել տասյերեք վայրկյան , — պատասխանեց ճշտապահ Նիկոլը :

— Լավ ուրեմն , — բացականչեց Միշել Արդանը ուրախ արամաղբությամբ , — քսան վեց ըովելում շատ բան կարելի յի անել : Կարելի յէ վիճաբանել բարոյական և քաղաքական ամենաւուրջ հարցերի մասին ու նույնիսկ լուծել այդ հարցերը : Լավ դործածված քսան վեց ըովեները ավելի թանկ արժեն , քան թե իդուր անցած քսան վեց տարիները : Պասկալի կամ նյուտոնի մի քանի վայրկյանները ավելի թանկ արժեն , քան թե տիմարների և դատարկապորտների մի ամբողջ բաղմության վողջ կյանքը ...

— Իսկ ի՞նչ ե քո յեզրակացությունը , համբանական խոսող . . . — Հարցը Բարբիկենը :

— Իմ յեզրակացությունն այն ե , վոր մենք ունենք քսան վեց ըովել , — պատասխանեց Արդանը :

— Միայն քսան չորս , — ասաց Նիկոլը :

— Թող լինի քսան չորս , յեթե պնդում եք , Հարդելի կապիտան , — պատասխանեց Արդանը , — քսան չորս ըովել , իսկ այդ ժամանակամիջոցում կարելի յէ քննարկել . . .

— Միշել , — ասաց Բարբիկենը , — մեր ուղևորության ընթացքում մենք ժամանակ կունենանք քննարկելու ամենակարեռ հարցերը : Իսկ այժմ զրադիմենք մեկնումով :

— Միշել պատրաստ չենք :

— Անկանկած , ամեն ինչ պատրաստ ե . սակայն անհրաժեշտ է նորից մի շարք միջոցներ ձեռք առնել , վորպեսզի հնարավոր յեղածին չափ նվազեցնենք առաջին ցնցումը :

— Բայց միշել մոռացել եք պատերի մեջ գտնված ջրի մասին , վորի առածկականությունը մեղ պիտի պաշտպանի ցընցումից :

— Հույս ունեմ , վոր կպաշտպանի , — մեղմորեն պատասխանեց Բարբիկենը , — բայց այնքան ել վստահ չեմ :

— Ա՛հ , ինչ պարզամիտն ե , — բացականչեց Միշել Արդանը . . . «Հույս ունի . . . » «Վստահ չե . . . » Յել նա սպասեց այն բոսելին , յերբ մենք արդեն բանտարկված ենք , այս վողբալի խոստովա-

նությունն անելու համար : Իսկ յես պահանջում եմ ինձ թույլ տալ խալույն հեռանալու այստեղից :

— Բայց ի՞նչ միջոցով պիտի դուրս գաք այստեղից , — Հարցը Բարբիկենը :

— Ճիշտ ե , — ասաց Միշել Արդանը , — դժվար գալ : Մենք գտնվում ենք գնացքում և քսանչորս ըովելից կը-ըստենք կոնդուկտորի սուլիչի ձայնը . . .

— Քսան ըովելից , — ուղղեց Նիկոլը :

Մի քանի վայրկյան յերեք ուղևորները միմյանց նայեցին , ապա դիմուցին իրենց հետ յեղած իրերը :

— Ամեն ինչ իր տեղումն ե : Այժմ պետք ե վորոշել , թե ինչպես դիրք պետք ե ընդունենք , վորպեսզի կարողանանք դիմանալ կրակոցի ցնցումին , — ասաց Բարբիկենը : — Մեր դիրքից շատ բան ե կախված . պետք ե միջոցներ ձեռք առնել , վորպեսզի արյունն ուժեղ չխփի մեր գլխին :

— Ճիշտ ե , — ասաց Նիկոլը :

— Վոր արդակու ե , — պատասխանեց Միշել Արդանը , վորը ճիշտ պատքաստ իր գործնականը միացնելու խոսքին , — կրկեսի կլունի նման գլխիվայր կանգնենք :

— Վո՞չ , — ասաց Բարբիկենը , — ավելի լավ ե կրկեսի վրա պառկենք , այդպիսով ավելի լավ կրկիմադրենք ցնցումին : Նկատի ունեցեք , վոր արկի մեկնման ըովելիցն համարյա միենույն բանն ե , թե մենք արկի մեջ ենք , թե արկի առաջ :

— Յեթե «համարյա» միենույն բանն ե , ուրեմն յետ շատ հանդիսաւ եմ , — ասաց Միշել Արդանը :

— Իսկ դուք , Նիկոլ , հաստատո՞ւմ եք իմ կարծիքը , — Հարցը Բարբիկենը :

— Կատարելապես , — պատասխանեց կապիտանը : — Դեռևս մնում ե տասներեքուկես ըովել :

— Մեր Նիկոլ մարդ չե , — բացականչեց Միշել Արդանը , — այլ վայրկյաններ ցույց տվող խրոնոմետր . . .

Բայց ընկերներն այլս նրան չեցին լուս և աներևակայելի ստուգությամբ վերջին պատրաստություններն ելին տեսնում : Նրանք կարծեն յերկու ծշտապահ ուղևորներ լինեցին , վորոնք ջանք են թափում վագոնում հնար յեղածին չափ լավ տեղավորվել :

Արկի մեջ դրված եյին յերեք հաստ ու հաստատուն ներք-նակներ : Նիկոլը և Բարբիկենը նրանց քաշեցին մեջ տեղ : Դը-րանց վրա պիտի պառկեցին յերեք ուղևորները մեկնումից մի քանի րոպէ առաջ :

Այդ պահին անհանդիսաւ Արդանը անվերջ շարժվում, պարտ-վում եր նեղ բանտի մեջ, ինչպես վայրի դադանը վանդակում, խոսակցելով շնկերների և զրուցելով շների հետ, վորոնց անվա-նել եղ Դիանա և Արքանյակ :

— Շատ լավ, կասկածան, չի անցնի մի քառորդ ժամ, և դու ստիպված կլինես վճարելու նախագահին իննը հազար դո-լար . չորս հազարը նրա համար, վոր կոլումբիակը չպայթեց, և հինգ հազարը նրա համար, վոր արկը կթուչի ողում ավելի քան վեց մղոն :

— Ի՞նչ կա վոր, դուրսները դրամնումս են, — պատասխա-նեց Նիկոլը, ձեռքը խիելով գրավանին, — յես սիրով կվճարեմ :

— Հե՛յ Դիանա, հե՛յ Արքանյակ, մոտ յեկեք, — կանչում եր նա : Դուք կուսնի շներին պետք է ցույց տաք Յերկրի շների շնորհքը : Վորքա՞ն սիտի փառավորվի շների ցեղը : Սատանան տանի : Յեթե մեղ հաջողվի վերադառնալ, մեղ հետ կը բերենք մի նոր ցեղ, լուսնային ցեղից, վոր մեծ աղմուկ կրաքացնի :

— Կը բերենք, յեթե կուսնի վրա շներ կան, — ասաց Բար-բիկենը :

— Անկառկած կան, — վատահ շեշտով ասաց Միշել Արդա-նը, — այնտեղ կան ե՛ ծիեր, ե՛ կովեր, եշեր, հավեր : Գրադ կդամ, վոր այնտեղ հավեր կան :

— Լա՛վ, հարյուր դուրսով գրադ կդամ, վոր հավեր չը-կան, — ասաց Նիկոլը :

— Համաձայն եմ, կապիտան, — պատասխանեց Արդանը Նիկոլի ձեռքը սեղմելով : Բայց չմոռանանք, վոր դու արդեն յերեք դրազում տարմեցիր, հակառակ քո դուշակության, արկի պատրաստման համար անհրաժեշտ գումարի ճարվեց, ձուլման դործողությունը հաջող անցավ և վերջապես կոլում-բիադի հրազդնման գործողությունը կատարվեց առանց վտան-դի : Այդպիսով դու կորցրիր ընդամենը վեց հազար դոլար :

— Այս, կորցրի, — հաստատեց Նիկոլը, — Ժամի 10-ը 37 րոպէ և 6 վայրկյան :

— Նիկոլ, դու չափազանց ճշտապահ և բարեխիղճ մարդ ես, իսկ ինձ յերբեք չի հաջողվել այլպիսին լինել : Բայց թույլ տուր ինձ ասել, վոր դու մի շարք դրադներ բռնեցիր, վորոնք քեզ համար շատ աննպաստ եյին :

— Ինչո՞ւ, — հարցրեց Նիկոլը :

— Վորովհետեւ յեթե դու շահես, ուրեմն կոլումբիադը պետք ե պայթի, նրա հետ ել արկը, իսկ այդ դեպքում Բարբի-կենն ի վիճակի չի լինի քեզ վճարելու տարված դումարը :

— Իմ գումարը դրված ե Բալտիմորի բանկում, — ասաց Բարբիկենը, — և յեթե Նիկոլը զոհվի, վոզը կստանան նրա ժառանգները :

— Ե՛ս, ինչպիսի զործնական մարդիկ եք դուք, — բացա-կանչեց Միշելը : — Յես հիանում եմ ձեր վրա, բայց ձեզ չեմ հասկանում :

— Ժամը տասն անց ե քառասուն յերկու րոպէ, — ասաց Նիկոլը :

— Մնում ե միայն հինգ րոպէ, — պատասխանեց Բարբի-կենը :

— Այս, ընդումենը հինգ րոպէ, — բացականչեց Միշել Ար-դանը : Այսպիսով, մենք բանտարկված ենք արկի մեջ . 300 մետր յերկարությամբ թնդանոթի խորցում : Յեվ այս արկի տակ կա հարյուր հիսուն տոնն պիրոքսիլին, վորի ուժը հա-վասար և 600 տոնն սովորական վառողի ուժին : Յեվ մեր բա-րեկամ Մերչիզոնը խրոնոմետրը ձեռքին, հայացքը սլաքին ուղղած, մատն ելեկտրական կոճակին դրած, հաշվովի և վայրիլյաններն ու պատրաստվում ե մեղ ուղարկել միջուռքա-կային անհունության մեջ...

— Բավական ե, Միշել, բավական ե, — ասաց Բարբիկենը լուրջ ձայնով : Պատրաստվենք : Մի քանի վայրկյան միայն ունենք մեր առաջ... Տվեք ձեր ձեռքը, բարեկամներ :

— Այս, մի քանի վայրկյան միայն, — բացականչեց Միշել Արդանը, վոր այդ միջոցին ավելի յեր հուզված, քան ցույց եր տալիս :

Երեք հանդուզն ընկերները միմյանց ձեռք սեղմեցին : Միշել Արդանն ու Նիկոլը պառկեցին ներքնակների վրա :

Արկի մեջ դրված եյին յերեք հաստ ու հաստատում ներք-  
նակները : Նիկոլը և Բարբիկենը նրանց քաշեցին մեջ տեղ : Դը-  
րանց վրա պիտի պառկեցին յերեք ուղևորները մեկնումից մի  
քանի բոպե առաջ :

Այդ պահին անհանդիսատ Արդանը անվերջ շարժվում, պլատ-  
վում եր նեղ բանտի մեջ, ինչպես վայրի դադարնը վանդակում,  
խոսակցելով ընկերների և զրուցելով չների հետ, վորոնց անվա-  
նել եր Դիանա և Արքանյակ :

— Շատ լավ, կապիտան, չի անցնի մի քառորդ ժամ, և  
դու ստիպած կլինես վճարելու նախադաշին իննը հազար դո-  
լար . չորս հազարը նրա համար, վոր կոլումբիադը չպայթեց,  
և հինգ հազարը նրա համար, վոր արկը կթոչի ողում ավելի  
քան վեց մղոն :

— Ի՞նչ կա վոր, դորարները դրավանումն են, — պատասխա-  
նեց Նիկոլը, ձեռքը խիելով գրավանին, — յես սիրով կվճարեմ :

— Հե՞յ Դիանա, հե՞յ Արքանյակ, մոտ յեկեք, — կանչում  
եր նա : Դուք Լուսնի չներին պետք է ցույց տաք Յերկրի չների  
չնորհքը : Վորքա՞ն պիտի փառավորվի չների ցեղը : Սատանան  
տանի : Յեթե մեղ հաջողվի վերադառնալ, մեղ հետ կրերենք  
մի նոր ցեղ, լուսնային ցեղից, վոր մեծ աղմուկ կրաքացնի :

— Կրերենք, յեթե Լուսնի վրա չներ կան, — ասաց Բար-  
բիկենը :

— Անկասկած կան, — վստահ շեշտով ասաց Միշել Արդա-  
նը, — այնտեղ կան ե' ձեեր, ե' կովեր, եշեր, հավեր : Գրադ  
կդամ, վոր այնտեղ հավեր կան :

— Եա՛վ, հարյուր դոլարով գրադ կդամ, վոր հավեր շւ-  
կան, — ասաց Նիկոլը :

— Համաձայն! Իմ, կապիտան, — պատասխանեց Արդանը  
Նիկոլի ձեռքը սեղմելով : — Բայց շմոռանանք, վոր դու արդեն  
յերեք դրագում տարվեցիր . Հակառակ քո գուշակության,  
արկի պատրաստման համար անհրաժեշտ գումարի ճարվեց,  
ձուլման դործողությունը հաջող անցավ և վերջապես կոլում-  
բիադի հրազդնման դործողությունը կատարվեց առանց վտան-  
գի : Այդպիսով դու կորցրիր ընդամենը վեց հազար դոլար :

— Այս, կորցրի, — հաստատեց Նիկոլը, — ժամի 10-ը 37  
բոպե և 6 վայրկյան :

— Նիկոլ, դու չափազանց ճշտապահ և բարեխիղճ մարդ  
ես, իսկ ինձ յերեք չի հաջողվել այդպիսին լինել : Բայց թույլ  
տուր ինձ ասել, վոր դու մի շարք դրազներ բռնեցիր, վորոնք  
քեզ համար շատ աննպաստ եյին :

— Ինչո՞ւ, — հարցրեց Նիկոլը :

— Վորովհետեւ յեթե դու շահես, ուրեմն կոլումբիադը  
պետք ե պայթի, նրա հետ ել արկը, իսկ այդ դեպքում Բարբի-  
կենն ի վիճակի չի լինի քեզ վճարելու տարված դումարը :

— Իմ գումարը դրված և Բարբիմորի բանկում, — ասաց  
Բարբիկենը, — և յեթե Նիկոլը զոհվի, վորը կստանան նրա  
ժառանդրը :

— Ե՞ս, ինչպիսի գործնական մարդիկ եք դուք, — բացա-  
կանչեց Միշելը : — Յես հիանում եմ ձեր վրա, բայց ձեզ չեմ  
հասկանում :

— Ժամը տասն անց և քառասուն յերկու բոպե, — ասաց  
Նիկոլը :

— Մնում ե միայն հինգ բոպե, — պատասխանեց Բարբի-  
կենը :

— Այս, ընդամենը հինգ բոպե, — բացականչեց Միշել Ար-  
դանը : Այսպիսով, մենք բանտարկված ենք արկի մեջ . 300  
մետր յերկարությամբ թնդանոթի խորքում : Յեկ այս արկի  
տակ կա հարյուր հիսուն տոնն պիրոքսիլին, վորի ուժը հա-  
վասար և 600 տոնն սովորական վատողի ուժին : Յեկ մեր բա-  
րեկամ Մերչիզոնը խրոնոմետրը ձեռքին, հայցքը սլաքին  
ուղղած, մատն ելեկտրական կոճակին դրած, հաշվովմ և  
վայրկյաններն ու պատրաստվում ե մեղ ուղարկել միջմոլորա-  
կային անհունության մեջ...

— Բավական ե, Միշել, բավական ե, — ասաց Բարբիկենը  
լուրջ ձայնով : Պատրաստվենք : Մի քանի վայրկյան միայն  
ունենք մեր առաջ... Տվեք ձեր ձեռքը, բարեկամներ :

— Այս, մի քանի վայրկյան միայն, — բացականչեց Միշել  
Արդանը, վոր այդ միջոցին ավելի յեր հուզված, չան ցույց  
եր տալիս :

Եերեք հանդուզն ընկերները միմյանց ձեռք սեղմեցին:  
Միշել Արդանն ու Նիկոլը պառկեցին ներքնակների վրա :

— ժամը տասն անց և քառասուն յոթ րոպե, — ՀՀնջաց  
Նիկոլը:

Մնում եր միայն քսան վայրկյան: Բարբիկենն իսկույն  
դազը հանգցրեց ու պառկեց ընկերների կողքին:

Լոռովունն ընդհատվում եր միայն խրոնոմետրի չկէլո-  
ցից:

Հանկարծ մի ահռելի ցնցում տեղի ունեցավ և արկը յեն-  
թարկվելով պիրոքսիլինի բռնկումից դոյացած վիթխարի քանա-  
կությամբ դազերի մնշմանը, թռավ անհունության մեջ:

## ԳԼՈՒԽ II

### ԱՌԱՋԻՆ ԿԵՍ ԺԱՄԸ

Ի՞նչ պատահեց: Ի՞նչ հետևանք ունեցավ այդ ահռելի ցըն-  
ցումը: Արկը կառուցողների հնարագիտությունը հաջողվե՞լ եր  
արդյոք: Արդյոք ցնցումը մեղմացե՞լ եր չնորհիվ զազանակնե-  
րի, ներքնակների, փափուկ արգելակների, ջրային բարձերի:  
Արդյո՞ք հնարավոր յեղել եր հաղթահարել ահռելի հարվածից  
առաջացած այդ սոկալի ցնցումը: Այդ հարցերով եյին դրազ-  
ված: ու մտահոգված այս հուզիչ տեսարանը զիտող հազարա-  
վոր ականատեսներ: Նրանք մոռացել եյին ուղևորության նը-  
պատակը և միայն ուղևորների մասին եյին մտածում: Ցեղեւ նը-  
րանցից մեկն ու մեկը, —որինակի համար Մաստանը, — մի  
հայացք զգեր արկի մեջ, ի՞նչ կտևներ:

Վոչ մի բան: Արկի մեջ անթափանցելի խավարն եր տի-  
րում: Բայց նրաց ցիլինդրակոնաձև պատերը հրաշալլորեն  
դիմադրել եյին ցնցումին: Վոչ մի ճեղքվածք, վոչ մի ջարդ-  
վածք, վոչ մի ձեւափոխություն: Սքանչելի արկը ամեննենին չեր  
վնասվել վառողի ահռելի պայթյունից, վոչ ել վերածվել առ-  
լումինի անձրիկ, ինչպես վախենում եյին վոմանք:

Մի խոսքով արկի ներսում համարյա վոչ մի անկարգու-  
թյուն: Մի քանի իրեք միայն ուժեղ թափով դեղի առաստաղն  
եյին թռել, բայց ամենից կարևորները ցնցումից համարյա չե-  
յին վնասվել:

Հատակի վրա անշարժ տարածվել եյին յերեք մարդկային  
մարմիններ: Շնչո՞ւմ եյին արդյոք Բարբիկենը, Միշելն ու Նի-  
կոլը: Թե՞ արկը վերածվել եր մի մետաղ դաշտաղի և դեղի  
անհունություն եր տանում յերեք դիակներ...»

Անցավ մի քանի բուկե: Բայց ահա այդ մարմիններից մեկը չարժվեց, ձեռքերը չարժվեցին, դլուխը բարձրացավ: Միշել Արդանը ծնկի յեկավ, մարմինը շփեց. բարձրաձայն մի «ա՛հ» արտասանեց և ասաց.

— Միշել Արդանը անմիաս ե. տեսնենք մյուսները:

Կտրիճ Փրանսիացին ուզեց կանդնել, սակայն չկապողացավ կանգնած մնալ: Գլուխը պտույտ եր կալիս, արյունը դիմին եր խփում ու կուրացնում նրան. Հարբած մարդու յեր նման:

— Ե՛հ, — ասաց ինքն իրեն, — կարծես թե յերկու շիշ կորտոնի դիմի յեմ խմել. միայն այն տարբերությամբ, վոր սա ամելի անդուրեկան է:

Ապա ձեռքը մի քանի անգամ ճակատին տանելով, քունքերը շփեց ու կանչեց.

— Նիկո՛լ, Բարբիկե՛ն:

Ապա յերկյուղով սպասեց: Վոչ մի ոպատասխան: Նույնիսկ չնշառության վոչ մի նշույլ: Նա կրկին կանչեց. դարձյալ լըռություն:

— Սատանան տանի, — ասաց Արդանը, — կարծես հինդերորդ հարկից պլիս վայր են ընկել: Վա՛հ, — ավելացրեց ոսկորական անխախտ վստահությամբ, — յեթե Փրանսիացին կարողանում է ծնկի յելնել, ամերիկացին անպարման վստաքի կը կանդնի: Բայց ամենից առաջ պարզենք դրությունը:

Միշել Արդանը զգում եր, վոր կյանքն արագորեն իրեն եր վերադասնում, արյունը հանդարտվում եր ու նորից կատարում իր սովորական շրջանառությունը: Կրկին մի ճիշ գործեց և կարողացավ պահել հավասարակշռությունը: Նա կարողացավ վտաքի կանդնել, գրանից մի լուցկի հանեց, վառեց ու մոտենալով գաղին, կրակ տվեց: Գաղն անմիաս եր մնացել ու չեր ցնդել: Յեթե ցնդած լիներ, Արդանը հոտից կզգար ու առանց վտանգի չեր կարող վատված լուցկին պահել զմղով լցված մթնոլորտի մեջ: Այդ գեեղքում գաղը տղի հետ խառնվելով, բոնկվող մի խառնուրդ կկազմեր ու պայթունը կլուացներ այն, ինչ վոր սկսել եր ցնցումը:

Հենց վոր արկը լուսավորվեց, Միշել Արդանը կացավ իր ընկերների մարմինների վրա: Նրանք պառկել եյին միմյանց վրա կարծես բոլորովին անկենդան: Նիկոլը վերեւումն եր, Բարբիկենը ներքեւում:

Արդանը բարձրացրեց կապիտանին, հենեց բաղմոցին և ամբողջ ուժով սկսեց տրորել նրա մարմինը: Հմտությամբ կատարված այս շփումը ուշքի բերեց նիկոլին: Նա աչքերը բացեց և խկույն գտավ իր սառնասրտությունը, բոնեց Արդանի ձեռքից, ապա շուրջը նայելով, ասաց.

— Իսկ Բարբիկե՞նը:

— Յուրաքանչյուրն իր հերթին, — պատասխանեց Արդանը, — յես քեզանից սկսեցի, վորովհետեւ դու վրան եյիր. այժմ անցնենք Բարբիկենին:

Նրանք յերկուսով բարձրացրին թնդանոթ-Ակումբի նախազահին ու պառկեցրին բազմոցի վրա: Ըստ յերեսոյթին Բարբիկենն իր ընկերներից ավելի յեր վնասվել: Արյունը հոսել եր, բայց Նիկոլը քննեց և տեսավ, վոր արյունը հոսել եր ուսի վրա առաջացած մի թեթև վերքից: Խոկույն վերքը մաքրեց ու կապեց:

Սակայն բավական ժամանակ Բարբիկենը չեր սթափվում: Նրա յերկու ընկերները մտատանջված, անվերջ շփում եյին նրա մարմինը:

— Շնչում ե, — ասաց Նիկոլը, ականջը Բարբիկենի կըրծքին դնելով:

— Մյո, — պատասխանեց Արդանը, — շնչում ե մի մարդու նման, վոր վորոշ չափով սովորել և այդ ամենուրյա գործողությանը: Շփենք, Նիկոլ, չփենք բոլոր ուժով:

Յեկ յերկուսով այնքան շիեցին, վոր Բարբիկենը վերջապես սկսեց ուշքի գալ:

Աչքերը բաց արեց, բարձրացավ, բոնեց յերկու բարեկամների ձեռքից և խկույն հարցրեց.

— Նիկո՛լ, մի՞թե թուչում ենք:

Նիկոլն ու Արդանը միմյանց նայեցին. Նրանք բոլորովին մոռացել եյին արկը. Նրանց առաջին հոգոը յեղել եր վոչ թե վաղոնի, այլ ուղեկորների մասին մտածել:

— Իսկապես մի՞թե թուչում ենք, — կրկնեց Միշել Արդանը:

— Թե՞ հանգիստ նստած ենք ֆլորիդայի հողի վրա, — չարցրեց Նիկոլը:

— Կամ Մեքսիկայի ծոցի հատակում, — ավելացրեց Միշել Արդանը:



Բարբիկենը իր ընկերներից ավելի յեր գնաովեր

— Այդ եր պակաս, — վո՞րտեղից հնարեցիր այդ, — բաշականչեց Բարբիկենը:

Իր ընկերների այս յերկու յենթաղը ըստներն իսկույն նրան դիտակցության բերին:

Ինչ ել վոր լիներ, առայժմ արկի զբության մասին վոչինչ չեր կարելի ասել: Նրա թվացող անշարժությունը և արտաքին աշխարհի հետ վորեւ հաղորդակցության բացակայությունը թույլ չելին տալիս լուծել այդ հարցը:

Թերեւ արկը սլանում եր անհունության մեջ, կամ գուցե մի կարծ ժամանակ առաջ սլանալուց հետո ընկել եր Յերկրի վրա, կամ Մեքսիկայի ծոցի մեջ: Նկատի ունենալով Ֆլորիդյան թերակղղու շատ նեղ լինելը, ավելի հավանական ե, վոր ընկել եր Մեքսիկայի ծովածոցում:

Դրությունը լուրջ եր և խնդիրը շատ հետաքրքրական: Պետք եր այդ խնդիրը լուծել, ինչքան կարելի յե շուտ:

Բարբիկենը սաստիկ հուզված եր, բայց կամքի ուժով Փիդիկական թուլությունը հաղթահարելով, վոտքի կանդեց և ուշադրությամբ ականջ դրեց: Դրսում բացարձակ լուսություն եր: Պատերն այնքան հաստ եյին, վոր յերկրից վոչ մի ձայն չեր կարելի լսելի լինել: Սակայն մի հանդամանք դրավեց Բարբիկենի ուշադրությունը, — արկի ներքին ջերմաստիճանը խիստ բարձրացել եր: Բարբիկենը պատյանից հանեց մի ջերմաչափի և նայեց աստիճաններին. ջերմաչափը ցույց եր տալիս Յելսիուսի 45 աստիճան:

— Այս, — բացականչեց Բարբիկենը, — այսո՛, մենք թըսչում ենք: Այս խեղդող ջերմությունն առաջանում է արկի պատերեց, արկի և ողի շփումից: Շուտով այս տաքությունը կը նվազի, վորովհետև մենք արդեն դատարկության մեջ ենք թոչում: Մենք այժմ շոգից խեղդվում ենք, բայց քիչ հետո սաստիկ ցրտի պիտի լինթարկվենք:

— Ուրեմն, — հարցրեց Միշել Արդանը, — քո կարծիքով մենք արդեն Յերկրի մթնոլորտից դո՞ւրս ենք յեկել:

— Անկասկած, Միշել, անկասկած: Տեսեք, այժմ ժամի տասն անց և հիսուն հինգ րոպե: Մենք թուանք ութ ըստի առաջ. յեթե մեր սկզբնական արագությունը շփման հետևանքով չպահանջ, միայն վեց վայրկյանում կանցնելինք յերկրագունդը շրջապատող մթնոլորտի տարածությունը:

— Շատ ճիշտ ե, — պատասխանեց Նիկոլը, — իսկ ձեր կարծիքով վորքա՞ն ե պակասել մեր արագությունը այդ շրջ-ման հետևանքով:

— Մի յերրորդականով, Նիկոլ, — պատասխանեց Բարբիկենը: Ճիշտ ե, այս նվազումը զդավի յէ, բայց համաձայն իմ հաշվիների, այդպես ե: Ուրեմն յեթե մեր սկզբանական արագությունը տասնմեկ հազար մետր ե, մթնոլորտից դուրս գալուց հետո այդ արագությունը կնվազի ու կհասնի յոթ հազար յերեք հարյուր յերեսուն յերկու մետրի: Ինչ ել վոր լինի, մենք արգեն անցել ենք այդ արագությունը...

— Յեզ բարեկամ Նիկոլը, — առաց Միշել Արդանը, — արդեն կորցրեց յերկու գրազները, — չորս հազար դուրսը նրա համար, վոր կոլումբիակը չպայթեց. Հինգ հազար դուրս նրա համար, վոր արկը բարձրացավ վեց մղոնից ավելի վեր: Դե՛, Նիկոլ, վճարիր:

— Նախ ստուգենք, — պատասխանեց կապիտանը, — ապա կվճարենք: Շատ համանական ե, վոր Բարբիկենի յենթագրությունները ճիշտ են և յս կորցրի ինն հազար դուրսը: Սակայն իմ մաքով մի ուրիշ յենթադրություն ե անցնում, վոր կարող ե վոչնչացնել դրազը:

— Վո՞րն ե այդ յենթադրությունը, — հաջողեց Բարբիկենը:

— Այդ յենթադրությունն այն ե, վոր այս կամ այն պատճառով կայծը վառողին չհասավ ու մենք չենք մեկնել Յերկրից:

— Եւե՛, կապիտան, — բացականչեց Միշել Արդանը, — այդպէսի յենթադրություն յս ինքս ել կարող եմ տնել. սա-կայն այդ յենթադրությունը լուրջ չե. հազար այն ցնցումը, վորը մեզ կիսամեռ արե՞ց. իսկ քո ուշազնաց լինե՞լը. իսկ նախազահի ուսի վե՞րքը:

— Համաձայն եմ, — պատասխանեց Նիկոլը, — բայց մի հարց ես:

— Լուսմ եմ, կապիտան:

— Դու լսեցի՞ր պայթյունի ձայնը, վոր ահուելի պետք ե միներ:

— Վոչ, — պատասխանեց Արդանը գարմացած, — իրոք, վոր չսեցի պայթյունի ձայնը:

— Իսկ դո՞ւք, Բարբիկեն:

— Յես ել չլսեցի:

— Ուրեմն, — հարցրեց Նիկոլը:

— Իսկապէս վոր տարրուինակ ե, — չնջաց նախագահը՝ ինչպէս ե, վոր չենք լսել պայթյունի ձայնը:

Յերեք բարեկամներն ել ապշած միմյանց նայեցին:

Այսուեղին յնչ վոր անբացատրելի յերկույթ կար: Արկը թռել եր, ուրեմն պայթյուն յեղել եր:

— Նախ և առաջ իմանանք, թե վորտեղ ենք, — առաց Բարբիկենը, — բաց անենք փեղկերը:

Այս գործողությունը շատ պարզ եր և իսկույն կատարվեց:

Աջ կողմի լուսամուտի արտաքին թիթեղը պահող պտուտակները կակույն թուլացան բանալիք ճնշման տակ. ձողիկները դուրս հրվեցին և ուտինե խոռվեցը խկույն փակեցին այն անցքը, վորի մեջ մտնում ելին նրանք; Արտաքին թիթեղը խկույն իջավ շարնիրի վրա և լուսանցքը ծածկող վոսպածե ապակին յերեսան յեկավ:

Նույն ձեր մի լուսամուտ ել արկի մյուս կողմում եր գտնվում, յերրորդն ել գմբեթի վրա, չորրորդը՝ հատկի մէջտեղը:

Այդպիսով կարելի յեր դիտել չորս տարբեր ուղղություններով, — յերկնակամարը կողմնակի լուսամուտներից, իսկ Յերկիրն ու լուսինը արկի վերեկի և ներքեկի լուսանցքներից:

Բարբիկենն ու յերկու ընկերները շտապ մոտեցան լուսամուտին: Լույսի վոչ մի ճառագայթ չեր խփում նրան: Արկը թաղված եր խոր մթության մեջ: Սակայն Բարբիկենը բացւկանչեցին կանչեց:

— Վո՞չ ընկերներ, մենք չենք ընկել Յերկրի վրա. Վո՞չ, մենք չենք խորասուզվել Մեքուկայի ծոցի հատակը: Այսո՛, մենք բարձրանում ենք անհօնության մեջ: Մի տեսեք, թե գիշերվա մթության մեջ ինչպես են փայլում աստղերը. նայեցեք ինչպէսի խավար ե մեր և Յերկրի միջն:

— Ուռու՞ս, ուռու՞ս — միաձայն բացականչեցին Միշել Արդանն ու Նիկոլը:

Իսկապէս թանձր խավարն ապացույց եր, վոր արկը թռ-



ուել եր Յերկրից, վորովհետեւ յերկրի մակերևույթը այդ միջոցին լուսավորվել եր լուսնի լույսով, ուղեռները կտեսնելին նրան, յեթե Յերկրի վրա լինելին: Այդ մթությունն ապացուց եր նաև, վոր արկն անցել եր մթնոլորտի շերտից, վորովհետեւ ողի մեջ ցըված լույսի ցուքը պիտի ընկներ մետաղե պատեզի վրա, վորը սակայն չեր յերեւում: Այդ լուսը պետք ե լուսավորեր պատուհանի ապակին, իսկ ապակին չեր լուսավորուած:

Այս կասկածել չեր կարելի: Քաջ ուղեռները մեկնել ենին Յերկրից:

— Յես ապավեցիր — ասաց Նիկոլը:

— Վորի համար չնորհավորում եմ ձեղ, — ասաց Արդանը:

— Ստացեք ինը հազար դոլարը, — ասաց կապիտանը գրբանից դոլարի թղթադրամներ հանելով:

— Ստացական ուղում եք, — հարցրեց Բարբիկենը, ստանալով դրամը:

— Յեթե ձեղ համար նեղություն չե, — պատասխանեց Նիկոլը, — այդպես ավելի որինական ե:

Բարբիկենը լուրջ ու սառնասիրտ, կարծես դրասենյակում լիներ, հանեց հուշատերը, մի թերթ մաքոր թուղթ պոկեց, մատիտով որինավոր մի ստացական դրեց, թվադրեց, ստորագրեց, կնքեց ու տվեց կապիտանին, վորն ստացականը խընամքով իր թղթադրամակի մեջ դրեց:

Միշել Արդանը դդակը հանելով դլուխը լուռ խոնարհեց ընկերների առաջ: Այդպիսով մի վորոշ ժամանակ այդքան խստապահանջ ձևականությունը նրա լեզուն կապել եր: Կյանքում այդ աստիճան «ամերիկյան» բան չեր տեսել:

Բարբիկենն ու Նիկոլը դործը վերջացնելով նորից մոտեցան լուսամուտին և դիտեցին համաստեղությունները: Յերկը ու Փոնի վրա աստղերը ցողում եին վառ կետերի նման: Լուսինն այդ կողմից չեր կարելի տեսնել, վորովհետեւ ընթանալով արեելքից դեպի արեմուտք, կամաց կամաց մոտենում եր զենիթին:

— Բայց ո՞ւր և լուսինը, — հարցրեց Միշել Արդանը, — միթե մեղանից փախչում ե:

— Հանգստացի՛ր, — ասաց Բարբիկենը, — մեր ապակա

բնակավայրն իր խսկական տեղումն ե, բայց այս կողմից մենք նրան չենք տեսնի: Բացենք մյուս լուսամուտը:

Յերբ Բարբիկենը պատրաստվում եր հեռանալ լուսամուտից, հակառակ կողմից լուսամուտը բաց անելու համար, հանկարծ նրա ուշադրությունը գրավեց մոտեցող մի փայլուն առարկա:

Այդ վիթխարի մի գունդ եր, վորի հսկայական չափերը չեր կարելի վորոշել: Գնդի Յերկրին դարձած մասը վառ լուսավորված եր: Կարծես մի փոքր լուսին լիներ, վոր մեծ լուսնի լույսն եր արտացոլում: Նա մեծ արգությամբ առաջ եր չարժվում և ըստ յերեւույթին Յերկրի բոլորքը մի շրջադիմ էր գծում, վորը կտրում եր թուշող արկի ճանապարհը: Այդ մարմնի առաջընթաց շարժումը լրացվում եր իր առանցքի վրա պտույտ դարձվի: Ուրեմն, իր շարժման ընթացքում նա չեր զանազանվում տարածության մեջ շարժվող բոլոր մյուս մարմիններից:

— Ի՞նչ բան ե սա, — բացականչեց Միշել Արդանը, — միթե մի ուրիշ արկ ե:

Բարբիկենը չպատասխանեց: Այդ հսկա մարմնի յերկալ նրան զարմացնում ու մտատանջում եր, կարող եր մի բաղխում առաջանալ, վորի հետևանքը շատ վողքավի կլինքի, — կամ արկը ճամբից կշեղվեր, կամ բաղխումը նրա թափը նվազեցնելով, նրան կցցեր Յերկրի վրա, կամ վերջապես այդ աստված արկը կըաշեր դեպի իրեն:

Բարբիկենն իսկուն հասկացել եր այս յերեք յենթաղքություններից մեկն ու մեկի հավանականությունը, վորի հետեւ վանքով, այսպես թե այնպես անհաջողության կրանվեր իր ձեռնարկումը: Միշել Արդանն ու Նիկոլը լուռ նայում ելին տարածության մեջ:

Գնդաձեւ մարմինը հետզհետեւ մոտենալով անընդհատ մեծանում եր և տեսողական պատրանքով թվում եր, թե արկը ուղանում է զեպի նա:

— Բայց ի՞նչ բան ե սա, — բացականչեց Միշել Արդանը, — յերկու գնացքներն այս բուլեյիս միմյանց կբաղխվեն:

Բնազրորեն ուղարկերը հետ քաշվեցին: Երանց յերկուզը շատ մեծ եր, բայց կարծ տեսեց: Հաղով մի քանի վայրկյան:

Յերկնային մարմինն անցավ արկից մի քանի հարյուր մետր հեռվից ու անհայտացալ, վոչ այնքան շարժման արագությունից, ինչքան այն պատճառով, վոր նրա զանդվածը հանկարծ ձուլեց տարածության խոր մթության մեջ:

— Բարի ճանապարհ, — բացականչեց Միշել Արդանը, միծ գոհունակությամբ խորը շունչ քաշելով: — Ինչպես, մի՛թ անհունությունն այնքան ընդարձակ չե, վոր մի փոքր դնդակ չկարղանա նրա մեջ աղաս շարժվել: Ո՞վ դիտե ինչ բան եր այդ հավակնուա զունդը, վոր քիչ եր մնում մեղ կալչեր:

— Յես զիտեմ, — ասաց Բարբիկենը:

— Սատանան տանի, ուու ամեն ինչ զիտես:

— Դա պարզապես բոլիտ <sup>Է</sup>), բայց վիթիարի մի բոլիտ, վորին Յերկիրն իր ձգողական ուժով պահում ե վորպես արբանյակ:

— Մի՞թե. ուրեմն Յերկիրը յերկու լուսին ունի:

— Այս, բարեկամ, յերկու լուսին, թեև սովորաբար ընդունված ե, վոր միայն մեկն ունի: Բայց այս յերկորդը լուսինն այնքան փոքր ե ու այնքան արագ ե ընթանում, վոր Յերկիրի բնակիչները չեն կարող տեսնել նրան: Միայն մի քրանսիացի աստղագետ, Պտին կարգապատավ հայտնաբերել նրա գոյությունը: Համաձայն նրա զիտողությունների, այդ բոլիտը Յերկիրի չուրջը պտույտ ե գալիս զարմանալի արագությամբ, — ընդամենը յերեք ժամ քանի զարմանալի արագությամբ, — ընդամենը յերեք ժամ քանի զարմանալի արագությամբ...

— Մի՞թե բոլոր աստղագետներն ել ընդունում են այդ մուրակի գոյությունը, — հարցրեց Նիկոլը:

— Վո՛չ, — պատասխանեց Բարբիկենը, — բայց յեթե նըրանք ել մեղ նման պատահէին դրան, այլևս չեյին կարող կասկածել: Իսկ յես կարծում եմ, թե չնորհիվ այդ բոլիտի, վոր մեղ այնքան վախեցրեց, մենք կարող ենք վորոշել մեր դերը տարածության մեջ:

— Ի՞նչպես, — հարցրեց Արդանը:

— Նրա հեռագործությունը հայտնի յե, և այն կետում, ուր մենք նրան հանդիպեցինք, մենք դանվում եյինք Յերկիրը

ուղիղ ութ հազար հարյուր քառասուն կիլոմետր հեռավորության վրա:

— Ա՛հ, — բացականչեց Միշել Արդանը, — ահա մի արագություն, վորի առաջ նսեմանում են մեր խեղձ Յերկիրի ձեպնթաց զնացքները:

— Անկասկած, — պատասխանեց Նիկոլը, նայելով իր իւրոնումներին, — այժմ ժամի տասնմեկն ե և մենք ամերիկյան հողից հեռացել ենք միայն տասներեք բողեւ առաջ:

— Բնդամենը տասներեք, — հարցրեց Բարբիկենը:

— Այս, — պատասխանեց Նիկոլը, — և յեթե մեր սկզբնական արագությունը ջարունակ տասնմեկ կիլոմետր լիներ, մենք մի ժամում մոտավորապես քառասուն հազար կիլոմետր կանցնեյինք:

— Այս բոլորը հրաշալի յե, խոսք չկա, — ասաց նախազար, — բայց մի հարց մնում ե անբացատրելի: Ինչո՞ւ մենք չսեցինք կոլումբիակի կրակոցի ձայնը:

Այդ հարցին պատասխանող չեղավ և խօսակցությունը դադարեց: Բարբիկենը մտածկու սկսեց իջեցնել յերկորդը լուսամուտի փեղկեռը: Այս գործողությունը հաջող անցավ և բացված լուսամուտից լուսնի լույսը արկի ներսը լուսավորեց սայածառ լույսով: Նիկոլը, խայողության համար, իսկույն հանգցրեց գազի լույսը, վոր ավելորդ եր, և նույնիսկ խանդարում եր դիտել միջմոլորակային տարածությունները:

Լուսնի սկսվառակի փայլում եր հրաշալի հստակությամբ: Նրա ճառագայթները, վորոնց այլևս չեր դիմադրում յերկրագնդի մշուշապատ մթնոլորտը, թափանցում եյին լուսամուտից և արկի ներսը վողողում արձաթափայլ ցոլքերով: Յերկնակարի սե վարագույրը կրկնապատկում եր լուսնի փայլը և լուսնը լույսը ցցրող այս դատարկության մեջ չեր մթազնում հարեան աստղերը: Այստեղ յերկինքը բոլորովին նոր տեսք եր ստացել, վոր անձանթ եր մարդկային աչքին:

Հասկանալի յե, թե մեր հանդուդն ուղերդները ինչպիսի հետաքրքրությամբ եյին նայում զիշերային լուսատույին, վոր իրենց ուղերդության կետ նպատակն եր:

Յերկիրի արբանյակն անզգալիորեն մոտենում եր զենիթին, այսինքն այն կետին, վորին պիտի հասներ մոտավորապես իննը-

<sup>1)</sup> Բոլիտ են կոչվում քարոտ կամ մետաղե այն զանդվածները, վորոնք յերեմն ընկնում են Յերկիրի վրա:

սուն վեց ժամ հետո : Նրա լեռները, դաշտերը և ամբողջ ուղի-  
վանկարը ավելի պարզ չելին յերևում, քան կարելի յեր տես-  
նել Յերկրի մի վորեն կետից, բայց դատարկ տարածության  
մեջ նրա լույսը թափվում եր անսովոր պայծառությամբ : Ըս-  
կալառակը շողջողում եր պլատինե հայելու նման :

Ուղևորներն արդեն մոռացել ելին Յերկրը, վոր փախչում  
եր միշտ ավելի հեռու :

Առաջինը՝ կատիտանը հիշեցրեց անհայտացող Յերկրի մա-  
սին :

— Այու, — պատասխանեց Միշել Արդանը, — չպետք է աղե-  
րախտ լինել : Քանի վոր հեռանում ենք Յերկրից, մի վերջին  
հայացք դցենք նրան : Մի անգամ ես նայենք Յերկրին :

Բարբիկենն իր ընկերոջ ցանկությունը բարվարարելու հա-  
մար սկսեց մաքրել արկի խորքում գտնվող լուսամուտը, վոր-  
տեղից կարելի յեր դիտել Յերկրը : Շարժական սկավառակը,  
վոր արկի ցնցումից հասել եր մինչև հատակը, հեշտությամբ  
քանդվեց : Նրա մասերը խնամքով հավաքվեցին պատերի մոտ.  
Կարող ելին նորից պետք դալ : Այդպիսով արկի ներքեմ մա-  
սում մի լուսամուտ հայտնվեց հիսուն սահմանիները . հաստու-  
թյամբ մի աղակիով : Աղակին ծածկվում եր ալիումինե մի կա-  
փարիչով, վորին պահում ելին մի քանի պտուտակներ : Վեր-  
ջիններս քանդվելով, կափարիչը բացվեց և կարելի յեղավ դի-  
տել դրսի աշխարհը :

Միշել Արդանը ծունկ չոքեց այդ լուսամուտի առաջ :  
Լուսամուտը մութ և անթափանց եր :

— Լավ, հետո՞ . բայց ո՞ւր և Յերկրը :

— Յերկրի՞րը, — ասաց Բարբիկենը, — ահա՞ այնտեղ ե :

— Ի՞նչ, մի՞թե այդ նեղ շերտն ե . այդ արծաթաղույն  
մաշիկը :

— Անկարած, Միշել : Չորս որից հետո Լուսինը լրիդ  
կլինի, այդ ժամանակ, յեր մենք նրան կհասնենք, Յերկրը  
բոլորովին կնորի : Այժմ նա մեղ յերեսում ե վորպես մի ձբդ-  
ված յեղջուր, բայց շուտով նա յել կանհայտանա և մի քանի  
որ Յերկրը կկորչի անթափանց սովերի մեջ :

— Ուրեմն ա՞յդ և Յերկրը, — կրկնում եր Միշել Արդա-

նը, անհաղորեն դիտելով հայրենի մոլորակի այդ փոքր շեր-  
տը :

Բարբիկենի բացատրությունը ճիշտ եր : Յերկրը՝ արկի  
համեմատությամբ, մասնում եր իր վերջին փուլը : Նա իր ութ-  
յակում եր և յեղջյուրի եր նմանվում յերկնքի մութ փոնի  
վրա : Նրա լույսը մթնոլորտի հաստ շերտի աղղեցությունից  
կապտավուն եր և լուսնի լույսից նվազ փայլուն, սակայն ան-  
համեմատ ավելի մեծ եր յերևում : Կարծես մի մեծ աղնդ եր  
ձգված յերկնակամարի վրա : Մի քանի կետեր, հատկապես  
նրա գողավոր մասի վրա, ավելի վառ ելին լուսավորված ու  
վկայում ելին բարձր լեռների ներկայությունը : Բայց այդ  
լուսավոր կետերը յերբեմն չքանում ելին թանձր բծերի տակ,  
վորպիսիները յերբեք չեն նկատվում Լուսնի սկավառակի վրա :  
Դրանք ամսի ողակներ ելին, վորոնք չարվել ելին յերկրա-  
շընդի շուրջը :

Սակայն, մի բնական յերկույթի հետեանքով — նման այն  
յերեսույթի, վոր առաջանում ե Լուսնի վրա, յերբ վերջինս իր  
ությանակներում ե — կարելի յե տեսնել յերկրագնդի ամբողջ  
շրջադիմք : Նրա լրիվ սկավառակը բավական վորոշակի յերե-  
գում եր, բայց ավելի նվազ քան Լուսնի մոխրագույն լույսը :  
Այս նվազ փայլունության պատճառը հեշտ եր հասկանալ :  
Յերբ այս ցոլացումը Լուսնի վրա յե լինում, դա հետեանք ե  
արևի ձառագայթների, վորոնց յերկիրն արտացոլում է զեպի  
եր արբանյակը : Իսկ այսակ, ընդհակառակը, այդ ցոլացումը  
հետեանք եր Լուսնի՝ զեպի Յերկիրն արտացոլած արևի ձառա-  
գայթների : Գետք ե գիտենալ, վոր յերկրային լույսը մոտա-  
վորապես տասներեք անգամ ավելի ուժեղ ե Լուսնի լույսից,  
վորը հետեանք ե յերկու մարմինների ծավալի տարբերու-  
թյան : Սրանից ել առաջանում ե այն հետեանքը, վոր մոխրա-  
գույն լույսի յերեսույթի մեջ Յերկրի սկավառակի մութ մասը  
պակաս վորոշակի յե յերեսում քան Լուսնի սկավառակի մութ  
մասը, վորովհետեւ այդ յերեսույթի ուժնությունը համեմա-  
տական ե յերկու աստղերի լուսավորող կարողության :

Այն պահին, յերբ ուղեղոները ջանք ելին թափում իրենց  
հայացքով թափանցել անհօնաւթյան խոր մթության մեջ, հան-  
կարծ նրանց աչքի առաջ բացվեց վայր ընկնող աստղերի մի

շողչողում փունջ: Հարյուրավոր բոլիտներ, մթնոլորտի հետ  
ունեցած շփումից բոցավառվելով, ճեղքում եյին խավարը հը-  
րավոր շերտերով և իրենց շողջողուն լույսով շերտավորում  
սկավառակի մօիրադոյն մասը:

Միշել Արդանը մի կողմ թողնելով գիտական բացատրու-  
թյունները, միիթարվում եր այն մտքով, թե Յերկիրն իր ա-  
մենափայլուն հրթիւններով և վողջունում իր յերեք զավակների  
մեկնումը:

Անհունության մեջ կորած մի կետ, փախչող մի յեղջուր  
եր այդ յերկրագունդը, վորի վրա ուղեւորները թողել եյին  
այն բոլորը, ինչ ամենաթանգն եր իրենց համար:

Յերկար ժամանակ յերեք ընկերները գիտում եյին անխոս,  
բայց միացած սրտով, մինչդեռ արկն առաջ եր սլանում, թե՛ն  
հետզհետէ նվազող արագությամբ: Այստ մի անդիմադրելի  
թմրություն պատեց նրանց ուղեղը: Արդյո՞ք այդ հետեւանք  
եր մարմնի ու մտքի հոգնության: Անկասկած, վորովհետեւ  
յերկրի վրա վերջին ժամերի հոգումներին անխուսափելիորեն  
պետք ե հաջորդեր այդ հոգնությունը:

— Ի՞նչ արած, — ասաց Միշել Արդանը, — յեթե անհրա-  
ժեշտ ե քննել, քննենք:

Նրանք պառկեցին ներքնակների վրա և քիչ հետո թաղ-  
վեցին խոր քնի մեջ:

Բայց հազիվ մի քառորդ ժամ նիբաւել եյին, յերբ հանկարծ  
բարբիկենը վեր ցատկեց ու զարթեցնելով ընկերներին, բար-  
ձը ձայնով գոռաց.

— Գտա՞ , գտա՞ :

— Ի՞նչ դտար, — հարցրեց Միշել Արդանը, անկողնից դուրս  
նետվելով:

— Այն պատճառը, թե ինչո՞ւ մենք չլսեցինք կոլումբիադի  
պայթյունը:

— Ի՞նչ ե այդ պատճառը, — հարցրեց Նիկոլը:

— Պատճառն այն ե, վոր արկն ալելի արագ և թռչում,  
քսին թե ձայնը: Մենք կրակոցի ձայնից առաջ անցանք<sup>1)</sup>:

1) Զայնի արագությունը ողում մեկ վայրկյանում 330 մետրից ալելի  
ե, մինչդեռ արկն սկզբնական արագությունն եր մեկ վայրկյանում 11 հա-  
զար մետր:

### ԳԼՈՒԽ III

#### ՈՒՂԵՎՈՐՆԵՐԸ ՀԱՆԳԻՍ ՏԵՂԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ

Այդ ուշագրավ բացատրություններից հետո, յերեք բարե-  
կամները կրկին թաղվեցին խոր քնի մեջ:

Իսկապես, վո՞րտեղ կարելի յեր քնելու համար ավելի  
լուս և հանգիստ տեղ գտնել: Յերկրի վրա քաղաքների տնե-  
րը, գյուղերում՝ խրճիթները զգում են յերկրագնդի կեղևի  
բոլոր ցնցումները: Ծովի վրա շոգենալը տարբելով ալիքներից  
անվերջ շարժվում է ու տատանվում: Ողում ողապարիկն ան-  
վերջ որորվում է մթնոլորտի տարբեր խտությամբ ողի շեր-  
տերի մեջ:

Միայն այս արկն ե, վոր թռչելով լիակատար դատարկու-  
թյան, լիակատար լուսության մեջ, իր բնակիչներին կատարյալ  
հանգստություն ե տալիս:

Այսպես, մեր յերեք արկածախնդիրների քունը կարող եր  
անվերջ տեվել, յեթե մի անսպասելի աղմուկ նրանց չզարթեց-  
ներ դեկտեմբերի 2-ին առավոտյան ժամը յոթին, մեկնումից  
ութ ժամ հետո:

Այդ աղմուկը շատ նման եր շան հաջոցի ձայնին:

— Շները, մեր շներն են, — բացականչեց Միշել Արդանը,  
իսկույն վորքի կանդնելով:

— Քաղցած կլինեն, — ասաց Նիկոլը:

— Ճիշտ ե, — պատասխանեց Միշելը, — մենք նրանց բո-  
լորովին մոռացել ենք:

— Վորտեղ են, — հարցրեց Բարբիկենը:

Յերեք ուղեղորները սկսեցին փնտուել շներին և նրանցից  
մեկին գտան թախտի տակ: Պայթյունի ցնցումից զարհուրմած,

կիսամեռ վիճակում, խեղճը կուչ եր յեկել այդ անկյունում, մինչև վոր քաղցը նրան ստիպել եր հաջել:

Հնազանդ Դիանան, զիջելով աղաչանքներին, կամաց-կամաց դուրս յեկավ իր թագատից: Արդանը նրան քաջալերում եր ամենաքաղցը խոռնելով:

— Արի՛, Դիանա, — ասում եր նա, — արի՛, իմ փոքրիկ աղջեկ, քո ճակատագիրը կնումացնի Սեն-Բերնարի հերոսների փառքը, մոտս արի:

Դիանան այդ քաղցը խոռքերից զգացված, քիչ-քիչ մոտենում և աղջողում հաջոցներ եր արձակում:

— Լավ, — ասաց Բարսիկենը, — Դիանան այսուեղ է, բայց ո՞ւր ե Արբանյակը:

— Արբանյա՞կը, — պատասխանեց Միշելը, — Արբանյակն ել անկասկած հեռու չեւ. մի վորեն տեղ պառկած կլինի: Արբանյա՞կ, մոտ արի, Արբանյա՞կ: Սակայն Արբանյակը չեւ յերկում: Դիանան շարունակում եր կաղկանձել: Սակայն Դիանան վիրավորված չեր, նրան հյուրասիրեցին համեղ կարկանդակով, վոր խոկոյն զաղարեցրեց նրա վոզքը:

Յերկար վնատուեցին և վերջապես գտան Արբանյակին: Նա պառկել եր արկի վերեկ մասում, վորտեղ նրան դցել եր ցընցումը: Խեղճ կենդանին ջարդված ու շատ վատ դրության մեջ եր:

— Ի՞նչ դժբախտություն, — ասաց Միշել Արդանը, — մեր ակլիմատիկացիան վտանգվեց:

Զգուշությամբ Արբանյակին ցած բերին: Նրա զգուխը խիվել եր արկի կամարին և թվում եր, թե այդպիսի հարվածից հետո դժբար թե կարողանար ուշքի դալ: Նրան պառկեցրին մի բարձի վրա, խեղճը մի հառաչ արձակեց:

— Մենք քեզ կինամենք, — ասաց Միշելը, — մենք ենք պատասխանատու քո կյանքի համար: Ավելի լավ եր իմ ձեռքը կորցնելի, քան թե խեղճ Արբանյակի մի թաթը վնասվեր:

Այդ ասելով նա մի քանի կում ջուր տվեց վիրավորին, վորն աղահությամբ խմեց:

Ապա ուղեռները կրկին ուշադրությամբ շարունակեցին դիտել Յերկիրն ու Լուսինը:

Յերկիրն այժմ արդեն մի մոխրագույն ոկավառակ եր և

վերջանում եր ավելի նեղ յեղջուրով քան նախորդ որը, բայց նրա ծալալը դեռևս շատ մեծ եր համեմատած լուսնին, վորը հետղհետեւ վերածվում եր լրիվ ըրջանակի:

— Ափսո՞ս, — ասաց Միշել Արդանը, — շատ ցավալի յե, վոր մենք չմեկնեցինք լրիվ Յերկրի միջոցին, այսինքն այն ժամանակ, յերբ մեր յերկրագունդը Արեկ գեմ ու դեմն եր:

— Ինչո՞ւ ափսոս, — հարցրեց Նիկոլը:

— Վորովհետեւ արդ դեպքում մեր բոլոր ցամաքամասերն ու ծովերը կտեսնեցինք նոր ձեռվ: Ծովերը կփայլելին արեի ճառագայթներից ցոլցումից, իսկ ցամաքամասերը կմթնելին այնպես, ինչպես նրանց ներկայացնում են մի շարք քարտեզների վրա: Յես կցանկանացի տեսնել յերկրի բևեռները, վունց վրա դեռևս չի ընկել մարդկային հայտաքը:

— Իսկապես այդ շատ հետաքրքրական կլիներ, — պատասխանեց Բարբիկենը, — բայց յեթե Յերկիրը «լրիվ» լիներ, կուսինը նոր կլիներ, հետեապես անտեսանելի կմնար արեի ճառագայթների մեջ: Իսկ մեզ համար ավելի լավ և տեսնել այն նովատակը, դեպի ուր մենք գնում ենք, քան թե այն կերը, վորտեղից մեկնեցինք:

— Դուք իրավացի յեք, Բարբիկեն, — պատասխանեց Նիկոլը: — Բացի այդ, յերբ հասնենք Լուսնին, մենք ժամանակ կունենանք լուսնային յերկար դիշերներին վորքան ուզենք դիտելու յերկրագունդը, վորի վրա վիտում են մեր մերձավորները:

— Մեր մերձավորները, — բացականչեց Միշել Արդանը, — նրանք այժմ մեզ համար նույնքան մերձավոր են ինչքան լուսնամակները: Մենք այժմ ավրում ենք մի նոր աշխարհում, վորի բնակիչները միայն մենք ենք, այդ աշխարհը արկն է: Յես մերձավոր եմ Բարբիկենի, Բարբիկենը մերձավոր և Նիկոլի: Մեզանից այն կողմը, մեղանից դուրս մարդկությունը վերջանում է. մենք այս փոքրիկ աշխարհի միակ բնակիչներն ենք մինչև այն բոպեն, յերբ կդառնանք պարզապես լուսնաբընակները:

— Մոտավորապես 88 ժամ հետո, — ասաց Նիկոլը:

— Այսի՞նքն, . . . , — հարցրեց Միշել Արդանը;

— Ուզում եմ ասել, վոր ժամի ութուկեսն ե — պատասխանեց Նիկոլը:

— Յեթե այդպես ե, չգիտեմ ի՞նչն ե արդելում մեղ նախաճաշելու:

Իսկապես նոր աստղի բնակիչները տառնց ուտելու չելին կափող ապրել և նրանք մեծ պահանջ ելին զգում կազդուրվելու: Միշել Արդանը, վորպես Փրանսիացի, ինքն իրեն հայտարարեց խոհարար, մի կարևոր պաշտոն, վորն ընկերները հաճույքով զիջեցին նրան:

Ռդային գաղը տվեց անհրաժեշտ ջերմությունը, իսկ մըթերքի արկղի մեջ դուն այս առաջին խնջույքի համար անհրաժեշտ պաշտեղնենը:

Նախ և առաջ մատուցվեց յերեք գավաթ հրաշալի բուլյոն, պատրաստված չոր, խտացած նյութից: Բուլյոնին հաջորդեց բիթֆշտեկսը, այնքան փափուկ և հրաշալի, վոր կարծես նոր եր պատրաստված փարփայան խոհանոցում: Միշելն իր վառ յերեակայությամբ նույնիսկ պնդեց, վառ այս բիթֆշտեկսը «արյունալի» յեր: Մոից հետո մատուցվեց բանջարեղենի պահածո, «բնականից ավելի թարմ», ինչպես ասում եր Միշելը և վերջապես նախաճաշը վերջացավ մի-մի բաժակ թեյով և ամերիկյան ձևով պատրաստված կարկանդակով: Խնջույքը կատարյալ դարձնելու համար, Արդանը բաց արեց մի չիշ հրաշալի բուրդոնյան դինի, վորը «պատահմամբ» ընկել եր պարենի արկղի մեջ: Յերեք ուղևորները խմեցին Յերկրի ու նրա արբանյակի կենացը:

Այդ ժիջոցին արեն ել դուրս յեկալ, կարծես ցանկանալով մասնակցել խնջույքին:

Արկը դուրս եր յեկել յերկրագնդի նետած ստվերի միջից և ցերեկվա լուսատույի փայլուն ճառագայթները լուսալորեցին արկի ներքենի մասը:

— Արևը, — բացականչեց Միշել Արդանը:

— Անկասկած, — պատասխանեց Բարբիկենը: — Յես սպասում եյի նրան:

— Բայց տեսեք, — ասաց Միշելը, — կոնածե ստվերը, վոր Յերկրը ձգում և տարածության մեջ, տարածվում և լուսնից ավելի հեռու:

— Նույնիսկ շատ հեռու տաց Բարբիկենը, — յեթե հաշվի չառնենք մթնոլորտային բեկրեկումը:

Իսկ յերբ Լուսինը ծածկվում է այդ ստվերով, այդ ժամանակ առաջանում է խավարում: Յեթե մենք մեկնած լինելինք լուսնի խավարման պահին, մեր ամբողջ ուղերորությունը տեղի կունենար խավարի մեջ: Իսկ այդ չափազանց տիսուր կիներ:

— Ինչո՞ւ տիսուր:

— Վորովհետեւ թեև մենք թուչում ենք դատարկության մեջ, մեր արկը վողողվում է արևի ճառագայթներով և ստանում նրա լույսն ու ջերմությունը: Այդպիսով մենք խնայում ենք գաղը, վորը մեզ համար շատ թանկագին ե:

Իսկապես արևի ճառագայթների ջերմությունն ու փայլը չեր նվազում վոչ մի մթնոլորտից: արկը տաքանում և լուսավորվում եր այնպես, կարծես հանկարծ տաք ամառն եր վրա հասել: Վերեկից Լուսինը, ներքնից Արևը իրենց ճառագայթներով վողողվում ելին արկը:

— Ի՞նչ լավ ե մեղ մոտ, — ասաց Նիկոլը:

— Կարծում եմ, վոր լավ ե, — պատասխանեց Միշել Արդանը: — Յեթե մի օիչ հող ունենայինք, յս ձեղ համար քամ չորս ժամում սիսեռ կանչեցնելի: Բայց յս վախենում եմ, վոր արկի պատերը չելաչեն ջերմությունից:

— Հանդասացի սիրելի բարեկամ, — պատասխանեց Բարբիկենը: — Մեր արկը մթնոլորտից շերտերից անցնելիս յենթարկվեց շատ ավելի բարձր ջերմության: Յես բոլորովին չեմ դարձնանա, յեթե Ֆլորիդայի բնակիչները մեր արկն ընդունելին վորպես մի հրավառ ողաքար:

— Բայց այդ դեպքում Մասասունը պիտի կարծի, վոր մենք խորովել ենք, — ասաց Արդանը:

— Յես ինքս զարմանում եմ, վոր այդպես չի յեղել — պատասխանեց Բարբիկենը: — Ահա մի վտանգ, վորի մասին չելինք նախատեսել:

— Վո՞չ յես նախատեսել ելի և շատ ելի վախենում, — ասաց սառնորեն Նիկոլը:

— Յեկ դու այդ մասին ոչ մի բառ չառացի՞՛:

— Ո՛ դու անոման կապիտան, — ասաց Միշել Արդանը սեղմելով ուղեկցի ձեռքը:

Այդ ժամանակ Բարբիկենը տեղավորվում էր արկի մեջ,  
կարծես մշտական այնտեղ ապրելու համար:

Ինչպես հայտնի յէ, ողային վագոնը իր հիմքում հինգ  
քառակուսի մետր տարածություն ուներ, իսկ բարձրությունը  
համում էր վեց մետրի, մինչև կամարի զագաթը. նրա ներ-  
քին մասը շատ հարմար էր սարքված. ուղևորության գործիք-  
ներն ու իրերը գրավել եյին իրենց հատկացված տեղերը և յերեք  
ուղևորները բավական աղատ եյին զգում իրենց: Հաստ ապա-  
կին, վորը դրավում էր հատակի մի մասը, կարող եր տանել  
մեծ ծանրություն: Բարբիկենն ու ընկերները հանդիսա  
բայց լում եյին նրա վրա. իսկ Արևը, վորի ճառագայթները ուղղա-  
կի մայդ ապակուն եյին խփում, ներքեից լուսավորում էր ար-  
կի ներսը:

Ուղևորները դիտեցին ջրի արկղն ու մթերքի արկղը: Ցըն-  
ցումը մեղմացնելու համար ձեռք առնված միջոցների չնորհիվ,  
այդ արկղերը բոլորովին չեյին վնասվել: Ուստիստի պաշարը  
առատ էր և կարող եր բալականանալ ամբողջ մի տարի: Իսկ  
չուրն ու ողին վներցրել եյին միայն յերկու ամսվա համար:

Մնում էր աղի հարցը, վորով նույնական ապահովված ե-  
յին: Թթվածին արտադրող գործիքը յերկու ամսով ապահով-  
ված էր բերտուկայան աղով: Գործիքին հարկավոր էր միայն  
մի թեթև հսկողություն, վորովհետև ավտոմատ կերպով եր  
աշխատում:

Այսովով, ուղևորներն ապահովված եյին չնչելի ողով:  
Սակայն պետք էր նաև վոչչայնել ածխաթթու դաղը, վորն  
արտադրվում էր ուղևորների չնչառությունից: Արդեն նկատ-  
վում էր, վոր արկի ողը լցվել էր թունավոր դաղով: Նիկոլը  
նկատեց ողի այդ վիճակը, յերբ տեսավ, վոր Դիանան դժվա-  
րությամբ էր չնչում: Այստեղ, ինչպես նշանավոր Շան Քա-  
րայրում ածխաթթուն իր ծանրության հետևանքով խառնում  
էր ոռութիւն հատակում և խեղճ Դիանան դլուխը կախում էր,  
իր տերերից առաջ էր գրում այդ դաղի աղղեցությունը:

Նիկոլը շտապեց շտկել այս գրությունը: Նա իսկույն ար-  
կի հատակի վրա դրեց մի քանի աման կծու կալիսում — մի  
նյութ, վոր կարող է ծծել ածխաթթուն և մաքրել ողը:

Ապա ուղևորները ստուգեցին գործիքները: Բացի մի ջեր-

մաչափից, վորի ապակին կոտրվել էր, բոլոր ջերմաչափերն  
ու բարոմետրները անվնաս եյին: Արկղից դուրս բերին մի  
հրաշալի մետաղե բարոմետր (աներույիղ) ու կախեցին պա-  
տից: Ինչ խոսք, վոր բարոմետրը ցույց էր տալիս միայն արկի  
ներքին մթնոլորտի ճնշումը, բայց նա ցույց է տալիս նաև  
արկի մեջ դտնվող գոլորշու քանակը: Այդ միջոցին բարոմետրի  
սլաքը տատանվում էր 735-ի և 760 միլիմետրի միջև: Այդ նը-  
շանակում էր «լավ յեղանակ»:

Բարբիկենի վերցրած կողմնացույցերը նույնպես լավ դք-  
րության մեջ եյին: Պարզ է, վոր այդ վիճակում նրանց սլաք-  
ները տատանվում եյին առանց մի վորոշ ուղղության: Յերկ-  
րից այն հեռավորության վրա, վորտեղ զանվում էր արկը,  
մազնիսական բեկութ վոչ մի աղղեցություն չեր կարող ունե-  
նալ գործիքը վրա: Մական փոխադրվելով կուսնի վրա, այդ  
կողմնացույցերը կարող եյին ուղարկար լինել հետաքրքիր դե-  
տողությունների համար:

Անվնաս եյին մնացել նաև հիպսոմետրը, վորը ծառայելու  
յիր կուսնի բարձրությունները չափելու համար, սեկտորները՝  
Արմի բարձրությունները չափելու համար, անկյունաչափին ու  
դիտակները, վորոնք շատ ողտակար կլինեյին, յերբ նրանք  
կմուտենային կուսնին:

Բոլոր գործիքները, — բահերը, բրիչները և այլն — վորոնց  
Նիկոլը վերցրել էր իր հետ, բոլոր տեսակի սերմերն ու թփե-  
րը, վոր Միշել Արգանը մտադիր էր մշակել կուսնի վրա, իրենց  
տեղումն եյին, արկի վերեկի անկյունում:

Այլտեղ մի տեսակ պահեստ էր սարքված, վորտեղ մի-  
մանց վրա դարսվել եյին մեծ թվով զանազան տեսակի իրեր:  
Ի՞նչ եյին այդ իրերը. վոչոք, բացի ուրախ-զվարթ Փրան-  
սացուց, այդ մասին վոչինչ չգիտեր. իսկ նա յել վոչինչ  
չեր տառամ ընկերներին. միայն մեկ-մեկ նրանք նկատում ե-  
յին, վոր պատի վրա սարքված աստիճաններով նա բարձրա-  
նում էր խորհրդավոր անկյունը և ինչ վոր բաներ էր անում,  
իրերը կարգի յեր բերում, նայում, զննում, ջոկում էր, ինչ վոր  
արկղեր էր բաց ու խուլի անում, քթի տակ մոմուալով—բավա-  
կան սուս ու սխալ ձայնով— ինչ վոր Փրանսիական հին յերգ:

Բարբիկենը շատ դու էր, վոր անվնաս եյին մնացել իր

Հրթիռներն ու այլ հրավառ նյութերը։ Այդ հրթիռները պետք է մեղմացնելին արկի անկումը, յերբ արկը կուսնի ձղողությունից տարվելով, սկսեր ընկնել նրա վրա։

Ստուգումը վերջացավ և բոլորը դոչ մնացին։ Ապա յուրաքանչյուրը կրկին սկսեց դիտել տարածությունը կողմնակի ըուսամուտներից և հատակի պատուհանից։

Տեսարանը միևնույնն եր։ Ամբողջ յերկնակամարը ծածկված եր աննկարագրելի պայծառ անթիվ աստղերով և համատեղություններով։ Աստղագետը հիացումից կիսելագարվեր։

Մի կողմից Արեն եր փայլում վարպետ մի հրավառ ոջախ ու յերկնակամարի Փոնի վրա։ Մյուս կողմից Լուսինն եր լողում, անշարժ կախված աստղերի աշխարհի մեջ։

Ապա յերեւմ եր ըստական մուգ մի բիծ, կարծես պատռելով յերկնակամարը յեղերված արծաթազոծ կիսաշրջանակով։ Յերկիրն եր այդ։ Ավելի հեռուն, միզամածներ, կուտակված ինչպես աստղային ձյան խոշոր փաթիլներ, և մի հսկա գոտի, կաղմված անհամար աստղերի փոշուց— Ծիր կաթինը։

Դիտողները յերկար ժամանակ չելին կարողանում հայացքը հեռացնել իրենց համար այսքան նոր այդ տեսարանից, վորը չի կարելի պատկերացնել վոչ մի նկարագրությամբ։ Ի՞նչպիսի խորհրդածություններ, ի՞նչպիսի նոր տպավորություններ արթնացրեց այդ սքանչելի տեսարան։ Այդ տպավորության տակ Բարբիկենը ցանկացավ սկսել իր ուղերության նկարագրությունը և ժամ առ ժամ հուշագրեց բոլոր դեպքերը։ Նա զբում եր շատ հանգիստ իր խոշոր քառակուսի ձեռագրով և մի քիչ առևտրական վոճով։

Այդ ժամանակ Նիկոլն աչքի յեր անցկացնում իր հաշվումները և անորինակ հմտությամբ վարվում թվանշանների հետ։

Միւն Արդանը խոսում եր մեղթ Բարբիկենի հետ, վոր նրան չեր պատասխանում, մերթ Նիկոլի հետ, վորը նրան չեր լսում, մերթ Դիանայի հետ, վորը վոչինչ չեր հասկանում, վերջապես ինքն իրեն հետ, հարցեր տալով ու պատասխանելով. քայլում եր, անվերջ պտավում, գնում-գալիս, զբաղվում լով. քայլում եր, մեկ մանրամասնություններով, մեկ թեքվում եր հազար ու մեկ մանրամասնություններով, մեկ թեքվում եր հատակի վրա, մեկ բարձրանում արկի առմենաբարձր տեղերը,

միշտ քթի տակ մի յերդ մոժուալով։ Զուր չե վոր նա իսկական Փրանսիացի յեր։

Որը, կամ ավելի ճիշտ, 12 ժամվա միջոցը, վոր Յերկրի վրա որն և կազմում, վերջացավ հրաշալի պատրաստված ընթրիքով։ Վոչ մի բան չխանգարեց ուղերուների հանգիստը և նրանք հաջողության հույսով տողորված, հանդիսատ քննցին։

Իսկ արկը, վորի արագությունը շարումնակ պահպառում եր, ուղանում եր յերկնքի ուղիով։

## ԳԵՂԻՆ IV

### ՄԻ ՔԻՉ ՀԱՆՐԱԾԱՇԻՎ

Դիշերն անցկացավ առանց միջաղեպի: Ճիշտն ասած, «գիշեր» խոսքն իր իսկական իմաստը չունի այստեղ, վորովհետեւ արկի դիրքը Արևի նկատմամբ չեր փոխվում: Ժամանակն առաջ զարաշխորեն հաշվելով, արկի ներքեւում ցերեկ եր, վերեւում՝ դիշեր, ուստի հետազոտմ, յերբ այս պատմվածքում «դիշեր» և «ցերեկ» բառերը գործ են ածվելու, պետք ե հասկանալ այն ժամանակը, վոր յերկրի վրա տեսում ե Արևի ծագումից մինչեւ մայրամուտը:

Վոչինչ չխանգարեց ուղևորների հանգիստ քունը, վորովհետեւ չետեւ չնայած սաստիկ արագության, թվում եր թե արկը բոլորին անշարժ եր: Վոչ մի զնցում չեր ցույց տալիս, վոր նա սլանում ե տարածության մեջ:

Շարժումը, ինչպիսի արագություն ել ունենա, վոչ մի ազդեցություն չի դորձում մարդկային որդանիզմի վրա, յեթե ազդեցություն մեջ է կատարվում, կամ յեթե մարշարժումը զատարկության մեջ է կատարվում, կամ յեթե մարշարժվում է իր ըրջապատի հետ միասին: Մեզանից ո՞վ է դը շարժվում ե իր ըրջապատի հետ միասին: Վոչ մեջ մենք գիտենք, վոր Յերկիրը շարժվում ե, բայց մենք գիտենք, վոր նա շարժվում ե մեծ արագությամբ:

Բարբիկենը և իր յերկու ուղեկիցները իրենք իրենց բոլորովին հանգիստ ու անշարժ ելին զգում, փակված լինելով չարժվող արկի մեջ:

Այդ առավոտ, դեկտեմբերի 3-ին, ուղևորները զարթնեցին մի ուրախ և անոպատելի աղջուկից: Աքաղաղի ձայնն եր, վոր վրդովում եր վազոնի անդորրությունը:

Միշել Արդանը իսկույն վոտքի ցատկեց, բարձրացավ՝ վե-

րեւ, փակեց կիսաբաց արկղերից մեկն ու կամաց ձայնով առաջ.

— Լոփ'ը, անպիտան, դու իմ ամբողջ ծրագիրներս կտապալես:

Սակայն Նիկոլն ու Բարբիկենը զարթնել ելին արդեն:

— Աքաղաղի ձայն ե, — ասաց Նիկոլը:

— Վո՛չ, բարեկամներս, հանգստացեք, — ասաց իսկույն Միշել Արդանը, — յետ եյի, վոր ցանկացա ձեզ զարթեցնել այս գեղջկական յերաժշտությամբ:

Այդ առելով նա մի այնպիսի կուկուրիկո՛ւ արձակեց, վոր ամեն մի աքաղաղի նախանձը կշարժեր:

Յերկու ամերիկացիները բարձրաձայն քրքչացին:

— Արտակարգ մի տաղանդ ես դու, — ասաց Նիկոլը կատկածու մի հայացք զցելով ընկերոջ վրա:

— Այս, պատասխանեց Միշելը — մեր յերկրին հատուկ մի կառակ եր: Մեզ մոտ, նույնիսկ բարձր դասի ըջաններում, յերեմն կանչում են աքաղաղի նման:

Ապա, խոսակցության բնույթը փոխելով, ասաց.

— Գիտե՞ս, Բարբիկեն, թե ինչի մասին եմ մտածել ամբողջ գեշերը:

— Զդիտեմ, — սլատասխանեց նախազահը:

— Մտածում եյի Կմբերիչի մեր բարեկամների մասին: Դու արդեն նկատել ես, վոր մաթեմատիկայից յես շատ թույլ եմ: Այդ պատճառով ել յես չեմ կարողանում ըմբռնել, թե ինչպես դիտարանի զիտանկանները հաշվեցին այն արագությունը, վոր պիտի ունենար մեր արկը լուսնին համելու համար:

— Այսինքն, վոչ թե լուսնին, — պատասխանեց Բարբիկենը, — այլ հասնելու այն կետին, վորտեղ Յերկրի ու Լուսնի ձգողական ուժերը հավասար են. վորովհետեւ այդ կետից հետո — մի կետ, վոր զանվում է համարյա ամբողջ ուղեղծի ինն տասնորդական մասի վրա, — արկը լուսնի վրա պիտի ընկնի եր ծանրության չնորհիվ:

— Լա՛վ, թող այդպես լինի — ասաց Միշել Արդանը՝ բայց դու ասա՛, թե ի՞նչպես հաշվեցին այդ արագությունը:

— Այդ քո կարծածին չափ ել դժվար բան չե:

— Դու ինքը ել կարո՞ղ եյիր անել այդ հաշվումը:

— Իհարկե: Նիկոլն ու յես կարող ելինք այդ հաշվին առել, յեթե ուրիշները մեզ այդ աշխատանքից չաղատելին:

— Իսկ յես ավելի շուտ իմ գլուխը կտրելու, քան հանձն կառնելի լուծելու այդ խնդիրը:

— Վորովհետեւ զու հանրահաշիվ չդիտես, — ասաց Բարբիկենը:

— Դե լա՛վ, յես ճանաչում եմ ձեզ բոլորիդ, իքսակերներ: Դուք կարծում եք, թե հանրահաշիվ առելով, ամեն ինչ առաջ եք լինում:

— Միշել, — ասաց Բարբիկենը, — մի՞նչեւ կարելի յե կոեւ առանց մուրճի, կամ հերկել առանց զութանի:

— Իհարկե վոչ:

— Այլպես ել հանրահաշիվն այնպիսի մի միջոց ե, ինչ պես մուրճն ու գութանը — ի հարկե իմացողի համար:

— Լո՞րջ ես ասում:

— Շատ լուրջ:

— Կարո՞ղ ես ասած գործով ապացուցել, այսուղ, իմ առաջ:

— Անկառիած:

— Յեկ ինձ ցույց տալ, թե ինչպես պետք է հաշվել մեր արկի սկզբնական արագությունը:

— Լա՛վ, վերցնենք մի կտոր թուղթ և մատիտ, — ասաց Բարբիկենը, — և կես ժամ չանցած, յես կէիլեմ ու քեզ համար կդրեմ այդ Փորմուլան:

Այդ խոսքերից հետո Բարբիկենն անցավ աշխատանքի: Նիկոլը շարունակում էր դիտել անսուհման տարածությունը, իսկ Միշելն զբաղվեց նախաճաշի պատրաստությամբ:

Իսկապես կես ժամ չեր անցել, յերբ Բարբիկենը գլուխը բարձրացնելով, Միշել Արդանին ցույց տվեց թղթի թերթիկը, վորի վրա գրված ելին հանրահաշվային նշաններ, իսկ վերջում հետեւյալ Փորմուլան:

$$\frac{1}{2} \left( V^2 - V_0^2 \right) = gr \left\{ \frac{r}{x} - 1 + \frac{m'}{m} \left( \frac{r}{d} - \frac{r}{d-r} \right) \right\},$$

— Լա՛վ, ի՞նչ ե նշանակում այս բոլորը... — Հարցրեց Միշել Արդանը:

— Այդ նշանակում ե, — պատասխանեց Բարբիկենը, — վոր Վ քառակուրու կեսից հանած վերո քառակուրին, հավասար ե

ցր, բաղմաղատկված 2-ը չ-ով, հանած մեկ, դումաբած մ', բաժանված 3-ով, բաղմաղատկված...

— Եքն ու իղրեկը բազմած զետի վրա, արշավում ե են եռ-ի վրա, — բացականչեց Միշել Արդանը, բարձրածայն ծիծաղելով: — Իսկ դու, կասկիտան, մի՞նչեւ մի բան հասկացար:

— Ի՞նչ կա սրանից ավելի պարզ:

— Ի՞նչպես չե, — ասաց Միշելը: — Այդ թվերը մտրդու աշխ են ծակում. ինձ ել այդ ե պետք:

— Հավիտենական ծիծաղով, — ասաց Բարբիկենը, — ուռ հանրահաշիվ ցանկացար. ահա՛, ինչքան ուղում ես:

— Վո՞չ, շնորհակալություն, — ավելի լավ ե կկախվեմ, քան թե դրանով կզբաղվեմ:

— Իսկապես, Բարբիկենը, — ասաց Նիկոլը, վոր ուշադրությամբ Փորմուլան եր դիտում հմուտ մարզու յերկույթով, — այդ Փորմուլան շատ ճիշտ ե: Յես բոլորովին չեմ կասկածում, վոր նա կտա մեր ցանկացած արդյունքը:

Բայց յես շատ եմ ցանկանում մի բան հասկանալ, — բացականչեց Միշելը, — սիրով իմ կյանքից տաս տարի կզոհելի մի բան հասկանալու համար:

— Լսի՛ր, — ասաց Բարբիկենն իր տպեա ընկերոջը, — ու դու կտեսնես, վոր բոլոր այս տառերը մի վորոշ նշանակություն ունեն:

— Լսում եմ, — ասաց Միշելը համակերպվելով:

— Ո տառը, — շարունակեց Բարբիկենը, — ցույց ե տալիս Յերկրի և Լուսնի կենտրոնների հեռավորությունը. պետք ե դիտենալ, վոր յերկու մարմինների ձգողական ուժը հաշվելու համար պետք ե վերցնել նրանց կենտրոնների հեռավորությունը:

— Հասկանալի յե:

— Ո տառը Յերկրի շառավիղն ե:

— Շառավիղ: Համաձայն եմ:

— Ո տառը — Յերկրի ծավալը, իսկ մ' Լուսնի ծավալը: Այս յերկու ծավալները պետք ե հաշվի առնել այն պատճառով, վոր ձգողականությունը համեմատական ե ծավալին:

— Հասկանում եմ:

— Ո տառը ցույց ե տալիս մի վորեե բարձրությունից

Յերկրի վրա ընկնող մարմնի արագության չափը, չափումը  
ոկտելուց մի բոլոր հետո: Պարզ է:

— Աղբյուրի ջրի նման, — պատասխանեց Արդանը:

— Կ տառը յես ընդունում եմ մշտակես աճող այն տարա-  
ծությունը, վորը բաժանում ե մեզ Յերկրի կենտրոնից, իսկ  
Վ-ը այն արագությունն ե, վորով արկը թուզում ե այդ տա-  
րածության մեջ:

— Շատ լավ:

— Վերջապես V զերոն ցույց ե տալիս այն արագությու-  
նը, վոր արկը կտանա մթնալորտի սահմանից դուրս դալուց  
հետո:

— Ճիշտ այդ կետում ե, — ասաց Նիկոլը, — վոր պետք է  
չափել արագությունը, վորովհետև մենք արդեն գիտենք, վոր  
սկզբնական արագությունը հավասար ե արկի՝ մթնոլորտից  
դուրս յեկած բուլեյին ունեցած արագության ուղիղ մեկտեղս  
անդամին:

— Այդ արդեն ինձ համար անհասկանալի յե, — տոտքեց  
Միշելը:

— Սակայն, դա շատ պարզ ե, — ասաց Բարբիկենը:

— Ինձ համար այնքան ել պարզ չե, — պատասխանեց  
Արդանը:

— Այդ նշանակում ե, վոր յերբ մեր արկը համարվ Յերկրի  
մթնոլորտի սահմանին, նրա սկզբնական արագությունը ուղ-  
կասեց մի յերրորդականով:

— Մի՞թե այդքան շատ:

— Այս, սիրելի բարեկամ, մթնոլորտի հետ շփովելու հե-  
տեանքով: Քեզ համար հասկանալի յե, վոր ինչքան արկը ա-  
րագ ե ընթանում, այնքան ողի ընդդիմությունը մեծ ե մի-  
նում:

— Այդ հասկանալի յե, — պատասխանեց Միշել Արդանը, —  
այդ մասին քեզ հետ համաձայն եմ, բայց բոլոր այդ Վ զերո-  
ներն ու V զերո քառակուսիները իմ զմբի մեջ թուշկուում են  
այնպես, ինչպես մեխերը պարկի մեջ:

— Սպասիր, սիրելիս, — ասաց Բարբիկենը: — Մինք այժմ,  
այս Փորմուլայի յուրաքանչյուր տառին կտանք իրեն համա-  
պատասխան արժեքը թվանշաններով:

— Լավ, ինչ ուզում եք արեք, — ասաց Միշելը համակեր-  
պելով:

— Այս Փորմուլայում, — չարունակեց Բարբիկենը, — տա-  
ռերից մի քանիսի արժեքը վորոշ է, իսկ մնացածները պետք է  
վորոշել:

— Այդ յես ինքս կանեմ, — ասաց Նիկոլը:

— Վերցնենք ր տառը, վոր Յերկրի չափավորն է, նրա  
յերկարությունը Ֆլորիդայում հավասար է 6370000 մետրի,  
և տառը — Յերկրի և Լուսնի կենտրոնների մեջն յեղած տա-  
րածությունը՝ հավասար է հիսուն վեց յերկրային շառավիղի,  
այսինքն....

Նիկոլը իսկույն հաշվեց և ասաց.

— Հավասար է 356 միլիոն մետրի՝ այն միջոցին, յերր  
լուսինն իր ոկրիզեյի, այսինքն Յերկրի ամենամոտ կետի վրա  
յի:

— Ճիշտ ե, — ասաց Բարբիկենը: — Շարունակենք. մ' տա-  
ռը բաժանված ունի, ցույց ե տալիս Լուսնի ծավալի հարաբե-  
րությունը Յերկրի ծավալի հետ՝ հավասար է 1/81-ի:

— Հրաշալի յե, — ասաց Միշելը:

— Ո տառը ծանրության ուժի արագությունը Ֆլորիդայում  
հավասար է իննը մետր ութուն մեկ սանտիմետրի մի վայր-  
կանում, ուրեմն մեր Փորմուլայում ց տառերը հավասար են....

— Վայսունյերկու միլիոն չորսարյուր քսանվեց հաղար  
քառակուսի մետրի՝ պատասխանեց Նիկոլը:

— Լավ հետո, — հարցրեց Միշել Արդանը:

— Հիմա, վոր տառերի արժեքը դիտենք, — պատասխանեց  
Բարբիկենը, — կարող ենք դունել V զերոյի արագությունը, այ-  
սինքն այն արագությունը, վոր պիտի ունենա արկը, յերբ զուրս  
կամ մթնոլորտից, վորպեսզի համար այն կետին, վորուել Յերկ-  
րի և Լուսնի ձգողական ուժերը հավասար են: Քանի այդ միջո-  
ցին այդ արագությունը հավասար կլինի վոչնչի, ընդունենք թե  
հավասար է զերոյի, ուրեմն X-ը՝ այդ կետի հեռավորությունը  
Յերկրի կենտրոնից՝ հավասար է գ-ի, այսինքն յերկու կենտ-  
րոնների հեռավորության, իննը տասներորդին:

— Սոտավորապես հասկանում եմ, վոր այդպես պետք է  
լինի, — ասաց Միշելը:

— Այդպիսով, — շաբունակեց Բարբիկենը, — չ-ը հավասար է ձ-ի իննը տասներորդականի, Վ հավասար է զերոյի, ուրեմն իմ Փոքրութան կլինի...

Բարբիկենը արագ-արագ գրեց հետեւյակ Փոքրութան.

$$V^2_0 = 2gr \left\{ 1 - \frac{10r}{9d} - \frac{1}{81} \left( \frac{10r}{d} - \frac{r}{d-r} \right) \right\},$$

Նիկոլ մի անհամբեր հայացք նետեց թղթի վրա և տաց ։  
— Ճիշտ է, ճիշտ է :

— Պարզ է, — Հարցրեց Բարբիկենը :

— Շատ պարզ է, — առաջ Նիկոլը :

— Դուք իմաստումն մարդիկ եք, — Հնջաց Միշել :

— Հասկացա՞ր, վերջապես, — Հարցրեց Բարբիկենը :

— Այս, — բացականչեց Միշել Արդանը, — թվում է, թե հասկացա, բայց գլուխու տրաքվում է :

— Իսկ այժմ վորպեսդի ստանանք մթնոլորտից դուրս գալու միջացին արկի արագությունը, մնում է միայն հաշվել :

Այդ ասելով, կապիտան Նիկոլը, զործը դիտցող մարդու պես, սկսեց հաշին անորինակ արագությամբ. բաժանումներն ու բազմապատկումները սահում եյին նրա մատների տակ. թը զերը կարկան նման թափվում եյին թղթի վրա :

Բարբիկենը ուշագրությամբ հետևում էր նրան, մինչդեռ Միշել Արդանը աշխատում էր հաղթահարել զլիսի ցավը :

— Ուրիշն, — Հարցրեց նախադահը մի քանի բողե լուռ մնալուց հետո :

— Պատրաստ է, — պատասխանեց Նիկոլը, — Վ դերոն, այսինքն արկի արագությունը յերբ մթնոլորտից դուրս է դալիս՝ հասնելու համար այս կետին, վորակը Յերկրի ու Լուսնի ձգողական ուժերը հավասարակշռվում են, համասար է ...

— Ինչի՞... — Հարցրեց Բարբիկենը :

— Տասնմեկ հազար հիսուն մեկ մետրի :

— Ի՞նչո՞ք ։ բացականչեց Բարբիկենը տեղիցը վեր ցատկելով, — ինչ ասացի՞ք :

— Տասնմեկ հազար հիսունմեկ մետր :

— Անե՛ծք, — բացականչեց նախադահը հուսահատ շարժումով :

— Ի՞նչ պատահեց քեզ, — Հարցրեց Միշել Արդանը զարմացած :

— Ինչ պատահե՞ց : Յեթե արագությունը շփումի հետևանըով մի յերրորդականույթ պակասել է, ուրեմն սկզբնական արագությունը յեղել է ...

— Տասնվեց հազար հինգ հարյուր յոթանասուն վեց մետր, — պատասխանեց Նիկոլը :

— Իսկ կեմբըիջի աստղադիտարանը հաշվել էր, թե տասնմեկ հազար մետր արագությունը բավական է և մենք թանք այդ արագությամբ :

— Լավ, հետո ի՞նչ, — Հարցրեց Նիկոլը :

— Այն, վոր այդ արագությունն անբավարար է :

— Ճիշտ է :

— Մենք չենք հասնի այն կետին, վորակից Լուսնը կարող է մեզ քաշել դեպի իրեն ...

— Սարսափելի յէ :

— Մենք նույնիսկ մինչեւ կես ճանապարհը չենք հասնի :

— Անիծվա՞ծ արկ, — բացականչեց Միշել Արդանը անզից վեր ցատկելով, կարծես թե արկը հենց այդ բողեյին ընկնելու յեր Յերկրի վրա, — ուրեմն մենք Յերկրի վրա՞ կընկնենք :

— Այս, — առաջ Բարբիկենը մի բողե ընդհանուր լուռ թյունից հետո մենք պիտի ընկնենք Յերկրի վրա :

## ԳԼՈՒԽ V

### ԱՐԲԱՆՅԱԿԻ ԹԱՂՈՒՄԸ

Այս հայտարարությունը կայծակի նման հարկածեց մեր ուղևորներին: Ո՞ւմ մտքից կանցներ, թէ այդալիսի մի սխալ հաշվի կարելի յեր անել: Բարբիկենը չեր ուզում հավատալ այդ բանին: Նիկոլը նորից աչքից անցկացրեց թվերը, — վոչ մի սըստ չկար: Ինչ գերաբերում է այն Փորմուլային, վորի համաձայն կատարել եցին այդ հաշիվները, նրա ճշտությունը վոչ մի կառած չեր հարուցում:

Յերկրորդ անգամ ստուգելուց հետո հաստատվեց, վոր կետ նպատակին համեմու համար իսկապես արկի սկզբնական արագությունը պետք է լիներ տասնվեց հազար հինգ հարյուր յոթանուն վեց մետր:

Յերեք ուղևորները միմյանց նայեցին առանց մի բառ արտասանելու: Նախաճաշի մասին վոչ վոք չեր մտածում: Բարբիկենը հոնքերը կիտած, տատմներն ու բուռնքը ջղաձգորեն սեղմած, հայացքը հասել եր լուսամուտից դուրս: Նիկոլն անվերջ թվերն եր ստուգում: Միշել Սրդանը քրթմնջում եր:

— Այդ ել ձեր զիտունները, միշտ այլպես են անում: Հոգաբությամբ քան վոսկի կտայի կեմբը ջի աստղադիտարանի վրա ընկնելու և այնտեղ գտնալուների վոսկը ջարդելու համար:

Հանկարծ կապիտանի գլխում մի միտք ծագեց և նա խոսքը Բարբիկենին ուղղելով, ասաց.

— Տարորինակ բան. Ժամը առավույան յոթն ե. ուրեմն մեր մեկնման բոլեյից անցել է յերեսուն յերկու ժամ. Տամբի

կեսը մենք արդեն անցել ենք, բայց ինչքան ինձ թվում ե, մենք զերևս չենք ընկնում:

Բարբիկենը չպատասխանեց: Մի արագ ակնարկ զցեց կապիտանի վրա, մի զործիք վերցրեց, վորով չափում են Յերկրագնդի տրամագծի անկյունի մեծությունը. նրանով ներքեւ լուսամուտից չափ ճշգրիտ չափումներ կատարեց: Աղա վորքի կանգնելով, սրբեց ճակատի քրտինքն և թղթի վրա մի քանի թվեր դրեց: Նիկոլը, վորը յերկյուղով նրան եր նայում, հասկացավ, վոր նախարարներ նպատակին եր Յերկրի տրամագծի չափումով վորոշել, թէ արկը Յերկրից ինչքա՞ն եր հեռու:

— Վո՛չ, — բացականչեց Բարբիկենը մի քանի բողե լուսամուտից հետո, — վո՛չ չենք ընկնում: Մենք արդեն Յերկրից հեռացել ենք յերկու հարյուր հաղար կիլոմետր: Մենք արդեն անցել ենք այն կետից, վորտեղ արկը կարող եր կանգ առնել, յեթե նրա սկզբնական արագությունը տասնմեկ հաղար մետրից ավելի չլիներ: Պարզ ե, վոր մենք անընդհատ բարձրանում ենք:

— Ճիշտ ե, — պատասխանեց Նիկոլը, — ուրեմն մեր սկզբնական արագությունը տասնմեկ հաղար մետրից ավելի յէ յեղել: Այժմ հասկանալի յէ, թէ ինչու համար մեկնումից միայն տասներեք բողե հետո ճանապարհին պատահեցինք յերկրորդ արբանյակին, վոր պատույտ և գալիս Յերկրից ութ հազար հարյուր քսուասուն կիլոմետր հեռավորության վրա:

— Ո՛չ, սիրելի Նիկոլ, — բացականչեց Բարբիկենը, — մենք փրկված ենք:

— Դե լավ, — բոլորովին հանգիստ ասաց Միշել Արդանը, — քանի վոր փրկված ենք, ուրեմն նախաճաշենք:

Իսկապես Նիկոլը չեր սխալվում. արկի սկզբնական արագությունը զգալիորեն ավելի յէր, քան այն, վոր յենթագրել եր կերպիցի ասողագիտարանը:

Աղջերդները այս անհիմն յերկյուղից հանգստացած նստեցին ուղանի չուրջը և սկսեցին ուրախ-զվարթ նախաճաշել:

— Ինչու չպիտի հասնենք մեր նպատակին, — կրկնում եր Միշել Արդանը: ԶԵ՞ վոր մենք թուչում ենք: Մեր առաջ վոչ մի արդելք չկա, մեր ճանապարհի վրա քարեր չկան: Ճանապարհը բաց ե. ավելի աղատ, քան չողենավի համար, վոր պիտի պայքարի ծովի ալիքների դեմ. ավելի աղատ, քան ողապարիկի

Համար, վոր պիտի կուլի քամու դեմ: Յեթե շողենավը, համենային դեպս, հասնում ե իր ցանկացած տեղը, յեթե ողագործիկը բարձրանում ե իր ցանկացած բարձրության, ինչո՞ւ մեր արկը չպիտի հասնի իր նպատակին:

— Կհասնի, — ասաց Բարբիկենը:

— Այո՛, սկսուք ե հասնել նպատակին, ի պատիվ ամերիկյան ժողովրդին, — ամերացրեց Միջել Արդանը, — միակ ժողովուրդը, վոր ընդունակ ե այսպիսի մի ձեռնարկ կատարելու, միակ ժողովուրդը, վոր կարող ե Բարբիկեն տալ: Բայց այժմ զիտե՞ք, ինչի մասին եմ մտածում հիմա, յերբ մենք հանդուսացանք. ինչո՞վ պիտի դրազվենք: Անզործ նստելը մահացու ձանձրույթ ե:

Բարբիկենն ու Նիկոլը, չիմանալով ինչ պատասխանել, որւթիւնը բացասական շարժում արին:

— Իսկ յես այդ մասին մտածել եմ, սիրելի բարեկամներ, — շարունակեց Միջելը: — Դուք միայն ասացեք, թե ինչ եք ցանկանում. յես իսկույն ձեղ կտամ շաշկա, շախմատ, խաղաթըդթեր, գոմինո. միայն բիլիարդն ե պակասում:

— Ինչպե՞ս, — հարցրեց Բարբիկենը, — մի՞թե քեզ հետ վերցրել ես այդ մանր-մունը բաները:

— Ինչպե՞ս չե, — պատասխանեց Միջել Արդանը, — վերցրել եմ վոչ միայն մեր ժամանցի համար, այլ նաև վարպետի նվիրեմ կուսնի կաֆեներին:

— Բարեկամ, — ասաց Բարբիկենը, — յեթե Լուսինը մարդաբնակ ե, նրա բնակիչները աշխարհ են յեկել մեզանից մի քանի հարյուր հազար տարի առաջ, վորովհետեւ վոչ մի կառկած չկա, վոր Լուսինը մեր մոլորակից ավելի հին ե: Իսկ յեթե լուսնակաները գոյություն ունեն հարյուր հազարավոր տարիներից ի վեր և յեթե նրանց ուղեղը կազմված ե մերինի նըման, ապա նրանք հնարած կլինեն բոլոր մեր հնարածները և նույնիսկ այնպիսի բաներ, վոր մենք միայն մի քանի դար հետո պիտի հնարենք: Դժվար, թե նրանք մեզանից բան սովորեն, իսկ մենք շատ բան պիտի սովորենք նրանցից:

— Ինչպե՞ս, — առարկեց Միջել Արդանը, — դու կարծում ես, թե նրանք ել ունեն այնպիսի արվեստագետներ, ինչպես Ֆիդիոսնը, Միքել-Անջելոն ու Ռաֆայելը:

— Այո՛:

— Հոմերոսի, Վիրագիլիոսի, Միլտոնի, Լամարտինի ու Վիկոնտի Հյուգոյի նման բանասուեղծներ:

— Ի հարկե:

— Պատոնի, Արխանոսիլի, Դեկարտի, Կանտի նման փիլիսոփաներ:

— Անկասկած:

— Արքամեդի, Յեվլիլիդի, Նյուտոնի, Պասկալի նման գիտականներ:

— Կարող եմ հավաստիացնել, վոր այդպես ե:

— Յեկ Նորայի նման լուսանկարիչ:

— Վստահ եմ, վոր կա:

— Լավ, սիրելի Բարբիկեն, յեթե մեզ չափ գիտուն ու նույնիսկ մի բան ել ավելի յեն այդ լուսաբնակները, ինչո՞ւ մինչեւ այժմ նրանք չմտածեցին հաջարերություն հաստատել Յերկրի հետ:

— Ո՞վ ասաց քեզ, վոր նրանք չեն ձեռնարկել այդ գործին, — շատ լուրջ կերպով հարցրեց Բարբիկենը:

— Իսկապես, — առաջ Նիկոլը, — նրանց համար ավելի հեշտ կիմեր, քան թե մեզ համար հետեւյալ պատճաններով — առաջին. Լուսնի ձգողական ուժը վեց անգամ պակաս ե Յերկրի ձրգողական ուժից, այդպիսով նրանց արկը ավելի հեշտությամբ պիտի բարձրանար. յերկրորդ. նրանց արկը պիտի թըռչեր միայն յերեսուն հազար կիլոմետր, վորսանակ թռչելու յերեք հարյուր հազար կիլոմետր, այդպիսով նրանց արկի արագությունը կարող եր լինել տասն անգամ ավելի պակաս:

— Յեթե այդպես ե, — ասաց Միջելը, — յես կրկնում եմ, ինչո՞ւ նրանք չեն մտածել այդ մասին:

— Իսկ յես կրկնում եմ, — առարկեց Բարբիկենը, — ո՞վ ասաց քեզ, վոր չեն արել այդ քայլը:

— Յե՞րբ են արել:

— Հաղարավոր տարիներ առաջ. Յերկրի վրա մարդկային ցեղի հայտնվելուց առաջ:

Իսկ ո՞ւմբը. ո՞ւր ե նրանց ուումբը:

— Բարեկամ, — պատասխանեց Բարբիկենը, — մեր յեթից բաղնորի հինգ վեցերորդ մասը ծածկված ե ջրով, ուրեմն շատ

Հավանական ե, վոր յիթե Լուսնից արկ ե արձակվել դեպի Յերկեթ, այդ արկը գտնվում ե Ատլանտյան կամ Խաղաղ ովկեանունի խորքերում. կամ գուցե կորել ե մի ճեղքածքի մեջ այն ժամանակ, յերբ յերկրի կեղեց դեռևս կարծրացած չեր:

— Սիրելի Բարբիեն, — ասաց Միշել Արդանը, — դու ամեն հարցի պատասխան ունես և յս խոնարհվում եմ քո իմաստության առաջ:

Այդ միջոցին Դիանան իր հաջոցով միջամտեց խոսակցությանը պահանջելով իր նախանաշը:

— Ահա թե ինչ, — բացականչեց Միշել Արդանը, — այնքան տարվել ենք խոսակցությամբ, վոր մոռացել ենք Դիանային ու Արբանյակին:

Միշել Արդանն իսկույն նախանաշի մնացորդը տվեց շանը, վոր մեծ ախորժակով կերակ:

— Բայց զի՞տես ինչ կա, — ասաց Միշելը, — իսկուր բոլոր տեսակի կենդանիներից մի-մի զույգ չվերցրինք մեզ հետ:

— Ճիշտ ես ասում, — պատասխանեց Բարբիենը, — բայց տեղ չեմ լինի նրանց համար:

— Եհ, — առարկեց Միշելը — բայտական եր մի քիչ սեղմակ:

— Խնդիրն այն ե, — ասաց Նիկոլը, — վոր յեղը, կովը, ցուռը, ձին Լուսնի վրա մեզ համար շատ ոգտակար կլինելին: Դժբախտաբար այս վագոնը չեր կարելի վերածել զոմի կամ արսուի:

— Բայց համենայն դեպս, — ասաց Միշել Արդանը, — զանեմի իշուկ կարող եյինք վերցնել. այդ համբեկապատ ու տոկուն կենդանին, վորին այնքան սիրում եմ յս: Դժբախտաբար բընությունը նրանց շատ քիչ ե ոժտել: Նրանց ծեծում են վոչ միայն կենդանի ժամանակ, այլ մահվանից հետո յել:

— Ինչպես թե, ի՞նչ ես ուզում ասել:

— Զե՞ս, վոր նրանց մորթից թմբուկ են պատրաստում:

Բարբիենն ու Նիկոլը չկարողացան զսպել իրենց ծիծաղն այլ սրամիտ դիտողության վրա: Բայց ուրախ ընկերակցի ճիշն ընդհատեց նրանց ծիծաղը: Միշել Արդանը մի արագ հայտնի վրա Արբանյակի բնի վրա ու տեղից բարձրանալով, ասաց.

— Բարեկամներ, Արբանյակն այլու հիվանդ չէ:

— Հբաշալի յե այդ, — ասաց Նիկոլը:

— Վոչ, նա հիվանդ չէ, բայց մեռել ե, — ավելացրեց նա տիսուր ձայնով:

Խսկապես գերախան Արբանյակը չեր կարողացել դիմանալ վերքին ու սատկել եր. դրան վոչ մի կասկած չկար:

Միշել Արդանը, շփոթված, իր բարեկամներին եր նայում:

— Այժմ մեր առաջ մի նոր հարց ե ծագում, — ասաց Բարբիենը, — մենք չենք կարող այդ շան դիմակը մեզ մոտ դահնել:

— Ի հարկե չենք կարող, — պատասխանեց Նիկոլը, — բայց մեր լուսամուտները կարող են բացվել. բայց անենք նրանցից մեկն ու մեկն ու դիմակը դուրս նետենք:

Նախադահը մի քանի բողե մտածեց ու ապա ասաց.

— Պետք ե այդպես անել, բայց մեծ զգուշությամբ:

— Ինչո՞ւ, — հարցրեց Միշելը:

— Հետեւյալ յերկու պատճառներով, — պատասխանեց Բարբիենը, — նախ և առաջ չպետք ե պակասեցնել մեր ողի պաշտը:

— Բայց չե՞ վոր պակասած ողի տեղ նորն ենք տալիս:

— Այս, բայց վոչ բոլորովին: Մենք միայն թթվածին ենք պատրաստում, — այս առթիվ ասեմ, թե պետք ե ուշադիր լինել, վոր թթվածինը պետք յեղածից ավելի չարաղրիփի, վոր բոլցետե այդ ալելորդը կարող ե լուրջ վնասներ պատճառել մեկ: Սակայն մենք միայն թթվածին ենք արտազրում, բայց վոչ ազոտ, վորը թեև չնշանության համար ողտակար չե, բայց և այնպես ողի հիմնական ու կարեսը մասն ե կազմում: Նա բացված լուսամուտից կարող ե դուրս ցնդել:

— Իեղծ Արբանյակի դիմակը դուրս ցցելը մեղմնից շատ քիչ ժամանակ կիսի, — ասաց Միշելը:

— Ճիշտ ե, բայց և այնպես ողետք ե շատ արագ չարժիք:

— Իսկ յերկրորդ պատճառն ինչ ե, — հարցրեց Միշելը:

— Յերկրորդ պատճառն այն ե, վոր յիթե լուսամուտը յիշեկար ժամանակի բաց թողնենք, դրանի խիստ ցուրտալ ներս կթափանցի ե մենք կարող ենք սառչել:

— Բայց չե՞ վոր Արել տաքացնում ե:

— Արել տաքացնում ե մեր արկը, վորը կլանում ե նրա

հասագայթները, բայց բոլորովին չի տաքացնում այն գատարկությունը, վորի մեջ թոշում ենք մենք այժմ։ Այնտեղ, վարտիկ ող չկա, վոչ ջերմություն կա, վոչ ել լույս։

— Բայց ի՞նչ աստիճանի յեն յենթադրում մոլորակային տարածությունների ջերմությունը, — հարցրեց Նիկոլը։

— Մի ժամանակ կարծում եյին, — պատասխանեց Բարբիկենը, — թե այդ ջերմությունը չափազանց ցածր է։ Բայց Միշել Արդանի մի հայրենակիցը, Գիտության Ակադեմիայի փայլուն անդամներից մեկը՝ Ֆուրիեն ճշուց այդ թվերը։ Նրա կարծքով, տարածության ջերմաստիճանը վաթսուն աստիճանից ցածը չի իջնում։

— Ընդամենը, — ասաց Միշելը։

— Այդ մոատվորապես բեկույին շրջանների ջերմաստիճանն է, վոր գերոյից ցածր և մոտավորապես հիսուն վեց աստիճան։


— Պետք է սակայն հաստատել, — ասաց Նիկոլը, — վոր Ֆուրիեն չի սխալում իր հաշիվների մեջ; Յեթե չեմ սխալվում, մի ուրիշ Փրանսիացի գիտնական Պուլյեն տարածության ջերմաստիճանը յենթադրում է զերոյից ցած հարյուր քառասուն յերկու աստիճան։ Մենք կարող ենք ստուգել այդ։

— Վոչ այս բողեյին — պատասխանեց Բարբիկենը, — վորովհետեւ այժմ Արեկի ճառագայթները ուղիղ ընկնում են ջերմաշափի վրա և նա հետեւաբար բարձր ջերմաստիճան ցույց կատ։ Բայց յեթե մեզ հաջողվի հասնել լուսնին տասնհինգորյա զիշերների ընթացքում, յերբ փոփոխակի մեկ կամ մյուս յերեսը դժուշեր կլինի, կարող ենք անել այդ փորձը, մանավանդ, վոր Լուսինն ել շարժվում և դատարկ տարածության մեջ։

Յերեք ուղևորները ձեռնարկեցին Արբանյակի թաղման դրժին։ Նրան պետք եր զցել տարածության մեջ, ինչպես չոզենավերի վրա, ծով են զցում մարդկանց դիակները։

Ինչպես հանձնարկել եր Բարբիկենը, ամբողջ գործողությունը կատարվեց խիստ արագ, վորպեսզի ողբ արկի ներսից դուրս չգնար։ Զգուշությամբ քանդեցին լուսամուտի պառաւակը, իսկ Միշելը հուզված պատրաստվում եր գուրս զցել չունը տարածության մեջ։

Լուսամուտի աղակին արագ բացվեց ու իսկույն Արբանյակի դիակը նետվեց դուրս։



Արբանյակի թաղումը

## ՀԱՐՅԵՐ ՅԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Հաջորդ որը, գեկտեմբերի 4-ին, խրոնոմետրները ցույց ե-  
յին տալիս յերկրի ժամանակով առավոտյան ժամի հինգը, յերբ  
ուղևորները զարթնեցին, մեկնման բովելից հիսուն չորս ժամ  
հետո։ Ուրեմն նրանք արկի մեջ ապրում եյին նախաղես նշա-  
նակված ժամանակի կեսից միայն հինգ ժամ քառասուն բովել ա-  
վելի, մինչդեռ արկն արդեն անցել եր Յերկրի ու Լուսնի միջև  
յեղած տարածության համարյա յոթ տասներորդական մա-  
սը։

Յերբ նրանք ներքեմի լուսամուտից նայեցին Յերկրին, վեր-  
ջինս այժմ միայն մի մութ կետ եր յերեռում։ Վոչ մահիկ կար,  
վոչ նև մոխրի գույն։ Հաջորդ որը, կես գիշերին պետք եր  
սպասել «Նորայերկիր» հենց այն ժամանակ, յերբ Լուսինը լրիդ  
կլիներ։ Վերեռում, դիշերային լուսատուն հետզետե մոտենում  
եր արկի հետեւած գծին։ այդպիսով հանդիպումը պիտի կա-  
տարվեր նշանակված ժամին։

Ամբողջ շրջապատը (մութ յերկնակամարը) ծածկված եր  
փայլուն կետերով, վորոնք կարծես գանդաղորեն շարժվում ե-  
յին, սակայն այնքան հեռու եյին արկից, վոր նրանց հարաբե-  
րական մեծությունը վոչ մի փոփոխության չեր յենթարկվում։

Արեն ու աստղերը յերեռում եյին այնպես, ինչպես նրանք  
յերեռում են Յերկրից։ Իսկ Լուսինը թեև անհամեմատ մեծա-  
ցել եր, սակայն ուղևորների թույլ դիտակները դեռևս հնարա-  
վորություն չեյին տալիս զննելու և վորոշելու նրա կառուց-  
վածքի մանրամասնությունները։

Ժամանակն անցնում եր անվերջ խոսակցություններով։ Ա-

մենից ավելի խոսում եյին Լուսնի մասին, ամեն մեկն իր դիտ-  
յածն եր պատմում։ Բարբիկենն ու Նիկոլը սովորականի նման  
լուրջ, Միշել Արդանը՝ միշտ կատակախոս։

Խոսում եյին արկի, նրա զիրքի, ուղղության, հավանական  
պատահարների, այն նախազգուշական միջոցների շուրջը, վոր  
պետք եր ձեռք առնել Լուսնի վրա ընկնելու ժամանակ։ Զրույ-  
ցը վոչ մի բովել չեր դադարում։

Նախաճաշի պահին Միշել Արդանի մի հարցի առթիվ այն-  
պիսի հետաքրքիր խոսակցություն սկսվեց, վոր արժանի յե-  
մեջ բերել այսուղի։

Միշելը ցանկացալ իմանալ, թե ի՞նչ հետևանք կունենար,  
յեթե հանկարծ արկը կանգ առներ կոլումբիակի փողից դուրս  
թռչելիս։

— Բայց, — առարկեց Բարբիկենը, — չեմ հասկանում, թե  
ի՞նչ պատճառով արկը պիտի կանգ առներ։

— Յենթաղրենք մի բովել, վոր կանգ առներ։

— Այդ մի անհավանական յենթաղրություն ե, — պատա-  
խանեց Բարբիկենը, — բացի այն դեպքից, յեթե մդիչ ուժը ան-  
բավական լիներ, բայց այդ ժամանակ նրա արագությունը կը-  
պակասեր աստիճանաբար և կանգ չեր առնի միանդամից, ինչ-  
պես զու կարծում ես։

— Յենթաղրենք, թե տարածության մեջ մի ժարմնի բաղկա-  
լից։

— Որինակ, ինչպիսի՞ ժարմնի։

— Հենց այն բոլիղին, վորին մենք պատահեցինք։

— Այդ դեպքում — պատասխանեց Նիկոլը — արկը ու  
փշուր կլիներ, նրա հետ մենք ել։

— Ավելի վատթար կլիներ, — ավելացրեց Բարբիկենը, —  
վորջ-վորջ կայրվեյինք։

— Այրվել, — բացականչեց Միշելը, — ակասո վոր այդպիսի  
բան չպատահեց. հետաքրքիր եր տեսնել...

— Այս, կտեսնեյիր, — պատասխանեց Բարբիկենը, — ներ-  
կայումս հայտնի յե, վոր ջերմությունը շարժման մի յերեռութ-  
ե, այսպես, յեթե ջուրը տաքացնում, այսինքն նրա ջերմու-  
թյունն ավելացնում ենք, այդ նշանակում ե, վոր նրա մասնիկ-  
ները շարժման մեջ ենք դնում։

— Ահա թե ինչ, — բացականչեց Միշելը, — ոտք մի սրամիս  
թերթիա յե:

— Յեվ ճիշտ թերթիա, սիրելի բարեկամ. յերբ սեղմում ենք  
դնացքի արտելակը. դնացքը կանդ և առնում. իսկ ի՞նչ ե լի-  
նում այն շարժումը, վոր կար մինչ այդ. այդ շարժումը փոխ-  
վում ե ջերմության ու արդելակը տաքանում ե: Հասկանալի  
յե:

— Ինչպես չե, — բացականչեց Միշելը վողեսորված: — Այս-  
պես, որինակի համար, յերբ յես շատ եմ վազում ու քրտինքի  
մեջ լողում, ինչո՞ւ համար եմ ստիպված լինում կանդ առնել.  
շատ պարզ պատռաճով, — վորովհետեւ իմ շարժումը փոխվեց  
ջերմության:

Բարբեկենը չկարողացավ ծիծառը դսպել, լսելով Միշելի այդ  
զվարճալի որինակը: Ապա նորից շարունակեց բացատրել ջեր-  
մության թերթիան:

— Ուրեմն բաղխման դեպում մեր արկի հետ կկառարվեր  
այն, ինչ վոր կատարվում է դնդակի հետ, յերբ նա բազիլում  
մետաղե տախտակին — շիկանում ե և ընկնում վայր. այս-  
տեղ ել տեսնում ենք, վոր դարձյալ շարժումն ե, վոր փախլում  
ջերմության: Հետեւապես մեր արկն ել, յեթե բոլիղին բազի-  
վեր, իսկույն կկորցներ շարժման արագությունը և այնպիսի մի  
ջերմություն կառաջանար, վոր իսկույն կհալչեր:

— Իսկ ի՞նչ կլիներ, յեթե հանկարծ Յերկիրը կանդ առներ  
շարժման ժամանակ, — հարցրեց Նիկոլը:

— Նրա ջերմությունն այնքան կրաքճանար, — պատասխա-  
նեց Բարբեկենը, — վոր մոլորակը իսկույն գոլորշու կիւրած-  
վեր:

— Հրաշալի յե, — բացականչեց Միշելը, — այդ կլիներ ո-  
մենալով միջոցը աշխարհի գործերին վերջ տալու համար:

Իսկ յեթե Յերկիրն ընկներ Արևի վրա՝ հարցրեց Նիկոլը:  
— Հաշվել են, — պատասխանեց Բարբեկենը, — վոր այդպի-  
սի մի անկում կառաջացներ այնպիսի ջերմություն, վոր հավա-  
սար ե յերկրագնդի ծավալին հավասար 1600 ածխաղների այր-  
ման:

— Իսկ ի՞նչքա՞ն ե Արևի ջերմությունը, — հարցրեց Միշելը:  
— Յեթե Արևը շրջապատենք քառայոթ կիլոմետր հաստ ո-

ժուիի չերտով և վառենք այդ ածուխը, կստացվի այն ջերմու-  
թյունը, վոր ունի Արևը. այդ ջերմությունը կարող ե մի ժա-  
ման յեռացնել յերկու միլիլարդ ինն հարյուր միլիոն խարանարդ  
միլիլամետր<sup>1)</sup> ջուր — ավելացրեց Բարբեկենը:

— Բայց ի՞նչպես այդ ջերմությունը մեղ չի խորովում, —  
հարցրեց Միշելը:

— Զի խորովում, վորովհետեւ Յերկիրը շրջապատող մըթ-  
նությունը ծծում ե Արևի ջերմության չորս տասներորդական մա-  
սը. բացի այդ, Յերկիր ստացած ջերմությունը հավասար ե Ա-  
րեվի ստացված ջերմության մեկ յերկումիլիլարդերորդ մասին:

— Տեսնում եմ, — ասաց Միշել Արդանը, — վոր մեզ շրջա-  
պատող մթնոլորտը վոչ միայն մեղ չնչելու ոդ ե տալիս, այլ  
և չի թողնում վոր յեփինք:

— Այս, — ասաց Նիկոլը, — բայց դժբախտաբար այդ այ-  
պես չի լինի լուսնի վրա:

— Ե՛ս, — ասաց Միշելը վստահ շեշտով, — յեթե այնտեղ  
բնակիչներ կան, ուրեմն նրանք չնչում են. յեթե նրանք ել չը-  
կան, յերեւ այնքան թթվածին թողած կլինեն, վոր յերեք հո-  
գու կբավարարի. կարծում եմ թթվածին կարող ենք գանել գո-  
նե ձորերում, վորտեղ հավաքված կլինի ծանրության պատճա-  
ռով. ի՞նչ արած, մենք ել լեռների գաղաթը չենք բարձրանա,  
մի մեծ ցավ չե:

Այդ խոսքերից հետո Միշելը վոտքի կանդնեց և գնաց լու-  
սամուսից դիտելու լուսնի սկավառակը, վոր փայլում եր վառ  
բռյուղի:

— Սատանան տանի, — բացականչեց Միշելը, — ի՞նչպես  
առք պիտի լինի որն այնտեղ:

— Մի կողմ թողած այն, — ավելացրեց Նիկոլը, — վոր  
այնտեղ որը յերեք հարյուր վաթսուն ժամ ե:

— Իսկ դրա փոխարեն, — ասաց Բարբեկենը, — դիշերներն  
ել նույնքան յերկար են:

— Հրաշալի՝ յերկիր, խսոք չկա, — ասաց Միշելը, — շատ  
կցանկանայի շուտով այնտեղ լինել: Ե՛ս, սիրելի ընկերներ մի՞թև  
հետաքրքիր չե Յերկիրն ընդունել վորպես լուսին, դիտել, թե

<sup>1)</sup> Միլիլամետր հավասար է 10 կիլոմետրի:

ինչպես և բարձրանում հորիզոնից, ճանաչել նրա ցամաքամասերն ու ասել՝ ահա Ամերիկան, ահա Յելլուպան, ապա դիտել, թե ինչպես և չքանում Արեւի ճառագայթների մեջ; Ի միջի այլոց, Բարբիկեն, մի՞թե Լուսնի բնակելչների համար եւ խավարում լինում է:

— Այս, Արեւի խավարում, — պատասխանեց Բարբիկենը, — այն ժամանակ, յերբ Արեւի, Լուսնի ու Յերկրի կենտրոնները գալիս են մենույն գծի վրա և այն դեպքում, յերբ Յերկրը մեջտեղն և լինում:

— Առացեք խնդրեմ, ժամը քանի՞սն ե, — հարցրեց Արդարը:

— Յերեքը, — պատասխանեց Նիկոլը:

— Ինչպես արագ և անցնում ժամանակը այլպիսի դիտական խոսակցություններով. իսկապես, ինձ թվում ե, վոր յես շատ բան եմ սովորում, զգում եմ, վոր դիտելիքների հոր եմ դառնում:

Այդ խոսքերից հետո Միշելը բարձրացավ վերև «Լուսինն ավելի լավ դիտելու համար», ինչպես ինքն եր տառւմ: Այդ միջոցին նրա ընկերները դիտում եյին ներքեւի լուսամուտից, վոչ մի նոր բան չեր յերեսում:

Քիչ հետո Միշել Արդանը ցած իջնելով, մոտեցավ կողմնակի լուսամուտին և հանկարծ զարմանքի մի աղաղակ արձակեց.

— Ի՞նչ պատահեց, — հարցրեց Բարբիկենը:

Նախագահը շտապեց լուսամուտի մոտ և տեսավ, վոր պարկի նմանող մի բան տատանվում եր մի քանի մետր հեռավորության վրա: Այդ առարկան, թվում եր, թե անշարժ և արկի նըման, վորից կարելի յե յեղբակացնել, վոր նա եւ նույն արդությամբ թուզում եր տարածության մեջ:

— Ի՞նչ բան և սա — հարցրեց Միշել Արդանը: Գուցե տարածության մեջ գտնվող ամենափոքր մարմիններից մեկն ե, վորին դեպի իրեն և քաշել մեր արկը. մի՞թե այդ մարմինը մեզ պետք ե ուղեկցի մինչև լուսին:

— Զարմանալին այն ե, թե ինչպես այդ մարմինը, վորի անեսակարար կը կուզ անկատկած արկից ցածը ե, կարողանում է համահալասար գնալ նրա հետ:

— Նիկոլ, — պատասխանեց Բարբիկենը մի ըստել լուսությու-

նից հետո, — ինձ հայտնի չե, թե ինչ և այդ մարմինը, բայց կարող եմ բացատրել, թե ինչու համար և թուզում մեղ հետ ժիասին:

— Ինչո՞ւ համար:

— Վորովհետեւ մենք թուզում ենք դատարկության մեջ, սկզբին կապիտան, և ինչպես հայտնի յե, դատարկության մեջ մարմինները ընկնում կամ բարձրանում են — ինչ վոր միկնույն եւ միկնույն արագությամբ, անկախ իրենց ծանրությունից ու ձևից: Ողն ե, վոր իր դիմադրությամբ առաջացնում և ծանրությունները: Յերբ մենք ապակե խողովակից ողը դատարկում ենք և նրա մեջ զցում զանազան մարմիններ, — լինի փոշու հատիկներ կամ կապարի կտորներ — նրանք ընկնում են միկնույն արագությամբ. այսուղի, տարածության մեջ եւ միկնույն յերկութիւն և տեղի ունենում:

— Շատ ճիշտ ե, — պատասխանեց Նիկոլը, — ուրեմն այն բոլոր առարկաները, վոր մենք արկից դուրս կդցենք, մեղ ողի ափ հետեւն մինչև լուսին հասնելու:

— Ի՞նչ տիմարներ ենք յեղել, — բացականչեց Միշելը:

— Ինչո՞ւ համար այլպիս պատվում ես մեղ, — հարցրեց Բարբիկենը:

— Նրա համար, վոր մենք չմտածեցինք մեր վաղոնը լիցնել ողտակար իրերով, զբքերով, գործիքներով և այլն, հետո կարող ելինք այդ բոլորը դուրս նետել ու նրանք կհետևելին մեղ: Իմ մեջ մի հրաշալի միտք ծաղեց — ինչո՞ւ մենք ինքներս չենք դուրս զալիս զբանելու, այդ բոլից նման: Ինչո՞ւ մենք մեղ դուրս չցցենք պատուհանների մեկն ու մեկով: Ինչպիսի մեծ հաճույք կինի կախված մնալ յեթերի մեջ, ավելի բախտավոր, քան թե թուզունը, վոր ստիպված է շարունակ թևերը չարելու:


— Շատ լավ կլիներ, — ասաց Բարբիկենը, — բայց ինչպես չնչել:

— Ա՛խ այդ անիծված ողը, կարծես ժամանակ ե դուել չը լինելու:

— Բայց յեթե ոդ չլիներ, քո ծանրությունը արկի ծանրությունից պակաս լինելով, դու հետ կմնայիր:

— Մի խոսքով իմ հղացած միտքն անողետք ե:

— Դժբախտաբար այդպիս ե:



Արքանյակի գիտակը հետևում եր արկին

— Ուրեմն մէնք ստիպված ենք բանտարկված մնալ այս  
վագոնում :

— Ուզիչ ճար չկա :  
— Ա՛չ, — բացականչեց Միշելը վորոտալի ձայնով :  
— Ի՞նչ կա, — հարցրեց Նիկոլը :  
— Յես գուշակեցի, թե ինչ բան է այդ յենթագրվող բոլի-  
դը . դա վո՞չ աստղային մարմին է, վոչ ել մի վորեկ մոլորա-  
կից սկսկած կառու :  
— Ի՞նչ է ուրեմն քո կարծիքով, — հարցրեց Բարբիկենը :  
— Այդ մեր դժբախտ չունն է, Դիանայի բարեկամը :  
Իսկապէս, ճիշտված պարկապղուկի նման անձն, անձանա-  
չելի այդ իրը Արքանյակի դիակն եր, վար արկի հետ միասին  
անընդհատ բարձրանում եր :

Լուսինը վեհափառորեն ընթանում եր աստղազարդ յերկնակամարի վրա. մի քանի աստիճան ևս, ու նա պիտի հասներ այն կետին, վորտեղ պիտի կատարվեր հանդիպումը։ Ըստ Բարբեկենի հաշվիների, արկը լուսնի վրա պիտի ընկներ Հյուսիսային կիսադնդում, վորտեղ ընդարձակ դաշտեր կային և լեռները շատ հաղվագյուտ եյին։ Այդ հանդամանքը շատ նպաստավոր էր, վորովհետեւ լուսնի ողը, ինչպես յենթալրում եյին, կուտակված պետք ե լիներ հովիաներում և ձորերում։

— Բացի այդ, — ասաց Միշել Արդանը, — մեր վայրեջքի համար գաշտավայրն ավելի հարմար է, քան լեռը։ Յեթե մի լուսնաբնակի Յելրոպայում դնեն Մոնթանի կամ Ասիայում Հեմալյայի գաղաթի վրա, այդ դեռ չի նշանակում, վոր նա ուղարկվում և Յերկրի վրա։

— Դեռ մի ուրիշ բան ել կա, — ավելացրեց Նիկոլը, — յեթե մեր արկը հարթ հողի վրա ընկնի, այստեղ կմնա անշարժ, իսկ յեթե զառիվայրի վրա իջնի, ձյունազնդի նման կվորվի, իսկ վորովհետեւ մենք սկյուռներ չենք, դժվար թե վողջ մնանք։ Ուրեմն ամեն ինչ լավ ե մեզ համար։

Իսկապես, խիզախ ուղևորության հաջողությունը վոչ մի կառկածի տակ չեր։ Սակայն ինչ վոր մի միտք անհանգստացնում էր Բարբեկենին, բայց չուզելով իր ընկերներին ել վըրդովել, նա այդ մասին վոչինչ չասաց։

Խնդիրն այն եր, վոր համաձայն նախապես կատարված մաթեմատիկական հաշվիների, արկը պետք ե ընկներ լուսնի սկավառակի կենտրոնը, սակայն իրականում նա թեքվել եր դեպի հյուսիսային կիսադնդը։ Ինչի՞ց եր առաջացել այդ թեքումը։ Բարբեկենը չեր կարողանում գուշակել պատճառը և վորոշել թեքման մեծությունը։ Նա ել իր ընկերների նման հույս ուներ, վոր այդ թեքման չնորհիվ վայրեջքը կկատարվեր բարեհաջող պայմաններում։

Բարբեկենը շարունակեց ուշադրությամբ դիտել լուսինը, աշխատելով հետազոտել, թե արդյո՞ք արկի ուղղությունը չեր վոխվում։ Հեշտ ե յերեակայել, թե ինչպիսի դրություն կը տեղձվեր, յեթե արկն իր նպատակին չհասնելով, մի վորեեւ ուժից մղված, նետվեր միջոլորակային տարածության մեջ։

Այժմ լուսինն այլիս մի տափակ սկավառակ չեր, այլ

## ԳԼՈՒԽ VII

### ԱՐԲԵՑՄԱՆ ՄԻ ՐՈՊԵ

Այսպես ուրեմն, այս արտասովոր պայմանների մեջ առաջցել եր մի հետաքրքիր, տարօրինակ, բայց հասկանալի յերեվույթ։ Արկից գուրս նետված ամեն մի իր պիտի հետևեր նրա ուղղուն և կանդ առներ միայն նրա հետ։ Այս յերեսութը խոսակցության համար այսպիսի մի նյութ եր, վոր մեր ուղևորները ամբողջ յերեկոն նրանով զբաղվեցին։

Նրանց հուզումն ավելանում եր, քանի մոտենում եյին իրենց նպատակին։ Նրանք ամեն բոպե սպասում եյին անուններ մի բանի, նոր յերեսությունների և վոչ մի բան ընդունակ չեր նըրանց զարմացնելու։ Նրանց գրգռված յերեակայությունը թըռչում եր արկից ել արագ, վորի արագությունը հետզհետեւ նվազում եր աննկատելի կերպով։ Լուսինն ամեն բոպե մեծանում եր։ Յերեմն նրանց թվում եր, թե բավական ե ձեռքը յերկարել նրան բռնել կարենալու համար։

Հաջորդ որը, նոյեմբերի 5-ին, առավոտյան ժամը 5-ից յերեք ուղևորները վոտքի վրա եյին։ Յեթե հաշվիները ճիշտ եյին, այդ որը պիտի վերջանար ուղեվորությունը, ամենից նըշանավորը անցյալ և ներկա ժամանակի բոլոր ուղևորություններից։ Այդ որը, կես դիշերին, լրիվ լուսնի պահին, նրանք պետք ե հանդիպելուն լուսնի փայլուն սկավառակին։ Այդ պատճառով ել վաղ առավոտից նրանք գիտում եյին լուսավորված պատուհանից և նրան վողջունեցին ուրախ բացական չություններով։

— Հուսում։

սղարդ յերեռմ եր նրա ուստացիկությունը և յեթե Արևը նրան  
չեղակի լուսավորեր իր ճառադայթներով, այդ դեպքում շատ  
սղարդ պիտի յերեային նրա բարձր լեռները, խառնաբանների  
խոր անդունդները և ընդարձակ տափառտանների քմահաճ շրջ-  
ռադերը։ Սակայն այդ բոլորը ձուլվում եր Արևի վառ լույսի  
տակ և հազիվ կարելի յեր լինում տեսնել այն լայն բծերը, վո-  
րոնք լուսնին մարդկային դեմքի տեսք ելին տալիս։

— Մի դեմք ե սա, ուրիշ վոչինչ, — ասաց Միշել Արդանը,  
— բայց շատ ցավալի յե, վոր այդպես չեչոտ է։

Ռեզեռները շարունակում ելին գիտել այդ նոր աշխարհը։  
Յերեակայությամբ նրանք շրջում ելին այդ անծանոթ վայրե-  
րը, բարձրանում բարձր գագաթները, իջնում ելին լայն ձորե-  
րի խորքերը։ Այս ու այնտեղ տեսնում ելին ընդարձակ ծովեր  
ու բարձր լեռներից նրանց մեջ թափվող ջրի հեղեղները։ Թեք-  
ված խորիսրատների վրա, նրանք հույս ունելին լսելու այդ  
համբունականորեն համը լուսատուի աղմուկը։

Վերջին որը նրանց վրա խորը տպագորություն գործեց և  
նրանց հիշողության մեջ մնացին ամենատիօքը մանրամասնու-  
թյունները։ Ինչքան մոտենում ելին իրենց նպատակին, այնքան  
մի անորոշ յերկյուղ եր տիրում նրանց։ Այդ յերկյուղն եւ ա-  
վելի մեծ կլինեք, յեթե նրանք գիտենային, թե ինչքան եր  
պակասել արկի արագությունը, յեթե դրային, վոր այդ արա-  
գությամբ նրանք չելին հասնի իրենց նպատակին։

Այդ ժամանակ արկը համարյա վոչ մի «ծանրություն» չու-  
ներ։ Քանի մոտենում ելին լուսնին, արկի ծանրությունն ավե-  
լի և ավելի յեր նվազում և բոլորովին պիտի վոչնչանը այն  
կետում, վորտեղ Յերկը և լուսնի ձգողական ուժերը հավա-  
սարվում են, հետեւապես չեղոքացնում միմյանց։

Զնայած այդ անհանդստության, Միշել Արդանը չմոռացավ  
նախաճաշը պատրաստել իր սովորական ճշտապահությամբ։  
Մեծ ախորժակով կերան զաղի վրա պատրաստված համեղ բուլ-  
յոնը, պահածո միսը, նախաճաշը կատարյալ յեղալ մի քանի  
յոնը, պահածո միսը, նախաճաշը կատարյալ յեղալ մի քանի  
քամական պատրաստել իրենց Միշել, կամ ավելի ճիշտը՝ նրան  
գիշար պիտի լիներ նրան թաղել, կամ ավելի ճիշտը՝ նրան  
չյեթերել, քանի վոր յեթերը փոխարինում ե հողին։ Մեռնողի  
չյեթերել, քանի վոր յեթերը փոխարինում ե հողին։ Մեռնողի  
պիտի հետեւեր մեղ, կարծես մեղ խղճահար անելու հա-  
մար։

Համենայն դեպք, հեռատես Փրանսիացին իր հետ վերցրել  
եր Մեղսկի և Կուաշը՝ Որի խաղողի վորթերից և մեծ հույս եր  
դրել նրանց վրա։

Ոդ մատակարարող վործիքն աշխատում եր հրաշալի և նո-  
րոգում ոդի պաշարը։ Ածխաթթվի վոչ մի մասնիկը չեր դիմա-  
նում թթու կալիումին, իսկ թթվածինը, ըստ կապիտան Նիկոլի  
արտահայտության, «առաջին տեսակի» յեր։ Արկում գոնվոզ  
քիչ քանակությամբ ջրի գոլորշին, խառնվելով ոդին, մեղմաց-  
նում եր նրա չորսությունը։ Փարիզի, Լոնդոնի և Նյու-Յորքի  
շատ բնակարանները, թատերասրահների մեծաթանությունը  
անկասկած առողջապահական այդքան լավ պայմանների մեջ չե-  
մին գտնվում։

Բայց, վորպեսզի այդ գործիքը կարգին աշխատեք, պետք  
եր նրան պահել շատ մեծ խնամքով։ Այդ պատճառով Միշելը  
ամեն առաջնորդում էր ուկույատորները, զնում եր ծո-  
րակներն ու կանոնավորում դազի ջերմաստիճանը։

Մինչև այդ՝ ամեն ինչ լավ եր գնում։ ուղեարները, հետե-  
վելով պատվարժան Մաստոնի որինակին, սկսում ելին գիրանալ  
և անկասկած անձանաչելի կղանային, յեթե նրանց բանար-  
կությունը մի քանի ամեն տեսեր։ Միշոսքով, նրանք իրենց  
այնպես ելին զգում, ինչպես վանդակում փակված ճուոր ճար-  
պակալում է։

Լուսամուտից դուրս նայելով, բարբեկենը տեսավ շան գիա-  
կըն ու գուրս գցված զանազան իրերը, վորոնք շարունակում ե-  
լին հետեւել արկին։ Դիանան տիրությամբ վոռնում եր, տեսնե-  
ով Արբանյակի գիակը։ Բայց բոլոր այդ առարկաները կար-  
ծես թե անշարժ ընկած ելին հողի վրա։

— Գիտե՞ք, բարեկամներ, — ասաց Արդանը, — յեթե մեզա-  
նից մեկնումեկը չդիմանար առաջին ցնցումին և մեռներ, շատ  
գիշար պիտի լիներ նրան թաղել, կամ ավելի ճիշտը՝ նրան  
չյեթերել, քանի վոր յեթերը փոխարինում ե հողին։ Մեռնողի  
չյեթերել, քանի վոր յեթերը փոխարինում ե հողին։ Մեռնողի  
պիտի հետեւեր մեղ, կարծես մեղ խղճահար անելու հա-  
մար։

— Ճիշտ ե, շատ տիրուք կլիներ, — ասաց Նիկոլը։  
— Ա՛հ, — բացականչեց Միշելը, — վորքան ափսոսում եմ,  
վոր հնարավոր չե դրսում զբոսնել։ Ինչպիսի հաճուքով կարե-  
կոր հնարավոր չե դրսում զբոսնել։

Ի՞ յեւ լողալ այս լուսավոր անհունության մեջ, սավառնել պայծառ շողերով վողողված յեթերում։ Ահ, յեթե Բարբիկենն իր հետ վերցրած լինեթ ծովասույզի հագուստ և ողահան մեքենա, յես ոխակ կանելի դուրս դալ արկից և դրսից կկանդնեյի նրա գաղաթին, ինչպես «Թիմերի» արձանը։

— Եհ, սիրելի Միշել, — պատասխանեց Բարբիկենը, — դու յերկար չեցիր կանգնի արձանի այդ դիրքում, վորովհետեւ չնորյած քո հագուստին, վոր պիտի ուռչեր քո մեջ յեղած ողի լայնացումից, դու կպայթիյիր նոնակի կամ այս ողաղարիկի նման, վոր չափաղանց շատ և բարձրանում։ Քանի մենք տարածության մեջ ենք լողում, պետք և հրաժարվենք ամեն տեսակ սենտիմենտալ շրջապայություններից։

Միշել Արդանը համոզվեց վորոշ չափով միայն. նա ընդունեց, վոր այդ բանը դժվար եր, բայց վոչ «անհնար», մի բառ, վոր նա յերբեք չեր ընդունում։

Խոսակցությունը մի նյութից մյուսին եր անցնում և վոչ մի բոպեկ կանգ չեր առնում։ Յերեք ընկերներին թվում եր, թե զանազան մտքերը նրանց ուղեղի մեջ աճում եյին այնուհետև՝ ինչպես տերեւները զարնան ջերմության տակ։

Այդ առավոտ բազմաթիվ հարցերի ու պատասխանների շարքում, Նիկոլը մի հարց տվեց, վորը մնաց առանց պատասխանի։

— Ահա թե ինչ, — ասաց կալիտանը, — շատ դուրեկան և ուղերդել դեպի Լուսին, բայց ի՞նչպես պետք և վերադառնանք։

Նրա յերկու ընկերները դարձացած միմյանց նայեցին։ Կարծես այդ իրողությունն առաջին անգամ եր կանգնում նրանց տուած։

— Ի՞նչ եք ուղում ասել, — հարցեց Արջությամբ Բարբիկենը։

— Հարց դնել վերադառնալու մասին, յերբ դեռ տեղ չենք հասել, ինձ թվում ե, թե անտեղի յե, — ասաց Միշելը։

— Յես իհարկե չեմ ուղում նահանջել սկսված դործից, — առարկեց Նիկոլը, — յես միայն ուղում եմ գիտենալ, թե ի՞նչպես պիտի վերադառնանք։

— Այդ մասին վոչինչ չդիտեմ — պատասխանեց Բարբիկենը։

— Իսկ յես, յեթե դիտենայի, թե ինչպես պիտի վերադառնամ, յերբեք չեյի պնա։

— Ահա՛ քեզ պատասխան, — բացականչեց Նիկոլը։

— Յես համաձայն եմ Միշելի հետ, — ասաց Բարբիկենը, — և ավելացնում եմ, վոր ներկա բոպեյին այս հարցը վուշ մի կուրեռություն չունի մեղ համար։ Ապագայում, յերբ մենք կըդանենք, վոր պետք ե վերադառնալ, այն ժամանակ կմտածենք այդ մասին։ Յեթե այստեղ կոլումբիադ չկա, համենայն դեպս արկը մեղ հետ է։

— Ի՞նչ մեծ բան. մի զնդակ առանց հրացանի։

— Հրացանը միշտ ել կարելի յե պատրաստել — առարկեց Բարբիկենը — վառողդը նույնպես։ Վո՛չ մետաղները, վո՛չ սեմարան, վո՛չ ել ածուխը չեն պակասում Լուսնի վրա։ Բացի այդ, վերադառնալու համար պետք և հաղթահարել Լուսնի ձգողական ուժը, վոր Յերկրի ձգողական ուժից անհամեմատ ավելի նվազ ե. բավական ե, վոր Լուսնի վրայից բարձրանանք մոտավորապես յերեսուն հազար կիլոմետր, վորպեսզի ձգողության որենքի համաձայն ընկնենք Յերկրի վրա։

— Բավական ե — ասաց Միշելը վողերոված։ — Այլևս վոչ մի խոսք վերադաբճի մասին։ Այդ մասին արդեն շատ խոսեցինք. ինչ վերաբերում է Յերկրի մեր բարեկամների հետ հաղորդակցություն հաստատելու մասին — այդ ել դժվար խնդիր չե։

— Բայց ի՞նչպես։

— Լուսնի հարբունների արձակած բոլիղների միջոցով։

— Շատ լավ միտք ե այդ, — ասաց Բարբիկենը համոզվեցով։ — Լավլասը հաշվել ե, վոր Լուսնից զեպի Յերկրի մի բոլիղ ուղարկելու համար բավական ե մի ուժ, վորը հինգ անդամ պիտի լինի մեր թնդանոթների ուժից։ Իսկ հրաբուխները շատ պիտի մղիչ ուժ ունեն։

— Ուսուա՛, — բացականչեց Միշելը, — ինչ լավ հաղորդակցության միջոց են այդ բոլիղները, մանավանդ ձրի յեն. ինչպես պիտի ծիծաղենք փոստային հիմնարկների վրա։ Բայց յես մտածում եմ...

— Ի՞նչ ես մտածում։

— Մի հրաշալի միաք։ Ինչո՞ւ չմտածեցինք մի լար կապել

մեր արկին, այդպիսով կարող ելինք հեռադրական կապ հաստատել Յերկրի հետ:

— Չար սատանա, — բացականչեց Նիկոլը, — իսկ չե՞ս հաշվում, թե չորս հարյուր հազար կիլոմետր յերկարությամբ լարն ինչպիսի ծանրություն կունենար:

— Ինչպես թե չեմ հաշվում. կարելի յեթ կրկնապատկել, յեռապատկել, քառապատկել կոլումբիադի վառողի մզման ուժը, — բացականչեց Միշելը հետզհետե ձայնի աճող ուժգնությամբ:

— Այդ քո ծրագրի դեմ միայն մի փոքր գիտողություն կարելի յե անել, — ասաց Բարբիկենը: — Այդ բարը յերկրագնդի պատույտ դալու հետեանքով պիտի փաթաթվեր նրան և անխռափիկորեն մեղ պիտի քաշ տար դեմքի Յերկիր:

— Սատանան տա՞նի, — բացականչեց Միշելը, — այսոր իժ բոլոր մտքերը անիրազորելի յեն, մտքեր՝ վորոնք արժանի յեն Մաստոնին: Բայց յես մտածում եմ, վոր յեթե մենք չվերադառնանք Յերկիր, Մաստոնը ինքը կդա մեղ մոտ:

— Այո՛, կդա, — ասաց Բարբիկենը, — նա մի քաջ ու պատվարժան մարդ է: Ի՞նչ ե խանգարում նրան անել այդ քայլը: Կոլումբիադը միշտ իր տեղումն է: Բամբակն ու աղոտաթթուն չեն պակասում պիրոկիսին պատրաստելու համար: Լուսինը կրկին պիտի անցնի Ֆլորիդայի զենիթից: Տասնութ տարի հետո նա կրկին պիտի լինի այն դիրքում, վորտեղ գտնվում է այժմ:

— Այո՛, անկասկած, — կրկնեց Միշելը, — այո՛, Մաստոնը կդա մեղ մոտ և նրա հետ ել մեր բարեկամները՝ Ելֆիսոտնը, Բլումսբերին, Թնդանոթային ակումբի բոլոր անդամները. Ի՞նչ պես կընդունենք մենք նրանց: Աղադայում, արկ-դնացքի միջոցով մենք ուղեղ հաղորդակցություն կհաստատենք Յերկրի ու Լուսինի միջև: Կեցցե՛ Մաստոնը: Հավանական է, վոր յեթե հարգարժան Մաստոնը չլսեց իր պատին առված խոռքերը, համենայն դեպս նրա ականջը կանչեց: Ի՞նչ եր անում նա այդ միջոցին: Անկասկած նա Աղադամուտ լիների վրա, Լոնդոն-պիկի աստղադիտարանից դիտում եր անհուն տարածությունը մենք ցանկանում եր տեսնել թուզով արկը: Յեթե այդ բողեյին նա աշխատում եր տեսնել թուզով արկը: Յեթե այդ բողեյին նա ընկերների մասին եր մտածում, պետք է իտոսովանել, վոր

նրանք ել նրանից հետ չեյին մնում և մի ինչ վոր արտասովոր վողմորության աղղեցության տակ նրան եյին նվիրում իրենց լավագույն մտքերը:

Բայց ինչո՞ց եր առաջանում այդ վողմորությունը, վոր ամեն բողել ուժեղանում եր արկի ուղղեղոների մեջ: Նրանք հարցուցող չեյին, այդ մասին կասկած չկար: Ուղեղի այդ գրգռվածությունը պե՞տք ե արդյոք վերագրել այն արտակարդ պայմաններին, վորոնց մեջ նրանք գտնվում եյին: Նրանց դեմքը կարմրել եր. կարծես նստած լինեյին խիստ տաքացած վառարանի մոտ. չնչառությունն արտազանում եր ու թոքերը գործում եյին դարբնացի փուփսի նման, նրանց աչքերը փայլում եյին տարրինակ փայլուվ, ձայնը հնչում վորոտալի հնչյուններով. ամեն մի բառ դուրս եր թռչում ինչպես շամպայն գինու շքի խըցանը. նրանց շարժումները յերկյուղալի եյին դարձել: Տարրինակն այն եր, վոր նրանք չեյին նկատում իրենց մտքի այդ գրգռված դրությունը:

— Այժմ, — կտրուկ կերպով ասաց Նիկոլը, — յեթե ինձ հայտնի չե, թե ինչպես և յերբ պիտի վերադառնանք, ցանկակի յի գիտենալ, թե ինչ պիտի անենք այստեղ:

— Ի՞նչ պիտի անենք այստեղ, — բացականչեց Բարբիկենը վոռքը գետնին խփելով, կարծես սուսերամարտի պահում մեներ, — յես վոզինչ չգիտեմ:

— Վոչինչ չգիտե՞ս, — գոռաց Միշելը ահռելի ձայնով, վոր պղղաց արկի մեջ:

— Վո՛չ, նույնիսկ չեմ ել յերեակայում, թե ինչ պիտի անենք, — ասաց Բարբիկենը նույնպիսի ահեղագոչ ձայնով:

— Իսկ յես գիտեմ, — գոռաց Միշելը:

— Խոսի՛ր ուրեմն, յեթե գիտես, — գոռաց իր հերթին Նիկոլը:

— Կասեմ, յեթե ուղենամ, — բացականչեց Միշելը, Կոռությամբ բռնելով ընկերոջ ձեռքից:

— Պետք է, վոր ուղենաս, — ասաց Բարբիկենը կատաղությունից փայլող աչքերով ու ձեռքով սպանալից շարժում անկուվ: Դու մեղ քաշ տվիք այս սոսկալի ուղեղորության մեջ և մենք ցանկանում ենք իմանալ՝ ի՞նչ նոլատակով:

— Այո՛, — ավելացրեց կապիտանը, յեթե այժմ յես չգի-

աեմ, թե ո՞ւր եմ դնում, ուղում եմ իմանալ, թե ինչո՞ւ համար եմ դնում:

— Ինչո՞ւ համար, — բացականչեց Միշելը, մի մետր աեղիսը վեր ցատկելով, — ինչո՞ւ համար: Վորպեսզի Միացյալ Նահանգների անունով նվաճենք Լուսինը, վորովեսզի մի նոր նահանգ ավելացնենք Միացյալ Նահանգների վրա, վորպեսզի գողութացնենք Լուսնի մարզերը, նրանց մշակենք, բնակեցնենք, այնտեղ տեղափոխենք դիտության, արվեստի և արդյունաբերության բոլոր հրաշալիքները: Քաղաքակրթենք լուսնի բնակիչներին — յեթե նրանք արդեն մեղանից ավելի քաղաքակիրթ չեն — և հանրապետություն հաստատենք այնտեղ, յեթե մինչեւ այժմ դոյցություն չունի:

— Դեռևս հարց ե, թե լուսնաբնակներ գոյություն ունե՞ն արդյոք, — առաջկեց Նիկոլը, վոր այդ անբացատրելի արբեցան աղղեցության տակ անդուսպ եր դառնում:

— Ո՞վ ե համարձակվում ասել, թե լուսնաբնակներ չեկան, — սպառնալից չեշտով հարցրեց Միշելը:

— Ցե՛ս, — զոռաց Նիկոլը:

— Կապիտան, չամարձակվես կրկնել այդ լրբությունը, ապա թե վոչ այդ խոսքը կոկորդումդ կիսեղեմ:

Ցերկու հակառակողդները պատրաստվում եյին միմյանց վրա հարձակվելու և այդ անմիտ վեճը կռվի կփոխվեր, յե՛ւ Բարբիկենը չմիշամտեր:


— Կանգնեցե՛ք, թշվառ մարդիկ, — բացականչեց նա, բաժանելով նրանց իրարից, — յեթե լուսնաբնակներ չկան, մենք առանց նրանց ել յոլա կդնանք. ինչների՞ս ե պետք լուսնաբնակները. կորչե՛ն լուսնաբնակները:

— Մեզ համար կարեոր ե միայն Լուսինը, — բացականչեց Նիկոլը:

— Մենք յերեքով կկազմենք հանրապետությունը:

— Ցես կլինեմ կոնգրեսը, — զոռաց Միշելը:

— Իսկ յես սենատը, — բղավեց Նիկոլը:



Սկսկեց մի արտակարգ ու խելադար շուրջութագ

— Իսկ Բարբեկենը՝ հանրապետության նախադահը, — ուղաղակեց Միշելը:

— Նախադահը սկսուք եւ ընտրվի՛ ժողովրդից, — պատուախանեց Բարբեկենը:

— Նախադահին կընտրի կոնդըհսը, — բացականչեց Միշելը, — և քանի վոր յես եմ կոնդըհսը, յես միաձայն քեզ նախադահ եմ ընտրում:

— Հուռա՛, հուռա՛, հուռա՛ նախադահ Բարբեկենը, — դուաց Նիկոլը:

— Հի՛փ, հի՛փ հի՛փ, — աղաղակեց Միշելը:

Ապա «նախադահը» և «սենատը» ահեղագոչ ձայնով յերդելին իրենց աղջային հիմնը «Յանքի դուդլ»-ը, իսկ «կոնդըհսը» հնչեցնում եր «Մարսելյոդի» առնական յերդը:

Սկսվեց մի արտակարդ ու խելագար շուրջպար, վուաքերի ու ձեռքերի տարրորինակ շարժումներով: Դիանան մասնակցելով այդ պարին, իր հերթին սկսել եր վոննալ. հանկարծ նա ցատկեց մինչև արկի առաստաղը. այնտեղից լսվեց ինչ վոր անբացատրելի թեվերի թափահարում և աքաղաղի անսովոր հնչեղ ձայնը: Հինգ կամ վեց հավեր, խելագար չղջիկերի նման թըռան և խփեցին արկի պատերին...

Ապա յերեք ուղեկիցները մի անբացատրելի պատճառի աղջեցության տակ չնշանառ յեղած, հարբած, մեռածի նման անկենդան ընկան արկի հատակին:

—————

### ԳԼՈՒԽ VIII

## ՀԱՎԱՍԱՐ ԶԳՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՏԻ ՎՐԱ

Ի՞նչ եր պատահել: Ի՞նչից եր առաջացել այդ տարրորինակ արրեցությունը, վորի հետեւանքը կարող եր շատ վաս վերջնալ:

Պատճառը Միշելի ցրվածությունն եր, վորի վտանգը բարեխախտաբար Նիկոլը կարողացավ շուռով վերացնել:

Մի քանի բոակ տեսող կատարյալ անզգայությունից հետո, կապիտանը մյուսներից առաջ ուշքի յեկավ և տիրապետեց իր մաքերին:

Չնայած վոր միայն յերկու ժամ առաջ եր նախաճաշել, նա մի այնպիսի սարսափելի քաղց եր զգում, վոր կարծես որերով վոչինչ չեր կերել:

Նա վոտքի կանգնեց և Միշելից լրացուցիչ նախաճաշ ոլահնջեց. անզգա Միշելը վոչինչ չպատասխանեց: Պատասխան հանջեց. մի քանի միշելը վորոշեց ինքն անձամբ պատրաստել մի ըանի բաժակ թեյ և մի քանի բուտերբրոդ: Նախ և առաջ պիտք եր զաղը վառել, այդ պատճառով ել նա մի լուցկի վառեց:

Հեշտ ե յերեակայել, թե ինչքան զարմացավ, յերբ լուցկին վառվեց մի այնպիսի արտակարդ փայլով, վոր աչք եր ցավեցնում: Լուցկին զաղի կառուցին մոտեցնելիս այնտեղից ուժեղ բոց առաջացավ:

Նիկոլն իսկույն հառկացավ այդ արտակարդ վառ լույսի, իր զգացած տարրորինակ հուզումների և հոդեկան ու ֆիզիկան կարողությունների խանգարման պատճառը:

— Թթվածինը, — բացականչեց Նիկոլը:

— Իսկ Բարբիկենը՝ Հանրապետության նախակահը, — առաջակեց Միշելը:  
— Նախադահը սէկուք և ընտրովի ժողովրդից, — պատուիսա-  
նեց Բարբիկենը:  
— Նախադահին կընտրի կոնգրեսը, — բացականչեց Միշե-  
լը, — և քանի վոր յես եմ կոնգրեսը, յես միաձայն քեզ նա-  
խադահ եմ ընտրում:  
— Հուռա՛, հուռա՛, հուռա՛ նախադահ Բարբիկենը, — դո-  
ւաց Նիկոլը:

— Հի՛փ, հի՛փ հի՛փ, — աղաղակեց Միշելը:  
Ապա «Նախադահը» և «սենատը» ահեղագոչ ձայնով յերշ-  
տին իրենց աղջային հիմնը «Յանքի դուդլ»-ը, իսկ «կոնգրեսը»  
հաշեցնում եր «Մարսելյովի» առնական յերդը:  
Սկսվեց մի արտակարդ ու ինելագար շուրջպար, վոտքերի  
ու ձեռքերի տարրորինակ շարժումներով: Դիանան մասնակցելով  
այդ պարին, իր հերթին սկսել եր վոռնալ. հանկարծ նա ցատ-  
կեց մինչև արկի առաստաղը. այնոնքից լսվեց ինչ վոր անբա-  
ցատրելի թեվերի թափահարում և աքաղաղի անսովոր հնչեղ  
ձայնը: Հինգ կամ վեց հավեր, ինելագար չղջիկների նման թւ-  
ռան և խփվեցին արկի պատերին...

Ապա յերեք ուղեկիցները մի անբացատրելի պատճառի աղ-  
դեցության տակ չնչապառ յեղած, հարբած, մեռածի նման  
անկենդան ընկան արկի հատակին:

## ԳԼՈՒԽ VIII

### ՀԱՎԱՍԱՐ ԶԳՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՏԻ ՎՐԱ

Ի՞նչ եր պատահէլ: Ի՞նչից եր առաջացել այդ տարբինակ  
արբեցությունը, վորի հետևանքը կարող եր շատ վատ վեր-  
ջանալ:

Պատճառը Միշելի ցրվածությունն եր, վորի վատանքը բա-  
րեւախտաբար Նիկոլը կարողացավ շուտով վերացնել:

Մի քանի բողե տեսող կատարյալ անդայությունից հետո,  
կապիտանը մյուսներից ասած ուշքի յեկավ և տիրապետեց իր  
մաքերին:

Չնայած վոր միայն յերկու ժամ առաջ եր նախաճաշել, նա  
մի այնպիսի սարսափելի քաղց եր զգում, վոր կարծես որերով  
վոչինչ չեր կերել:

Նա վոտքի կանգնեց և Միշելից լրացուցիչ նախաճաշ ուտ-  
հանջեց. անզլա Միշելը վոչինչ չպատասխանեց: Պատասխան  
չսահնակով՝ Նիկոլը վորոշեց ինքն ահճամբ պատրաստել մի քա-  
նի բոժակ թեյ և մի քանի բուտերբրոդ: Նախ և առաջ ոլեաք  
եր գաղը վառել, այդ պատճառով ել նա մի լուցկի վասեց:

Հեշտ և յերեակայել, թե ինչքան զարմացավ, յերբ լուցկին  
վառմեց մի այնպիսի արտակարդ փայլով, վոր աչք եր ցավեց-  
նում: Լուցկին զաղի կտուցին մոտեցնելիս այնոեղից ուժեղ  
բոց առաջացավ:

Նիկոլն իսկույն հասկացավ այդ արտակարդ վառ լույսի,  
իր զգացած տարրինակ հուզումների և հողեկան ու Փիդիկո-  
կան կարողությունների խանգարման պատճառը:

— Թթվածի՛նը, — բացականչեց Նիկոլը:



Թթվածինը, —բացականչեց Նիկոլը

Յեկ թեքվելով ողային գաղի ապարատի վրա, զզաց, թե  
ինչպես բաց մնացած ծորակից դուրս եր հոսում այդ անզույն,  
անհոտ, կենսատու գաղը, վորը սակայն մաքուր վլճակում  
այնքան վատ և ազդում մարդու կազմվածքի վրա։ Անխոհեմ  
Միշելը ծորակը բաց եր թողել։

Նիկոլն իսկույն փակեց ծորակն ու կանգնեցրեց թթվածնի  
հոսումը, վորն անկասկած կմեռցներ ուղեռորներին. նրանը իւեղ-  
դամահ չելին լինի, բայց կայրվելին։

Մի ժամ հետո ողը մաքրվեց և ուղեռորների թոքերը սկսե-  
ցին կանոնակիր գործել։ Հետզհետե նրանք սթափվեցին արքե-  
ցությունից, սակայն դեռևս բոլորովին չելին աղատվել թըթ-  
վածնի աղղեցությունից. զեռ միաժամանակ այնպիսի դրու-  
թյան մեջ ելին, ինչպես վնասմ են հարբեցողությունից հետո։

Յերբ Միշելը լսեց, վոր ինքն եր յեղել այդ արկածի պատ-  
ճառը, բոլորովին ել չաղղվեց. այս անսպասելի արքեցողու-  
թյունը մի քիչ փոփոխել եր նրանց միորինակ կյանքը. դրա  
ազդեցության տակ շատ հիմար բաներ ելին ասել, բայց արդեն  
բոլորն անցել ու մոռացվել եր։

— Դե՛, ինչ արած, — ասաց ուրախ Փրանսիացին, — ձիչան  
ասած, չեմ ցավում, վոր ճաշակեցի այդ արքեցնող գաղից։ Ի՞ւ  
կարիծքով, բարեկամներ, վատ չեր լինի յեթե մի հիմնարկու-  
թյուն լիներ, վորտեղ թույլ կազմվածքով Խարդիկ կարող լի-  
նիլին մի քանի ժամով ապրել հուզումնալի և շարժուն կյան-  
քով։ Յերեակայեցեք մի վորեւ հավաքույթ, վորի ողը հաղե-  
ցած լիներ այդ գաղով, կամ մի թատերասրահ, վորի գերեկ-  
ցիան մեծ քանակությամբ բաց թողներ այդ գաղից. ինչպիսի  
ցիան մեծ քանակություն կտիրեր թե՛ դերասանների և թե՛ հանդիսատես-  
վողերություն կտիրեր թե՛ դերասանների։ Յեկ հանդիսատես-  
ների մեջ, ի՞նչպիսի կրակ, ի՞նչպիսի խանդավառություն։ Յեկ  
չերի մեջ, ի՞նչպիսի կրակ, ի՞նչպիսի խանդավառություն։ Յեկ  
վոչ թե մի հավաքույթ, այլ մի ամբողջ ժողովուրդ չըն-  
յեթե վոչ թե մի հավաքույթ, այլ մի ամբողջ ժողովուրդ չըն-  
յեթե այդ գաղից, ինչպե՞ս կաշխաժանար իր գործունեյության  
մեջ, կյանքի ինչպիսի վերելք կստանար։ Հոդնած ու մաշված  
մի ժողովուրդի կարելի յեր վերածնել, դարձնել մի մեծ և ուժեղ  
ժողովուրդ։ Իմ կարծիքով մեր ծերացած Յեկոպայի մի շարք  
պետությունների համար շատ ողտակար կլիներ կերառել  
թթվածնի ոհեժիմը։

Միշելը խոսում եր և այնպէս վորեսրման, վոր կարծես

թթվածնի ծորակը դեռևս բաց էր: Բայց Բարբեկենի մի խոսքն իսկույն չափավորեց նրա վողերությունը:

— Այս բոլորը շատ դեղեցիկ ե, սիրելի Միշել, — ասաց նախաղացը, — բայց ասա՛ տեսնենք, թե վո՞րտեղից հայտնին տին համերը, վորոնք մասնակից յեղան մեր համերգին:

— Համեր...

— Այո՛, համերը:

Ճիշտ վոր վեց հավ և մի հոյակառ աքաղաղ շրջում ելին արկի մեջ ու անվերջ կը կը ում:

— Ա՛հ, անպիտան անսուններ, — բացականչեց Միշել, — թթվածնը նրանց ել ե հեղաշրջել:

— Բայց ի՞նչ ես ուզում անել նրանց, — հարցրեց Բարբեկենը:

— Ուզում եմ նրանց բազմացնել Լուսնի վրա:

— Լավ, բայց ինչո՞ւ համար ելիր նրանց թագցրել:

— Մի կատակ ելի ուզում անել, հարգելի նախաղահ, պարզապես մի խաղ, վորը սակայն խայտառակ կերպով ձախող-վեց: Յանկանում ելի նրանց բաց թողնել Լուսնի վրա, առանց ձեզ այդ մասին հայտնելու: Յերեվակայում եմ, թե ի՞նչքան պիտի դարմանայիք, տեսնելով այդ յերկրային թուչունները լուսնի դաշտերում:

— Ա՛հ դու ստահակ, համբիտենական ստահակ, — բացականչեց Բարբեկենը, — դու, վորեարվելու համար վոչ մի թըթվածնի կարիք չունես, դու միշտ այնպես ես, ինչովես մենք յեղանք թթվածնի աղեցության տակ. դու միշտ խելազար ես:

— Ե՛ս, այդ գեռ հարց ե, գուցե մենք միայն այն ժամանակ ելինք խելոք, — առարկեց Միշել Արդանը:

Այդ փիլիսոփայական խորհրդածությունից հետո յերեք ընկերները կարդի բերքին արկի ներքին սարքը: Համերն ու աքաղալը նորից մտան իրենց բունը, բայց այդ գործողության միջոցին Բարբեկենն ու ընկերները մի նոր տարօրինակ յերեւոյթ նկատեցին:

Յերկրից հեռանալու քողեյից, նրանց մարմենի ծանրությունը, ինչպես նաև արկի և նրա մեջ դռնվոր բոլոր իրերի ծանրությունը հետզհետեւ պակասել եր: Յեթե քաշի այդ նվազումը չեր կարելի ստուդել արկի նկատմամբ, պիտի դար մի ժամա-

նակ, յերբ այդ յերեւոյթը զգալի պիտի լիներ թե՛ ուղևորների և թե՛ նրանց գործիքների և այլ իրերի համար:

Պարզ ե, վոր սովորական կշեռքները չեյին կարող ցույց տալ քաշի այդ նվազումը, վորովհետեւ կը աքարտելի քաշն ել ովակասում և նույն համեմատությամբ, բայց զսպանակավոր կշեռքները, վորոնք անկախ են ձգողական ուժից, կարող ելին ճէշտ ցույց տալ քաշի նվազման չափը:

Հայանի յեր, վոր Յերկրի ձգողական ուժը, կամ ուժիչ իռոքով, ծանրությունն ուղիղ համեմատական և նյութի ծավա-լին և հակաղարձ համեմատական տարածության քառակուսուն:

Արկի ծանապարհն ընկնում եր Յերկրի ու Լուսնի միջև: Վարչական նա հեռանում եր Յերկրից, այս վերջինի ձգողական ուժը նվազում եր տարածության քառակուսուն հակաղարձ համեմատությամբ, իսկ Լուսնի ձգողականությունն ավելանում եր հաւայն համեմատությամբ: Մի վորեւ կետում այդ յերկու ձգողական ուժերը պիտի հավասարվեյին և այդ կետում արկը վոչ մի ծանրություն չպիտի ունենար: Յեթե Յերկրի ու Լուսնի ծա-վալը հավասար լիներ, այդ կետը կլիներ ուղիղ կես ճանա-պարհի վրա, բայց վորովհետեւ նրանց ծավալները հավասար չեյին, այդ պատճառով ել այդ կետը դանվում եր ամբողջ ճա-նապարհի ինտոսակրորդականի վրա:

Այդ կետի վրա մարմինը վոչ մի շարժում կարմ արագու-թյուն չունենալով, անվերջ միենուն կետի վրա պիտի մնար, վորովհետեւ հավասարապես պիտի ձգվեր թե՛ Յերկրից և թե՛ Լուսնից և վոչ մի ուժ չեր կարող նրան շարժել այս կամ այն կաղմը:

Յեթե մզման ուժը ճիշտ ելին հաշվել, արկն այդ կետին պիտի հասներ զերոյի հավասար արագությամբ, կորցրած լինե-լով թե իր և թե պարունակած իրերի ծանրությունը:

Ի՞նչ կարող եր պատճել այդ դեպում: Յերեք ենթադ-րություն կարելի յեր անել:

Առաջին, արկը դեռևս վորոչ արագություն ունենալով և անցնելով հավասար ձգողականության կետից, պիտի ընկներ կամ պիտի հավասար արագությունը կամ պիտի ընկներ:

Յերկրորդ, արկի շարժման արագությունը բավական չինել, նա չեր կարող հասնել ձգողականության ուժի հավաս-լով,

Յաշտան կիութ և Յերկը Յաշտան ուշի պերակլության հետմանքով, հետ կըանար ու կընկնելք Յերկը վրա:

Յերրորդ. վերջապես, բավականաչափ ուժ ունենալով՝ արկը կհաներ հավասարեցման կետին, բայց չեր կարող նրանից այն կողմն անցնել և հավիալյան կմսար միենույն կետի վրա:

Այդպես եր գրությունը, և Բարբիկենը դրա հետևանքները բացատրեց իր ընկերներին. հասկանալի յէ, վոր նրանք խիստ հետաքրքրվեցին դրանով:

Բայց ինչպէս ստուգել, թե արկն արդյոք հասել և այն կետին: Հետո եր ստուգել այդ, վորովհետև այդ կետում արկի բոլոր իրերն ու իրենք ել այլևս չեյին յննթարկվելու ծանրության որենքին:

Մինչ այդ, ուղեղորները թեև դիտեյին, վոր Յերկը ձգողական ուժը հետզհետե նվազում ե, բայց դեռևս չեյին նկատել նրա լիակատար բացակայությունը: Այդ առավոտ, ժամը տասնմեկին մոտ Նիկոլի ձեռքից մի բաժակ ընկավ և փոխանակ դետին ընկնելու, կախված մնաց ողի մեջ:

— Այ քեզ բան, — բացականչեց Միշելը, — զվարճալի Փիկիկան յերեռոյթ ե առ:

Իսկապես, զանազան իրեր, զենք, շներ, թողնելով իրենց իրենց, ողի մեջ կախված մնացին: Միշելը Դիանային բարձրացրեց վեր, նա ել մնաց նույն դրության մեջ. զարմանալին այն եր, վոր շունը չեր զգում, թե սավառնում ե ողում:

Իրենք, ուղնարներն ել, զարմացած, ապշած, չնայած իրենց գիտական դատողություններին, զգում եյին, վոր իրենց մարմինն ել կորցրել եր իր ծանրությունը. յերբ նրանք պարզում եյին իրենց թեերը, նրանք այլևս ցած չեյին ընկնում: Գլուխը ճոճվում եր ուսերի վրա. վոտքը չեր կանգնում հատակին: Նըրանք նմանվում եյին հարբած մարդկանց, վորոնք կորցնում են համաշարակշությունը:

Հանկարծ Միշելը մի քիչ թափ առնելով ցատկեց վերև և կախված մնաց ողում: Մի ակնթարթում յերկու ուղեկիցները միացան նրան և արկի կննարոնում մի արտասովոր պատակեր կազմվեց:

— Մի՞թե հավատալի յէ, մի՞թե ճշմարտանման ե, մի՞թե



Ուղեկիցները ստվառնում եյին ողում

Քարավոր ե, — բացականչեց Միշելը, — վո՛չ, և սակայն իրականություն ե:

— Բայց այս դրությունը յերկար չի տեղի, — ասաց Բարձրէնը: — Յեթե արկն անցնի չեղոք կետից, Լուսնի ձգողականությունը մեզ կը աջաշի դեպի ինքը:

— Այդ դեպքում մեր վոտքերը պիտի կանգնեն արկի առաստաղին, — Հարեց Միշելը:

— Վոչ, — ասաց Բարբիկենը, — վորովհետեւ արկը, վորի ծանրության կենարոնը շատ ցածր ե, վոչ թե միանդամից, այլ քիչ-քիչ պիտի շուռ դար դեպի Լուսինը:

— Ուրեմն, մեր ամբողջ անտեսությունը դլախայր շուռ կը:

— Հանդստացիր, Միշել, — ասաց Նիկոլը, — վոչ մի եր չի չարժի տեղից, վորովհետեւ արկի շրջվելը տեղի կունենա անհետելիորեն:

— Ճիշտ ե, — ավելացրեց Բարբիկենը, — և հենց վոր անցնի չեղոք կետից, արկի ներքեւ մասը, վոր մյուս մասերից արկի ծանր ե, շուռ կը դեպի Լուսինը՝ նրա մակերեսույթին ուղղահայց դիրքով: Բայց վորպեսդի այդպես լինի, մենք պետք ե անցնենք չեղոք կետից:

— Անցնել չեղոք կետից, — բացականչեց Միշել Արդանը, — յեթե այդպես ե, ուրեմն անենք այնպես, ինչպես անում են հասարակածն անցնող ծովայինները, թրջենք մեր անցումը:

Միշելը թեթև շարժումով մոտեցավ արկի պատին, դարձեց վերցրեց մի շիշ և բաժակներ, դրեց «ատրածության վրա», ընկերների առջե, և նրանք բաժակները միմյանց խիելով, չեղոք կետից անցնելը վողջունեցին յեռյակ «հուռայով»: Յերկրի և Լուսնի ձգողական ուժերի հավասարակշռության ազգեցությունը հաղիվ մի ժամ տեղեց: Ուղևորները զգացին, վոր հետքետե հատակին են մոտենում, և Բարբիկենը նկատեց, վոր արկի վերկի մասը սկսում ե մի քիչ թեքվել Լուսնի ուղղությունից, իսկ հատակը մոտենում եր նրան: Ուրեմն Լուսնի ձգողական ուժն արդեն գերակշռում եր Յերկրի ձգողական ուժին: Անկումը դեպի Լուսինը սկսվել եր, սկզբում աննշմարելի, վորովհետեւ առաջին վայրկյանում այդ անկումը հավասար եր մեկ ու մի յերրորդական միլիմետրի, սակայն հետղետե ձգո-

գական ուժը պիտի ավելանար և անկումն ավելի արագանար, արկը, քաշվելով ներքեւի մասից, իր կոնաձև մասով պիտի թեքվել գեղի Յերկրը. այդպիսով աճող արագությամբ արկը պիտի ընկներ Լուսնի վրա: Ուրեմն ուղևորության հաջողությունն ապահովված եր: Նիկոլն ու Միշել Արդանը հրճվում եյին Բարբիկենի հետ:

Ապա սկսեցին յերկար խոսել այդ բոլոր սքանչելի յերկույթների մասին:

Միշել Արդանը միշտ խանդակառ, Փանտաստիկական հետեւթյուններ եր անում:

— Ա՛հ, սիրելի բարեկամներ, — բացականչեց նա, — ի՞նչ պիսի առաջադիմություն կլիներ Յերկրի վրա, յեթե կարելի լիներ աղատվել ծանրությունից, այդ ծանր չղթայից, վորովհենք կաշկանդված ենք Յերկրին: Մենք գերությունից փրկված կլինեյինք. այլևս վոչ մի հոգնություն չեր լինի, վոչ ձեռքի, վոչ վոտքի: Յեթե ներկայումս Յերկրի յերեսին թռչելու, մինչաների ուժով ողի մեջ մնալու համար մեր սեփական ուժը հարյուր հիսուն անդամ ավելի ուժ ե հարկավոր, ձգողականությունը վերանալու դեպքում, բավական ե ցանկանալ և խոկոյն կարելի կլինի թռչել տարածության մեջ:

— Այս, — ասաց Նիկոլը ծիծաղելով, — յեթե կարելի լինի վոչնչացնել ծանրությունը, ինչպիսի փոփոխություն կլինի մեր կյանքում:

— Վոչնչացնենք ծանրությունը, — բացականչեց Միշելը, այլևս վոչ մի վերամբարձ մեքենայի կարիք չի լինի, վորովհետեւ բարձրացնելու վոչինչ չի լինի:

— Լավ եք ասում, — նկատեց Բարբիկենը, — բայց յեթե ծանրություն չլինի, վոչ մի բան իր տեղում չի մնա, քո գըլ խարկը դլիսիդ չի կանդնի, սիրելի Միշել, քո տունն իր տեղում չի մնա, վորովհետեւ քարերը միմյանց վրա մնում են ծանրության չնորհիվ: Գոյություն չեյին ունենալ նավերը, վորոնք ջրեվա մնում են ծանրության չնորհիվ: Զեյին լինի նույնիսկ ովակա վերկրի չավասարակշռությունը պահպատճեանները, վորոնց ջրերի հավասարակշռությունը պահպատճեանները, սկզբում աննշմարելի, միշտ գեղահայր կամ գեղահայր չի հանդիսանության մեջ:

— Դե՛, ի հարկե այդ բոլորը շատ անդուրեկան ե, — առաջ  
Սիշելը: Այդպես են գործնական մարդիկ, վոր կողմ ել վոք  
դառնաս, իսկույն քեզ կվերապարձնեն դեպի բիբրա իրականու-  
թյունը:

— Բայց միտթարվի՞ր, Միշել, — ասաց Բարբեկենը, — յեթե գոյություն չունի վոչ մի մոլորակ, վոր չունենա ծանրություն, համենայն դեպս, շուտով մենք կլինենք մի այնպիսի մոլորակի վրա, վորի վրա ծանրությունը Յերկրի վրայի ծանրությունից ավելի քիչ է:

— Մի՞թե կուինն է այդ մոլորակը:

— Յյո, Լուսինը, վորի վրա իրերը կշռում են վեց տնդառ՝  
պակաս, քան Յերեսի վրա:

— Յեվ մենք կնկատե՞նք այդ, — հարցուեց Միշելը:

— Անկասկած, վորովհետեւ մեր երկու հարյուր կիլոդրամը այստեղ միանի ենթառան ենուուամի առ, կունենա:

= Եսկ մեր մկանների ուժու չի՞ ատելասի:

— Բոլորովին վոչ։ Յեթե դու ցատկելիս այնքան ուժ գործ գնես, վոր քեզ Յերկրի վրա մի մետր ե բարձրացնում, Լուսնի վրա միեւնույն ուժով դու կբարձրանաս վեց մետր։

— Ուրեմն լուսնի վրա մենք խսկական հերկուլեսներ կդառնանք:

— Մանավանդ վոր, — ասաց Նիկոլը, — յեթե լուսնաբնակների հասակը համեմատական է իրենց մոլորակի ծավալին, նըրանք միայն մինչ վուսնաչափ հասակ կունենան:

— Ալիքպուտնե՞ր, — բացականչեց Միշելը, — ուրեմն յես  
այստեղ կարող եմ Գուլիվերի գերը կատարել. մենք կիրակա-  
նացնենք հսկաների առասպելը։ Ահա թե ինչ շահ ունեցանք  
մեր մոլորակից հեռանալով ու արեգակնային աշխարհն ուզե-  
վորվերդ։

— Մի շտապիր, — առարկեց Բարբիկենը, — յեթե ցանկանում ես Գուլիվեր դառնալ, յես քեզ խորհուրդ կտայի գնակ այնպիսի մոլորակներ, ինչպիսիք են Մերկուրին ու Մարսը, վորոնց ծավալը Յերկրից պակաս է : Բայց այնպիսի մեծ մոլորակների վրա, ինչպիսիք են Սատուրնը, Ուրանոսը, Յուպիտերը, գերերը կփոխվեն, դու ինքդ լիլիտուտ կդառնայիր այդ մոլորակների վրա :

— Իսկ Արեվիք՝ վրա:

— Արևի վլսա ել նույնն է, նրա ծավալը մեկ միլիոն յերեք  
հարյուր քսան հազար անգամ ավելի յէ, իսկ ձգողական ուժը  
քսան յոթ անգամ : Նկատի ունենալով այդ պայմանները, կարե-  
ւի յէ յեղակացնել, վոր նրա բնակիչների հասակի բարձրու-  
թյունը կիխներ մոռավորապես հիսուն մետր :

— Զար սատանա, — բացականչեց Միջելլ, — ուրիհմն յիւն  
նբանդ մոտ միայն մի թղոք ուկ կլինեմ:

— Գույիվերը հսկանելի մոտ, — ասաց Նիկոլը:

— Ճիշտ եւ համաձայնվեց Բարբիկենը:

— Եթե այդպես է, վատ չեր լինի պաշտպանվելու համար  
մեղ հետ մի քանի թնդանոթներ կերպած լինելինք:

= Արքայի ամելորդ բան կլինելը, — ասաց Բար

վորովհետև քո արկերը արևի վրա վոչ մի ուժ չելին ունենա և  
մի քանի մետր հեռավորությունից ավելի չելի թռչի:

— ի՞նչ տարորինակ բան։  
— Շատ ապրու եմ, պատախանեց Բարեիկենը, — այդ վեց-

կառական հաղողական

կարգ աստիճան դա ու է կամ 1930 կիլո-  
կիլոգրամ կշռող մի մարմին Արեկի վրա կունենա կիլո-  
գրամ ծանրություն: Քո զինաբեկն այնտեղ կկշռի ուժ կիլո-  
գրամ, քո սիգարը 250 գրամ ծանրություն կունենա: Վերջապես  
յեթև դու ինքու ընկնելիք Արեկի վրա, քո ծանրությունը կմինչը  
մտավորապես յերկու հազար չինգ հարյուր կիլոգրամ, և դու  
չեյիք կարողանա տեղիցու շարժվել:

— Սատանան տանի, — բացականչեց Միջելլ, — ուրեմն ու քեի վրա գրպանում շարունակ պետք ե վերամբարձ մեքենա՞ս ունենալ: Յեթե այդպես ե, սիրելի բարեկամներ, այս անգամ բավարարվենք Լուսնով: Այնտեղ գոնե մենք նշանավոր մարդեկ կլինենք. հետո կտեսնենք, թե կարիք կա՞ գեպի Արև ուղեռու վել, վորտեղ վերամբարձ մեքենա յէ հարկավոր նույնիսկ բաշ- ժակը բերան տանելու համար:

## ԵԵՂՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔԸ

Բարբիկենն այլևս չեր մտահոգվում։ յեթե ուղևորության վերջնական վախճանը դեռևս անհայտ էր, համենայն դեպք արկի արագության ուժի մասին վոչ մի կասկած չկար։ Պահելով իր արագությունը, նա կարող էր անցնել չեզոք կետից։ Ուրեմն արկը չեր կարող հետ դառնալ և ընկնել Յերկրի վրա, չեր կարող անշարժ մնալ յերկու մոլորակների ձգողական ուժերի հարվասարակուման կետում։ Մնում էր միայն մի յենթադրություն։ Լուսնի ձգողական ուժի ազդեցության տակ արկը պետք է հասնի լուսնին։

Ուրեմն, արկը լուսնի վրա պիտի ընկներ մոտավորապես 30 հազար կիլոմետր բարձրությունից։ Ճիշտ է, վոր լուսնի ձգողական ուժը վեց անգամ պակաս է Յերկրի ձգողական ուժից։ Բայց և այնպես մեծ վտանգ էր սպառնում ուղևորներին, ուստի նախապես պետք էր ձեռք առնել բոլոր անհրաժեշտ նախադպուշկան միջոցները։

Այդ միջոցառումները յերկու տեսակ եյին — նախ և առաջ պետք էր մեծացնել արկի՝ լուսնի վրա ընկնելու բոսեյին առաջածած հարվածը։ յերկրորդ՝ պետք էր նվազեցնել անկման արագությունը և անկումը դարձնել նվազ խիստ։

Բարբիկենը շատ էր ափսոսում, վոր հարվածը մեղմացնելու համար չեր կարելի գործադրել այն միջոցները, վոր գործադրել եյին թոփչքի ժամանակի, այսինքն ջուրը, վորը զուլանակի դեր էր կատարել, և ջարգվող միջնորմները։ Թեև այդ միջնորմները դեռևս մնում էրին, սակայն ջուրը պակասում էր,

զորովհետև յեղած ջրի պաշարը պահպել էր գործածվելու համար այն դեպքում, յեթե լուսնին հասնելու առաջին որեքը չկարողանալի ջուր ճարել։ Բացի այդ, ջրի ամբողջ պաշարն իսկ բավական չեր վորպես զսպանակ գործածելու համար։ Ուրեմն պետք էր հրաժարվել այդ միանգամայն իրական միջոցը գործադրելուց։

Բարեբախտաբար, չբավարարվելով այդ նպատակի համար միայն ջուրը գործածելուց, Բարբիկենը շարժական հատակի վրա ամրացրել էր շատ ուժեղ, զսպանակավոր արգելակներ (բուֆեր) նրանց միջնոցով մեղմացնելու համար արկի հատակի կրած հարվածը, հորիզոնական միջնորմների ջարավելուց հետո։ Այդ բուֆերները դեռևս անվնաս եյին մնացել. մնում էր միայն նրանց կարգի բերել և շարժական սկավառակը դնել էր նախկին տեղում։ Այդ բուլորը շատ թեթև լինելով՝ նրանց տեղափորելը շատ հեշտ էր։

Այդպես ել յեղավ. առանց մեծ դժվարության բոլոր մասներն իրենց տեղը գրվեցին։ Պտուտակի և ողակի գործ էր միայն, ուրիշ վոչին։ Բոլոր անհրաժեշտ գործիքները կային և քիչ անց լիովին սարքավորված հատակը հենվեց պողպատե բուֆերների վրա այնպես ինչպես ամուր սեղանը հենվում և զոտների վրա։ Այդ սարքավորումը միայն մի անպատճենություն ուներ—ներքեմի լուսամուտը բոլորովին ծածկված էր և ուղեռները հնարավորություն չունեյին զիտել լուսինը՝ նրա վրա ընկնելու միջոցին։ պետք էր հաշտվել այդ գրության հետ։ Արգեն կողմնակի լուսամուտներից կարելի յեր գիտել լուսնի ընդարձակ տարածությունները, այնպես, ինչպես ողպապարիկից յերևում է Յերկիրը։

Մի ժամվա աշխատանքից հետո հատակն իր տեղումն էր. կեսոր էր արդեն, յերբ պատրաստությունները վերջացան։ Բարբիկենը արկի թեքման մասին նոր զիտողություններ կատարեց, բայց մեծ սրտնեղությամբ տեսավ, վոր արկը ընկնելու համար բավականաչափ շուռ չեր յեկել, թվում էր, թե արկը առաջ էր դնում լուսնի սկավառակին զուգահեռ ուղղությամբ։ Գիշերացին լուսատուն պայծառ փայլում էր անհունության մեջ, իսկ յին լուսատուն պայծառ փայլում էր անհունության մեջ, իսկ Արեւ հակառակ կողմից նրան վողողում էր իր ճառագայթներով։

Այսպիսի դրությունը այնքան ել միխթարական չեր:

— Կասանե՞նք արդյոք, — հարցրեց Նիկոլը:

— Մենք պետք ե վարդենք այնպես, վորպես թե անպայման պետք ե հասնենք, — պատասխանեց Բարբիկենը:

— Ի՞նչ վախկոտներ եք, — ասաց Միշել Արդանը: Անհասկած հասնենք, և ավելի շուտ, քան ցանկանում ենք:

Այդ համարձակ պատասխանը ստիպեց Բարբիկենին կրկէն գործի անցնել. նա սկսեց տեղավորել արկի անկումը դանդաղեցնող սարքավորումները:

Այստեղ պետք ե վերհիշել Տամար-Տառնի միտինը, վորոտեղ Նիկոլը խոսում եր այդ ձեռնարկի անխոսափելի անհաջողության մասին և պնդում, թե անկման միջոցին արկն պապկունման կջարդվեր: Այդ առարկությանը Միշել Արդանը պատասխանել եր, թե անկումը կդանդաղեցվի պատշաճ կերպով դասված հրթիւներով:

Իսկապես, արկի հատակին դրված եյին հսկա հրթիւներ, վորոնք դուրս թռչելով, հետադարձ շարժում կառաջացնելին և մասմբ կմեղմացնելին արկի անկման արագությունը: Ճեշտ ե, վոր ներկա պայմաններում հրթիւները պիտի վառվելին անորոշարածության մեջ, բայց թթվածինը չեր պակասի, վորովհետեւ վառողի մեջ հենց կար թթվածինը:

Բարբիկենը հրթիւները տեղավորել եր փոքր պողպատեթնդանոթների մեջ, վորոնց կարելի յեր պտուտակներով ամրացնել արկի հատակին: Ներսից նրանք հավասարվում եյին արկի հատակին, իսկ գրսից արկից մի քանի տասնյակ սահմետը հատակին, իսկ գրսից արկից մի քանի տասնյակ սահմետը հատակին, մնում: Այդ թնդանոթների թիվը հասնում եր քսադուրս եյին մնում: Սկավառակի վրա բացված անցքերից հնարավոր եր վառելնի: Սկավառակի վրա բացված անցքերից հնարավոր եր վառելնի: Ենթանոթների պատրույղները. նրանց ամբողջ գործողությունը պիտի կատարվեր արկից դուրս: Հրթիւների պարունակությունը նախապես տեղավորված եր յուրաքանչյուր թնդանոթի մեջ: Մնում եր միայն բաց անել արկի հատակում տեղավորված մետաղի կափարիչը և նրանց տեղը դնել այն թնդանոթները, վորոնք մեծ ճշտությամբ մտնում եյին բացված անցքերի մեջ:

Այդ աշխատանքը վերջացավ ժամի յերեքի մոտ. այժմ մնում եր միայն սպասել:

Այդ միջոցին արկը զբավորեն մոտենում եր Լուսնին: Ան-

կառկած նա վորոշ չափով յենթարկվում եր Լուսնի ազդեցության. բայց արդեն վորոշ եր, վոր արկն ուղղահայաց կերպով չեր ընկնի Լուսնի վրա, վորովհետեւ նրա ներքին մասը պետք չեր արդեն դարձած լիներ դեպի Լուսնինը, բայց այդ դեռևս չեր կատարվել:

Բարբիկենի մաահոգությունն ավելացավ, յերբ նկատեց, վոր արկը լիովին չեր հպատակվում լուսնի ձգողական ուժին: Նրանց առաջ բացվում եր բացարձակ անհայտությունը:

Բարբիկենը կարծում եր, թե միայն յերեք տեսակ յենթարություն կարելի յեր անել — վերադարձ դեպի Յերկիր, անկում լուսնի վրա, անշարժություն չեղոք կետի վրա: Բայց այժմ ներկայանում եր չորրորդ, իր հետևանքներով վերին աստիճանի վտանգավոր մի յենթարություն: Միայն Բարբիկենի նման վճռական մի գիտնական, Նիկոլի նման մի սառնարյուն անձնատվորություն և Միշելի նման մի ինքան անձնավորություն կավորությունը ըստ Եյին հանդիսա սրտով ընդունել այդ չորրորդ նորությունը:

Իսկույն սկսեցին քննել ինդիրը: Ուրիշները ինդիրը կքննել յին գործնական տեսակետից. Հարց կընելին, թե ո՞ւր պիտի առներ իրենց այդ վազո՞ն-արկը: Մեր ուղենորները բոլորովին տարբեր տեսակետից քննեցին իրենց առջև գրված ինդիրը: Նրանց համար կարենը եր իմանալ, թե ինչի՞ց եր առաջացել այդ նոր յերեսույթը:

— Ուրեմն մենք գծից դուրս ենք յեկել, — ասաց Միշել, — բայց ի՞նչ ե դրա պատճառը:

— Յե՞ս վախենում եմ, — ասաց Նիկոլը, — վոր չնայած ձեռք առնված բոլոր միջոցներին, կոլումբիադին ճիշտ ուղղություն չեր տրված: Ամենափոքր սիսակ անդամ բավական ե, վոր մենք դուրս յեկած լինենք լուսնի ձգողական ուժի սահմանից:

— Ուրեմն սիսակ նշան են բռնել, — հարցրեց Միշել:

— Զեմ կարծում, — պատասխանեց Բարբիկենը: — Թնդանոթի ուղղահայաց դրությունը չափազանց ճիշտ եր, նրա ուղղության ճշտությունը դեպի զենիթը վոչ մի կասկածի յենթական չե: Քանի վոր այժմ լուսնինը զենիթից ե անցնում, մենք նըշեր աթետք ե հանդիպելինք լիալուսնի միջոցին: Այստեղ մի ուրիշ պատճառ կա, վորը յես դեռևս չեմ կարող ըմբռնել:

— Զե՞ք կարծում, վոր ժամանակից ուշ մեկնեցինք, — հարցրեց Նիկոլը:

— Ժամանակից ո՞ւշ, — կրկնեց Բարբիկենը:

— Այս՝, — չարունակեց Նիկոլը: — Քեմբրիջի աստղադիտաբանի գրության մեջ նշված ե, վոր մեր ուղևորությունը պետք է կատարվի իննուուն յոթ ժամ, տասյերեք րոպե և քսան վայրկյանում: Դրանից հետևում ե, վոր այդ ժամինետից առաջ կուսինը չի լինի նշված կետում, իսկ ժամկետից հետո անցած կլինի նույն կետից:

— Համաձայն եմ, — պատասխանեց Բարբիկենը, — բայց մենք մեկնեցինք դեկտեմբերի 1-ին, յերեկոյան ժամի տասն անց քառասուն վեց րոպե, քառասուն վայրկյանին, իսկ նշված կետում մենք պետք ե լինենք դեկտեմբերի հինգին, կես դիւներին, այն միջոցին, յերբ լրիվ լուսին կլինի: Այսոր դեկտեմբերի հինգն ե, յերեկվա ժամը յերեք ու կեսը, ուրիմն մնում ե ութ ու կես ժամ, վոր մենք հասնենք մեր կետ նպատակին: Ի՞նչ պատճառ կա, վոր չասանք լուսնին:

— Գուցե չափազանց արագությա՞ն պատճառով, — հարցրեց Նիկոլը, — չե՞ վոր մենք հաշվեցինք, վոր սկզբնական արագությունը յենթադրված արագությունից բարձր եր յեղել:

— Վոչ, հարյուր անգամ վոչ, — բացականչեց Բարբիկենը, — յեթի մեր ուղղությունը ճիշտ ե, ալելի արագ թռչելը արգելք չեր լինի, վոր մենք հասնելինք մեր նպատակին: Վո՛չ. մենք չեղվել ենք մեր ճանապարհից:

— Ի՞նչպես, ի՞նչ պատճառով, — հարցրեց Նիկոլը:

— Չդիտեմ, — ասաց Բարբիկենը:

— Դե, Բարբիկեն, — ասաց Միշելը, — ուղո՞ւմ ես, վոր յես իմ կարծիքը հայտնեմ մեր չեղվելու մասին:

— Ասա՛:

— Յես կես դուլար չեմ տա դրա պատճառն իմանալու համար: մենք չեղվել ենք: դա փաստ ե: Ո՞ւր ենք դնում: այդ չե կարեւոր: շուտով կիմանանք այդ բոլորը: Սատանան դիտե, թե ուր ենք դնում, բայց քանի, վոր թռչում ենք անհուն տարածության մեջ, վերջ ի վերջո անկասկած կընկնենք մի վորեւ ձգողական ուժի կենարոնը: ահա լմ կարծիքը:

Արդանի ալյօ անտարբերությունը չեր կարող հանդստացնել

Բարբիկենին: Վոչ թե նրա համար, վոր նա ժամանովված եր ապագայի մասին: Վո՛չ: Այլ նա ցանկանում եր անպատճառ գիտենալ, թե ինչն եր պատճառ յեղել, վոր արկը չեղվել եր նըշված ճանապարհից:

Այսպես թե այնպես արկը շարունակում եր առաջ շարժվել լուսնի հետ կողք-կողքի, իսկ նրա հետեւից գուրս գցված իրերի ամբողջ շքախումբը:

Բարբիկենը նույնիսկ վորոշեց, վոր լուսնի և արկի մեջ յեղած տարածությունը միայն ութ հազար կիլոմետր ե, վոր արկի արագությունն այժմ վոչ մի փոփոխության չեր յենթարկվում: Այդ մի նոր փաստ եր, վոր արկը չեր ընկնում լուսնի վրա: Բայց չնայած՝ վոր սկզբնական արագությունը դեռևս հաղթում եր լուսնի ձգողական ուժին, բայց և այնպես արկի ուղին մոտենում եր լուսնի սկավառակին, հույս կար, վոր լուսնի ձգողական ուժը իմերջո կհաղթանակեր և արկը կընկներ լուսնի վրա:

Երեք ուղերները անդործ չմնալու համար շարունակեցին դիտել դրսի աշխարհը: Լուսնի բոլոր կետերը փայլում եյին Արքեի ճառագայթների տակ:

Այդպես, կողմնակի լուսամուտներից նրանք շարունակեցին դիտել մինչև յերեկոյան ժամի ութը: Այդ միջոցին լուսինն այնքան եր մեծացել, վոր կիսով չափ ծածկել եր ամբողջ յերկնակամարը: Մի կողմէց Արեւը, մյուս կողմէց լուսինը՝ արկը վողողել եյին ճառագայթների լույսով:

Այդ ժամանակ Բարբիկենը յենթադրեց, վոր լուսնից հեռու եյին միայն յերեք հազար կիլոմետր:

Բարբիկենը շարունակում եր ինտուել իր անլուծելի ինդրի վճիռը: Արկը նկատելի կերպով մոտենում եր լուսնին, բայց վորոշակի յերեսում եր, վոր չեր հասնի նրան: Թե ի՞նչ հեռավորության վրա արկը կանցներ լուսնի կողքից, այդ կախված եր ձգողական և վանողական ուժերից, վորոնք պայմանավորում եյին արկի շարժումը:

— Յես միայն մի բան եմ ցանկանում, — ասաց Միշելը, — այնքան մոտից անցնել, վոր կարելի լինի թափանցել լուսնի բոլոր դադարներին:

— Անիծվա՛ծ լինի այն պատճառը, վոր չեղեց մեր արկն իր ժամանակարհից, — բացականչեց Նիկոլը:

— Անիծված լինի ուրեմն, — պատասխանեց Բարբիկենը,  
վորի միտքը հանկարծ լուսավորվեց, — այն բոլիղը, վորին  
մենք հանդիպեցինք ճանապարհին:

— Ի՞նչպես, — հարցրեց Միշել Արդանը:

— Ի՞նչ եք ուզում ասել, — բացականչեց Նիկոլը:

— Ուզում եմ ասել, — շարունակեց Բարբիկենը վստահ շեշ-  
տով, — վոր մեր շեղման պատճառը միայն այդ թափառաշրջիկ  
մարմինն է:

— Բայց նա մեզ հետ չշփելեց նույնիսկ, — ասաց Միշելը:

— Այդ վոչ մի նշանակություն չունի, նրա ծավալը համե-  
մատած արկի ծավալին, չափազանց մեծ է, ուստի և նրա  
ձգողական ուժը մեզ շեղեց մեր ուզուց:

— Այդքան փոքր ո՞ւժը, — հարցրեց Նիկոլը:

— Այս, Նիկոլ, ինչքան ել այդ ուժը փոքր լինի, — պատաս-  
խանեց Բարբիկենը, — յերեք հաղար կիլոմետր տարածության  
վրա այդքանն ել բավական է, վոր մենք վրիպենք Լուսնից:

## ՊԱՌԱԽԱ

### ԴԻՏՈՒՄՆԵՐ

Բարբիկենը ակներեաբար գտել եր արկի շեղման ամենահա-  
վանական պատճառը: Ինչքան ել փոքր լիներ այդ պատճառը,  
համենայն դեպս բավական եր շեղելու համար արկն իր ուզուց:  
Ճակատագրական մի դեպս եր այդ: Խիզախ ձեռնարկումը վի-  
ժում եր մի պատահական դիպվածից և յեթե մի վորեւե ար-  
տակարգ բան չպատահեր, այլևս Լուսնի վրա ընկնելը անհնար  
կլիներ: Աքդյո՞ք արկը գոնե Լուսնին այնքան մոտիկից կանց-  
ներ, վոր հնարավոր լիներ պարզել մինչ այդ չլուծված մի քա-  
նի զիտական հարցեր: Ահա ինչին եր զլիսավորապես զբաղեցնում  
հանդունդն ուղեռներին: Իրենց ապագա վիճակի մասին մտա-  
ծել անդամ չեյին ցանկանում: Սակայն ի՞նչ կլիներ նրանց  
դրությունն այդ անհուն տարածության մեջ, մանավանդ վոր  
չուտով ողից պիտի զրկվեյին: Մի քանի որից նրանք չնչանեղձ  
յեղած պիտի ընկնեյին անհայտության մեջ գեղերող արկում:  
Բայց այդ մի քանի որերը դարեր եյին թվում նրանց, և նրանք  
այդ թանկագին ժամանակը նվիրեցին ուսումնասիրելու Լուսինը,  
վորի վրա ընկնելու հույսն արդեն կորցրել եյին:

Այդ ժամանակ արկի հեռավորությունը Լուսնից կլիներ մո-  
տավորապես յերկու հարյուր մղոն, բայց նրանց համար այդ  
հեռավորությունն ավելի մեծ էր, համեմատած Յերկրի բնակիչ-  
ների հետ, վորոնք զինված եյին ուժեղ հեռագիտակներով:

Արկի վրա այդպիսի ուժեղ հեռադիտակներ չկային և մեր  
ուղեռները չեյին կարող պարզ վորոչել Լուսնի մակերեսույթի  
մանրամասնությունները: Նրանք աչքով տեսնում եյին միայ-

Հսկա խորությունների ընդարձակ ջրջագծերը, վորոնք սխալ-մամբ «ծով» եյին անվանվել: Լեռները անհայտանում եյին Արևի վառ լույսի մեջ: Լուսնի ամբողջ մակարդակը շողջողում եր հալած արծաթի նման և շացնում տեսողությունը: Արկի հեռա-վորությունը լուսնից զգալիորեն նվազում եր. նրա շարժման արագությունը թեև նվազել եր սկզբնական արագությունից, բայց և այնպես ճեղընթաց գնացքների արագությունից ուժ կամ ինն անդամ ավելի յեր: Արկը չեղակի ուղղությամբ եր առաջանում, մի բան, վոր հույս եր տալիս Արդանին, վոր գուցե դիպչեն Լուսնի սկավառակի մի վորեե կետին: Նա չեր կարող հաշովել այն մտքի հետ, թե արկը չի ընկնելու Լուսնի վրա և անընդհատ պնդում եր իր ասածը: Սակայն Բարբիկենը, վոր այդ մասին իրազեկ եր, հակառակն եր առացուցում:

— Վո՞չ, Միշել, վո՞չ: Լուսնի վրա կարող ենք իջնել միայն անկումով, իսկ մենք չենք ընկնում: Կենտրոնաձիգ ուժը մեզ քաշում ե գեպի Լուսինը, բայց կենտրոնախույս ուժը մեզ հեր առաջնում ե նրանից:

Այդ խոռքերն ասվեցին այնպիսի համոզիչ շեշտով, վոք Միշել Արդանի վերջին հույսը կորավ:

Լուսնի այն մասը, վորին մոտենում եր արկը, հյուսիսային կիսազունդն եր, վորը լուսնային քարտեզների վրա նկարվում ե ներքեսում, վորովհետեւ այդ քարտեզներն ընդհանրապես նկարվում են հեռադիտակների ողնությամբ, իսկ մենք վիտենք, վոր հեռադիտակը իրերը հակառակ կողմով ե ցույց տալիս: Բերի ու Մեդերի այդպիսի մի քարտեզ այդ միջոցին գտնվում էր Բարբիկենի առջև: Այդ հյուսիսային կիսազունդը ներկայացնում էր ընդարձակ դաշտավայրեր, վորոնց վրա տեղտեղ բարձրանում եյին մեկուսացած լեռներ:

Կես գիշերին Լուսինը լրիվ եր: Ճիշտ այդ պահին ուղևորները պիտի վոաք գնեյին նրա վրա, յեթե անսպասելի բռնիքը նրանց չշեղեր ուղիղ ճանապարհից: Ուրեմն Լուսինը հասնում եր այդ կետին ճիշտ այն ժամանակին, վոր վորոշել եր կեմրիջի ասաղադիտարանը: Լուսինը մաթեմատիկական ճշտությամբ գտնվում եր իր մերձակետում և քանութերորդ զուգահեռականի գնենիթում: Այդ միջոցին, յեթե մի դիտող կանգ նաւ լիստամբի հումանական կուտակում, ուղիղ իր վրա կտես-

ներ Լուսինը: Յեթե թնդանոթի առանցքից մի յերեակայական ուղիղ դիմ անցկացվեր, այդ դիմը կանցներ լուսնի կենտրոնից:

Շատ հասկանալի յե, վոր դեկտեմբերի հինգից լույս վեցի գիշերը ուղևորները մի բոլոր աչք չփակեցին: Ի՞նչպես կարելիք յեր քնել, յերբ այդքան մոտ եյին նոր աշխարհին: Երանը Յերկրի ներկայացուցիչներն եյին և նրանց միջոցով մարդկային ցեղը թափանցում եր մոլորակի դաղտնիքներին:

Մեծ հուզումի մեջ նրանք մի լուսամուտից մյուսն եյին անցնում:

Բարբիկենի կատարած դիտումները շատ ճշգրիտ յեղան. նա ոպավում եր թե՛ հեռադիտակից և թե՛ քարտեզներից:

Լուսնի առաջին դիտողը յեղել է Գալիլեյը: Նրա հեռադիտակը միայն յերեսուն անգամ եր մեծացնում: Բայց և այնպես նա հաստատեց, վոր Լուսնի սկավառակի վրա յերեացող բժերը, «ինչպես սիրամարդի յերկար պոչի վրա սփռված աչքերը», վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ լեռներ: Նա նովյանիսկ չափեց նրանց բարձրությունը և գտավ, վոր հավասար են Լուսնի սկավառակի արամագծի մեկ քամներորդ մասին, այսինքն ուժ հազար հար-յուր մետրի: Սակայն Գալիլեն վոչ մի քարտեղ չպատրաստեց:

Մի քանի տարի նրանից հետո Դանցիկի մի աստղադեսակելվելուսը— ապացուցեց, վոր Գալիլեյի թվերը չափազանց ված եյին, թե Լուսնի լեռների բարձրությունը հավասար եր մոտ 6800 մետրի: Նա կազմեց Լուսնի առաջին քարտեզը: Կոր ու լուսավոր կետերն այդ քարտեզի վրա ցույց են տալիս լեռները, իսկ մուգ կետերը — ընդարձակ ծովեր, վորոնք իրականում ընդարձակ դաշտավայրեր են:

Հեվելիուսը այդ լեռներին ու ծովերին դրեց յերկրային ա-նուններ: Որինակի համար, այնտեղ կան Սինայը՝ Արաբիայի մեջ, Ետնան Սիցիլիայի կենտրոնում, Ալպերը, Ապենինյան լեռները, Կարպատները, Էնչապես նաև Միջերկրականը, Մարմարածովը, Սև և Կաստիկ ծովերը: Այս անունները Լուսնի լեռների և ծովերի համար շատ անհաջող են. վո՞չ այդ լեռները, վո՞չ ել ծովերը իրենց ձևով նման չեն Յերկրի լեռներին ու ծովերին: Միայն հարավում գտնվող մի ընդարձակ սովորակ չելու, վոր միացած և ավելի ընդարձակ տարածությունների և վերացնում ե ոուր ծայրով, մի քիչ նմանություն ունի շրջած-

Հնդկական թերակղզում: Հեվելիուսի անունները չպահպանվեցին:

Մի ուրիշ քարտեզագիր, ավելի լավ ճանաչելով մարդկային դրացումները, մի նոր անվանացուցակ առաջարկեց, վոր ընդունվեց բոլորի կողմից: Այդ դիտողը Հեվելիուսի ժամանակակից Ռիչելին եր: Նրա քարտեզը լիքն եր կոպիտ սիալներով: Բայց Լուսնի լեռներին նա տվեց պատմության նշանավոր մարդկանց և ժամանակակից դիտնականների անունները, վորը և նրանից հետո ընդունվեց ընդհանուրի կողմից:

17-րդ դարում Փրանսիացի աստղադետ Կասինին կազմեց Լուսնի յերրորդ քարտեզը, վորը թեև ավելի ինսամքով եր կատարված, սակայն չափերի տեսակետից չեր համապատասխանում իրականության: Սկզբում լույս տեսան նրա մի քանի հրատարակությունները, բայց հետադարձում նրա պղնձե տախտակը յերկար ժամանակ տպարանում մնալուց հետո վաճառվեց վորովես անպետք իր:

Մի ուրիշ Փրանսիացի մաթեմատիկոս՝ Լահիրը կազմեց Լուսնի քարտեզը չորս մետր բարձրությամբ, սակայն այդ քարտեզը այլակես ել մնաց և չտպագրվեց:

Նրանից հետո մի գերմանացի աստղադետ՝ Տորիաս Մեյերը XVIII դարի կեսերին սկսեց հրատարակել մի հրաշալի քարտեզ, շատ ճշգրիտ, ստուգված չափերով, սակայն նրա մահը՝ 1762 թ. ընդհատեց այդ նշանավոր աշխատանքը:

Նրանից հետո շատեր զբաղվեցին այդ աշխատանքով, բայց միայն 1830 թ. Բերն ու Մեդլերը կազմեցին իրենց հռչակավոր «Mappa selenographica»: Այդ քարտեզի վրա ճշգրիտ կերպով նկարված ե Լուսնի սկավառակը, ճիշտ այնպես՝ ինչպես նրան անսնում ենք Յերկրի վրայից: Լեռների ու դաշտերի ձեվերը ձիշտ են կենտրոնում միայն, մնացած մասերը, ինչպես հարավային, հյուսիսային, արևելյան և արևմտյան մասերը ներկայացված են փոքրացած ձեռվ և ունեն անճշտություններ: Այդ քարտեզը, վորի բարձրությունը հասնում է իննսուն հինգ սանտիմետրի և բաժանված է չորս մասի, Լուսնի քարտեզադրության գլուխ գործոցն ե,

Այդ դիտնականներից հետո կարելի յէ հիշել գերմանացի աստղադետ, Յուլիոս Շմիդտի քարտեզը, անդվացի սիրող Դ-

լարույի ու Շապյոյի քարտեզը, վոր կազմել և 1860 թ. դարմանալի ճշտությամբ ու հստակությամբ<sup>1)</sup>:

Բարբիկենի մոտ յերկու քարտեզներ կային— Բերի ու Մեդլերի և Շապյուրի ու Լըկուտյուրյերի քարտեզները, վորոնք նրան պիտի ողնեյին իր դիտողությունների մեջ:

Բացի այդ, նրա տրամադրության տակ կային հրաշալի ծավային դիտակներ, վորոնք հարմարեցված եյին այս ուղևորության համար: Նրանք իրերը խոշորացնում եյին հարյուր անդամ և կարող եյին լուսինը Յերկրին մոտեցնել չորս հազար կիլոմետրի վրա: Բայց այստեղ, յերբ շուտով հեռավորությունը մի քանի հարյուր կիլոմետր եր լինելու, և մի միջավայրում, վորոնք ուղղ վոչ մի աղղեցություն չեր կարող ունենալ, վորովհետեւ ող չկար—այդ դիտակները Լուսինը պիտի մոտեցնեյին ընդամենը մի քանի կիլոմետրի վրա:

1) Ներկայումս տառապահետների տրամադրության առկ կան Լուսնի մակերևութի մանրամասն լուսանկարները

## ԼՈՒՍՆԻ ԾՈՎԵՐԸ

— Դուք յերեկիցե տեսե՞լ եք Լուսինը, — իրոնիայով հարցնում եք մի պրոֆեսոր իր ուսանողներից մեկին:

— Վոչ, — պատասխանեց ուսանողը ե՛լ ավելի մեծ իրոնիայով, — բայց պետք է ասել, վոր լսել եմ նրա մասին:

Սուանց սխալվելու կարելի յե ասել, վոր Լուսնի տակ առդրոգիանց մեծամասնությունը կարող ետալ ուսանողի այդ միևնույն զվարճակի պատասխանը: Խսկապես, ինչքան շատ ենք մենք լսում Լուսնի մասին, բայց համարյա վոչ վոք նրան չի աենում, դոնե դիտակի կամ հեռադիտակի միջոցով: Մեզանից շատ քչերին և վիճակվել մի հայացք նետել մեր արբանյակի քարտեղի վրա:

Լուսնի քարտեղի վրա նախ և առաջ մեր ուշադրությունն է դրակում մի առանձնահատկություն: Լուսնի ցամաքամասերը յերկրագնդի ու Մարսի ցամաքամասերին հակառակ, գլխավորապես գտնվում են Լուսնի հարավային կիսագնդի վրա: Այդ ցամաքամասերի շրջադերը այնպես ուղիղ և կանոնավոր չեն, ինչպես որինակի համար Հարավային Ամերիկայի, Աֆրիկայի ու Հնդկաստանի շրջագծերը: Նրանց անկյուններն ու կտրված առ մերը հարուստ են ծոցերով ու թերակղղներով: Նրանք հիշեցնում են Զոնդյան արշխալազոսի կղզիները, վորոնց հողը կտրված է անհամար մասերի: Յեթե յերեկիցե Լուսնի վրա նավարակություն գոյություն ե ունեցել, դա յեղել ե անպայման չափաղանց դժվար ու վտանգավոր:

Լուսնի մի հատկանիշն ել այն ե, վոր նրա հարավային բեկեաը ավելի ցամաքային ե, քան Հյուսիսային բեկեոը: Հյուսի-

սային բևեռում կան վոքը տարածությամբ հողամասեր, վորոնիք մյուս ցամաքաներից անջատված են ընդարձակ ծովերով<sup>\*</sup>), իսկ դեպի հարավ համարյա ամբողջ կիսագնդը ծածկված է ցամաքամասերով: Պարզ յերեռում են լեռնաշղթաները, առանձին գաղաթներն ու խոտոչները: Լուսնի ամբողջ ռելյեֆը ծածկված է այլպիսի անհարթություններով, այդ տեսակետից նման է Շվեյցարիային կամ Նորվեգիային: Այլպիսի անհարթություններով կտրված մակերևույթը արդյունք է Լուսնի կեղելի հաջորդական սեղմումների նրա կաղմավորման ժամանակաշրջանում:

Լուսնի սկավառակը մի ընդարձակ ասոլարեղ է յերկրաբանական յերեռութների ուսումնասիրության համար: Թեև, ըստ մի քանի աստղագետների, նրա մակերևույթը ավելի չին ե, քան յերկրի մակերեռույթը, բայց և այնպես ավելի նոր և մնացել: Այստեղ չկա ջուր, վոր ընդունակ և փոփոխելու մակերևույթի նախնական կառուցվածքը և իր մշտական ազդեցությամբ ամբողջ մակերեսը մի ընդհանուր ձեկի յե վերածում: Զիս և ոդ, բողջ մակերեսը մի ընդհանուր ձեկի յե վերածում: Վոր և ոդ, վորի քայլեցությունը փոփոխում և հողերի ընույթը: Կրակի ուժերի ազդեցության հետքերը այնտեղ մնացել են իրենց նախնական մաքրությամբ:

Լուսնի այս լայնածավալ ցամաքամասերը գիտելուց հետո հայացքն ընկնում է ե՛լ ավելի ընդարձակ «ծովերի» վրա: Վոչ միայն նրանց ափերի շրջադերը, դիրքն ու արտաքին տեսքը հիշեցնում են Յերկրի ովկիանուաները, այլ նաև ինչպես Յերկրի վրա, այնպես ել այնտեղ դրավում են դեղի մակերեսի մեծ մաքանչությունը: Բայց նորից նկատենք, վոր դրանք ջրային տարածություններ չեն, այլ պարզապես ողաշտավայրեր, վորոնց բնույթը հույս ունեյին պարզել մեր ուղևորները:

Պետք է ասել, վոր չին աստղագետները այդ յենթադրական ծովերը դարձարել են արտառոց անուններով և գիտությունը դրանք պահել ե մինչեւ այսոր:

«Ամպերի ծով»-ը մեր ուղեւորներին թվում եր հոկամի խոռոչ, վորի վրա բարձրանում եյին մի քանի խոշոր լեռ: Վոր և իսուոչ, վորի վրա բարձրանում եյին մի քանի խոշոր լեռ: Լուսնի սկավառակի՝ ամեներ, «փոթորիկների ովկիանուը» — լուսնի սկավառակի՝ ամեներ,

\* ) Հասկանալի յե, վոր «ծովի ասելով, պետք է հասկանալ այն ընդարձակ տարածությունները, վորոնք առաջ հավանաբար ծածկված են յեղել ջուրի ձակ տարածությունները, վորոնք առաջ հավանաբար ծածկված են յեղել ջուրի ձակ»

Նամեծ հարթավայրն է. նրա մեջտեղում բարձրանում են կեղլեր» և «Արիստարխ» հրաշալի լեռները:

Մի քիչ գեղի հյուսիս ցերեռում և «Անձրևների ծով»-ը, վուրը համարյա կլոր ձև ունի: Այդ շրջանակի ամրող յեզերքով չծագրվում են յերեք բավական ընդարձակ ծոցեր— «Այրեցյալ ծոցը», «Յողի ծոցը» և «Ծիածանի ծոցը»: Դրանք—փոքր հարթավայրեր են, վորոնք սեղմած են բարձր լեռնաշղթաների միջև:

Հարավային կիսագունդը, վորն ավելի քմահաճ է, ավելի մեծ թվով, բայց ավելի փոքր տարածությամբ ծովեր ունի: Դեպի հյուսիս «Յըրտի ծովը», վորը միացած է «Մահվան լճին» և «Յերազների լճին», ավելի հետուն՝ «Հստակության ծովը», «Ճպնաժամերի ծովը», վորոնք շրջապատված են լեռնաշղթաներով: Հասարակածի մոտ՝ «Անդորրության ծովը», վորը դեպի հարավ միանում է «Նեկտարի ծովին», իսկ դեպի արևելք՝ «Բեղմավորության ծովին», վորը հարավային կիսագնդի ամենամեծ ծովն է:

Ահա ինչպես եր ներկայանում Բարբիկենի ու Նիկոլի աշխերին Յերկրի արբանյակի այդ մակերեսույթը: Յերբ նրանք հաշվեցին իրենց բոլոր չափումների արդյունքները, դտան, վոր կուսնի կիսազնդի տարածությունը Յերկրի կիսազնդից տասյերեքուկես անգամ փոքր է, սակայն նրա վրա կան ավելի քան հիսուն հազար խառնարաններ: Կարելի յեւ ուրեմն պատկերացնել, թե ինչքան խորտուբերդ է կուսնի մակերեսույթը: Անդիւացիները շատ իրավամբ կուսնին տվել են «կանաչ պանիր» վոչ բանաստեղծական անուն: Միշել Արդանը նույնիսկ տեղից վեց ցատկեց, յերբ Բարբիկենի բերանից լսեց այդ անպատվարեր անունը:

— Ահա թե ինչպես են անվանում, — բացականչեց Միշել, — XIX դարի անդլուսաքսոնները չքնաղ Դիանային, խարտյաշ Յերեյին, հրաշագեղ Իդիդային, գիշերների թագուհի՝ գեղեցկուհի Աստարտեյին, կատոնի և Յուպիտերի դստեք, լուսաճաշնչ Ապոլոնի մանկամարդ քրոջը:

## ԳԼՈՒԽ XII

### ԼՈՒՍՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅՑԸ

Արկի հետեւած ուղղությունը, ինչպես արդեն նկատել ենք, նրան տանում եր դեպի կուսնի հյուսիսային կիսագունդը: Ուղեվորներն արդեն վաղուց անցել եյին այն կետը, վորտեղից արկը ոկտի սկսեր ընկնել կուսնի վրա, յեթե նրա ուղեղիծը շեղված ըլիներ:

Կես գիշերն անց եր: Բարբիկենի կարծիքով, արկը լուսնից հաղար չորս հարյուր կիլոմետր հեռավորության վրա յեր. մի տարածություն, վոր մի քիչ ավելի յեւ կուսնի շառավիղից. այդ տարածությունը հետզհետեւ պիտի նվազել, ինչքան նրանք ավելի մոտենային հեռուին:

Այդ միջոցին արկը վոչ թե կուսնի հասարակածի մոտ եր, այլ կտրում-անցնում եր տասերորդ զուգահեռականով. այդ լայնությունից մինչեւ ըևեռ հասնելը Բարբիկենն ու յերկու ուղեկիցները կարող եյին կուսինը դիտել ամենանպատակոր պայմաններում:

Յեկ իրոք, դիտակի միջոցով կուսինը նրանց թվում եր տասնչորս կիլոմետր հեռավորության վրա: Ապառաժոտ լեռների տեղեկողը կարող եր ե՛լ ավելի մոտեցնել կուսինը, բայց Յերկրի մթնոլորտը զգալիորեն նվազեցնում եր նրա տեսողական ուժը:

Բարբիկենը դիտակը աչքին, արդեն նկատել եր մի քանի մանրամասնություններ, վորոնք համարյա տեսանելի չեյին Յերկրից դիտողների համար:

— Միրել բարեկամներ, — ասաց թնդանոթային ակումբի

Նախադահը լուրջ չեշտով, — յև չփիտեմ, թե ուր ենք գնում, չգիտեմ, թե արդյո՞ք յերեւն նորից կտեսնենք մեր յերկրադունդը: Բայց և այնպես գործի անցնենք այնպես, վորպես թե մեր աշխատանքը մի որ ողտակար կլինի մեր հայրենակիցների համար: Առայժմ մի կողմ թողնենք այն բոլորը, ինչ կարող ե սպասել մեզ: Ամեն բանից առաջ մենք աստղագետներ ենք: Այս արկը կեմքը չի աստղագիտարանի կարինետներից մեկն է, տեղափոխված անջրազետի մեջ: Սկսենք մեր գիտողությունները:

Այդ խոսքերից հետո նա գործի անցալ մեծ յեռանդով և կարելի յեղածին չափ ճշտությամբ գծաղրեց Լուսնի մակերեսութիւն զանազան մանրամասնությունները:

Այդ միջոցին արկը դեռևս գտնվում եր հյուսիսային լայնության տասերորդ զուղահեռականի վրա և ըստ յերեսույթին դնում եր դեպի արևելյան լայնության քանակորդ աստիճանը:

Այսուղեղ անհրաժեշտ ե մի կարեռը դիտողություն անել այն քարտեզի վերաբերմամբ, վորն ողտագործում ելին գիտողները: Լուսնային քարտեզների վրա, դիտուներում բոլոր առարկաների պատկերը շրջված տեսնելու հետեանքով, հարավը պետք ե ընդունել վերեռում, իսկ հյուսիսը՝ ներքեռում: Թվում ե, թե մի- նույն պատճառով արևելքը պետք ե գտնչի ձախում, իսկ արե- մուտքը՝ աջում: Բայց իրականում այդպես չե: Յեթե քարտեզը շուր տանք այնպես, վոր Լուսինը յերես ինչպես մենք նրան տեսնում ենք, այդ գեղքում արևելքը կլիներ ձախ կողմում, իսկ արևեմուտքը աջում, յերկրային քարտեզների ճիշտ հակա- ռակը: Ահա այդ անձշտության պատճառը— այն դիտողները, վորոնք գտնվում են, ասենք, Յեվրոպայի հյուսիսային կիտա- գնդում, Լուսինը կտեսնեն համեմատած իրենց դիրքին, հար- վում: Լուսինը դիտելու միջոցին նրանք իրենց կոնակը դարձած են լինում դեպի հյուսիս, ճիշտ հակառակը այն դիր- քին, վոր նրանք ընդունում են, յերբ դիտում են Յերկրի քար- տեզը: Բանի վոր նրանց կոնակը հյուսիսին և դարձած լինում, ուրեմն արևելքը կլինի նրանց ձախակողմը, արևեմուտքը՝ աջա- կողմը: Իսկ հարավային կիտագնդում, որինակի համար Պատա- գոնիայում գտնվող դիտողների համար, արևեմուտքը անկառած կլինի ձախ կողմը, իսկ արևելքը՝ աջ կողմը, վորովհետև այդ ժամանակի առաջարկը:

դեմքը դարձած կլինի դեպի հյուսիս, իսկ կոնակը դեպի հա- րավ:

Այդ ե պատճառը արևելքի ու արևմուտքի այդ կարծեցյալ թեղափոխության և պետք ե այս կետը յերբեք չմոռանալ, վոր- պեղի կարելի լինի անսխալ հետեւել Բարբիկենի դիտողություն- ներին:

Քարտեզի ողնությամբ մեր ուղևորները կարողանում եյին անսխալ կերպով ճանաչել իրենց դիտակների տակ ընկնող Լուս- նի մասերը:

— Ի՞նչ ենք տեսնում մենք այս րոպեյին, — հարցրեց Միշե- լը:

— «Ամպերի ծով»-ի հյուսիսային մասը, — պատասխանեց Բարբիկենը: — Մենք գեռես նրանցից շատ հեռու յենք, այդ պատճառով ել դժվար ե վորոշել նրա ընույթը: Արդյո՞ք այդ հարթավայրերը կազմված են չոր ավաղից, ինչպես յենթադրել են առաջին աստղագետները, թե՞ ընդարձակ անտառներ են, ըստ Վարեն դը լա Ռյույի, վորի կարծելքով Լուսնի վրա կա շատ ցածր ու շատ խիտ մթնոլորտ—այդ կտեսնենք հետագայում: Յենթագրություններ չանենք. սպասենք վորոշակի փաստերի:

Այդ «Ամպերի ծովը» բավական անորոշ ե գծված քարտեզ- ների վրա: Յենթագրություններ են, թե այդ ընդարձակ հարթավայրը ծածկված ե լավայի զանդվածներով, վորոնք դուրս են ժայթ- քել նույն ծովի արևմտյան կողմում գտնվող հրարուխներից:

Արկը շարժվում եր առաջ և նկատելիորեն մոտենում Լուս- նին: Շատ չանցած յերեացին այդ ծովի հյուսիսային սահմանը կազմող բարձրությունները: Առաջամասում բարձրանում եր հը- բաշալի գեղեցիկությամբ շողջողուն մի լեռ, վորի դադաթը կար- ծես սուզված եր արևելի վտու ճառագայթների ծովում:

— Ի՞նչ ե զա, — հարցրեց Միշելը:

— «Կոպերնիկ»-ն ե, — պատասխանեց Բարբիկենը:

— Ա՛հ, մի տեսնենք, ինչ բան ե այդ «Կոպերնիկ»-ը:

Այդ լեռը Լուսնի մակերեսույթից բարձր ե յերեք հազար չորս հարյուր յերեսուն ութ մետր: Նա շատ հստակ յերեսում և Յերկրից և աստղագետները կարող են նրան լավ դիտել, հատ կապես յերբ դիտումը կատարվում ե Լուսնի վերջին քառորդի և նորալուսնի աբանքում. վորովհետև այդ ժամանակ նրա սովորը


ընկնում ե հեռուն, արևելքից դեպի արևմուտք և հեշտ ե լինում չափումներ կատարել:

«Տիխո» սարից հետո, վոր գոնվում ե հարավային կիսապնդում, «Կոպերնիկ»-ը լուսնի սկավառակի ամենահոյակազ դադաթն է: Նա բարձրանում ե առանձնացած, վորպես մի հոկտիարոս «Ամպերի ծով»-ի և «Մրրիկներ»-ի ծովի սահմանի վրա և իր վառ լույսով լուսավորում ե այդ յերկու ծովերը: Զկա ավելի սքանչելի տեսարան, քան նրա յերկարածիդ լուսավոր շերտերը, մանավանդ լիալուսնի ժամանակ, յերբ նրանք ե՛լ ավելի ուժեղ են փայլում և անցնելով դեպի հյուսիս սահմանակից լեռնաշղթան, մարում են «Անձրկների ծով»-ի մեջ: Յերկրի ժամանակով առավոտյան ժամի մեկին արկը, ողապարիկի նման, տարվելով անհունության մեջ, սալառնում եր այդ սքանչելի լեռան վրա:

Բարբեկենը կարողացավ ճշդրիտ կերպով դիտել նրա դլիսավոր շրջագիծը: «Կոպերնիկը» պատկանում ե ողակավոր լեռների առաջին կարգին: «Կեպլերի» և այն լեռների նման, վորոնք բարձրանում են «Մրրիկների ծով»-ի վրա, «Կոպերնիկը» յերեմն յերկում ե վորպես մի փայլուն կետ, այդ պատճառով ել նրան ընդունել են գործոն հրարուխի տեղ: Բայց իրականում նա մի հանդած հրարուխ ե, ինչպես լուսնի այդ յերեսում դըտընվոր միուս բոլոր հրարուխները: Նրա շրջապատն ունի մոտավորապես ութսուն կիլոմետր տրամադիծ:

Լուսնի վրա շատ կան այդպիսի կրկեսաձև լեռնահովիտներ կամ շրջապատույտ լեռներ—ասաց Բարբեկենը— շատ հեշտ ե տեսնել, վոր «Կոպերնիկի» կրկեսը պատկանում ե ճառագայթող տեսակին: Յեթե մենք ավելի մոտենանք, կտեսնենք նրա կոռուսները, վորոնք դուրս են ցցվել ներսից և մի ժամանակ յեղել եյին բոցալառ հրարուխներ: Լուսնի սկավառակի վրա կամի ուրիշ հետաքրքիր յերկույթ, վոր առանց բացառության յերեսում ե ամեն տեղ, այն ե՝ վոր այդ կրկեսաձև լեռնահովիտների ներքին մակերեսութը շատ ավելի ցածր ե արտաքին հարթավայրից. մի յերեսույթ, վոր հակառակն ե Յերկրի հրարուխների բնույթին:

— Ի՞նչն ե այդ առանձնահատկության պատճառը, — հարցուց նիկոլը:



Արկը «Կոպերնիկ» լեռնահովիտի վրայով եր անցնում

— Այդ գեռես վոչ վոքի հայտնի չե, — պատասխանեց Բաբ-  
բիկենը:

— Ի՞նչ հրաշալի լուսավառություն, — կրկնեց Միշելը, —  
դժվար թե գրանից ավելի գեղեցիկ տեսարան կարող ե դոյսու-  
թյուն ունենալ:

— Իսկ ի՞նչ պիտի առես, յեթե դիպվածը մեզ տանի գեղի  
հարավային կիսագունդը, — հարցրեց Բարբիկենը:

— Կասեմ, վոր այնտեղ ե'լ ավելի գեղեցիկ ե, — պատաս-  
խանեց Միշելը:

Այդ միջոցին արկն ուղիղ «Կոպերնիկ» լեռնահովվիտի վրա  
յեր: «Կոպերնիկ»-ը համարյա կլոր ձև ուներ և նրա թեք պատ-  
նշները շատ հստակ յերեսում եին: Նույնիսկ կարելի յեր տես-  
նել մի կրկնակի ողակաձև պարիսպ: Նրա շուրջը տարածվում  
եր վայրի տեսքով գորշագույն հարթավայրը, վորի ռելյեֆը  
զծաղրվում եր գեղին ֆոնի վրա կրկնաձև լեռնահովտի խոր-  
քում: աղամանդների նման շացուցիչ լույսով փայլող յերկու  
կամ յերեք կոնուսներ մի պահ շոշչողում ու կրկին չքանում ե-  
յին: Դեպի հյուսիս, լեռնահովտի յեղերքը ցածրանում ե-  
յին:

Շրջակա հարթավայրի վրայով թռչելիս Բարբիկենը կարտ  
եր նկատել մեծ թվով ավելի փոքր լեռներ:

Դեպի հարավ դաշտավայրը բոլորովին հարթ եր, առանց  
վորեն բարձրության: Դեպի հյուսիս, ընդհակառակը, մինչև  
այն կետը, վորտեղ դաշտը միանում է «Փոթորիկների ովկիա-  
նոս»-ին, մակերեսը նման եր փոթորիկից հուզված ջրի մակերե-  
վույթին: Լեռների և րլուրների զագացները նման եյին մի-  
մյանց հաջորդող ալիքների: Ամեն տեղ և բոլոր ուղղություննե-  
րով վազում եյին լուսավոր շերտեր, վորոնք բոլորն ել հանդում  
եյին մի կետի՝ «Կոպերնիկ»-ի գագաթին: Նրանցից վորմանք ու-  
նեյին մինչև յերեսուն կիլոմետր լայնություն, իսկ յերկարու-  
թյունը գրավում եր անչափելի տարածություններ:

Ուղերները քննարկում եյին այդ տարրինակ ճառաղայթ-  
ների ծագումը, բայց նրանք ել Յերկրի գիտողների նման չեյին  
կարողանում նրանց ընույթը վորոշել:

— Բայց ինչո՞ւ չենթադրել, վոր այդ ճառաղայթները պար-

պաղես լեռների ճյուղավորումներ են, վորոնք ուժեղ կերպով  
արտացոլում են Արեի լույսը, — հարցրեց Նիկոլը:

— Վոչ, — պատասխանեց Բարբիկենը, — յեթե այդպես լի-  
ներ, լուսնի վորոշ դիրքերում այդ ճյուղավորումները ստվեր  
ուիտի գցելին: Բայց իրականում այդպես չի լինում:

Իսկապես այդ լուսավոր շերտերը յերեսում եյին միայն այն  
ժամանակ, յերբ Արեը ուղիղ լուսնի դեմն եր լինում, իսկ ճա-  
ռաղայթների չեղ լինելու դեպքում նրանք անհայտանում եյին:

— Միթե մինչև այսօր դեռևս չի պարզվել այդ լուսավոր  
շերտերի ծագումը, — հարցրեց Միշելը, — յես չեմ կարողանում  
հավատալ, վոր դիտնականները անզոր են լուծելու այդ հարցը:

— Այո, — պատասխանեց Բարբիկենը, — Հերչելը հայտնել ե  
այդ ժամանի իր կարծիքը, բայց չի պնդել նրա ճշտության վրա:

— Այդ կարեոր չե: Իսկ ի՞նչ ե նրա կարծիքը:

— Նրա կարծիքով այդ լուսավոր շերտերը հանդած լավայի  
հասանքներ են, վորոնք փայլում են, յերբ Արեի ծառաղայթներն  
ուղիղ նրանց վրա յեն ընկնում: Այդ կարող ե հնարավոր մի-  
նել, բայց դրա ճշտության մասին յերաշխավորել չի կարելի: Յեթե  
մենք ավելի մոտենանք «Տիխո» լեռան, դուշե մեզ հա-  
ջողվի պարզել այդ ճառաղայթների գաղտնիքը:

— Գիտե՞ք ինչի յե նման, բարեկամներ, այդ հարթավայ-  
թը, յեթե դիտենք մեր գտնված բարձունքից, — հարցրեց Մի-  
շելը:

— Զդիտեմ, — պատասխանեց Միշելը:

— Իլիկների նման գդված այդ լավայի բեկորները նման են  
անկարգ կերպով իրար վրա լցված հսկա խաղածողերի: Պակա-  
ռում ե մի կեռ, նրանց մեկ-մեկ դուրս քաշելու համար: Պետք  
է լուրջ լինել, — ասաց Բարբիկենը:

— Լավ, լուրջ լինենք — պատասխանեց Միշելը — փոխանակ  
իմաղաձողերի, վոսկորներ ընդունենք: Այդ դեպքում այս դաշտը  
կնմանվի մի ընդարձակ վոսկրակույտի, վորի վրա թափած են  
անցյալ դարերի հաղարավոր սերունդների աճյունները: Միթե  
քեզ համար այս համեմատությունը գերադասելի չե:

— Յերկուսն ել մի զին ունեն, — պատասխանեց Բարբի-  
կենը:

— Ե՞ս, ի՞նչ դժվարահաճ մարդ ես, — ասոց Միշելը:

— Սիրելի բարեկամ, — պատասխանեց խորամիտ Բարբիկենը, — ի՞նչ արծեք ունի վիճել, թե ինչի՞ յէ նմանվում, քանի վոր չըխտենք, թե ի՞նչ բան և այդ:

— Հիանալի պատասխան, — բացականչեց Միշելը — ոյտինձ համար զաս կլինի, թե ինչպես պետք և տրամադրանել գիտակաների հետ:

Այդ միջոցին արկը համարյա անվորիս արագությամբ շարժվում եր Լուսնի սկավառակի յերկարությամբ: Շատ հասկանալի յէ, վոր ուղեռները հանգստի մասին բոլորովին չեմին ել մտածում: Ամեն բոպե փոփոխում եր նրանց առաջ պատկերացող տեսարանը: Առավոտյան ժամի մեկ և կեսին նրանք նկատեցին մի ուրիշ լեռան բարձունքը: Բարբիկենը քարտեղին նայեց «Երատոսֆեն» լեռն եր այդ:

Այդ ողակաձև լեռը, վոր չորս հազար հինգ հարյուր մետր բարձրություն ուներ, Լուսնի վրա դանվող բազմաթիվ լեռնադրկեսներից մեկն եր: Այս առթիվ Բարբիկենն իր ուղեկիցներին հաշորդեց Կեպլերի տարրորինակ կարծիքը ընդհանրապես Լուսնի լեռնակերկեսների ծագման մասին: Այդ հոչակավոր ասուզագետի կարծիքով այդ խառնաձև խոռոչները փորվել են մարդկանց ձեռքով:

— Ի՞նչ նպատակով, — հարցրեց Նիկոլը:

— Շատ հասկանալի նպատակով, — պատասխանեց Բարբիկենը, — լուսնաբնակները ձեռնարկել են այդ վիթխարի աշխատանքին, փորել են այդ ընդարձակ փոսերը, վորակեսզի նրանց մեջ ապաստանեն Արևի ճառագայթներից, վորոնք նրանց այլում են տասնհինգ որ շարունակ:

— Այնքան ել հիմար չեն այդ լուսնաբնակները: — նկատեց Միշելը:

— Իմ կարծիքով տարրորինակ միտք և այդ, — ասաց Նիկոլը, — հավանական ե, վոր Կեպլերին հայտնի չեր այդ կրկեսների ծավալը, վորովհետեւ այդպիսի վիթխարի խոռոչներ վորելը միանգամայն անհնար բան ե:

— Ինչո՞ւ յէ անհնար, յեթե Լուսնի վրա ծանրությունը Յերկրի վրայի ծանրությունից վեց անգամ պակառ ե, — ասաց Միշելը:

— Բայց դու մոռանում ես, վոր լուսնաբնակները Յերկրի բնակիչներից վեց անգամ փոքր են, — առարկեց Նիկոլը:

— Դեռևս հարց ե, թե արդյո՞ք դոյլություն ունեն լուսնաբնակներ, — ավելացրեց Բարբիկենը:

Այդ խոռոքերը վերջ տվին սկսած վիճարանությանը:

«Երատոսֆեն»-ը չքացավ, նախքան արկը կարողանար այնքան մոտենալ, վորապեսզի հնարավոր լիներ ավելի ճշգրիտ դիտողություններ անել: Այդ լեռը «Ապենիներ»-ի լեռնաշղթան բաժանում եր «Կարպատ» ներից:

Ուղեռները հաղիվ կարողացան նշմարել «Ապենիներ»-ի շագաթները:

## ԳԼՈՒԽ XIII

### ԼՈՒՍԱՎՅԻՆ ԴԱՇՏԱՆԿԱՐՆԵՐ

Առավոտյան ժամի յերկուսուկեսին արկը դանովում եր լուսնային յերեսներորդ զուգահեռականի վրա. միայն հաղար կիլոմետր բաժանում եր նրան Լուսնից, իսկ դիտակների չնորհիք այդ հեռավորությունը տասնից պակաս եր յերեսում։ Առաջվանման անհնար եր թվում հասնել Լուսնի սկավառակի վորեև կետին։ Արկի շարժման համեմատական դանդաղությունը անբացարելի յեր մնում Բարբիկենի համար։ Լուսնին այնքան մոտիկ տարածության վրա այդ արագությունն ավելի մեծ պետք ե լրներ, վորպեսզի կարողանար դիմադրել Լուսնի ձգողական ուժին։ Այստեղ մի յերեսույթ կար, վորի պատճառը դեռևս անհայտ եր մնում։ Ժամանակն ել այնքան քիչ եր, վոր կարելի չեր դրանով զրադվել։ Լուսնի տեսարաններն արագ անցնում էին ուղևորների աչքի առջևից և նրանք չեյին ցանկանում վոչ մանրամասնություն բաց թողնել։

Այսպես ուրեմն, Լուսինը դիտակի միջոցով յերեսում եր առա կիլոմետր հեռավորության վրա։ Յեթե մի ողաղնաց Յերկրից բարձրանար այդքան հեռու, ի՞նչ կտեսներ նրա մակերեսույթի վրա։

Ահա ճշդրիտ նկարագրությունն այն բոլորի, ինչ տեսան Բարբիկենն ու իր ընկերները այդ բարձրությունից։

Լուսնի սկավառակի վրա յերեսում եյին խիստ տարրեր դույների լայն բծեր։ Լուսնի հետազոտողները և աստղագետները իրար մեջ համաձայն չեն այդ բծերի զույների մասին։ Յուլիոս Շմիդտը պնդում է, վոր յեթե Յերկրի բոլոր ովկիանոսները ցա-

մաքելին, ապա լուսնաբնակ մի դիտող անկարող կլիներ զանազաններ յերկրաշնորի վրա ովկիանոսների և ցամաքային հարթավայրերի միջև զույների այնպիսի չեշտված տարրերություն, ինչպես յերեսում են Լուսնի վրա։ Նրա կարծիքով «ծով» անունը կրող ընդարձակ հարթավայրերի զույնը մուգ գորշ ե, կանաչ և թուխ գույների խառնուրդով։ Մի քանի մեծ խառնարաններ ևս միենույն գույնն ունեն։

Վորոշ տարածություններ աչքի եյին ընկնում իրենց կանաչ գույնով։ այդպիսիք են ըստ Յուլիոս Շմիդտի՝ «Հստակության» և «Խոնավության» ծովերը։ Բարբիկենը նկատեց նաև լայն խառնարաններ, վորոնք ներքին կրնուած չունեյին։ այդ խառնարաններն ունեյին կապտավուն դույն, նման լավ հղկված պողպատե սկավառակի զույնին։ Այդ յերանդները իսկապես լուսնին եյին հասուկ և հետեանք չեյին դիտակների անկատարելության կամ մթնոլորտի աղղեցության, ինչպես կարծում եյին մի շարք աստղագետներ։ Բարբիկենն այդ մասին վոչ մի կասկած չուներ։ Նա դիտում էր բացարձակապես ողից դառարկ տարածության մեջ, վորոնեղ վոչ մի տեսողական սխալ չեր կարող լինել։ Այդ կանաչ զույնը արդյո՞ք հետեանք եր ձոխ բուսականության, վոր աճում եր խիտ ու ցածր ողում, թե՞ առաջ եր գալիս մի ուրիշ պատճառից՝ այդ մասին նա հատուած վոչինչ չեր կարող ասել։

Ահա Լուսնի սկավառակի մի ուրիշ առանձնահատկությունը, վորի պատճառը նույնպես նա չեր կարողանում վորոշել։

Միշել Արդանը, վոր դիտումների միջոցին Բարբիկենի մոտեր, նկատեց յերկար և սպիտակ գծեր, վորոնք վառ լուսավորված եյին Արևի ճառագայթներով։ Դրանք պայծառ ակոսներ եյին, վորոնք բոլորովին նման չեյին քիչ առաջվա «կոպերնիկ» ճառագայթներին։ Այդ լուսավոր գծերը ձգվում եյին մեջյանց զուղահեռ ուղղությամբ։

Միշելն իր սովորական ինքնավասահությամբ իսկույն հարցը իր կարծիքը։

— Ա՞հ, տեսե՞ք, մշակված դաշտեր։  
— Մշակված դաշտե՞ք, հարցը նիկոլը, զարժանքից ուսերը թոթվելով։

— Գոնե տեսնում ես, վոր հերկված են, — պատասխանեց



Հաւանի սկավառակի ակոսները

Միշել Արդանը, — ինչպիսի՞ յերկրագործներ են այդ լուսնաբնակները. ինչպիսի՞ հսկա յեզներ պետք և ջված լինեն գութանին՝ այդպիսի ակոսներ փորելու համար:

— Սխալվում ես, սիրելի բարեկամ, — առարկեց Բարբիկենը, — դրանք գութանի փորած ակոսներ չեն:

Բարբիկենը խկույն հայտնեց ընկերոջն այդ ակոսների մասին իր գիտցածը: Նրան հայտնի յեր, վոր այդպիսի ակոսներ յերկում եյին լուսնի սկավառակի բոլոր գաշտային մասերի վրա, վորտեղ լեռներ չկային, վոր նրանց յերկարությունը հասնում եր տասնհինգից յերկու հարյուր կիլոմետրի, իսկ լայնությունը՝ հազարից հազար հինգ հարյուր մետրի. նրանց ավելը միշտ զուգահեռ են: Սակայն նրանց ծաղման և կաղմի մասին նա վոչինչ չըիտեղ:

Դիտակի միջոցով Բարբիկենը ուշադրությամբ դիտում եր ակոսները: Նա նկատեց, վոր նրանց յեղերքները կազմված եյին խիստ թեք վայրեջներով: Դրանք մի տեսակ զուգահեռության պատվարներ եյին և վառ յերեակայությամբ ոժտված մարդու նրանց կարող եր ընդունել լուսնաբնակ ինժեներների կողմից կառուցված ամրությունների տեղ:

Այդ ակոսներից վամանք չատ ուղիղ եյին, ուրիշներ թեքություններ ունեյին, սակայն նրանց յեղերքները միշտ ել միմյանց զուգահեռական եյին: Նրանցից մի քանիսը խաչաձևում եյին իրար, ուրիշները խառնարաններ եյին կտրում. մի տեղ նրանք ակոսում եյին ողակածե խոռոչներ, ինչպես «Պոսեյդոն»-ը, մի ուրիշ տեղ նրանք շերտավորում եյին ծովերը, ինչպես «Հոտակության ծով»-ը:

Այդ ակոսների բնույթը մինչև այսոր պարզված չե: Կասկած չկա, վոր զրանք ամրություններ չեն, վոչ ել ցածրած դեռերի նախկին հուներ, վորովհետու այդ ակոսները մեծ մասամբ կտրում անցնում են բարձր դիրք ունեցող խառնաբաններ:

Գետք ե խոստովաննել, վոր Միշել Արդանը պատահմամբ հայտնել եր մի միաք, վոր նրանից առաջ ունեցել եր ստողագետ Յուլիս Շմիդտը:

— Մի՞թե այս անբացարեկի շարքերը բուսականության յերկաւլիներ չեն:

— Ի՞նչ ես ուզում ասել, — հարցբեց Բարբիկենը:

— Չի՞ կարող պատահել, վոր այդ մուլ շարքերը կանոնավոր կերպով դասավորված ծառեր լինեն:

— Դու ուրեմն այնքան համառորեն պնդում ես բուժականության վրա, — ասաց Բարբիկենը:

— Այո, պնդում եմ, — պատասխանեց Միջելը, — յես ուշադրում եմ բացատրել այն, ինչ գուք գիտուններդ չեք կարող բացատրել: Համենայն դեպք, իմ յենթադրությունը նրանով ե ուժեղ, վոր այդ ակոսները վորոշ ժամանակ անհայտանում կամ թվում ե թե անհայտանում են:

— Ինչո՞վ ես բացատրում այդ յերեսությը:

— Նրանով, վոր այդ ծառերը տեսանելի յեն լինում, յերբ կանաչում են, իսկ անտեսանելի՝ յեն մնում, յերբ տերեները թափում են:

— Քո բացատրությունը շատ սրամիտ ե, սիրելի բարեկամ, — ասաց Բարբիկենը, — բայց տվյալ դեպքում ընդունելի չե:

— Ինչո՞ւ:

— Վորովհետեւ Լուսնի վրա յեղանակներ չկան, հետեւապեա այնտեղ բուսականությունը փոփոխություն չի կրում:

Բարբիկենը իրավացի յեր: Լուսնի բոլոր դուզահեռականներում Արևը Լուսնի հորիզոնի վրա մնում եր համարյա անփոփոխ բարձրության վրա: Հասարակածի շրջաններում, որինակ, նա միշտ ել զենիթի մոտ ե, իսկ բեվեռային շրջաններում հորիզոնի սահմաններից այն կողմը չի անցնում: Այդպիսով յուրաքանչյուր քջանում, նայած թե այդ շրջանն ինչպիսի դիրք ունի Արևի նկատմամբ, լինում է Հայլիսենական ձմեռ, դարուն, ամառ կամ աշուն:

Այդ միջոցին արեն գտնվում եր լուսնային քառանկարորդ դուզահեռականի վրա, լուսնից մոտավորապես ութ հարյուր կիլոմետր հեռու: Հեռադիտակում բոլոր իրերը յերեսում եյին ութ կիլոմետրի վրա: Այդ պահին նրանց վոտների տակ բարձրանում եր «Հելիկոն»ը, հինգ հարյուր մետր բարձրությամբ, իսկ ձախ կողմում կային մի շարք շաճք լեռներ, վառ փակում եյին «Անձրես ծով»-ի մի փոքր մասը, վորը կոչ վում ե «Յուլերի ծոց»:

Այն անող տարածությունը, վորի մեջ թուչում եր արկը,

վոչ մի զազային մարմին չեր պարունակում, հետեւապես վոչինչ չեր խանդաբում դիտողություններ անելու: Բացի այդ, Բարբիկենը այդ միջոցին լուսնին այնքան մոտ տարածության վրա յնը դտնվում, վոր չեյին կարող տալ վոչ Զոն Ռոսսի, վոչ ել Ապառաժում լեռների հոկա հեռադիտակները: Այդպիսով Բարբիկենը գտնվում եր ամենանպաստավոր պայմաններում, լուծելու համար այն կարևոր հարցը, թե լուսնի վրա մարդիկ կա՞ն, թե վոչ: Սակայն այդ հարցի պատասխանը գեռմաս չկար: Նրա առջական մարդկանց միայն ընդարձակ ամայի դաշտեր և լեռկ լեռնազդթաները: Մարդկային կյանքի նշույլն իսկ չերեսում: Վոչ մի ավերակ չկար, վոր հայտներ մարդու անցնող գոյությունը: Վոչ մի տեղ վոչ մի շարժում, բուսականության վոչ թափականը: Յերկրագնդի բնությունը կազմով յերեք թափակարում հերկարգից, լուսնի վրա տիրում եր միայն մեկը՝ հանքային թափակությունը:

— Այ քեզ բա՞ն, — ասաց Միջել Արդանը մի քիչ հուսախար, — մի՞թե իսկապես այստեղ վոչ վոք չկա:

— Այո՛, — պատասխանեց Նիկոլը, — առայժմ չի յերեսում վո՛չ մարդ, վո՛չ կենդանի, վոչ ել բուսականություն: Սակայն վուցե ողը գտնվում ե ձորերում, լեռնահովիտներում, կամ վուցե մեղ հակառակ կիսազնդի վրա, ուրեմն դեռմաս չպետք ե վերջնական հետեւություն անել:

— Հայտնի յե, — նկատեց Բարբիկենը, — վոր ամենասուրաչքն անդամ մարդուն կարող ե տեսնել յոթ կիլոմետր հեռավորության վրա միայն: Հետեւապես, յեթե լուսնաբնակներ կան, նրանք կարող են մեղ տեսնել, իսկ մենք նրանց՝ վոչ:

Առավոտյան ժամը չորսին, հիսուներորդ զուգահեռականի վրա արկի և լուսնի միջև տարածությունը վեց հարյուր կիլոմետր եր: Զախ կողմից ձգվում եր այլանդակ գծագրությամբ մի լեռնազդթա, վորը վողովված եր Արևի վառ ճառագայթներով: Աջ կողմում, ընդհակառակը, մի խոր սև փոս եր, նման անհատակ ու մութ ջրհորի, փորված Լուսնի հողում:

Այդ խոր փոսը՝ «Պլատոն» կրկեսն եր, վորը շատ պարզ տեսանելի յե Յերկրի վրայից, լուսնի վերջի քառորդի ու լիալուսնի միջև, յերբ լուսնի ստվերն ընկնում ե արևմուտքից դեպի տրեմելք:

Բարբիկենը շատ ավաստաց, վոր արկը չանցավ ուղիղ այդ  
պնդարձակ խոռոչի վրայով. այդ անդունդի մեջ գուցե կարելի  
մներ տեսնել մի վորեւ անծանոթ յերկույթ։ Սակայն հնարա-  
վոր չեր փոխել արկի ուղղությունը։ Պետք եր յենթարկվել նը-  
րա կամքին։

Առավոտյան ժամի հինգին, վերջատես, նրանք անցան  
«Անձրեների ծով»-ի հյուսիսային սահմանը։ Լուսնի այդ մասը  
ամբողջովին ծածկված եր լեռներով։ Հեռաղիտակը իրերը մո-  
տեցնում եր չորս կիլոմետրի վրա, վորն ավելի պակաս եր, քան  
Մոնրանի բարձրությունը ծովի մակերեսույթից։ Շրջակայքում  
ամեն տեղ զաղաթներ ու կրկեսներ ելին։

Այդ հեռավորությունից լուսինը շատ տարորինակ աեւք  
ուներ։ Դաշտանկարները յերեսում եյին բոլորովին այլ կերպ,  
քան յերեսում են Յերկը վրայից։


Լուսնի վրա չկա մթնոլորտ. գաղային ծածկոցի բացակա-  
յությունը շատ հետաքրքիր յերեսույթներ ե առաջացնում։

Այստեղ, որինակ, չի լինում մթնչաղ, կիշերը ցերեկին, ցե-  
րեկը գիշերվան հաջորդում ե միանգամից, այնպես՝ ինչպես ճը-  
րադը հանգցնում կամ վասում ենք մթության մեջ։ Դրա հետե-  
ղանքով չկա աստիճանական փոխանցում ցրտից դեպի տաքը.  
յեռացած ջրի տաքությունը միանդամից իջնում ե անջրպետի  
ցրտերի աստիճանին։

Ողի բացակայությունը մի ուրիշ յերեսույթ ել ե առաջաց-  
նում—լուսնի այն մասերում, վորտեղ Սրեկի ճառագայթները  
չեն ընկնում, բացարձակ խավարն ե տիրապետում։ Յեթե մի  
լուսնաբնակ աչքերը ծածկի արևի ճառագայթներից, յերկինքը  
նրան սե կերեա ու աստղերը նրա վերեսում վառ կփայլեն, ինչ-  
պես ամենամութ դիշերներին։

Կարելի յե յերեակայել, թե այդպիսի մի տեսարան ինչպե-  
սի տպավորություն գործեց Բարբիկենի և իր ուղեկիցների վը-  
րա։ Նրանք այլևս չեյին կարողանում չափել գանազան վայրե-  
րի տարածությունը։ Յերկրային մի նկարիչ անկարող կլիներ  
նկարել լուսնային պեյզաժներ, վորովհետեւ կիսալույսի վոչ մի  
յերանգ չեր մեղմացնում նրանց գույները։ կարծես սպիտակ  
ֆոնի վրա թանաքի մուգ բծեր լինեյին—ուրիշ վոչին։

Այդ տեսարանը չփոխվեց նույնիսկ այն ժամանակ, յերբ



Լուսնային տեսարաններ

արկը լուսնից հարյուր կիլոմետր եք հեռու; Ժամի հինգի ժամ  
նա անցավ մի լուսն վրայով—առնվազն հիսուն կիլոմետր—այդ  
տարածությունը հեռաղիտակով յերեսում եր կես կիլոմետր: Թը  
վում եր, թե կարելի յեր ձեռքով բռնել լուսինը: Դժվար եր  
յենթալրել, թե քիչ հետո արկը լուսնին չի դիպչի, գոնե նրա  
հյուսիսային բևեռի մոտ, վորի փայլուն կատարն արդեն զծա-  
դրվում եր զիշերվա մթության մեջ: Անդուսպ Միչելն արդեն  
ուղում եր լուսամուտը բանալ և նետվել լուսնի վրա: Յատկել  
հիսուն կիլոմետր բարձրությունից— այդ կատակ չեր:

Առավոտյան ժամը վեցին յերեաց լուսնի բևեռը: Այդ պա-  
հին ուղևորները տեսնում եյին միայն լուսնի լուսավորված:  
մասը. մյուս մասը կորել եր մթության մեջ: Հանկարծ արկն  
անցավ լույսի և խավարի օահմանը և ամբողջովին թաղվեց  
խոր մթության մեջ:

#### ԳԼՈՒԽ XIV

### ՅԵՐԵՔ ՀՄՐՅՈՒԹ ՀԻՍՈՒՆ ԶՈՐՍ ՈՒ ԿԵՍ ԺԱՄ ՏԵՎՈՂ ԳԻՇԵՐ

Այն պահին, յերբ արկը հանկարծ թաղվեց խոր մթության  
մեջ, նա անցավ լուսնի հյուսիսային բևեռի վրայով ընդամենը  
հիսուն կիլոմետր հեռավորությամբ: Ուրեմն, մի քանի վայր-  
կյան բավական եր յեղել, վորպեսզի արկը լույսից անցներ ան-  
թափանց խավարի մեջ: Այդ անցումը կատարվել եր անսպասե-  
լի կերպով, առանց յերանդի, առանց լույսի աստիճանական նը-  
վազման: Լուսինը կարծես հանկարծ հանգել եր մի ուժեղ քա-  
ռուց:

— Կորավ, ընդմիշտ չքացավ լուսինը,— բացականչեց Ար-  
դանը:

Իսկապես, քիչ առաջ փայլող սկավառակից վոչինչ չեր մը-  
նացել. վոչ մի չող, վոչ մի ստվեր: Վառ լույսով չողչող  
աստղերն ե'լ ավելի եյին չետում այդ զիշերային խավարը:

Դա լուսնային այն զիշերներից մեկն եր, վորը յերեք հա-  
րյուր հիսուն չորս ժամ շարունակ տիրում են լուսնի յուրա-  
քանչյուր կետի վրա: Արկը թաղվելով լուսնի նետած ստվերի  
մեջ, այլևս չեր յենթարկվում Արկի ճառաղայթների ազդեցու-  
թյան:

Արկի ներսում կատարյալ խավար եր: Ուղեռները միմյանց  
չեյին տեսնում: Մի կերպ պետք եր լուսավորել ներսը, չնայած,  
վոր Բարբիկենը ուղում եր զաղի խայլողություն ան'լ, նա ըս-  
տիպված յեղավ դիմել զաղի լույսին, վորովհետեւ Արկը գերջ-  
նականապես մերժում եր լույս տալ:

— Անհջիւած լինի Արևը, — բացականչեց Արդանը, — վորստիպում ե մեզ ծախսել զազի վերջին մնացորդները, փոխանակութիւն իր ճառագայթներով մեղ լուսավորելու:

— Զպնաք ե մեղադրել Արևին, — պատասխանեց Նիկոլը, — մեղավորը Լուսինն ե, վոր յեկալ կանգնեց մեր ու Արևի մեջտեղ:

— Վո՞չ, Արևն ե մեղավոր:

— Վո՞չ, Լուսինն ե մեղավոր:

Անողութ վեճին վերջ տվեց Բարբիկենն, առելով, — բարեկամներս, այստեղ վո՞չ Արևն ե մեղավոր, վոչ ել Լուսինը: Մեղավորը մեր արդին ե, վոր փոխանակ ուղիղ ճանապարհին հետեւլու, նրանից շեղվեց: Ամելի արդար լինելու համար պետք ե ասել, վոր իսկական հանցավորն այն չարաբաստիկ բովածն եր, վոր մեզ շեղեց մեր ուղուց:

— Շատ ճիշտ ե, — պատասխանեց Միշելը — բանի վոր հարց փակված ե, իմ կարծիքով պետք ե նախաձաշել: Ամբողջ դիշը դիտումներով զբաղվելուց հետո՝ արժե, վոր մի քիչ կաղդուրվենք:

Միշելի առաջարկն ընդունվեց առանց դիմադրության, և մի քանի ըսպելից նախաճաշը պատրաստ եր: Սակայն վոչ վոք ախորժակ չուներ, կերպն՝ կերած լինելու համար: Խմեցին առանց բաժակաճառերի ու շնորհավորանքների: Ռողերներից յուրաքանչյուրը ինչոր անհանդստություն եր զգում: անլույս ու անող անհունությունը խոռոշում եր նրանց հոգին:

Նախաճաշելիս, ամբողջ ժամանակ նրանք խոսում եին այդ յերեք հարյուր հիսուն չորս ժամ տեղով յերկար գիշերվա մասին, մորը Փիգիկական որենքները փաթաթել ելին լուսարնակների վղին: Բարբիկենն իր ընկերներին բացատրեց այդ հետաքրքիր յերեվույթը:

— Այս, առ անհասկած մի հետաքրքիր յերեւույթ ե, — առաջ Բարբիկենը: — Յեթե Լուսին յուրաքանչյուր կիսադունդը զըրկվում է Արևի ճառագայթներից ամբողջ տասնեւհինգ որ, այն կիսադունդը, վորի վրա մենք թոշում ենք այժմ, նույնիսկ չի տեսնում լուսափայլ Յերկիրը: Յեթե միենալուն յերեւույթը Յերկիրի վրա լիներ, յեթե որինակ, Յեվրոպայի բնակիչները յերբեք Լուսինը չտեսնելին, յեթե Լուսինը միայն Յեվրոպայի

Հակոտնյաները տեսնելին, յերեակայեցեք, թե ինչքան մեծ կլիներ Ավստրալիա զնացող մի յելքոպացու զարմանքը:

— Ուրեմն Լուսինը տեսնելու համար հարկ կլիներ Ավստրալիա զնալ, — հարցրեց Միշելը:

— Ահա հենց այդպիսի զարմանք կզգան Լուսինի այն բնակիչները, — շարունակեց Բարբիկենը, — վորոնք ապրում են Լուսինի այն մասում, վորը հակառակ կողմն ե ընկած և ընդմիշտ անտեսանելի յե յերկրաբնակներին:

— Իսկ մենք կարող եյնք տեսնել այդ մասը, — առաջ Նիկոլը, — յեթե այստեղ յեկած լինելիք Լուսինի նորելու ժամանակ, այսինքն տասնհինգ որ հետո:

— Բացի այդ, — շարունակեց Բարբիկենը, — բնությունը նպաստավոր պայմանների մեջ և զրել Լուսինի յերեացող մասի բնակիչներին, ի վեան նրանց հակոտնյաներին: Ինչպես տեսնում եք, վերջիններիս վիճակված ե ունենալ յերեք հարյուր հիսուն չորս ժամ տեղով մի դիշեր, վորի մթությունը արեի վոչ մի ճառագայթ չի լուսավորում: Մյուսների բանն ուրիշ ե. յերը արեվը տասնհինգ որ նրանց լուսավորելուց հետո չքանում ե հորիզոնից, հակառակ կողմից յերեւում ե մի լուսավառ աստղ Յերկիրը, վոր Լուսինից տասյերեք անդամ ամելի լույս ե տալիս. մի լույս, վոր չի նվազում մթուլորտի աղեցության տակ, զորովհետեւ Լուսինի շուրջը մթուլորտ չկա: Յեվ Յերկիրը Լուսինի հորիզոնից անհայտանում ե, միայն այն պահին, յերը հակառակ կողմից յերեւում ե Արևը:

— Ի՞նչ լավ ե ասված, — բացականչեց Միշելը:

— Ուրեմն, հասկանալի յե, — շարունակեց Բարբիկենը, առանց ուշագրություն դարձնելու Միշելի նկատողությանը, — վոր սկավառակի անսանելի մասում լուսարնակները շատ լավ են ապրում, վորովհետեւ յերը մեզ համար Լուսինի լրումն ե, նըրանց լուսավորում ե Արևը, իսկ յերը նոր Լուսին ե, լուսավորում ե Յերկիրը:

— Բայց իմ կարծիքով, — առաջ Նիկոլը, — այդ առավելությունը մասամբ կորցնում է իր նշանակությունը, քանի վոր այդ լույսն իր հետ բերում ե անտանելի ջերմություն:

— Այդ անպատճենությունը Լուսինի յերկու կողմերի համար ել կա: Յես նույնիսկ կասեմ, վոր Լուսինի աներեւոյթ մասն ա-

վելի յե յենթարկվում ջերմության, քան յերեացող մասը: Յես  
այդ ասում եմ զվարապես քեզ, Նիկո՞լ, վորովհետև Միշել  
հավանաբար վաշինչ չի հասկանա:

— Շնորհակալություն, — ասաց Միշելը:

— Դժվար չե սակայն ըմբռնել, — շարունակեց Բարբիկենը,  
— վոր աներեւույթ մասը Արևի ճառագայթների լույսից ու ջեր-  
մությունից ողափում ե, յերբ Լուսինը նոր ե, այսինքն յերբ  
նա Արևի ու Յերկրի մեջտեղն ե; Այդ ժամանակ Լուսինը Արևին  
ավելի մոտ ե գտնվում, համեմատած այն դիրքին, վոր նա գը-  
րավում ե լրիվ Լուսինի ժամանակի: Այդ տարածությունը հա-  
վասար ե Արևի ու Յերկրի միմյանցից ունեցած հեռավորության  
մեջ յերկուհարյուրերորդական մասին կամ կը թվով ութ  
հարյուր հազար կիլոմետրի: Ուրեմն, Լուսինի աներեւույթ մասը  
ութ հարյուր հազար կիլոմետր ավելի մոտ ե Արևին, յերբ ըն-  
դունում ե նրա ճառագայթները:

— Շատ ճիշտ ե, — պատասխանեց Նիկոլը:

— Բոլորովին այլ ե..., — ուզեց շարունակել Բարբիկենը:

— Մի բոպե, — ասաց Միշելը, ընդմիջելով իր ծանրաբարա  
ընկերոջը:

— Ի՞նչ ես ուզում:

— Աւզում եմ շարունակել բացատրությունը:

— Ինչո՞ւ համար:

— Ապացուցելու համար, վոր յես ել մի բան հասկացել եմ:

— Դե լավ, խոսիր, — ասաց Բարբիկենը, ծիծաղելով:

— Բոլորովին այլ ե, — սկսեց Միշելը շատ լուրջ կերպով,  
իսուելու ձեւը նմանեցնելով նախադաշի խոսելու ձեին, — բոլորո-  
վին այլ ե Լուսինի կողմի համար: Այդ տեսանելի մասը  
Արևից լուսավորվում ե, յերբ լրիվ լուսին ե, այսինքն յերբ  
Լուսինը, համեմատած Յերկրի հետ, դժունվում ե Արևի հակառակ  
կողմը: Այդպիսով, Լուսին Արևից բաժանող տարածությունը  
ավելանում ե, կը թվով, ութ հարյուր հազար կիլոմետրով և  
ստացած ջերմությունն ել ավելի պակաս ե լինում:

— Շատ հաջող պատասխան ե, — բացականչեց Բարբիկենը,  
— դիտե՞ս Միշել, վոր դու վորպես արտիստ շատ խելացի  
յես...

— Այո, — պատասխանեց անհոգությամբ Միշելը, — մենք  
կարիզեցիներս այդպես ենք:

Բարբիկենը լրջորեն սեղմեց սիրավիր սողեկցի ձեռքը:

— Միայն, — ասաց Միշելը, — յեթև մենք լուսնաբնակիներ  
դառնանք, պետք ե անպատճառ կուսնի տեսանելի մասի վրա  
ապրենք: Յես սիրում եմ լույսը:

— Այո, միայն թե, — ասաց Նիկոլը, — մթնոլորտը հավաք-  
ված չենի հենց անտեսանելի կողմի վրա, ինչպես այդ յեն-  
թաղրում են մի շարք աստղագետներ:

— Ճիշտ ե, պետք ե այդ նկատի ունենալ, — համաձայնվեց  
Միշելը:

Նախաձայից հետո ուղևորները վերսկսեցին իրենց դիտում-  
ները: Հանդիշնելով արկի լույսը, նրանք ջանք Եյին թափում մի  
բան տեսնել մութ լուսամուտից: Բայց խավարն անթափանց եր.  
վոչ մի լուսավոր կետ չեր յերեւում:

Ո՞ւր եր սլանում արկը: Հեռանո՞ւմ, թե՞ մոտենում եր  
Լուսինի սկավառակին: Թե՞ քշվում-տարպում եր այդ խավարի  
մեջ դեպի անհունություն: Ինչպես զիտենալ, ի՞նչպես հաշվել  
այդ անթափանցելի խավարի մեջ: Այս հարցերը շատ եյին հու-  
զում Բարբիկենին, բայց նա անկարող եր զրանք լուծել:

Գուցե մի քանի կիլոմետրով միայն հեռու Եյին անտեսանե-  
լի մոլորակից, սակայն վոչ ինքը, վոչ ել ընկերները նրան չե-  
յին տեսնում: Յեթե մի աղմուկ լիներ Լուսինի վրա, նրանք այդ  
ձայնը չեյին լսի: Ուզը, ձայնի այդ հազորդիչը չկար և չեր  
կարող նրանց հազորդել Լուսինի հեծեծանքները — չե՞ վոր ըստ  
արարական մի ավանդության Լուսինը «կիսով չափ քարացած  
մի մարդ ե, վոր սակայն դեռևս թփրում ե»:

Պարզ ե, վոր այս բոլորը կարող եր վհատեցնել ամենա-  
համբերող զիտողին իսկ: Հենց այդ անծանօթ կիսակունդն եր,  
վոր թագնվում եր նրանց աչքերից: Լուսինի այդ մասը, վոր  
տասնհինգ որ առաջ կամ տասնհինգ որ հետո սքանչելիորեն լու-  
սավորված կլիներ Արևի ճառագայթներով, այժմ թաղված եր  
մթության մեջ: Իսկ վո՞րանդ կլիներ արկը տասնհինգ որ հետո:  
Ո՞ւր կտանեյին նրան անհայտ ձգողական ուժերը: Ո՞վ կարող  
եր ասել:

Սստղագետները յենթաղրում են, թե Լուսինի անտեսանելի

կիսադունգը իր կազմով բոլորովին նման և տեսանելի կիսա-  
դունին: Խսկապես, լուսնի փոքր տատանումների հետեւանքով  
յերեսում և անտեսանելի կիսադունի համարյա մեկ յոթերորդա-  
կան ժամը և այդ ժամի վրա յերեսում են նույն իւսներն ու հար-  
թավայրեցը. լուսահավիտներն ու խառնարանները, ինչպիսիք  
դոյություն ունեն՝ մյուս կիսադունի վրա: Կարելի յե ուրեմն  
վատահելիորեն յեղակացնել, վոր այնտեղ ել միւնույն անբերը  
ու անկենդան բնությունն ու աշխարհն ե:

Բայց գուցե այնտեղ կա մթնոլորտ, գուցե ողի հետ միասին  
ջուրը այդ ըրջաններին կյանք և տվել: Գուցե բուսականությու-  
նը զեռևս դոյություն ունի այնտեղ: Գուցե անստուններ են ապ-  
րում այդ ցամաքամասերի վրա ու ծովերի մեջ: Գուցե այդ ըլ-  
նակելի պայմաններում մարդիկ են ապրում այնտեղ:

Ինչքա՞ն հետաքրքիր հարցեր կարելի յեր լուծել: Ինչքա՞ն  
դաշտներներ կրացվելին այդ կիսադունի ուսումնասիրությամբ:  
Ի՞նչ օքանչելի բան կլիներ մի հայացք նետել այդ աշխարհի վր-  
րա, վորը մինչ այդ վոչ մի մարդկային աչք չեր տեսել:

Սակայն դժբախտաբար մեր ուղեսորները մնում եյին խոր  
մթության մեջ. Լուսնի այդ ժամը նրանց համար մնում եր ան-  
թափանցելի: Միայն համաստեղություններն եյին դրավում նը-  
րանց հայացքը և պետք և ասել, վոր յերբեք ասողերը դիտելու  
համար ասողադեսները այդպիսի նպաստավոր պայմանների մեջ  
չեյին գտնվել:

Խսկապես վոչ մի բան չեր կարող հավասարվել այդ աստ-  
դաղարդ յերկնքի դեղեցկությանը: Յերկնակամարի վրա փայլ-  
վըլող այդ աղամանդները հրաշալի շողեր եյին արձակում:  
Մարդու հայացքն ընդգրկում եր յերկնային տեսարանը, Հարա-  
վային խաչից մինչև Բեեռային աստղը:

Այդ անհուն ասրածության մեջ արկը շարժվում եր վորպես  
մի նոր աստղ, ստեղծված մարդկային ձեռքով: Համաստեղու-  
թյունները փայլում եյին մեղմ լույսով. նրանք չեյին առկայ-  
ծում, վորովհետեւ ող չկար, վորը եր չերտերի անհավասար  
խոռությամբ ու խոնավությամբ առաջացնում է այդ առկայծու-  
մը: Աստղերը փայլում եյին հեղ աչքերի նման, վորոնք նայում  
են այս խոր մթության մեջ, ըրջապատված անհուն լուսությամբ:  
Ուշեղները յերկար ժամանակ և լուս դիտեցին աստղալից

յերկնակամարը, վորի վրա Լուսնի ընդարձակ սկավառակը մի  
հակա մութ խոռոչ եր կազմում:

Սակայն քիչ առ քիչ նրանց հիացմունքը փոխվեց մի տան-  
ջալից զգացումի: Խիստ ցուրտը շրտով լուսամուտի ապակինե-  
րը ներսից ծածկեց սառուցի հաստ շերտով: Արևեն այլևս իր  
ճառագայթներով չեր տաքացնում արկը, վորը հետզհետև կորց-  
նում եր իր ներքին ջերմությունը: Այդ ջերմությունը, ճառա-  
գայթացման հետեւանքով, արագորեն ցրվում եր տարածության  
մեջ. արկում ջերմությունն զգալիորեն իջել եր: Դրա հետեւան-  
քով ներքին խոնավությունը շփմելով լուսամուտի ապակիներին,  
սառչում և թույլ չեր տալիս զիտել զրաի աշխարհը:

Նիկոլը նայեց ջերմաչափին և տեսավ, վոր սնդիկն իջել եր  
տասնյոթ աստիճան զերոյից ցած: Բարբիկենը, ջայած ինայո-  
գություն անելու ցանկությանը, տաքանալու համար, ստիպված  
յեղավ գաղի ողնությանը գիմել: Ցածը ջերմաստիճանը անատ-  
նելի յեր լինում: Ուղեղորները սառչելու սպասնալիքի տակ եյին:

— Զի կարելի դժգուհել, վոր մեր ուղեսորությունը միուրինակ  
ե ընթանում, — ասաց Միշել Արդանը: — Ի՞նչպիսի բազմազանու-  
թյուն ջերմաստիճանի տեսակետից: Յերեմն մենք կուրանում  
ենք վառ լույսից և յենթարկվում անտանելի տաքության, ինչ-  
պես չնդիկները պամպաներում, յերբեմն թալզում ենք խոր  
մթության մեջ և ցրտից սառչում, ինչպես բնեռային եսկիմոս-  
ները: Ճիշտն ասած, դժգուհելու տոկիթ չունենք: բնությունն ա-  
մեն ինչ անում ե մեզ հաճելի լինելու համար:

— Բայց ի՞նչ աստիճանի յե դրսի ցուրտը, — Հարցրեց Նի-  
կոլը:

— Նույն ցուրտն ե, ինչ լինում ե ընդհանրապես միջմու-  
րակային տարածության մեջ, — պատասխանեց Բարբիկենը:

— Ուրեմն, — ասաց Միշելը, — Ժամանակ ե, վոր անենք այն  
վորձը, վոր չկարողացանք կատարել, յերբ լողում եյինք արևի  
ճառագայթների մեջ:

— Ճիշտ ե, — պատասխանեց Բարբիկենը, — սրանից հար-  
ժար ժամանակ չի լինի միջմոլորակային տարածության ջերմա-  
ստիճանը չափելու համար:

— Համենայն գեպս ցուփտ ե, — ասաց Միշելը, — տեսիք,  
թե խոնավությունն ինչպես և սառչում ապակիների վրա.



Ուղեկորները սառչելու սպառնալիքի տակ եյին

յեթե ջերմաստիճանն ե'լ ավելի իջնի, մեր չնչառության դուռը՝  
մին կարող ե ձյունի փոխվել:  
— Պետք ե պատրաստել ջերմաչափը, — ասաց Բարբիկենը:  
Պարզ ե, վոր սովորական ջերմաչափը այդպիսի բացառիկ պայ-  
մաններում վոչ մի արդյունք չեր տա: Մնդիկը կսառչեր խողո-  
վակի մեջ, վորովհետև հեղուկ վիճակում նա դիմանում ե մի-  
այն մինչև յերեսունինն աստիճան զերոյից ցած: Սակայն Բար-  
բիկենն իր հետ վերցրել եր մի ջերմաչափ, վոր ցույց եր տա-  
լիս չափաղանց ցածը աստիճան:

Բարբիկենը պատրաստվեց գործի անցնել:

— Ինչպե՞ս պետք ե անհնք, — հարցրեց Նիկոլը:

Շատ հեշտ ե, — ասաց Միշել Արդանը, վոր յերբեք չեր  
չփոթվում: — Արագ կերպով բաց կանենք լուսամռւտը, կնետենք  
ջերմաչափը, վոր մեղ կհետեւի միննույն արագությամբ, տասն-  
հինգ րոպէ հետո ներս կառնենք:

— Զեռքո՞վ, — հարցրեց Բարբիկենը:

— Զեռքով, — պատասխանեց Միշելը:

— Սիրելի բարեկամ, — ասաց Բարբիկենը, — խորհուրդ չեմ  
տա յենթարկվել այդ փորձին, վորովհետև ձեռքով սառուցի  
կտոր կդառնա:

— Մի՞թե:

— Դու այնպիսի այրվածք կզբառ, կարծես չիկացած յեր-  
կաթով ես վառվում, բացի այդ, վստահ չեմ, թե արդյո՞ք  
դուքս նետված ջերմաչափը կհետեւի մեղ:

— Ինչո՞ւ չե, — հարցրեց Նիկոլը:

— Վորովհետև յեթե մենք թուզում ենք մթնոլորտի միջով,  
ինչքան ել այդ մթնոլորտը նոոր լինի, առարկաները մեղանից  
հետ կմնան: Մթությունը թույլ չի տա մեղ ստուգել, թե ար-  
դյո՞ք առարկաները հետեւում են մեղ, ուրեմն մեր ջերմաչափը  
վասարի չենթարկելու համար պետք ե կազմել նրան, այդպիսով  
ավելի հեշտ կարող ենք նրան ներս քաշել:

Այդպես ել արին: Արագ կերպով բաց արին լուսամռւտը և  
Նիկոլը դուրս նետեց կարճ թոկով կազմած ջերմաչափը: Լու-  
սամռւտը միայն մի վայրկյան եր բաց մնացել, սակայն այդ  
վայրկյանն ել բավական եր, վոր սաստիկ ցուրտը ներս թափան-  
ցեր:

— Սատանա՞ն տանի, — բացականչեց Միջելը, — ոյսուեղ  
ապիտակ արջերն իսկ կարող են սառչել:

Բարբիկենը սարսուեց կես ժամ, այդ ժամանակամիջոցը բա-  
վական էր, վորակեսզի ջերմաչափը ցույց տար շրջապատի ջեր-  
մաստիճանը; Ապա իսկույն ջերմաչափը ներս առան:

Բարբիկենը բացականչեց :

— 263 աստիճա՞ն գերոյից ցածր :

Արտպես եր յերկնային տարածության սարսափնդի ջերմաս-  
տիճանը: Այդպես եր նաև հավանականորեն լուսնի ջերմաստի-  
ճանը, յերբ նա ճառագայթացման հետևանքով կորցնում է այն  
ամբողջ ջերմությունը, վոր տասնհինգ որվա ընթացքում սուա-  
ցել եր Արևի լույսից:

## ԳԼՈՒԽ XV

### ՀԻՄԵՐԲՈԼ ԹԵՇ ՊԱՐԱԲՈԼ

Շատերին դուցե զարմանալի թվա, վոր Բարբիկենն ու իք  
ուղեկիցները այնքան քիչ եյին մտահողվում ապազայի մասին,  
վոր նրանց սպասում եր անհուն յեթերում սուրացող այդ մետա-  
ղե բանտի մեջ: Փոխանակ իրենց հարց տալու, թե ո՞ւր եյին  
գնում, նրանք զբաղված եյին զանազան փորձեր կատարելով.  
կարծես հանդիսու նստած լինեյին իրենց աշխատանքակում:

Դրան կարելի յեր պատասխանել, վոր այդպիսի կոփկած  
մարդիկ բարձր են կանգնած նման մանր հոգսերից, վոր նրանք  
ավելի կարևոր գործեր ունեյին, քան իրենց վիճակի մասին մը  
տածելը:

Ճշմարտությունն այն է, վոր նրանք անկարող եյին դեկա-  
վարել արկը. նրանք վո՞չ կարող եյին նրա ընթացքը կասեց-  
նել, վոչ ել ուղղությունը փոխել: Մի նալապես կարող ե փո-  
խել նավի ուղղությունը, մի ողակնաց կարող ե ողապարիկին  
ուղղահայաց դիրք տալ. իսկ նրանք վոչ մի աղղեցություն չե-  
ցին կարող դոփծել արկի վրա. այդ եր գլխավոր պատճառը,  
վոր նրանք չեյին հետաքրքրվում իրենց ճակատագրով:

Վո՞րտեղ եյին դտնվում նրանք այդ միջոցին, այն որվա ա-  
ռավոտյան ժամը ութին, վորը Յերկը վրա զեկտեմբերի վեցն  
և համարվում: Անկասկած նրանք լուսնի մոտերքումն եյին և  
այնքան մոտ, վոր լուսինը նրանց յերևում եր մի հսկա սկ շըր-  
ջանակ յերկնակամարի վրա: Այդ տարածությունը չափելու վոչ  
մի հսար չկար:

Արկը լուսնի հյուսիսային բևեռի վրայով անցել եր հիսուն

կիլոմետր հեռավորության վրա, կամ գուցե ավելի մոտեց բայց ահա արդեն յերկու ժամ եր, ինչ նրանք մտել ելին սովերային կոնուսի մեջ և հնարավոր չեր վորոշել, մոտեցե՞լ ելին լուսնին, թե ավելի հեռացել նրանից: Վոչ մի տեսանելի կետ չկար, վորպեսզի կարելի լիներ վորոշել արկի ուղղությունն ու արագությունը: Դուցե արկը հեռանում եր լուսնից և շուտով դուրս կդար ստվերից. կամ գուցե ընդհակառակը, մոտենում եր նրան և շուտով կրաղավեր անտեսանելի կիսագնդի մի լեռան դադաթին, մի բան, վոր վերջ կղներ այդ ուղղությանը...

Այդ մասին վեճ ծաղեց, և Միշել Արդանը, վոր միշտ առաձեռն եր բացատրություններով, այն կարծիքը հայտնեց, թե արկը տարվելով լուսնի ձգողական ուժից, իվերջո պիտի ընկեր նրա վրա, ինչպես ողաքարերն ընկնում են Յերկրի վրա:

— Բայց վոչ բոլոր ողաքարերը ընկնում են Յերկրի վրա, առարկեց Բարբիկենը:

— Բայց համենայն դեպս հետաքրքիր ե զիտենալ, թե ի՞նչ պիտի անի մեր շարժական բանտը անհուն տարածության մեջ. ի՞նչ ուղղությամբ ե թերփում:

— Իմ կարծիքով յերկու յենթադրություն կարելի յե առել, — պատասխանեց Բարբիկենը մի քանի բովե մտածելուց հետո:

— Վորո՞՞նք են այդ յենթադրությունները:

— Արկը պետք ե ընտրի յերկու մաթեմատիկական կոր դժերից մեկն ու մեկը, և նայած թե ինչպիսի արագությամբ ե առաջ շարժվում, նրա համեմատ ել պիտի հետեւ մեկին կամ մյուսին:

— Ճիշտ ե, — ասաց Նիկոլը, — արկը պիտի հետեւ կամ պարաբուլին կամ հիպերբուլին:

— Այո՛, — պատասխանեց Բարբիկենը, — մի վորոշ արագությամբ նա կհետեւ պարաբուլին, մի ուրիշ ավելի մեծ արագությամբ՝ հիպերբուլին:

— Սիրում եմ այդ մեծ բառերը, — բացականչեց Միշել Արդանը, — Հենց վոր լսում ես, իսկույն հասկանում ես նրանց նըշանակությունը: Կարելի՞ յե հարցնել, ի՞նչ բան ե այդ պարագալը:

— Պարագալը, սիրելի բարեկամ, — պատասխանեց Բարբի-

կենը, — մի չվակելած, անվերջ կոր դիմ ե. նա ստացվում է յերբ հարթ մակարդակը կտրում ե կոնուսին, զուգահեռաբար կը կողմերից մեկին:

— Ահա թե ինչ, — ասաց Միշելը դուհ յերկությով:

— Այդ կորագիծը, — ավելացրեց Նիկոլը, — նման ե նըրան, վոր դժում ե մնդանոթի փողից արձակված ուումը:

— Շատ լավ, իսկ հիպերբուլը, — հարցրեց Միշելը:

— Հիպերբուլն ել մի չվակելած կոր դիմ ե, վոր առաջանում ե յերբ մի կոնաձև հարթ մակարդակ կտրվում ե զուգահեռաբար ե յերբ առանցքին. նա կազմված ե յերկու ճյուղերից, վորոնք անվերջ ձգվում են յերկու ուղղությամբ:

— Մի՞թե, — բացականչեց Միշելը այնպիսի լուրջ շեշտով, կարծես նրան ինչ վոր արտակարգ բան ելին հաղորդել: Իսկ այժմ կառվիտան Նիկո՛լ, նկատի ունեցի՛ր, վոր հիպերբուլի մտսին քո տված բացատրության մեջ ինձ դուր ե դալիս այն, վոր այդ բացատրությունն ինձ համար ավելի քիչ հասկանալի յե, քան այն բառը, վորի նշանակությունը դու ուղեցիր ինձ բացատրել:

Նիկոլն ու Բարբիկենը ուշադրություն չդարձրին Միշել Արդանի կատակի վրա: Նրանց զրազեցնում եր այն հարցը, թե ի՞նչպիսի կորագիծով պիտի թուչեր արկը: Նրանցից մեկը պնդում եր, թե հիպերբուլ կիմին այդ զիծը. մյուսի կարծիքով այդ կը լիներ պարաբուլ: Յերկու կողմերն ել Խերով ելին ապացուցում իրենց կարծիքը: Նրանց բացատրությունները այնպիսի եղանակով ելին կատարվում, վոր Միշելը տեղից վեր-վեր կեղով ելին կատարվում, այս Միշելը տեղից վեր-վեր եր թվում եր, թե վիճողներից վոչ մեկը չեր ուզում մյուսին զիծել իրեն դուր յեկած կորագիծը:

Այդ զիտական վեճն այնքան յերկար տևեց, վոր վերջիվեր չո Միշելի համբերությունը հատավ:

— Բավական ե, պարոն կոսինուաներ, — բացականչեց նա, պիտի դադարե՞ք վերջապես միմյանց դլիսին նետել այդ պարագուներն ու հիպերբուլները: Գիտե՞ք, թե ինչ ե ինձ հետաքրքրում այս դորձի մեջ: Յենթադրենք, թե արկը անպատճառ պիտի թուչի պարաբուլ կամ հիպերբուլով, այդ չի կարենը. հարցը այն ե, թե ո՞ւր կտանի մեզ այդ զիծը:

— Վոչ մի տեղ, — պատասխանեց Նիկոլը:  
 — Ի՞նչպես, թե վոչ մի տեղ:  
 — Ճիշտ ե, վոչ մի տեղ, — պատասխանեց Բարբիկենը, —  
 այդ կորագծերը չեն փակված, անվերջ զնում են:  
 — Ա՛խ դուք դիմականներդ: Ճշմարտար, չգիտեմ, թե ինչ-  
 պես կարելի յե ձեղ չսիրել: Լավ, բայց մեղ ի՞նչ, արկը պարա-  
 բուի՞ հէտեւի, թե հիակերտովի, քանի վոր թե՞ մեկը և թե  
 մյուսը հավասարապես մեղ կտանեն դեպի անհայտ անվերջու-  
 թյունը:

Բարբիկենն ու Նիկոլը չկարողացան զսպել իրենց ծիծաղը: Նրանք զբաղվել ելին «արվեստը արվեստի համար» նշանաբա-  
 նով, այսինքն անողութ մի դործով: Դաժան իրականությունն  
 այն եր, վոր արկը, հեղեղբոլին հետեւր, թե պարաբոլն,  
 միենույնն եր, յերբեք չեր հանդիպելու վոչ Յերկրին, վոչ ել  
 Լուսնին:

Ի՞նչ եր սպասում մոտ ապագայում այս խիզախ ուղևորնե-  
 րին: Յեթե նրանք քաղցից, ծարավից, ցրտից չմեռնելին, մի  
 քանի որ հետո պիտի մեռնելին ող չլինելու հետևանքով:

Ի՞նչքան ել վոր աշխատելին գաղի խնայողություն անել,  
 ասկայն ջերմաստիճանի ծայրահեղ նվազումը նրանց ստիպում  
 եր զաղ սպառել: Կարելի յեր առանց լույսի մնալ, բայց ա-  
 ռանց ջերմության չեր կարելի ապրել:

Լուսամուտներից դիտելը չափազանց դժվարացել եր, վո-  
 րավիշեակ արկի ներսի խոնավությունը նստում եր ապակիների  
 վրա և խակույն սառչում: Պետք եր շարունակ քերել ապակիների  
 վրա դոյցած սառույցը: Այդ միջոցին չափազանց կարեոր եր  
 դիտել դրսի աշխարհը, վորովհետեւ կուսնի այդ անտեսանելի  
 իրողի ամեն մի տեսարանը գիտական մեծ արժեք եր ներկայաց-  
 նում:

Իսկապես, յեթե Լուսնի այդ մասի վրա ող կար, այդ դեպէ  
 քում նրա յերկնակամարի վրա պետք ե յերեային ընկնող աստ-  
 ղերի լուսավոր հետքերը. յեթե արկը թռչում եր մթնոլորտի  
 շերտերի միջոցով, այդ դեպում պետք ե լսվեր մի վորեւ  
 ձայն, վոր կտարածվեր լուսնային արձագանքով, ինչպես որի-  
 նակ շանթի վորուը, ձյունակույտի վիլուզումը կամ հրաբուխի  
 պոռթիումը: Յեթե մի վորեւ լուսն գաղաթից բոցեր ժայթքե-  
 յին, կարելի կլիներ տեսնել նրանց փայլը:

Այս յերեսույթների մանրամասն ուսումնասիրությունը չա-  
 փազանց կողներ պարզաբանելու համար Լուսնի կազմի մասին  
 մութ մնացած կետերը:

Սակայն մինչև այժմ Լուսնի ոկավառակը մնում եր լուս-  
 ու մութ: Այդ պատճառով ել Միշել Արդանն ասաց.

— Յեթե մի ուրիշ անդամ ել կրկնենք այս ուղեղությու-  
 նը, պետք ե մեկնել այն միջոցին, յերբ լուսինը նոր ե:

— Ճիշտ ե, — պատասխանեց Նիկոլը, — յեթե նորալուսին  
 լիներ, մենք կտեսնելինք նրա անտեսնելի մասը, վոր լուսավոր-  
 ված կլիներ արել լույսով...

— Ի՞նչ խոսք, Նիկոլ, — ասաց Միշելը: — Իսկ դու ի՞նչ  
 կասես այս մասին, Բարբիկեն:

— Իմ կարծիքն այն ե, — պատասխանեց ծանրախոհ նախա-  
 պահը, — վոր յեթե մենք յերբեք կրկնենք այս ուղեղությունը,  
 պետք ե մեկնենք միենույն ժամանակ և միենույն պայմաննե-  
 րում: Յենթարբեցեք, վոր մեղ հաջողվի հասնել մեր նպատա-  
 կին: Միթե ավելի լավ չե ինչել լուսավորված, քան թե խա-  
 վարի մեջ թաղված ցամաքի վրա: Իսկ Լուսնի անտեսնելի  
 մասը մենք կտեսնելինք հետադայում, ամբողջ Լուսնի վրա ըր-  
 ջապայելիս: Նախ և առաջ պետք եր հասնել նպատակին—յեթէ  
 մենք ճամբից չեղավելինք, այդպես ել կլիներ:

— Այդ խոսքերին վոչինչ չե կարելի առարկել, — պատաս-  
 խանեց Միշել Արդանը: — Համենայն դեպս Լուսնի անտեսնելի  
 մասը դիտելու առիթը ձեռքից բաց թողեցինք: Շատ հավանա-  
 կան ե, վոր մյուս մոլորակների բնակիչները մեղանից շատ տ-  
 վելի բան դիտեն իրենց արբանյակների մասին:

Այդ ժամանակ արկը խավարի մեջ հետևում եր մի գծի,  
 վորը վորոշելու համար վոչ մի տվյալ չկար: Բարբիկենը չեր  
 կարողանում վորոշել, թե արդյո՞ք արկի ուղղությունը փոխվել  
 եր Լուսնի կամ յերկրային մի ուրիշ մարմնի ձգողական ուժի  
 ազդեցության տակ: Սակայն արկի դիրքի մեջ տեղի ունեցած  
 մի փոփոխություն, վորը Բարբիկենը նկատեց առավոտյան ժա-  
 մը մոտավորապես չորսին:

Այդ փոփոխությունը կայանում եր նրանում, վոր արկի  
 հատակը չքաշել եր դեպի Լուսնի կողմը և փոխանակ իր կոնա-  
 ձել մասով առաջ շարժվելու, կողքանց եր առաջ չարժվու-  
 թյուն:

Արկի ամենածանր մասը, նրա հատակը թեքվում եր դեպի անտեսանելի սկավառակը, կարծես ուզում եր նրա վրա ընկնել;

Միթե՞ իսկապես արկն ընկնում եր: Արդյո՞ք ուղևորները պիտի հասնելին իրենց նպատակներին; Վո՞չ: Այն գիտողությունները, վոր կատարում եր Բարբիկենը, թեև շատ անորոշ եյին, բայց և այնպես ցույց եյին տալիս, վոր արկը Լուսնին չեր մոտենում, այլ շարունակ հետևում եր նրա կողքից անցնող միորինակ մի գծի:

Այդ գիտողությունների հետևանքով նիկոլը հանկարծ մութ սկավառակի կազմած հորիզոնի վրա մի լուսավոր կետ տեսավ, վորն անկասկած աստղ չեր կարող լինել, վորովհետեւ հետզհետեւ մեծանում եր. այդ ցույց եր տալիս, վոր արկը չեր ընկնում Լուսնի վրա, այլ մոտենում լուսավոր կետին:

— Հրաբո՛ւիս, — բացականչեց Նիկոլը, — ժայթքող մի հրապուխ. Լուսնի ներքին լավաները դուրս են ժայթքում: Ուրեմն Լուսինը դեռևս բոլորովին չի հանդել:

— Այո՛, հրաբուխ ե այդ, — պատասխանեց Բարբիկենը, գիշերային հեռագիտակով ուշադրությամբ դիտելով, — բացի հրաբուխից ուրիշ վոչ մի բան չի կարող լինել:

— Բայց, — ասաց Միշել Արդանը, — այդ կրակն առաջացնելու համար ող է հարկավոր. ուրեմն, լուսնի այդ մասը Մջապատված և մթնոլորտով:

— Շատ հավանական ե, — պատասխանեց Բարբիկենը, — թեև այդ անպայման անհրաժեշտ չե: Հրաբուխն իրենից արտադրում ե այնպիսի նյութեր, վորոնք առաջացնում են անհրաժեշտ թթվածինը և այդպիսով բոցեր արձակում անող տարածության մեջ: Ինձ նույնիսկ թվում ե, վոր մեր տեսած այդ բոցերն ունեն այնպիսի մի փայլ, վոր առաջանում ե միայն մաքուր թթվածնի մեջ: Ուրեմն, չպետք ե շտապել և հաստատել, թե Լուսնի չուրջը մթնոլորտ կա:

Սակայն ի մեծ տհաճություն Բարբիկենի, արկի հետևած գիծը նրան հեռացնում եր յենթադրական հրաբուխի առաջացրած լուսավոր կետից: Կես ժամ հետո այդ լուսավոր կետն անհայտացավ մութ հորիզոնի հետևում: Սակայն այդ յերկույթի ստուգումը ինչքա՞ն կարող եր ողտակար լինել գիտության համար: Նա կհաստատեր, վոր Լուսնի ներքին ջերմությունը դեռ

մա բոլորովին չի սպառվել, իսկ յեթե ջերմություն կար, ու քեմն կարող եր գոյություն ունենալ և բուսականություն, և վո՞չ միայն բուսականություն, այլ և կենդանական աշխարհ:

Այդ գործող հրաբուխի գոյությունը անվիճելիորեն հատատված լինելով դիտնականների կողմից, անվիճելիորեն առաջ կրերեր մի չարք թեորիաներ, վորոնք թերեւս հնարավորություն կատային լուծելու այնպիսի կարևոր մի հարց, ինչպես Լուսնի բնակելիության հարցն ե:

Բարբիկենը տարվել եր այդ խոհերով և յերազում եր լուսնագին աշխարհի խորհրդավոր ճակատագրի մասին:

—————

## ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿԻՍԱԳՈՒՆԴԸ

Յերեկոյան ժամի յերեք ու կեսն եր: Արկը շարունակում էր հետևել կորաղծին ու պատվել լուսնի շուրջը:

Ուղևորներից վոչ մեկը չեր մտածում հանգստի մասին. յուրաքանչյուրն աշխատում եր մի անակնալ յերեռոյթ տեսնել, վորը կարող եր մի նոր լույս սփռել տիեզերքի ուսումնասիրության վրա:

Ժամը հինգին մոտ Միշել Արդանը վորպես ճաշ բաժանեց մի քանի կտոր սառը միս: Ուղևորներն իսկույն կերան, առանց հեռանալու լուսամտաներից, վորոնց ապակիներն անընդհատ ծածկվում եյին սառույցի շերտով:

Յերեկոյան դեմ, Նիկոլը հեռաղիտակի միջոցով լուսնի հարավային մասում և արկի հետեած ուղղության վրա նկատեց մի քանի փայլուն կետեր, վորոնք աչքի եյին ընկնում յերկնակամարի մութ ֆոնի վրա: Թվում եր, թե այդ կետերը սրածայր դադարին, վորոնց պրոֆիլը դասավորված եր կոճակաձև գծի վրա: Նրանք լուսավորված եյին բավական վառ լույսով: Այդ նույն յերեռոյթը յերեռում է Յերկրից, յերբ լուսինը դժոնվում է առաջին քառորդի սկզբում կամ չորրորդի վերջում:

Բարբիկենն առանց տատանվելու ասաց.

— Արկը:

— Ի՞նչպես, — հարցրին Նիկոլն ու Միշելը, — մի՞թե Արկն ե:

— Այո՛, բարեկամներս, նույն ինքն Արկն ե, վոր հակառակ կողմից լուսավորում ե լուսնի հարավային մասի լեռների դա-

դաթները: Մենք, ինչպես յերեռում ե, մոտենում ենք հարավային բևեռին:

— Հյուսիսային բևեռն անցնելուց հետո՝, — բացականչեց Միշել Արդանը, — ուրեմն լուսնի շրջանն ենք անում:

— Շատ ճիշտ ե, սիրելի Միշել:

— Ուրեմն այլևս վախ չկա վո՛չ հիպերբոլից, վո՛չ պարաբոլից, վո՛չ ել մի վորեն չփակված անվերջ կորաղծից:

— Բայց կարող ե լինել փակ կորպղիծ:

— Վորը կոչվում ե...

— Ելիպս: Մեր արկը փոխանակ կորչելու միջուրակային անհայտության մեջ, շատ հավանական ե, վոր ելիպսային շըրջան կատարի լուսնի շուրջը:

— Ահա՛ թե ինչ:

— Ցեղ նրա արբանյակը դառնա:

— Լուսնի լուսի՞նը, — բացականչեց Միշել Արդանը:

— Միայն, թույլ տուր ինձ նկատել սիրելի բարեկամ, պատասխանեց Բարբիկենը, — վոր այնուամենայնիվ մենք կորած ենք:

— Այո՛, բայց այժմ մենք կկորչենք տարբեր ձևով, ավելի զվարժալի, քան մյուսը, — պատասխանեց անհոգ Փրանսիացին:

Բարբիկենն իրավունք ուներ: Արկն այդ ելիպսային շըրջանն անելով, անկասկած հավիտյան պիտի պտույտ դար լուսնի շուրջը, վորպես նրա արբանյակը:

Մի նոր լուսատու յեր ավելացել արեգակնային սիստեմի վրա. արկն՝ իր յերեք բնակիչներով, վորոնք շատ չանցած պիտի վոչնչանային ողի պակասության հետեանքով:

Իսկ հետո արկը պիտի վերածվեր մի հանգած, մեռած զանգվածի, նման այն անկենդան աստերոիդների, վորոնք սուրում են անհունության մեջ:

Միայն մի միխթարություն ունեյին նրանք, այդ այն եր, վոր վերջապես հեռանում եյին անթափանց իսպարից ու վերադառնում Արկի ճառագայթներով վողողված շրջանները:

Այդ ժամանակ Բարբիկենի նկատած լեռները հետզհետե ավելի պարզ եյին յերեռում լուսնի դեռևս մութ մակերեռոյթի վրա: Դրանք «Դերֆիլ» և «Լերնից» լեռներն եյին, վորոնք բարձրանում են հարավային բևեռի մոտ:

Տեսանելի կիսագնդի լեռները չափվել են չափազանց ճշշտությամբ։ Այդպիսի ճշտությունը գուցե զարմանալի թվա, բայց կարելի յէ ասել, վոր Լուսնի լեռների բարձրությունը չափվել և նույնքան ճշտությամբ, ինչքան Յերկրի լեռների բարձրությունը։

Ամենից շատ գործածական չափելու ձեն այն և, վոր չափում են Լուսնի վրա լեռների ստվերը, դիտման միջոցին հաշվի առնելով Արեի բարձրությունը հորիզոնի վրա։ Զափումը կատարվում ե այնպիսի դիտակի միջոցով, վոր ունի մի ցանց, յերկու զուգահեռական թելերով։ Զափելու այդ ձեւը կիրառվում ե նաև հաշվելու համար Լուսնի խառնարանների և խոռոչների խորությունը։ Դալիլեյն այդ մեթոդն եր ողտագործում։ Նրանից հետո Բերն ու Մեդերը նույնպես մեծ հաջողությամբ կիրառում ելին այդ ձեւը։

Պետք ե նկատի ունենալ, վոր ստվերների չափումը միայն ժամանակ կարող է կատարվել, յերբ Արեի ճառագայթները չեղակի յեն ընկնում Լուսնի վրա։ Իսկ յերբ ճառագայթներն ուղղակի յեն ընկնում, ուրիշ խոսքով յեթե Լուսինը լրիվ և, նրա սկավառակի վրա վոչ մի ստվեր չի լինում և չափումները հնարավոր չեն լինում։

Գալիլեյը, վոր առաջինը յեղավ Լուսնի վրա լեռներ հայտնաբերողներից, նրանց բարձրությունը չափեց առաջին ձեւով, ոգտվելով ստվերի յերկարությունից։

Բերն ու Մեդերը շատ ավելի ճիշտ չափեցին հազար իննըսուն հինգ լեռների բարձրությունները։ Նրանց հաշիվներից յերեսում ե, վոր այդ լեռներից վեցի բարձրությունը հինգ հազար ութ հարյուր մետրից բարձր ե, իսկ քսան յերկուսինը չորս հազար ութ հարյուր մետրից բարձր։ Լուսնի ամենաբարձր լեռը՝ «Լեյբնից»-ի բարձրությունը հասնում է յոթ հազար վեց հարյուր տաս մետրի, ուրեմն Յերկրի մի քանի լեռներից ցածր ե։

Բայց այստեղ պետք ե մի դիտողություն անել։ Յեթե համեմատենք յերկու լուսատուների ծավալը, կտեսնենք, վոր Լուսնի լեռները Յերկրի լեռներից համեմատաբար ավելի բարձր են։ Առաջինները Լուսնի տրամադծի չորս հարյուր յոթանատուներորդը <sup>1/470</sup> մասն են կազմում, իսկ յերկրորդները Յերկրի

տրամադծի միայն հազար չորս հարյուր քառասուներորդը <sup>1</sup> <sub>1440</sub>) մասը։ Վորագեսղի Յերկրի լեռան բարձրությունը հասնի լուսնի լեռների համեմատական բարձրությանը, նրա ուղղահայաց բարձրությունը պետք է հասնի 26 կիլոմետրի, մինչդեռ Յերկրի ամենաբարձր լեռը չի հասնում ինը կիլոմետրի։

## ԳԼՈՒԽ XVII

### «ՏԻԽՈ» ԽԱՌՆԱՐԱՆԸ

Յերեկոյան ժամը վեցին արկը անցնում եր Հյուսիսային բևեռի մոտից վախուն կիլոմետր հեռավորության վրա— նույն տարածությունը, վորը բաժանում եր նրան Հյուսիսային բերեսից: Ուրեմն արկը շարժվում եր ելփասածե:

Այդ միջոցին ուղևորները կրկին ժտել եյին Արեգակի ճառագայթների շրջանը: Լուսաճանանչ Արկը նրանք ընդունեցին յերիցս «ուռուա»-ներով: Լույսի հետ միասին Արկը նրանց բերում եր ջերմություն, վոր չուտով ներս թափանցեց մետաղեպատերից: Լուսաճանանչ ապակիները կրկին թափանցիկ դարձան. նրանց ծածկող սառուցի շերտերը կարծես մոզական ուժի ազդեցության տակ իսկույն անհայտացան: Խնայողության համար գաղը իսկույն հանգցրին, միայն ող մատակարարող ապարատն եր սպառում այն սովորական քանակությամբ:

— Ա՛հ, — բացականչեց Նեկուլը, — ինչքա՞ն հրաշալի յեն այս կենսառու ճառագայթները: Յերկար գիշերից հետո, յերեվակայում եմ, թե լուսնաբնակները ինչպիսի անհամբերությամբ են սպառում ցերեկվա լուսատուի յերեւալուն:

— Այո՛, — պատասխանեց Արդանը ագահությամբ ծծելով այդ լույսին ու ջերմությունը, — այո՛. ամբողջ կյանքը լույսի ու ջերմության մեջ ե:

Յեթէ Յերկիրը «Միկ» լիներ, այդ կետից ուղևորները կարող եյին տեսնել նրան: Սակայն Յերկիրը վողողված եր Արեւ լուսավառության մեջ և դեռ անտեսանելի յեր:

Մի ուրիշ տեսաբան գրավեց նրանց ուշադրությունը— Լուս-

նի հարավային մասը, վոր հեռաղիտակի չնորհեվ մատեցել եր մի կիլոմետր հեռավորության վրա: Ուղևորները չեյին հեռանում լուսամուտներից և ուշադրությամբ դիտում եյին այդ տարրինակ ցամաքամասի մանրամասնությունները:

«Դերֆել» ու «Լեյբնից» լեռները կազմում են յերկու առանձին խմբեր, վորոնք տարածվում են գրեթե մինչև հարավային բևեռը:

Քմահաճ շրջադիմ ունեցող այդ լեռների կատարի վրա յերեվում եյին ըլացուցիչ սպիտակությամբ ծածկոցներ, վորոնց նկատել եր հայտնի աստղադիտեա Սեկլին:

— Զյուն ե այդ, — բացականչեց Բարբիկենը:

— Զյուն, — հարցրեց Նեկուլը:

— Եյո՛, Նեկուլ, ձյուն, վորը ստուել ե մեծ խորությամբ. տեսնե՞ք, ինչպես են նրա վրա արտացոլում ճառագայթները, ստուած լավաները յերեք այդպես չեյին վայլի. ուրեմն լուսնի վրա ջուր կա, ող կա: Այժմ այլեւ չի կարելի ժխտել այդ փասուը:

Այդ միջոցին արկը թռչում եր այդ բարձրությունների վերայով և ուղեգին անհայտանում եր սկավառակի ըլացնող փայտի մեջ:

Ուղևորները սլանում եյին այդ քառսային յերկի վրայով, կարծես քշված, տարված լինելին փոթորկի ուժից. նրանց վուների տակից անցնում եյին լեռների դարձաթները, ձորերը, խռոչները. նրանց հայացքը թափառում եր բոլոր ճեղքերը, խորհրդավոր բացվածքները. նրանք հետեւում եյին նրանց բոլոր վերելքներին կամ վայրելքներին: Սակայն վոչ մի տեղ չեր յերեւում վոչ բուսականություն, վոչ ել կյանքի ամենափոքր նըւինում վոչ բուսինչ, բացի հարբութներից դուրս ժայթքած լաշանն իսկ. վոչինչ, բացի հարբութներից դուրս ժայթքած լաշանն իսկ. վորոնք հայելիների նման արտացոլում եյին արեւի ճառագայթները անդիմադրելի փայլով:

Մի խոսքով այստեղ վոչ մի կյանքի նշույլ չկար, մահվան թագավորությունն եր տիրապետում, վորտեղ ձյան հյուսեբը, գլորվելով լեռների բարձունքներից, անձայն ու անշշուկ ընկերում եյին ձորերի խորքերը: Նրանք շարժվում եյին, սակայն վոչ մի աղմուկ չեր լավում:

Սակայն Միշել Արդանին թվաց, թե տեսնում ե ամերակների մի կույտ և այդ մասին հայտնեց Բարբիկենին: Բարերի այդ

կույտերը, վոր բավական կանոնավոր դասավորված ելին, մի ընդարձակ ամբոցի ձև ունելին և կանոնած ելին այն խորիսորատներից մեկի վրա, վորոնք մի ժամանակ գետերի հռւներ են յեղեկն: Միշել Արդանը, իր սովորական վողեռորությամբ պնդում եր, թե դա մի ամբոց է, մի տեղ նրան թվում եր թե քաղաքի պարիսպներ ե տեսնում, մի այլ տեղ սյունաղարդ սրահի դեռևս վողջ մնացած կամարները. մի ուրիշ տեղ նույնիսկ յերկու կամ յերեք այսուներ, ընկած իրենց պատվանդանների մոտ: Մի քիչ ավելի հեռուն՝ մի շարք կամարներ, վորոնք պետք ե պահելին ջրմուղի խողովակները, վերջապես մի հսկա կամուրջի քանդակած սյուները՝ ընկած խորիսորատի մեջ: Այս բոլորը նա տեսնում եր իր յերեսակայության դիտակով և իրականությունը լըցացնում եր այնպիսի կենդանի ու ճոխ նկարագրությամբ, վորդժվար եր հավատ չընծայել նրա դիտողություններին: Սակայն ո՞վ կարող եր հաստատել, թե իսկապես դոյություն չուներ մի քաղաք կամ քարերի մի կույտ. դժվար լուծելի հարց եր այդ և ժամանակը չեր ներում այդ հարցով յերկար զբաղվելու Միշելի տեսածները արդեն չքացել ելին անհունության մեջ:

Արկի հեռավորությունը կուսնի սկավառակից հետզհետե ավելանում եր և կուսնի ցամաքի մանրամասնություններն արդեն պարզ չելին յերեսում: Միայն բարձրությունները, լեռնահովիտները, խառնարաններն ու հարթավայրերն ելին վորոշակի դժագում:

Այդ ժամանակ ձախ կողմում նկատվեց կուսնի ամենազեղեցիկ լեռնահովիտներից մեկը՝ «Նյուտոն»-ը: Բարբիկենը նայելով քարտեղին, իսկույն ճանաչեց նրան: «Նյուտոն» մի ողակաձև խառնարան ե, վորի շրջապատի բարձրությունը հասնում եր յոթ հազար յերկու հարյուր վաթսում մետրի և անմատչելի յերթվում:

Բարբիկենը նկատեց, վոր այդ լեռան բարձրությունը շրջապատի հարթավայրի վրա՝ շատ հեռու յե խառնարանի խորությանը հավասար լինելուց: Այդ վիթխարի փոսը շատ դժվար եր չափել, դա մի մութ խորիսորատ եր. արևի ճառագայթները յերեք չելին թափանցում նրա խորքը:

— «Նյուտոն»-ը, — ասաց բարբիկենը, — մի կատարելագույն ողակաձև լեռ ե, վորի նմանը չիս Յերկրի վրա: Այդ ողակաձև

լեռները ապացուցում են, վոր սառչելու հետևանքով կուսնի կազմավորման ժամանակ առաջ են յեկել ահավոր և բուռն փոփոխություններ. ներքին կրակի ազդեցության տակ լեռները խոյացել են չափաղանց մեծ բարձրության, իսկ նրանց մեջ յեղած ձորերն ու խոռոչները իջել են կուսնի մակերեսույթից շատ ավելի խորը:

— Յես հակառակ չեմ քո կարծիքին, — նկատեց Միշելը.

«Նյուտոն» լեռան մոտով անցնելուց հետո ժամը յոթուկեսի մոտ արկը հասավ «Կլավիուս»- լեռնահովիտին:

— Յերկրի հրաբուխները, — ասաց Բարբիկենը, — համեմատած կուսնի հրաբուխներին, խլուրդի բներ են: Հին խառնարանները, վորոնք առաջացել են Վեզուվի ու Ետնայի ժայթքումներից, հազիվ վեց հազար մետր լայնություն ունեն: Յերկրագնդի ամենալայն կրկեսաձև լեռնահովիտը Ցելյոնի լեռնահովիտն ե համարվում, վորի լայնությունը յոթանասուն կիլոմետր է: Բայց ի՞նչ նշանակություն ունեն այդ լայնությունները համեմատած «Կլավիուսի» տրամագծի հետ, վորի վրայով թռչում ենք մենք այս բոպելին:

— Ի՞նչքան ե նրա լայնությունը, — հարցրեց Նիկոլը:

— Յերկու հարյուր քսան յոթ կիլոմետր, — պատասխանեց Բարբիկենը, — ճշմարիտ ե, դա կուսնի ամենալողարձակ լեռնահովիտն ե, բայց կան նաև ուրիշները, վորոնք ունեն 200, 150, 100 կիլոմետր լայնություն:

— Այս, սիրելի բարեկամներ, — բացականչեց Միշելը, — կարո՞ղ եք յերեսակայել, թե ի՞նչ գրության մեջ յեղել ներկայումս հանդիսաւ այդ լուսատուն, յերբ նրա բոլոր խառնարանները վորոտում ելին, լավայի հեղեղներ, քարերի կույտեր, ծիփու բոցի ամպեր ելին ժայթքում: Ի՞նչ հրաշալի տեսարան պիտի լիներ այդ. իսկ այժմ, ի՞նչ լքում: Իմ կարծիքով կուսինն այժմ ներկայացնում ե հրավառության վողբալի մնացորդները. հըթիռները, ոճածե կրակները և այլ հրավառությունները բարձր պիտի ու հանգել են. մնացել են միայն խանձված փայտիկները և կարտոնե խողովակները: Ո՞վ կարող ե բացատրել այդ աղետների պատճառը:

Բարբիկենը չեր լսում Միշել Արդանին: Նա դիտում եր «Կլավիուս»-ի շրջապատը, վոր կազմված եր տասնյակ կիլոմետր

լայնություն ունեցող լեռներից։ Հսկայական խոռոչի խորքում յերեսում եյին հարյուրավոր հանդած փոքր խառնարաններ, վորոնք գետինը ծակոտում եյին քափքաշի նման։ Այդ խառնարանների վրա իշխում եր հինգ հազար մետր բարձրությամբ մի դադաթ։

Երջակայքում դաշտավայրն ամայի յեր։ Այդ կործանված լեռներից, վուլ յեկած դադաթներից ավելի տիսուր տեսարան չեր կարող լինել։ Մոլորակը կարծես պայթել եղ այդ տեղում։

Սրկը շարունակում եր առաջանալ։ Լեռնահովիտները, խառնարանները, փուլ յեկած լեռները անվերջ հաջորդում եյին միմյանց։ Վերջապես, այդ ճաքճաքված յերկրի կենտրոնում յերեվաց լուսնի սկավառակի հրաշագեղ լիոռ՝ լուսաճաճանչ «Տիխո»-ն, վորն այդպես և կոչված դանիական նշանավոր աստղագետ Տիխուրբագեյի անունով։

Ով վոր դիտի լրիվ լուսինը անամպ յերկնակարմարի վրա, նա անպայման կտեսնի հարավային կիսափնդի այդ փայլուն կերը։

Մեշել Սրբանը սքանչացած եր և այդ լիոռ գովարաններու համար գործ դրեց իր վառ յերեակայության թեւաղբած բոլոր համեմատությունները։ Նրա խոսքերով, այդ «Տիխոն» մի լուսավառ ոջախ եր, մի շողարձակ կենտրոն, մի խառնարան, վոր ճառագայթնեց եր ժայթքում։ բոցալառ մի անիվի գունդ, հրաբորք մի հոկա աչք, մի աստղ, վոր արձակված եր անհունության մեջ և ջարդված՝ բաղխվելով լուսնի սկավառակին։

«Տիխոյի» փայլն այնքան վառ ու անդիմադրելի յեր, վոր բարբեկենն ու ընկերները ստիպված յեղան հեռաղիտակի ապակիները դիսով մըստել։

«Տիխոն» պատկանում է ճառագայթացող լեռների շարքին, ինչպես «Կոպերնիկը» և վկայում է հրաբխային հեղաշրջումների անորինակ ուժի մասին, վորի շնորհիվ լուսինն ստացել եր արտաքին ձևը։

Լեռան կենտրոնում գտնվում է մի խառնարան ություն յոթ կիլոմետր լայնությամբ։ Նրան շրջապատում են մի շարք ողակածե բարձրություններ, վորոնք ուղղվելով դեպի արևելք ու արեմուտք, իշխում են շրջակա հարթավայրի վրա, հինգ հազար մետր բարձրությամբ։

Լրիվ լուսնի ժամանակ ե, վոր «Տիխոն» յերեսում և իր ամբողջ գեղեցկությամբ, սակայն այդ ժամանակ ստվեր չի նուռ, դրա համար ել նկարները զունատ են դուրս գալիս։ Հստացվում է միայն խոռոչների, խառնարանների, լեռնահովիտների կուտակում— այդ ծակոտկեն հողի վրա թափված և մի ամբողջ հրաբխային ցանց։ Կենտրոնական հրաբուխի բոլոր ժայթքումները պահել եյին իրենց նախնական ձևը։ Յբաի ազգեցության տակ բյուրեղանալով, նրանք հավերժացրել են այն տեսքը, վոր մի ժամանակ ունեցել և լուսինը հրաբխային ուժերի ազդեցության տակ։

Ուղեռների հեռավորությունը «Տիխոյի» ողակաձև դադարից այնքան ել մեծ չեր, և նրանք կարողանում եյին դիմումներից այնքան մանրամասնությունները։ «Տիխոյի» առաջացրած շրջանակաձև պատմեցի վրա լեռները միմյանց վրա եյին բարձրանում վորպես հոկա տերրասներ։ Յեթե այդ խոռոչի մեջ մի քաղաք հիմնվեր, նա կլիներ բացարձակապես անառիկ։

Բնություննը, սակայն, բոլորովին դատարկ չեր թողել այդ խառնարանի խորքը։ Ուղեռները շատ պարզ նկատեցին այնտեղ կոնուսներ, կենտրոնական բլուրներ, հողի քմահաճ կորություններ։ Մի տեղ կարծես զծագրված լիներ տաճարի տեղը, մի այլ տեղ՝ Փորումի, մի ուրիշ տեղ պալատի հիմքերը, մի քիչ այն կողմը՝ ամրոցի հրապարակը։ Այդ բոլորի վրա իշխում եր կենտրոնական լեռը, հինգ հարյուր մետր բարձրությամբ։ Մի ընդգարձակ լեռնահովիտ, վորտեղ ամբողջ հին չոռմը, յեթե նույնիւկ տասն անդամ մեծ լիներ, կարող եր տեղավորվել։

## ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԵՐ

Այդ ժամանակ արկն արդեն անցել էր «Տիխո»-ի վրայից : Բարբիկենն ու ընկերները մեծ հետաքրքրությամբ դիտում եյին այդ փայլուն շերտերը, վոր հոչակալոր լեռը սփռել եր բոլոր ուղղություններով :

Ի՞նչ եր այդ լուսաճամանչ սպակը . յերկրաբանական ի՞նչ-պիսի յերևոյթի հետևանք եյին այդ ճառագայթները : Բարբիկենի համար չափազանց կարևոր հարց եր այդ :

Նրա աչքի առաջ բոլոր ուղղություններով ձգվում եյին լուսավոր շերտեր, վոմանք քսան մետր, վոմանք ել հիսուն մետր լայնությամբ : Մի քանի տեղերում այդ փայլուն շերտերը գընում եյին «Տիխո»-ից մինչև հազար մետր հեռու և կարծես հատկապես արեելքում և հյուսիսում ծածկում եյին հարավային կիսագնդի կես մասը : Այդպիսի լուսավոր ցայտերից մեկը տարածվում եր մինչև «Նեկտարի ծովը» . կտրում անցնում եր նրան և հազար յերկուհարյուր կիլոմետր առաջանալուց հետո վոչչանում եր, խփելով «Պիեռենյան» լեռնաշղթային : Մի քանի շերտեր լուսավոր ուղիղով ձգվում եյին դեպի արեմուտք և ծածկում «Ամպերի» ու «Խոնավության» ծովի լուսավոր ցանցով :

Վորտեղից եյին առաջացել այդ շողշողուն ճառագայթները, վորոնք փաղում եյին թե՛ դաշտերի և թե՛ ամենաբարձր լեռների վրայով : Բոլոր ճառագայթները մեկնում եյին մի ընդհանուր կենտրոնից—«Տիխո» խառնարանից :

Հերշելը նրանց փայլը վերադրում եր լավաների հին հոսանքներին, վորոնք ցրտից խտացել եյին . սակայն այդ կարծիքն

ընդունված չե : Ուրիշ աստղագետներ այդ անբացատրելի ճառագայթների մեջ տեսնում եյին հսկա քարակույթերի շարքեր և ժայռեր, վորոնք քավել բերվել եյին սառուցներից :

— Ի՞նչ կա վոր, այդ ամենը չառ լավ և մտածված,— ասաց նիկոլը, վորին Բարբիկենը հայտնում եր դիտնականների առարկեր կարծիքները :

— Վո՞չ, վորովհետեւ այդ լուսավոր, գծերի կանոնավորությունը և այն ուժը, վոր անհրաժեշտ և հրաբխային նյութերն այդքան հեռու տեղ տանելու համար, անբացատրելի յեն, — ասաց Բարբիկենը :

— Անբացատրելի, — առարկեց Միշել Արդանը, — իմ կարծիքով չառ հեշտ և բացատրել այդ ճառագայթների ծագումը :

— Ֆի՞շտ եք ասում, — հարցրեց Բարբիկենը :

— Շատ ճիշտ, — պատասխանեց Արդանը, — բավական և ասել, վոր այդ մի ընդարձակ աստղաձեռ ճեղքված և, նման այն բանի, վոր ստացվում ե ապակուն քարով կամ գնդակով խփելիս :

— Լավ, — ասաց Բարբիկենը ժամանակով, — իսկ ո՞ւմ ճեղքն և այդքան ուժեղ յեղել, վոր այդպիսի հարված հասցնող քար և շպրտել :

— Ճեղք բոլորովին ել անհրաժեշտ չե, — ասաց Արդանն առանց շփոթվելու, — ինչ վերաբերում ե քարին, յենթադրենք թե մի գիսավոր ե յեղել նրա տեղը :

— Ա՛խ այդ գիսավորները, — բացականչեց Բարբիկենը, — ինչքա՞ն են չափազանցում նրանց նշանակությունը : Միրելի Միշել, քո բացատրությունը վաստ չե, բայց քո գիսավորն ավելորդ ե : Այդ ճեղքվածքն առաջացնող հարվածը կարող ե յեկած լինել լուսնի միջից : Այս աստղաձեռ ճեղքվածքը կարող ե պարզապես առաջացած լինել ցրտի աղղեցության տակ՝ լուսնի կեղեվի պրկումից : Այդպես ե նաև անդիմացի դիտնական նեսմիթի կարծիքը, վորով ինձ թվում ե, թե բավարար չափով բացատրում ե այս լեռների ճառագայթացումը :

Ուղերները դեռևս յերկար ժամանակ դիտեցին «Տիխո» լեռան հաշարակիքները : Արկը վողողված կրկնակի լուսուի մեջ— լուսնի ու Արկի ճառագայթների— նման եր շեկացած գնդակի : Նրանք հանկարծ չափազանց ցրտից խիստ ջերմություն մեջ ըն-

կան: Բնությունն այսպիսով նրանց նախապատրաստամ եր լուսնաբնակիչներ դառնալու:

Լուսնի բնակիչներ գառնալ. այդ միտքը մի անդամ ևս հիշեցրեց Լուսնի բնակելի լինելու հարցը; Այն բոլորից հետո, ինչ նրանք տեսան, կարո՞ղ ելին լուծել այդ հարցը. կարո՞ղ ելին ասել այս կամ վոչ: Արդանը սկսեց նորից հարց ու փորձ անել ընկերներին, հայտնելու իրենց կարծիքը և բացել ի բաց պահանջեց, վոր նրանք կտրականապես հայտնեն, թե արդյո՞ք Լուսնի վրա գոյություն ունեն կենդանական ու մարդկային աշխարհի ներկայացուցիչներ:

— Յես կարծում եմ, վոր այդ հարցին կարելի յե պատասխանել, — ասաց Բարբիկենը, — միայն, ըստ իս, հարցն ուրիշ կերպ պետք ե զնել:

— Լավ, դու ուրիշ կերպ դիր հարցը, — պատասխանեց Արդանը:

— Լավ, — շարունակեց Բարբիկենը: — Այստեղ ինդիրը կրկնակի յե և կրկնակի լուծում ե պահանջում: Լուսինը բնակելի՞ յե արդյոք. Լուսինը յերբեն յեղել ե բնակելի:

— Լավ, — ասաց Նիկոլը, — նախ քննենք առաջին հարցը, և լուսինն արդյո՞ք բնակելի յե:

— Ճիշտն ասած, յես այդ մտսին, վոչինչ չգիտեմ, — պատասխանեց Միշել Արդանը:

— Իսկ իմ պատասխանը բացասական ե, — ասաց Բարբիկենը: — Այն դրության մեջ, վոր գտնվում ե այժմ Լուսինը—իր մթնոլորտային շատ բարակ շերտով, ցամաքած ծովերով, ցրտի ու ջերմության խիստ փոփոխություններով, յերեք հարյուր հիսուն չորս ժամ տևող ցերեկներն ու դիշերները, ինձ թվում ե, թե բնակելի չի կարող լինել. ինչպես նրա վրա կարող ե զարդանալ կենդանական կյանքը:

— Համաձայն եմ, — պատասխանեց Նիկոլը, — բայց գուցե լուսնի վրա բնակվում են այնպիսի եյակներ, վորոնք բոլորովին տարբեր կազմվածք ունեն:

— Այդ հարցին պատասխանել ավելի դժվար ե, բայց և այնպիս կփորձեմ պատասխանել: Ասա՛ ինդրեմ, ի՞նչ ես կարծում, ինչպիսի կազմվածք ել գոյություն ունենա, մի՞թե շարժումը անհրաժեշտ չե:

— Անկասկած, — պատասխանեց Նիկոլը:

— Յեթե այդպիս ե, մենք Լուսնի մակերեսույթը գիտեցինք ամենաշատը հինգ հարյուր մետր հեռավորությունից, բայց վոչ մի չարժում չնկատեցինք: Մի վորեւ կյանքի գոյությունը հայտնի կլիներ Լուսնի մակերեսի վորեւ փոփոխումով, զանազան կառուցվածքներով, ավերակներով: Իսկ մենք ի՞նչ տեսանք: Ամեն տեղ միայն բնության գործը, բայց մարդկային աշխատանք՝ վոչ մի տեղ: Աւրեմն եթե կենդանական աշխարհի ներկայացուցիչներ կան Լուսնի վրա, նրանք թագնված են այն խոռոչներում, վորտեղ չի կարող թափանցել մարդու հայացքը: Ինձ համար այդ անընդունելի յե, վորովհետև համենայն դեպս նրանք մի վորեւ հետք թողած կլինեյին այն դաշտերի վրա, վորոնք ծածկված են մթնոլորտի շատ բարակ շերտով: Այդպիսի հետքեր բոլորովին չկան: Մնում ե միայն յենթադրել, վոր այստեղ ապրում ե կենդանի եյակների այնպիսի մի տեսակ, վորի համար չարժումը՝ վոր կյանքն ե՝ բոլորովին ուտար ե:

— Այդ միևնույն ե, թե ասենք ահա կենդանի եյակներ, վորոնք չեն ապրում, — առարկեց Միշելը:

— Շատ ճիշտ ե, — պատասխանեց Բարբիկենը:

— Ուրեմն, կարող ենք ամփոփել մեր կարծիքը, — ասաց Միշելը:

— Այս, — պատասխանեց Նիկոլը:

— Լավ, — շարունակեց Միշել Արդանը, — գիտական հանձնաժողովը, գումարված թնդանոթային ակումբի արկի մեջ, հիմնված նոր տվյալների վրա, միաձայն վորոշում ե, վոր լուսինն անբնակ ե:

— Այժմ, — ասաց Նիկոլը՝ անցնենք յերկրորդ հարցին: Յես հարց եմ տալիս հարդելի հանձնաժողովին. արդյո՞ք լուսինը երբեցէ բնակելի յեղել ե:

— Խոռը տրվում ե քաղաքացի Բարբիկենին, — ասաց Միշել Արդանը:

— Միշելի բարեկամներ, — պատասխանեց Բարբիկենը, — դեռևս այս ուղեղորությունից առաջ յես արդեն համոզված եյի, վոր Լուսինն անցյալում բնակելի յե յեղել: Ավելացնեմ, վոր մեր անձնական դիտողությունները հաստատեցին իմ այդ կար-

ծիքը: Յես կարծում եմ, նույնիսկ հաստատում եմ, վոր Լուսնի վրա բնակվել են մարդկային եյակներ, վորոնք ունեցել են մեր կազմվածքը, վոր նրա վրա ապրել են կենդանիներ, վորոնք նըման են յեղել Յերկրի կենդանիներին. սակայն ավելացնեմ, վոր թե՛այդ մարդկային արարածները և թե՛ կենդանիները ապրել են իրենց կյանքը և այժմ բոլորովին անհետացել են:

— Ուրեմն, Լուսինը Յերկրից ավելի հի՞ն է, — Հարցրեց Արդանը:

— Վո՞չ, — պատասխանեց Բարբիկենը, — Լուսինն ավելի հին չե, բայց ավելի վար և ծերացել, նա կազմվել ու քայլայվել շատ ավելի արագ: Նյութի կազմակերպող ուժերը Լուսնի ներսում յեղել են շատ ավելի ուժեղ, քան թե Յերկրի ներսում: Լուսնի սկավառակի ներկա տեսքը, ծածկված տմեն տեսակի ձեղվածքներով, խոռոչներով, բլրակներով, բավական պարզորեն հաստատում են այս յերեռութիւն: Կարելի յե վստահորեն առել, վոր յերբ մեր Յերկրը գեռես կիսահեղուկ վիճակում եր, Լուսինն արդեն ցրտից կարծրացել և բնակելի յեր դարձել:

— Յես ել այդ կարծիքին եմ, — ասաց Նիկոլը:

— Այն ժամանակ, — շարունակեց Բարբիկենը, — Լուսնի շուրջը մթնոլորտ կար: Զրերը պահպանվելով այս դազային ծածկույթից, չեյին կարողանում դոլորշիանալ: Ողի, ջրի, լույսի, արևի ու ներքին ջերմության ազդեցության տակ, բուժականությունը պետք ե արագորեն աճեր նրա համար պատրաստված հողի վրա և անկասկած այդ շրջանում կյանքը հայտնվեց, վորովհետև բնությունը յերեք իր բարիքներն իդուք չի վատնում. բնակության պիտանի մի աշխարհ անսպայման պետք ե բնակելի լինի:

— Սակայն, — առարկեց Նիկոլը, — մեր արբանյակի շարժումից առաջացած մի շարք յերեռություններ պիտի խանգարեյին թե՛ բուժական և թե՛ կենդանական աշխարհի զարգացմանը: Ուրինակի համար, յերեք հարցուր հիսուն չորս ժամ տեսող ցերեկներն ու գիշերները:

— Յերկրի բնեօներում նրանք տեսում են վեց ամիս, — նըկատեց Միշելը:

— Այդ փաստարկումը արժեք չունի, վորովհետև բնեօները մարդարնակ չեն:

— Նկատի ունեցեք, սիրելի բարեկամներ, — ասաց Բարբիկենը, — վոր յեթե ներկայումս այդ յերկար ցերեկներն ու յերկար գիշերները որգանիզմի համար անտանելի պայմաններ են ստեղծում, ապա հին դարերում այդպես չի յեղել: Այն ժամանակ մթնոլորտը Լուսնի սկավառակը ծածկում եր հաստ ծածկույթով, չափավորում արեկի ճառագայթների ուժը և դիմադրում գիշերային ճառագայթացման: Այժմ այդ մթնոլորտը չկա, հետեւապես և գոյություն չունի այդ յերկու աղղեցությունների հավասարակշռությունը: Բացի այդ, յես ձեզ պիտի զարմացնեմ...

— Զարմացրո՞ւ, — ասաց Միշել Արդանը:

— Յես յենթադրում եմ, վոր Լուսինի բնակելի յեղած ժամանակ ցերեկներն ու գիշերները յերեք հարյուր հիսուն չորս ժամ տեսողություն չունեյին:

— Ինչո՞ւ, — Հարցրեց Նիկոլը:

— Վորովհետև այն ժամանակ հավանական է, վոր Լուսնի իր առանցքի շուրջը պտույտ դալու ժամանակը հավասար չեր նրա՝ Յերկրի շուրջը պտույտ դալու ժամանակին — այդ հավասարությունը, ինչպես հայտնի յե, սկավառակի յուրաքանչյուր կետը դնում է Արևի ճառագայթների աղղեցության տակ տասնհինգ որ:

— Համաձայն եմ, — ասաց Նիկոլը, — բայց ինչո՞ւ այդ շարժումներն այն ժամանակ հավասար չեյին, քանի վոր այժմ հավասար են:

— Վորովհետև այդ հավասարությունը հաստատվեց աստիճանաբար միայն, Յերկրի ձգողական ուժի աղղեցության տակ:

— Այսպես ուրեմն, — Հարցրեց Միշել Արդանը, — մարդկությունն անհետացել և Լուսնի վրայից:

— Այո՛, — պատասխանեց Բարբիկենը, — անհետացել և Լուսնի հազարավոր տարիներ աղղելուց հետո: Ապա կամաց մթնոլորտը սկսեց նոսրանալ. Լուսինն անբնակ դարձավ այնպես, ինչպես պիտի լինի մի որ յերկրագունդը:

— Քո կարծիքով Յերկրին ել միևնույն բախտի՞ն պիտի արժանանա:

— Շատ հավանական է:

— Իսկ յե՞ր:

— Յերբ նրա կեղեղը սառչելու հետևանքով անքնակելի կը՝  
դառնա :

— Հաշվե՞լ են, թե ի՞նչքան ժամանակում պիտի սառչի մեր  
դժբախտ յերկրադունդը :

— Անկասկած :

— Իսկ դու ծանո՞թ ես այդ հաշիվներին :

— Կատարելապես :

— Խոսի՛ր ուրեմն չարագուշակ գիտնական, — բացականչեց  
Միշելը, — չե՞ս աեսնում, վոր համբերությունս հատնում ե:

— Սիրելի Միշել, — պատասխանեց սառնարյուն Բարբիկե-  
նը, — հայտնի յե, թե քանի աստիճան ջերմություն ե կորցնում  
Յերկերը մի տարում. մի շարք հաշիվներով հաստատված ե,  
վոր նրա միջին ջերմաստիճանը դերոյի պիտի հավասարվի չորս  
հարյուր հազար տարի հետո :

— Չորս հարյուր հազար տարի՛, — բացականչեց Միշել :  
Ա՛հ, յես ավելի հանդիսաւ եմ չնչում. քեզ լսելով, յես յերեա-  
կայում եյի, վոր հազիվ հիսուն հազար տարի յե մնում ապրել :

Բարբիկենն ու Նիկոլը չկարողացան զսպել ծիծառը իրենց  
ընկերոջ այդ յերկյուղի համար. ապա Նիկոլը, վոր ցանկանում  
եր յեզրափակել, հարցրեց.

— Ուրեմն վորոշվում ե, վոր Լուսինը յեղել ե բնակելի՛ :

Պատասխանը դրական յեղավ :

Այդ ժամանակ արկը արագորեն սահում եր գեպի Լուսնի  
հասարակածը, հետզհետե հետանալով նրա մակերեսութիւնը  
Շուտով լեռներն անհետացան հեռվում. նրանց շրջադերը բո-  
լորովին ջնջվեցին. և առավոտյան հրաշալի տեսարանից միայն  
մի հիշողություն մնաց :

—————

## ԹԱՅՔԱՐ ԱՆՀԱՅՐԻՆԻ ԴԵՄ

Յերկար ժամանակ Բարբիկենն ու իր ուղեկիցները լուս և  
մտածկում դիտում եյին այն աշխարհը, վորից անվերադարձ հե-  
ռանում եյին :

Սրելի գերքը Լուսնի նկատմամբ փոխվել եր, այժմ նրա  
հատակը դարձել եր դեպի Յերկիրը :

Այդ փոփոխությունը զարմացրեց Բարբիկենին : Յեթե արկը  
ստիպված եր պատույտ գալ Լուսնի չուքը, ինչո՞ւ իր ծանր  
կողմը դեպի նա չեր դարձել :

Արկի շարժումը դիտելով կարելի յեր նկատել, վոր նա  
Լուսնից հեռանալիս նույնպիսի կոր գծի յեր հետեւում, ինչպի-  
սին գծել եր նրան մոտենալիս. այսինքն հետեւում եր մի շատ  
տարածված ելլիպսի և հավանականորեն պիտի վերադառնար  
այն կետին, վորտեղ Յերկը ու Լուսնի ձգողական ուժերը հա-  
վասար եյին :

Գոնե այդպես վորոշեց Բարբիկենը ըստ իր հաշիվների :  
— Ի՞նչ կինի մեզ հետ, յերբ կհասնենք այդ մեռյալ կե-  
տին, — հարցրեց Միշել :

— Վոչինչ հայտնի չե, — պատասխանեց Բարբիկենը :  
— Բայց գուցե կարելի յե յենթադրություններ անել :  
— Այո, կարելի յե յերկու յենթադրություններ անել :  
Կամ արկի արագությունն անբավական կինի և նա ընդ-  
մեշտ կմնա այդ մեռյալ կետի վրա... .

— Ասա՞ յերկրորդ յենթադրությունը, — ընդմիջեց նրան  
Արդանը, — Ի՞նչ եւ մինի, առաջինից վատ չի լինի :

— Կամ արկի արագությունը բավարար կլինի և նա կշարունակե պտույտ դալ և հավիայան պտույտ կդա Լուսնի շուրջը:

— Դառնալ Լուսնի հլու ծառան, յերք մենք սովոր ենք նըստան մեր ծառան համարելու, մխիթարական հեռանկար չեղամաց, — ասաց Արդանը, — շատ տիսուր ապագա յե մեզ սպասում:

Բարբիկենն ու Նիկոլը լուսմ ելին:

— Ինչո՞ւ լուցիք, — հարցրեց անհամբեր Միշելը:  
— Ի՞նչ պատասխանել, — ասաց Նիկոլը:  
— Մի՞թե վոչ մի հնար չկա...  
— Վո՞չ, — պատասխանեց Բարբիկենը, — Մի՞թե կարելի յի պայքարել անհնարինի դեմ:

— Ինչո՞ւ չի կարելի. մի ֆրանսիացի ու յերկու ամերիկացի մի՞թե պետք ենահանջնեն անհնարինի առաջ:

— Իսկ դու ի՞նչ ես ուզում անել:  
— Զատել այն շարժումը, վոր քշում տանում ե մեզ:  
— Զատել այդ շարժումը:  
— Այո՛, — շարունակեց Միշելը վողեսրված, — զատել կամ փոխել նրա ուղղությունը. մի խոսքով ծառայեցնել այն մեր ողտին:

— Բայց ի՞նչպե՞ս:  
— Այդ արդեն ձեր գործն ե: Յեթե թնդանոթաձիգները չեն կարող դեկավարել իրենց արձակած արկը, ուրեմն նրանք թընկարող դեկավարել իրենց արձակած արկը, ուրեմն նրանք թընդանոթաձիգն չեն: Յեթե արկն ե դեկավարում թնդանոթաձիգն, դանոթաձիգ չեն: Յեթե արկն ե դեկավարում թնդանոթի մեջ: Եվարել արկի տեղ հրետավորին պետք ե դնել թնդանոթի մեջ: Եվարել մնացել եք: Ինձ այստեղ քարշ տվեցիք ու...  
— Քարշ տվեցի՞նք, — բացականչեցին Բարբիկենն ու Նիկոլը, — քարշ տվեցի՞նք. ի՞նչ ես ուզում ասել.

— Այժմ հակածառության ժամանակ չե, յես չեմ դժգուած: Ուղևորությունը ինձ դուք ե դալիս: Արկն ել վատ չե... Հայց պետք ե փորձել, մարդկային բոլոր հնարավոր միջոցները Բայց պետք ե փորձել մի վորեւ տեղ ընկնելու համար, յեթե հնարավոր դործաղքել մի վորեւ տեղ ընկնելու համար, յեթե հնարավոր չե լուսնի վրա ընկնել:

— Մեր ցանկացածն ել հենց այդ ե, սիրելի Միշել, — պատասխանեց Բարբիկենը, — բայց մենք վոչ մի միջոց չունենք...  
— Մի՞թե չենք կարող փոխել արկի շարժումը:

— Վո՞չ վոչ կարող փոխել արկի շարժումը:

— Վո՞չ:

— Նվազներէ նրա արագությունը:

— Վո՞չ:

— Նույնիսկ յեթե թեթևացնենք նրան, այնպես՝ ինչպես թեթևացնում են շատ ծանրացած նավերը:

— Ի՞նչ ես ուզում նրանից դուրս նետել, — հարցրեց Նիկոլը, — չե՞ վոր մենք ավելորդ վոչինչ չունենք: Բացի այդ, իմ կարծիքով, թեթևացած արկն ավելի արագ կդնա:

— Ավելի գանդաղ, — ասաց Միշելը:

— Ավելի արագ, — կրկնեց Նիկոլը:

— Վոչ արագ, վոչ դանդաղ, — ասաց Բարբիկենը, — վո՞քովհետեւ մենք պահնում ենք դատարկ տարածության մեջ, վո՞քովհետեւ տեսակարար կշխու վոչ մի նշանակություն չունի, այսինքն բոլոր մարմինները ընկնում են միենալոյն արագությամբ:

— Յեթե այդպես ե, մեզ մնում ե միայն մի բան անել, — բացականչեց Միշելը:

— Ի՞նչ, — հարցրեց Նիկոլը:

— Նախաճաշել, — պատասխանեց խիզախ Փրանսիացին, վոր միշտ ել անսպասելի կերպով լուծում եր դժվար խնդիրները:

Ընկերները լուցին նրան և նախաճաշեցին:

Առավոտյան ժամի յերկուան եր. նախաճաշից հետո վերսկը սեցին դիտողությունները:

Արկից դուրս նետված իբերը հետեւում ելին նրան անփոփոխ հեռավորության վրա: Պարզ եր, վոր արկը լուսնի շուրջ պըտույտ զալիս վոչ մի մթնոլորտի չեր հանդիպել. յեթե հանդիպած լիներ, այդ մարմինների տարբեր ծանրությունը կփոխեր նրանց համեմատական շարժումը:

Յերկրադնդի կողմից վոչինչ չեր յերեւում:

Իսկ լուսինը բոլորություն տարբեր տեսարան եր ներկայացնում. լուսատուն սքանչելիորեն փայլում եր անհամար աստղերի մեջ: Նրա հարթավայրեն արդեն ստացել ելին այն դույնը, ինչպես նրանք յերեւում են Յերկրից: Մնացած մասը միշտ փայլում եր և այդ լուսալառության մեջ «Ճիխո» լեռը վառ չողումը եր Արեկ նման:

Բարբիկենը վոչ մի կերպ չեր կարողանում վորոշել արկի  
արագությունը, բայց յնթաղբում եր, վոր այդ արագությունը  
հետզետև նվազում եր:

— Ի՞նչ ապուչներ ենք յեղել, — բացականչեց Միշելը:  
— Չեմ ժխտում, — ասաց Բարբիկենը, — բայց ի՞նչ ե պատ-  
ճառը, վոր մեղ այդպէս ես վորակում:

— Վորովհետև մենք շատ պարզ միջոց ունենք դանդաղեց-  
նելու այն արագությունը, վոր մեղ հեռացնում ե Լուսնից, իսկ  
մենք այդ միջոցից չենք ուտվում:

— Վո՞րն ե այդ միջոցը:  
— Ոգտագործել մեր հրթիռների պարունակած հետադարձ  
ուժը: Այդ ուժը արկը հետ կմղե...

— Կարծո՞ւմ ես, — ասաց Նիկոլը:  
— Մենք գեռես չենք ոգտագործել այդ ուժը, պատաս-  
խանեց Բարբիկենը, — Ճիշտ ե, բայց կողտադործենք:

— Յե՞ր, — հարցըց Միշելը:  
— Յերբ կզա ժամանակը: Նկատեցեք բարեկամներ, վոր  
այն դիրքում, վորում զտնվում ե այժմ մեր արկը, հրթիռները  
կարող են փոխնել նրա ուղղությունը, բայց միաժամանակ կա-  
րող են հեռացնել Լուսնից, փոխանակ մոտեցնելու: Իսկ չե՞  
վոր գուք անպատճառ ուղում եք Լուսնի վրա ընկնել:  
— Անկառիած, — պատասխանեց Արդանը:

— Սպասեցեք ուրեմն: Մի անբացատրելի ազդեցության  
տակ արկի հատակը սկսում ե շրջկել դեպի Յերկիրը: Հավանա-  
տակ արկի հատակը սկսում է աշխատավայրակշռման կետում նրա  
կան ե, վոր ձգողական ուժի հավասարակշռման կետում նրա  
կոնաձև գաղաթը կդառնա ուղղի դեպի Լուսնի: Հույս կա, վոր  
նրա արագությունը շատ չնշին կլինի. հենց այդ ժամանակ  
պետք ե գործել. հրթիռների ուժի ազդեցության տակ գուցե  
կարողանանք ուղիղ Լուսնի վրա ընկնել:

— Կեցցե՞ս, — բացականչեց Միշելը:  
— Համբերությունը սպասենք, — շարունակեց Բարբիկենը:  
Այնպես պետք ե անել, վոր ամեն ինչ ի նպաստ մեղ լինի. հու-  
սահատվելու բան չկա, յես սկսում եմ հավատալ, վոր կհաս-  
նենք մեր նպատակին:

Այս յեղակացությունը վողերեց Միշել Արդանին: Բայց  
նրանք մոռացել եյին, վոր քիչ առաջ հենք վորոշել ե-

յին, թե Լուսինն անբնակելի յեր և այնուամենայիվ ձգտում ե-  
յին դեպի այդ անբնակելի Լուսինը:

Մնում եր մի հարց ևս լուծել — արկը յե՞րբ կհասներ Յերկ-  
րի ու Լուսնի ձգողական ուժի հավասարակշռման կետին:

Այդ ժամանակը հաշվելու համար Բարբիկենին մնում եր նա-  
յել միայն ուղկորության հուշերին և վորոշել Լուսնի զուգահե-  
ռականներից վերցրած զանազան բարձրությունները:

Բարբիկենը գտավ, վոր հավասարակշռման կետին՝ արկը  
կհասներ դեկտեմբերի յոթից ութի դիշերը, դիշերվա ժամի մե-  
կին, այսինքն քսան յԵրկու ժամից հետո:

Սկզբում հրթիռները պատրաստվել եյին Լուսնի վրա արկի  
անկումը մեղմացնելու համար, իսկ այժմ հանդուղն ուղեկորները  
պատրաստվում եյին նրանց գործածել բոլորվին հակառակ նը-  
պատակի համար: Հրթիռները պատրաստ պահեցին, մնում եր  
միայն կրակ տալ:

— Հիմա, վոր այլես վոչինչ չունենք անելու, — ասաց Նի-  
կոլը, — յես մի առաջարկ ունեմ:

— Ի՞նչ առաջարկ, — հարցըց Բարբիկենը:

— Առաջարկում եմ քննել:

— Այս քեզ առաջարկ — բացականչեց Միշելը:

— Արդեն քառասուն ժամ կլինի, վոր մենք աչք չենք փա-  
կել, — ասաց Նիկոլը: — Քունը կվերականգնի մեր ուժերը:

— Վոչ մի դեպքում չեմ քննի, — ասաց Միշելը:

— Զես քննի, քո գործն ե. իսկ յես պառկում եմ. արդեն  
քնում եմ:

Ցեղ պառկելով դիվանի վրա, իսկույն սկսեց խոմքալ:

— Նիկոլը շատ խելոք ե, — ասաց Բարբիկենը, — պետք ե  
հետեւ նրա որինակին:

Մի քանի րոպե հետո Բարբիկենն իր բասով ձայնակցեց  
Նիկոլի բարիտոնին:

— Այս գործնական մարդիկ յերբեմն խելացի մտքեր են  
հայտնում, — ասաց Միշել Արդանը, և մեկնելով իր յերկար  
վոտքերը, խոշոր ձեռքերը դիմի տակ դնելով, ինքն ել շուտով  
քնեց:

Սակայն այդ քունը վո՞չ յԵրկար կարող եր լինել, վո՞չ ել  
չանգիստ: Նրանք յԵրեքով ել չափազանց մտահոգ եյին, և ա-

ռավոտյան ժամը յոթի մոտ յերեքն ել արդեն վոտքի վրա եւ յին:

Արկը հետղհետե հեռանում եր լուսնից ու թեքլում դեպի նա իր կոնաձե մասով: Այս յերեռոյթը մինչ այդ անբացարեւ մի, սակայն նպաստավոր եր Բարբիկենի ծրագրների համար:

Տառնյոթ ժամ ես ու գործելու ժամը կհասներ:

Այդ որը շատ յերկար թվաց: Ինչքան ել մեծ լիներ նրանց խիզախությունը, բայց և այնպիս ուղևորները չափազանց հուզված եյին, մոտենալով այն բոլեյին, յերբ պետք եւ վորոշվել այն հարցը, թե պիտի ընկենյին արդյոք լուսնի վրա, թե՞ դատապարուժած եյին ընդմիշտ պտույտ գալ նրա շուրջը:

Նրանք հաշվում եյին ժամերը, վոր շատ դանդաղ եյին թը վում նրանց, Բարբիկենն ու Նիկոլը համառորեն թաղվել եյին իրենց հաշիմների մեջ: Միշել Արդանը հետ ու առաջ եր դնում այդ մետաղե բանտի մեջ ու նայում եր անդրդվելի լուսնին:

Մեկմեկ նրանց մեջ զարթնությունը Յերկը մասին. նրանք տեսնում եյին թնդանոթային ակումբի իրենց բարեկամներին և նրանց մեջ ամենասիրելիին՝ Մաստոնին: Պատվարժան քարտուղարը անզարման Ապառաժուտ լեռների դիտարանումն է, իր պոստի վրա: Յեթե այդ միջոցին արկը յերեռում ե նրա հսկա դիտակի ապակու վրա, ի՞նչ և մտածում նա: Նա տեսած կլինի, թե ինչպես արկն անհայտացավ լուսնի հյութի սային բների հետեւ, իսկ այժմ յերեռում ե հարավային բներից: Այդ նշանակում ե արբանյակի արբանյակը:

Այսպես թե այնպես, որն անցավ առանց միջադեպի: Վրա հասալ յերկրային կես գիշերը, սկսվում եր դեկտեմբերի ութը: Մի ժամից կհասնեյին ձգողական ուժի հավասարակշռման կետին:

Ի՞նչպիսի արագությամբ եր դնում այժմ արկը, անհնար եր հաշվել: Սակայն Բարբիկենի հաշիմները ճիշտ եյին. գիշերվաժամի մեկին այդ արագությունը հավասար կլիներ դերոյի:

Բացի այդ, չեղոք կետի վրա մի ուրիշ յերեռութ ևս պիտի առաջանալ—այդ կետի վրա իրեն այլևս վոչ մի ծանրություն չեյին ունենա: Հենց այդ քոպեյին ել պետք եր գործի անցնել:

Արդեն արկի կոնաձե դլուխը զգալիորեն թեքվել եր գեպի լուսինը, արկը այնպիսի դիրք եր ստացել, վոր ժամանակ եր ոգտագործելու հրթիռների ուժը:

Ամեն ինչ նպաստավոր եր գնում: Յեթե մեռյալ կետի վրա արկի շարժումը բոլորովին նվազեր, մի փոքր շարժում դեպի լուսինը բավական կլիներ, վորպեսզի արկն ընկներ լուսնի վրա:

— Ժամը մեկից հինգ րոպե պակաս, — ասաց Նիկոլը:  
— Ամեն ինչ պատրաստ ե, ասաց Միշելը պատրույգը մոռտեցնելով դագի բոցին:

— Սպասի՛ր, — ասաց Բարբիկենը, խրոնոմետրը ձեռքում պահած:

Այդ միջոցին ծանրություն համարյա չեր զգացվում: Նըրանք արդեն չեզաք կետի մոտ եյին, կամ դուցե հասել եյին...  
— Ժամի մեկն ե, — ասաց Բարբիկենը:

Միշել Արդանը վառված պատրույգը մոտեցրեց հրթիռներին: Ողի պահառության պատճառով վոչ մի պայման չլավեց, բայց Բարբիկենը լուսամուտից մի բոց նկատեց, վոր իսկույն հանդավ:

Արկը զդալիորեն ցնցվեց:  
Յերեք ուղևորները նայում եյին առանց մի բառ արտասանելու, հազիվ չնչելով. կատարյալ լուսության մեջ կարելի յերլուկ նրանց սրտի բարախումը:

— Մի՞թե ընկնում ենք, — հարցրեց վերջապես Միշելը:  
— Վոչ, — պատասխանեց Նիկոլը, — վորովհետեւ արկի հատակը չի դարձել դեպի լուսինը...

Այդ միջոցին լուսամուտի մոտ կանգնած Բարբիկենը շուռյեկավ դեպի ընկերները. նրա զեմքը գունատ եր, ճակատը կնճոռտած, առամները սեղմված:

— Ընկնում ենք, — ասաց նա:  
— Ա՛չ, — բացականչեց Արդանը, — լուսնի՞ վրա:  
— Յերկրի վրա:

— Սատանան տա՞նի, — բացականչեց Միշելը, ասա վելիսովայրեն ավելացրեց, — ի՞նչ արած, արկի մեջ մտնելիս այնքան ել հույս չունեյինք, թե այստեղից դուրս կդանք:

Յեվ իրոք սկսվել եր սոսկալի անկումը: Այն արագությունը, վոր դեռևս արկը պահել եր, նրան քչեց տարավ մեռյալ կետից այն կողմը: Հրթիռների պայմանը չկարողացավ փոխել նրա ուղղությունը: Այդ արագությունն այժմ նրան տանում եր

գեղի Յերկիրը, մի արագություն, վորը հետզհետե ավելանում  
էր Յերկիրի ձգողական ուժի հետզհետե ավելանալու հետևան-  
քով:

Այդ մի ահռելի անկում եր, անկում՝ յերեք հարյուր վաթ-  
առն հազար կիլոմետր բարձրությունից, մի անկում, վորին վոչ  
մի ուժ չեր կարող մեղմացնել:

Արկը Յերկիրին պիտի զարնվեր մի արագությամբ, վոր հա-  
վասար եր նրա թոփչքի արագության:

— Մենք կորած ենք, — ասաց սառնորեն Նիկոլը.

— Ինչ արած, թող այդպես լինի, — պատասխանեց Բարբի-  
կենը մի տեսակ խանդավառությամբ, — մի՞թե չի կարելի մեռ-  
նել գիտության համար :

—

ԹՀՈՒԽ ՀՀ

## «ՍՈՒՍԿԵՑԱՆՆԱՅԻ» ԽՈՐԱԳԱՓՈՒՄՆԵՐԸ

— Ապա՞ , լեյտենանտ, ի՞նչպես են ընթանում չափումները :

— Կարծում եմ, վոր աշխատանքը շուտով կվերջանա, —  
պատասխանոց լեյտենանտ Բրոնսֆիլդը : — Բայց ո՞վ կսպասեր,  
վոր ցամաքին այսքան մոտ այդպիսի խորություն կլինի — ամե-  
րիկյան ափերից ընդամենը չորս հարյուր կիլոմետր հեռավո-  
րության վրա:

— Իսկապես սա մի վիթխարի խոռոչ ե, — ասաց կապի-  
տան Բլեմորերին : — Այսուեղ հավանականաբար գոյություն ու-  
նի մի ընդունվյա հոգիս :

— Այս մեծ խորությունները, — շարունակեց լեյտենանտը,  
— շատ անհարմագ են հեռագրական կարել անցկացնելու համար :  
Ավելի նպատակահարմար ե այն ստորջրյա հարթավայրը, վոր-  
տեղից անցնում ե Իրանդիայի ու Նյու-Գաունդլենդի միջև գո-  
րություն ունեցող կարելը :

— Համաձայն եմ քեզ հետ, Բրոնսֆիլդ : Իսկ մինչև այժմ  
ի՞նչ աշխատանք ե տարվել :

— Ներկայումս մենք արդեն ձգել ենք վեց հազար մետրից  
ավել յերկարությամբ մի պարան, իսկ դունդը, վոր քաշում ե  
խորաչափը, գեռես հատակին չի հասել, վորովհետև յեթե  
այդպես լինել, խորաչափն ինքնին վեր կբարձրանար :

— Հրաշալի բան ե Բրուկի հնարած այդ ապարատը. նրա  
միջոցով հնարալոր ե մեծ ճշտությամբ չափել խորությունները :

— Հասանք հատակին, — բացականչեց նավաստիներից մեկը,  
վոր հետեւում եր չափման գործողության :

Կապիտանն ու լեյտենանտը զնացին դեպի նավի հետեւ կողմը:

— Հը՞ , վորքա՞ն ե խորությունը, — հարցրեց կապիտանը :

— Վեց հազար հինգ հարյուր յերեսուն մետր, — պատասխանեց լեյտենանտը, այդ թիվը արձանագրելով ծոցատերում:

— Շատ լավ, բրոնֆիլտ, այդ թիվը կնշեմ իմ քարտեղի վրա: Այժմ կարգադրեցք խորաչափը դուրս բերել, այդ բավական յերկար աշխատանք է պահանջում: Մինչ այդ, մեխանիկը թող վառի հնոցները. հենց վոր դուք վերջացնեք, մենք կարող ենք մեկնել: Արդեն յերեկոյան ժամը տասն ե, ձեր թույլտվությամբ յես կարող եմ քննել:

— Գնացե՞ք, զնացե՞ք, — սերալիր կերպով ասաց լեյտենանտը:

«Սուսկեհաննա»-ի կապիտանը — սլատվական մի մարդ և բարի պետ — զնաց Եր խցիկը, խմեց գրութ, վորի համար մեծ գովեստներ արագ ճաշարանապետին, պառկեց քնելու, չմոռանալով գովելու սպասավորին անկողինը լավ պատրաստելու համար և քնեց խաղաղ քնով:

Յերեկոյան ժամը տասն եր: Դեկտեմբերի տասնմեկի որը վերջանում եր սքանչելի դիշերով:

«Սուսկեհաննա»-ն — Միացյալ Նահանգների նախատրամին պատկանող, հինգ հարյուր ձիու ուժ ունեցող մի կորվետ<sup>1)</sup> — չափումներ եր կատարում թաղաղ ովկիանոսում, ամերիկյան ցամաքամասից չորս հարյուր կիլոմետր հեռավորության վրա:

Քամին քիչ-քիչ դադարել եր: Վոչ մի շաբաթում չեր վրդում ողի չերտերը: Կորվետի դրոշակը անշարժ կախված եր հայմից:

Կապիտան Զոնատան Բլեմսբերին, վոր թնդանոթային ակումբի յեռանդուն անդամներից մեկի՝ զնդապետ Բլեմսբերի ազգականն եր, ավելի նպաստավոր յեղանակ չեր կարող հուսալ չափումները հաջող կերպով ավարտելու համար:

«Սուսկեհաննա»-ի կատարած մի շաբաթ չափումները նպատակ ունեցին հետազոտելու այն խորությունները, վորոնք ամենից ավելի նպաստավոր եյին ընդծովյա հեռադրաթել անցկացնելու հավայան կղզիների և ամերիկյան ցամաքի միջև:

Այդ մի հոկա ծրադիր եր, վորի նախաձեռնությունը պատ-

կանում եր մի զորավոր ընկերության, վորի դիրեկտորը, հըմուռ Սայրուս-Ֆիլդը, նույնիսկ մտածում եր Ովկեանիայի բոլոր կղզիները ծածկել ելեկտրական ցանցով:

«Սուսկեհաննա»-յին եր հանձնարկված կատարելու առաջին չափումները: Դեկտեմբերի տասնմեկի, լույս տասներկուուք պէսերը կորվետը գտնվում եր ուղիղ հյուսիսային լայնության 27°7' ու Վաշինգտոնի միջորեականից դեպի արևմուտք 41°37' յերկարության վրա:

Կապիտան Բլեմսբերի հեռանալուց հետո լեյտենանտ Բլեմսբերին ու մի քանի սպաներ հավաքիցին նավի տախտակամածի վրա: Լուսնի հայտնվելով, նրանց միաբն ուղղվեց դեպի այդ լուսատուն, վորի վրա ուղղված եր այդ ժամանակ ամբողջ կլստդղի հայացքը:

Ծովային ամենալավ դիտակներն իսկ չեյլին կարողանում ցույց տալ արկը, վոր պտույտ եր զալիս լուսնի շուրջը, բայց և այնպես բոլոր դիտակներն ուղղված եյին դեպի վայլուն ոկազառակը և միինավոր աչքեր նրան եյին հետեւում:

— Արդեն տաս որ ե, վոր նրանք թուել են, — ասաց լեյտենանտ Բրոնֆիլդը, — վո՞րտեղ են արդյոք ներկայումս:

— Նրանք հասած կլինեն իրենց տեղը, — պատասխանեց մի յերբտասարդ միջման<sup>1)</sup>, — և զբոսնում են այնտեղ:

— Վստահ եմ, վոր ձեր ասածը ճշտություն ե, — ասաց լեյտենանտը ժպտալով:

— Իսկապես, այդ մասին կասկածել չի կարելի, — ասաց մի ուրիշ սպա: — Արկը լուսնին պետք ե հասնել ամսի հինգին, կեսդիշերին: Այժմ ամսի 11-ն ե, ուրեմն արդեն վեց որ ե անցել: Վեց որում հնարավոր ե բոլոր հարմարություններով տեղափորվել նոր բնակավայրում: Ինձ թվում ե, յես տեսնում եմ մեր խիզախ հայրենակիցներին, տեղավորված մի վորեկ, հովտի խորքում, առվի ափին: Անկման հետեւանքով կիսով չափ հողի մեջ խրված արկի մոտ տեսնում եմ նիկոլին, վոր շրջակայիշն ե ռատումնասիրում, Բարբիկենին, վոր ճամբի հուշերն ե

1) Միջման — առաջին սպայական աստիճան նախառումում:

ժաքրագրում, իսկ Միշել Արդանը Լուսնի ամայի վայրերը ԱՐԴԱՆՈՒՄ ե իր հրաշալի սիզարների բույրով:

— Այո, այո, ճիշտ ե, հենց այդպես ե, — բացականչեց միջմանը:

— Ցանկալի յե, վոր այդպես լիներ, — ասաց ԼԵՅՏԵՆԱՆԱՆ ԲՐՈՆԱՓԵՍԸ, վոր շուտ չեր վողեռվում: Դժբախտաբար նրանից վոչ մի լուր չկա:

— Ներողություն, լեյտենանտ, մի՞թե Բարբիկենը չէ կարող այնտեղից գրել — հարցրեց միջմանը:

Այդ հարցը ընդհանուր ծիծաղ առաջացրեց:

— Վոչ, նամակ չեմ ասում, — աշխուժությամբ ասաց միշմանը, — փոստն այստեղ վոչ մի գործ չունի:

— Ուրեմն հեռագի՞ր, — հարցրեց մի սպա:

— Վոչ ել հեռագիր, — պատասխանեց միջմանը, առանց շը փոթվելու, — բայց կազ հաստատելը դժվար բան չէ:

— Ի՞նչպես:

— Լոնգսպիկի հեռադիտակի միջոցով: Դուք գիտեք, վոր այդ հեռադիտակը Լուսինը մոռեցնում ե Ապառաժուտ—ՀԵՇՆԵՐԻ ութ կիլոմետր տարածության վրա և հնարավորություն ե տալիս տեսնել նրա վրա ինն վոտնաչափ տրամադիծ ունեցող առարկաները: Թող ուրեմն մեր լուսնային հերոսները մի հսկա այբուբեն կառուցեն, թող յերկու հարյուր մետր յերկարությամբ բառեր ու մի կիլոմետր յերկարությամբ նախաղասություններ գրեն: Այդ միջոցով նրանք հեշտությամբ լուրեր կը հաղորդեն մեզ:

Բոլոր ներկաները ծափահարեցին միջմանին, վոր այդքան վառ յերեակայություն ուներ: Նույնիսկ լեյտենանտը համաձայնվեց, վոր այդ միտքն իրազործելի յե: Նա ավելացրեց, վոր հայելու միջոցով կենարոնացած ճառագայթներ ուղարկելով կարելի յեր ուղղակի հարաբերություն հաստատել. այդ ճառագայթները տեսանելի կլինելին վեներայի ու Մարտ մոյորակներից, ինչպես նեպտոն մոլորակը տեսանելի յե Յերկրից: Յեւ վերջապես այն փայլուն կետերը, վոր յերեացել են մոտակա մոլորակների վրա, կարող եյին Յերկրին տրված ազդանշաններ լինել:

Սակայն՝ լեյտենանան իսկույն նկատեց, վոր յեթե այդ միջոցով հնարավոր եր լուսնից լուրեր ստանալ, սակայն չեր կարելի Յերկրից դեպի Լուսին լուրեր ուղարկել. այդ հնարավոր կլիներ միայն այն դեպքում, յեթե Լուսնի բնակիչներն ել հեռուն դիտող գործիքներ ունենալին:

— Իմ կարծիքով, — ասաց սպաներից մեկը, — ամենից հետաքրքիրն այն ե, թե ինչ յեղան ուղեռները. ինչ արին, ինչ տեսան: Յեթե այս առաջին փորձը հաջողվի, անկատկած փորձը կկրկնվի: Այսակեղ միայն արկի ու վառդի հարց ե ուրեմն, առմեն անդամ, յերբ Լուսինը դենիթից կանցնի, կարելի յե նրան ոմբակոծել... այցելումերով:

— Տեսնենք, արդյո՞ք Մաստոնը այս որես հյուր չի գնա եր լուսնաբնակ բարեկամների մոտ, — ասաց ԼԵՅՏԵՆԱՆԱՆ աը:

— Յեթե համաձայնվի, յես ուրախությամբ կընկերակցեմ նրան:

— Ո՞չ, գնակացողները շատ կլինեն, — ասաց ԲՐՈՆԱՓԵՍԸ, — բավական ե, թույլ տրվի, Յերկրի բնակիչների կեսը դեպի Լուսին կդադիրի:

Խոսակցությունը շարունակվեց համարյա մինչև կես ուիշեր: Զի կարելի սպանեկացնել, թե ինչպես ըորբոքվեց բոլորի յերեակայությունը: Բարբիկենի փորձից հետո ամերիկացիների համար անկարնելի բան չկար: Ծագաբիրներ եյին կաղմացում դեպի Լուսին ուղարկել վոչ միայն դիտնականների մի հանձնաժողով, այլ նաև ամբողջ մի գաղութ և ամբողջ մի բանակ հետեւվակ զինվորներով, հրետավորներով ու հեծելազորքով, Լուսինը նվաճելու համար:

Գիշերվա ժամը մեկին խորաչափի բարձրացումը դեռևս չեր վերջացել: Մնում եր չանված յերեք հաղար մետր. այդ աշխատանքի համար անհրաժեշտ եր մի քանի ժամ:

Կապիտանի կարգադրությամբ շողին պատրաստ վիճակի մեջ եր. «Սուսեկհաննան» կարող եր իսկույն խարիսխը վերցնել:

Այդ պահին—գիշերվա մեկն անց 13 վայրկյանին, յերբ լեյտենանտ ԲՐՈՆԱՓԵՍԸ պատրաստվում եր իր խցիկը քաշվել, հանկարծ նրա ուշադրությունը զբաղվեց մի հեռավոր սուլոց:

ԼԵՅՏԵՆԱՆԱՆ ու ընկերները նախ կարծեցին, թե գոլործին



Հրավառ մարմինը սուզվեց ալիքների մեջ

Քը այլպէս սուլում, սակայն գլուխը բարձրացնելով, համոզվեցին, վոր սուլոցը գալիս եր մթնոլորտի հեռալոր շերտերից։ Նրանք ժամանակ իսկ չունեցան միմյանց հարց տալու, թէ «Ի՞նչ բան ե այդ», յերբ սուլոցը մի ահսելի ուժգնություն ստացավ և հանկարծ իրենց շացած աչքերի առաջ յերևաց մի ահագին բոլիդ, շարժման արագությունից և ողի շերտերի հետ շփոլելուց բոցավառված։

Հրավառ մարմինը գնալով մեծացավ և հանկարծ կայծակի վորոտի նման դղրդալով խփվեց կորվետի քթակայմին, ջարդեց այն և վերջառես մի խլացուցիչ աղմուկով սուզվեց ալիքների մեջ։

Յեթե այդ դանդվածը մի քիչ ալելի մոտ ընկներ, «Սուսկեաննա»-ն ընկղթված կլիներ իր ամբողջ անձնակազմով։

Կապիտան Բլեմսբերին դուրս վազեց կիսամերկ և նետվելով դեպի նավի այն մասը, ուր հավաքվել ելին սպաները, հարցրեց,

— Ի՞նչ պատահեց, պարսկներ։

Եիչմանը, արտահայտելով ընդհանուրի կարծիքը, բայց կանչեց։

— Կապիտան՝, «Նրանք» են։

Այդ վորոշումն ընդունվեց միաձայն . մնում եր ընտրել, թե  
վո՞ր նավահանգիստը պիտի գնային : Մոտակա ծովակին լայ-  
նության 27°-ի տակ վոչ մի նավահանգիստ չկար : Ավելի վերև  
Մոնտերե թերակղղուց այն կողմը զտնվում եր մի խոչոր քա-  
ղաք, վորից թերակղղին ստացել եր իր անունը ; Սակայն այդ  
քաղաքը անապատների սահմանի վրա յեր և հեռագրական գը-  
ծով միացած չեր ուրիշ քաղաքների հետ, մինչդեռ միայն ելեկ-  
տրականությունը կարող եր արագ կերպով տարածել այդ կա-  
րելոր լուրը :

Մի քանի աստիճան ավելի բարձր, Սան-Ֆրանցիսկոյի ծո-  
վածոցն եր : Վուկեհանքերի յերկրի մայրաքաղաքից հեշտ ել  
կապ հաստատել Միացյալ Նահանգների կենտրոնների հետ :  
Շոգեպինդ առաջ ընթանալով, «Առակեհաննան» կարող եր յեր-  
կառ որից հասնել Սան-Ֆրանցիսկո : Ուրեմն պետք եր անմիջապես  
մեկնել :

Շոգին պատրաստ եր . կարելի յեր իսկույն ճանապարհ  
ընկնել : Ծովի խորքում գեռևս մի քանի հարյուր մետր պարան  
եր մնացել, սակայն կապիտանը չուղեց թանկապին ժամանակը  
կորցնել, վորոշեց կարել պարանը :

— Պարանը կապենք լողացող ծողանչանին, — ասաց կապի-  
տանը : այդպիսով այդ ծողանչանը մեզ ցույց կոտ արկի անկ-  
ման ճիշտ տեղը :

— Բացի այդ, — ասաց լեյտենանտը, — մեր գիրքը վորոշ-  
կի հայտնի յէ մեզ, մենք զանվում ենք հյուսիսային լայնու-  
թյան 27° 7' և արևմտյան յերկարության 41° 37' վրա :

— Չատ լավ, միստեր Բրոնսֆիլդ, — պատասխանեց կապի-  
տանը : Կտրել տվեք պարանը :

Զողանչանը իջեցվեց ովկիանոսի յերեսը : Մետաղյա պարա-  
նի ծայրն ամրացվեց նրան և միայն ալիքներից շարժվելով, ծո-  
ղանչանը չեր կարող չատ հեռանալ այդտեղից :

Այդ ժամանակ ինժեներ-մեխանիկը կապիտանին հայտնեց,  
վոր ամեն ինչ պատրաստ եր . կարող եյին մեկնել : Կապիտանը  
նրան չնորհակալություն հայտնեց և հրամայեց ուղղվել դեպի  
հյուսիսարեւելք :

Կորվեալ շոգեպինդ ուղղվեց դեպի Սան-Ֆրանցիսկոյի ծո-  
վածոցը : Առավոտյան ժամը յերեքն եր :

## ԳԼՈՒԽ XXI

### ՄԱՍԻՆԸ ՆՈՐԻՑ ՀԱՅՏՆՎՈՒՄ Ե

«Առակեհաննայի» վրա բոլորը հուզված և շփոթված եյին :  
Ապաներն ու նավաստիները չեյին մտածում այն ահալոր վը-  
տանդի մասին, վորին նրանք կարող եյին յենթարկվել . բոլորի  
միտքը կլանված եր ուղերության աղետալի վախճանով :

«Երանք» են, «նրանք» են, — բացականչել եր միշտանը և  
ամեն մեկը հասկացել եր, թե ինչ եր ուղում առել նա : Վոչ վոք  
չեր կասկածում, վոր ալիքների մեջ սուզվածը թնդանոթային  
ակումբի արկն եր հենց :

— Նրանք կորած են, ասում եր մեկը : Մեռած, խեղդված  
են :

— Ապրում են, — ասում եփ մի ուրիշը : — Ջրի շերտը շատ  
խորն ե, այդ պատճառով ել անկման ուժը կմեղմանա :

— Բայց նրանք ողից զուրկ են, — ասաց մի ուրիշը, —  
յերք արկը թռչում եր մթնոլորտի միջով, շիկացած մի մարմին  
եր դարձել :

— Ինչ դրության մեջ ել լինեն, մեռած կամ կենդանի,  
ուետք և նրանց դուրս բերել, — վորոշեցին նրանք միաձայն :

Կապիտան լեմոբերին սպաներին հավաքեց խորհրդակցու-  
թյան : Անհրաժեշտ եր իսկույն վորոշում կայացնել : Խոսք չը-  
կար, վոր նախ և առաջ պետք եր արկը դուրս բերել ջրից :  
Գործողությունը դժվար, բայց հնարավոր եր : Սակայն կորվե-  
տի վրա չկային անհրաժեշտ գործիքները : Վորոշեց անմիջա-  
պես ուղերվել մոտակա նավահանգիստ և այստեղից արկի անկ-  
ման մասին հաղորդել թնդանոթային ակումբին :

«Սուսկեհաննա»-ի նման արագընթաց մի չողենավի համար մեծ բան չեր 800—850 կիոմետր ճանապարհ կտրելլ: Յերեսուն վեց ժամ հետո, դեկտեմբերի 14-ին, ցերեկվա ժամը մեկն անց քսան յոթ րոպեյին նաևը մտավ Սան-Ֆրանցիսկօյի ծովածոցը:

Տեսնելով այդ շողեպալինդ սուրացող, չարդված քրաւեց և  
կորպվետը, քաղաքի բնակիչները հուդլեցին, մենք բազմու-  
թուն համաքվիեց ծովափին:

Թարխսիւը գցելով, կապիտան Բլեմսբերին և լեյտենանտ Բրոնսֆիլդը նավակ նստեցին և խկույն ցածրաք դուրս յեկան :

— Հեռագրատունը. ո՞ւր է հեռագրատունը և ո՞ւր երանք, առանց պատասխանելու իրենց արված բազմաթիվ հարցերին։

Նավահանգստի սպան անձամբ նրանց առաջնորդեց դժուկ հետազրատուն, նրանց հետևում եր հետաքրքիրների խուռը բազմությունը:

ԲԵԼԵՄԱՐԵՐԻՆ և ԲՐԱՆՍՓԵԼՔԸ հեռադրասուն մասն, լող բար  
մութունը սպասում եղ դրսում:

Մությունը սպասում է 1) Վաշնու-  
տոն, նավատորմի քարոզւղարին, 2) Բալտիմոր, Բնդանոթային  
ակումբի փոխնախադադարին, 3) Լոնդոնիկի, Առասաժուտ լեռներ՝  
պատվարժան Մաստոնին, 4) Կեմբրիջի դիտարանի դիրեկտորի  
ողնականին :

Հեռագործ բովանդակությունը հետեւյալն եր

Հառագիր բազմականություն՝ Հյուսիսային լեռներու վերաբերյալ առաջին համարը կազմության 2707<sup>o</sup> և արևմտյան յերկարության 4193<sup>o</sup> չյուսիսային լայնության 2707<sup>o</sup> և արևմտյան յերկարության 4193<sup>o</sup> վրա, գեղտեմբերի 12-ին, առավոտյան ժամը մեկն անց 17 ըստելին կուրումը բախի արդին ընկալ Ասպարովի հանուսը, ուղարկեցէք հրահանդիներ:

Բլիմսքերի, «Սուսկեհաննայր» կապիւճակ

Հինգ բողեւ հետո ամբողջ քաղաքն արդեն լսել եր այդ լու-  
րը: Փամը վեցից առաջ այդ մասին տեղեկացն Միացյալ Նա-  
հանդմերի բոլոր մշանաները: Իսկ կես դիւներից հետո ընդծովյա-  
հետապրաթեկով ամբողջ Յելլուպան լսեց ցնցող նորությունը:  
Դժվար է նկարագրել, թե ինչպիսի տպավորություն դր-

ծեց այդ լուրը։  
Ստանալով հեռագիրը, սավասորմի քարտուղարը կամիսա-

նին հեռագրեց սպասել Սահմանադիմոկրատ, ամեն բոլե ողափառ վիճակում:

ԿԵՄՐԻՔԾ գիտարանի անդամները արտակարգ ժողով դրւմարեցին և գիտնականներին վայել անվրդովությամբ հարցը քննության առան գիտական տեսակետից :

թնդանոթային ակումբում կարծես բումբ պայմեց : Բուլը հրետավորները հավաքվել ենին : Յերբ հեռագիրն ստացվեց , ակումբի հարզարժան փոխնախազահը կարդում եր Մաստոնի և Բերդի Փաստի հետազիրը , վորով նրանք հաղորդում եյին , թե արկը յերեացել ե վիթխարի դիտակի միջոցով : Հեռագրում ասված եր նույնակես , վոր արկը լուսնի ձգողական ուժից բռնված , արեգակնային սխատեմում այժմ յերկրորդական արբանյակի դեր եր կատարում :

Յեզ դրանից Հետո հանկարծ դալու եր թեմսքերին Հետապիր:

թնդանոթային ակումբը իսկույն յերկու մասի բաժանվեց : Մի մասը պնդում եր, թե արևն ընկել ե ովկիանոսը, նշանակում է ուղևորները այսպես թե այնպես վերադարձել ելին . մյուս մասը պնդում եր, թե կապիտան Բլեմսբերին սխալվում է, թե ընկնող մարմինը մի բռվագ ե, թափառող մի գունդ, վորը անկաման ժամանակ ջարդել եր կծրվետի առաջամասը : Կասկած չկար, վոր կորցվետի սպաներն ու կապիտանը կարող ելին սխալված լինել, վորովհետեւ ընկնող մարմինն այնքան արագ եր թըռչում, վոր ճաղթիտ դիտողություն անելլ դժվար եր :

Սակայն մի բան խոսում եր նրանց ողբին, այլ այն և,  
վոր յեթե արկն ընկել եր Յերկրի վրա, հենց այդ հյուսիսային  
լայնության 27°-ի վրա ընկած պիտի լիներ և հաշվի առնելով  
անցած ժամանակին ու Յերկրի՝ իր առանցքի չուրջը պառարտ  
դայու, առողջութեա— արևմտյան յերկարության 420-ի մոտիկ:

Համենայն դեպս, Թնդանոթային ակումբում, միաձայն վկարութեացին, վոր Բլեմսբերի-յեղայրը, Բիլսբին և Ելֆիստոնը անմիջապես պետք է մեկնեն Սան-Ֆրանցիսկօն, վորպեսզի բոլոր անհրաժեշտ միջացները ձեռք առնեն արկը ովկիանոսի խորքից դուրս հանելու համար:

Այդ նվիրված մարդիկը առանց մի բոպե ժամանակ կորցնուի անապարհ ընկան։ Յերկաթուղին նրանց խսկույն տարավ

Սեն-Լուի, վորոտեղից նրանք ճանապարհը շարումակեցին դէմֆ-ժանով:

Գրեթե նույն բողեյին, յերբ նավատորմի քարտուլարը, թնդանոթային ակումբի փոխնախագահն ու Կեմբրիջի դիտարանի դիրեկտորի տեղակալը կարդում եյին Սան-Ֆրանցիսկօյի ստացված հեռադիրը, հարգարժան Մաստոնը չափազանց մեծ հուզման մեջ երև և քիչ եր մնում նրա կյանքը վտանգվեր:

Ինչպես հայտնի յէ, ակումբի քարտուլարը արկի թուչելուց անմիջապես հետո մեկնեց Ազգառաժուտ լեռների դիտարանը: Նրան ուղեկցում եր Կեմբրիջի դիտարանի դիրեկտոր Բելֆաստը:

Տեղ հասնելով, յերկու բարեկամները մի կերպ տեղակորպեցին ու այլևս չհեռացան իրենց վիթխարի հեռադիտակից:

Ընթերցողը հիշում է, վոր հսկայական խողովակն այնպես եր կազմված, վոր նրա մեջ արևել ճառադայթները միայն մի արտացոլում եյին առաջացնում, այդ պատճառով ել պատկերներն այնտեղ ամելի հստակ եյին, քան ուրիշ սխտեմի հեռադիտակներում: Հեռադիտակի այդ կազմի հետևանքով Մաստոնը ու Բելֆաստը դիտման ժամանակ պետք ե դոնվեյին հեռադիտակի վերելի և վոչ թե ներքել մասում: Նրանք այնտեղ բարձրացան պտուտակածե մի սանդուխով: Նրանց ներքեռում բացվում եր մետաղե մի հոր, վորի հատակում, իննուն մետր խորությամբ դոնվում եր մի հայելի:

Յերկու դիտանակամները ապրում եյին մի նեղ սրահակի վրա, անիծելով որվա լույսը, վորը թաղցնում եր լուսինը, անիծելով և ամպերը, վորոնք դիշերները համառորեն ծածկում եյին նրան:

Ի՞նչքան մեծ յեղալ նրանց ուրախությունը, յերբ վերջապես յերկար սպասելուց հետո, դեկտեմբերի 5-ի գիշերը, նրանք տեսան արկը, վոր նրանց բարեկամներին տանում եր տարածության մեջ: Այդ մեծ ուրախությանը հաջորդեց նույնքան մեծ հուսախարություն, յերբ հիմնվելով նախնական, վոչ լրիվ դիտողությունների վրա, նրանք հեռագրով ամեն կողմ հաղորդեցին, թե արկը լուսնի արբանյակն ե դարձել և նրա շուրջը պըտոյտ և դարիս անփոփոխ որբիտով:

Այդ բոպեյից արկն այլևս չերևաց: մի բան, վոր հեշտ եր

բացատրել, քանի վոր նա անցել եր լուսնի սկավառակի հետեւ:

Բայց յերբ արկը, վորը կրկին պետք ե յերեար տեսաների սկավառակի վրա, չայտնվեց, դյուրաբորբոք Մաստոնն ու նըրանից վոչ նվազ անհամբեր Բելֆաստը յեռում ելին անհամբերությունից: Այդ հողի վրա նրանց մեջ անլեռջ վեճ եր ծարությունից: Այդ հողի վրա նրանց մեջ անլեռջ վեճ եր ծարությունից: Այդ հողի վրա նրանց մեջ անլեռջ վեճ եր ծարությունից: Այդ հողի վրա նրանց մեջ անլեռջ վեճ եր ծարությունից:

— Արկն ե դա, — ասում եր Մաստոնը:

— Վո՛չ, — պատասխանում եր Բելֆաստը, — Լուսնի լուսերից պոկված ձյան հյուսն ե:

— Լա՛վ, վաղը կտեսնենք:

— Վո՛չ, այլևս նրան չենք տեսնի. նա կորավ տարածության մեջ:

— Կտեսնենք:

— Վո՞չ:

Այն բոպեյին, յերբ նմանորինակ բացականչությունները թափում եյին կարկտի նման, հարդարժան Բելֆաստին լուրջ վտանգ եր սպասնում:


Այդպիսի կյանքն արդեն անտառնելի յեր դառնում թե՛ մեկի թե՛ մյուսի համար, սակայն մի անսպասելի դեպք դադարեց-րեց բոլոր վեճերը:

Դեկտեմբերի 14-ի լույս 15-ի գիշերը յերկու անհաշտ բարեկամները դիտում եյին լուսնի սկավառակը: Մաստոնը իր սովորության համաձայն հարձակվում ե Բելֆաստի վրա, վորն հերթին սկսում եր տաքանալ: Թնդանոթային ակումբի քարտությունը հազարերորդ անգամ լինելով պնդում եր, թե տեսնում ե արկը և նույնիսկ լուսամուտներից մեկում յերեսում ե Միշել Արդանի դեմքը: Վիճաբանության տաք ժամանակ անձեռ դիտական թափահարում եր յերկաթե ճանկը, որ ձեռքի տեղ եր ծառայում, մի բան, վոր բավական վտանգավոր եր:

Հանկարծ սրահակի վրա յերեաց Բելֆաստի սպասավորը՝ գիշերվա ժամը 10-ը կլիներ — և մի հեռադիր հանձնեց նրան: Հեռադիրը «Սուկեհաննայի» նավապետից եր:

Բելֆաստը հեռադիրը բաց արեց, կարդաց և մի ձիչ արձակեց:

— Ի՞նչ կա, — հարցրեց Մաստոնը:



Մաստոնն ընկալի հեռադիտակի, խողովակի մեջ:

— Արկը:

— Ե՛, Հետո՞ :

— Ընկել և Յերկըի վրա:

Լսվեց մի յերկըորդ ձիչ, վոռնոցի նման:

ԲԵԼՓաստն խկույն շուռ յեկալ ու տեսալ, վոր իր դժբախոս չնկերը չափազանց թեքվելով մետաղն խոզովակի վրա, ընկել եր պիթխարի հեռադիտակի մեջ: Այդ մի անկում եր 90 մետր բարձրությունից: ԲԵԼՓաստը գլուխը կորցրեց, բայց բնազդորեն նետվեց դեպի ուժիկուրի բացվածքը:

Նա հանդիսա շունչ քաշեց-Մաստոնը կառչել եր իր մետաղե ճանկով և կախված մնացել եր հեռադիտակի ներքին հենակներից: Թնդանոթային ակումբի հարզարժան քարտուղարը սարսափելի աղաղակներ եր արձակում:

ԲԵԼՓաստը ողնություն կանչեց, ողնականներն խկույն հասն և մեծ դժվարությամբ դուրս բերին անզույշ Մաստոնին:

— Ի՞նչ կլիներ, յեթե հեռադիտակի հայելին կոտրելի, — հարցրեց Մաստոնը, բարձրանալով սրահակի վրա:

— Արժեքը կվճարելիք, — խառորեն պատասխանեց ԲԵԼՓաստը:

— Ուրեմն այդ անիծյալ արկն ընկել ե, — հարցրեց Մաստոնը:

— Խաղաղ ովկիանոսը:

— Գնա՞նք:

Քառորդ ժամ անց Մաստոնն ու ԲԵԼՓաստը իջնում ելին Ապառաժուտ լեռներից, խկ յերկու որ հետ նրանք, Թնդանոս-թային ակումբի իրենց պաշտոնակիցների հետ միստամանակ, Սահ-Ձբանցիսկո հասան, ճանապարհին հինգ ձի սատկեցնելուց հետո:

ԵլՓիստոնը, ԲԵԼմոբերի յեղբայրը, Բելսրին վաղեցին նը-րանց դժմակորելու:

— Ի՞նչ պետք ե անել, — հարցրին նրանք:

— Արկը դուրս բերել, — պատասխանեց Մաստոնը, — Ելորքան կարելի յե շուտ:

## ՓՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

Այն տեղը,ուր արկը ընկղմվել եր ակիքների մեջ՝ ճշգրիտ կերպով հայտնի յեր: Պակասում ելին միայն անհրաժեշտ սարքավորումները նրան բռնելու և ովկիանոսի յերեսը հանելու համար: Պետք եր նախ հնարել այդ միջոցները և ապա պատրաստել:

Ամերիկայի ինժեներները ի հարկե կանդ չառան այդ մանր ինդրի առաջ: Բավական եր միայն չողին գործի դնել և վըստահ կարելի յեր ասել, վոր արկը, հակառակ իր ծանրության վորը սակայն պակասել եր ջրի մեջ—հեշտությամբ դուրս պիտի դար:

Սակայն բավական չեր արկը դուրս բերել: Պետք եր իսկույն ազատել ուղերներին: Վուչ վոք չեր կասկածում, վոր նրանք վողջ են:

— Նրանք անպայման վողջ են,— կրկնում եր Մաստոնը:— Մեր բարեկամները հմուտ մարդիկ են. նրանք ընկած չեն լինի տխմարների նման: Նրանք կենդանի յեն, բայց պետք ե շտապել: Սնունդն ու ջուրը ինձ չեն մտահոգում, նրանք բավականաչափ ունեն: Բայց ո՛ղ, ո՛ղ պետք ե նրանց: Շտապենք. չուպենք. չուպենք ե ժամանակ կորցնել:

Իսկապես չառ արագ ելին դործում: «Սուսկեհաննայի» մեքենաները միացվեցին վեր բարձրացնող շղթաների: Արկը չառ ավելի թեթև եր, քան այն անդրովկիանոսյան կարել, վորն Ատլանտյան ովկիանոսի հատակից դուրս եր հանված միւնույն

պայմաններում: Միակ դժվարությունն այն եր, վոր գլանակոնածե արկի պատերը բուրգովին վողորկ ելին, հետևապես դժվար ել նրան բանել:

Ինժեներ Մերչիզոնը անհապաղ Սան-Ֆրանցիսկո յեկամ պատրաստելու ավատումատ վիթխարի յերկաթե թաթերը, վորոնք մի անդամ արկը իրենց ճանկերի մեջ բռնելով այլևս բաց չեյին թողնի: Բացի այդ, Մերչիզոնը պատրաստել ավեց սկաֆանդրոներ, վորոնց միջոցով ջրասույզները պիտի կարողանային հետազոտել ջրի հատակը: Ինժեները կորվեալի վրա փոխադրեց ճընշված ողի կամերաներ: Դրանք իսկական սենյակներ ելին, լուսամուտների տեղ բացվածքներով: Ջրով լցվելիս նրանք կարող ելին իջնել մեծ խորության մեջ: Սան-Ֆրանցիսկոյում կառուցել ելին ընդդույլա մի պատնեշ, դրա համար ել այդ բոլոր սարքաւորումները պատրաստ ելին:

Սակայն, չնայած բոլոր սարքավորումների կատարելության, այդ գործով զբաղվողների հնարամտությանն ու փորձառությանը, գործի հաջողությունը կատկածելի յեր:

Մաստոնը պատրաստ եր հաղնել ջրասույզների հագուստը և անձամբ փորձել ճնշված ողի կամերաները, նա դիշեր-ցերեկ հանգիստ չեր տալիս բանվորներին:

Սակայն, վորքան ել շտապում ելին, վորքան ել ջանք ելին թափում, այնուամենայնիվ հինգ յերկար որեր—հինգ դարե՛ր—անցան, մինչև հնարավոր յեղալ ալարտել բոլոր անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները:

Եկերջապես վերամբարձ շղթաները, ողային կամերաները, ալլումատ թաթերը փոխադրվեցին կորվեալի վրա: Մաստոնը, ինժեներ Մերչիզոնն ու թնդանոթային ակումբի լիազորները տեղավորվեցին իրենց հատկացված խցիկներում: Մնում եր ճամբար ընկնել:

Դեկտեմբերի 21-ին, յերեկոյան ժամը ութին, կորվեալ բաց ծով դուրս յեկավ նազաստավոր յեղանակով: Իշում եր հյուսիսարեկան քամին ու բավական ցուրտ եր: Սան-Ֆրանցիսկոյի ամբողջ բնակչությունը հավաքվել եր նավահանգստի քարավիների վրա և հուզված դիտում եր մեկնողներին:

«Սուսկեհաննա»-ն սրարշավ առաջ ոլացավ: Հարկ չկա այս տեղ մեջ բերել այն խոսակցությունները, վոր տեղի ունեցան

չոփենավի վրա սպաների, նաև աստիճների և ուղեռների միջև։  
Եռաւակցում, վիճում եյին միայն մի նյութի մասին, հուղվում  
ելին միայն մի բանով։ Ի՞նչ վիճակի մեջ եյին այդ միջոցին  
Բարեկենն ու իր ընկերները։ Կենդանի՝ եյին, թե մեռած։ Ար-  
դյո՞ք ի վիճակի եյին ազատվելու համար մի վորեն հանդուղն  
փորձ կատարելու։

Դեկտեմբերի առավոտյան ժամը ութին կորվեալ պետք և  
հասներ արկածի վայրը։ Հարկ շեղավ սպասել կեսորին, վոր-  
ուկազի կարելի լիներ ստույգ տեղը վորոշել։ Այն լողակը, վո-  
րին կապվել եր պարանը, դեռևս չեր յերեռում։

Կեսորին, կապիտան Բլեմսբերին, իր սպաների ոգնու-  
թյամբ, վորոնք ստուդում եյին դիտումները, վորոշեց նավի  
աշխարհագրական դիրքը Թնդանոթային ակումբի պատղամա-  
գորների ներկայությամբ։ Մտատանջության մի ըովե յեր այդ։

Կորվեալ դտնվում եր ընդամենը մի քանի կիլոմետր այն-  
տեղից, ուր արկը սուզվել եր ալիքների մեջ դեպի արևմուտք։

Իսկույն շարժվեցին այդ ուղղությամբ։

Ժամը տասներկուսն անց քառասուն յոթ ըովեյին լողակը  
յերեաց։ Նա բոլորովին անմաս եր և համարյա տեղիցը չեր  
հեռացել։

— Վերջապես, — բացականչեց Մաստոնը։

— Սկսե՞նք, թե վոչ, — հարցրեց կապիտան Բլեմսբերին։

— Վոչ մի վայրկան չկորցնենք, — պատասխանեց Մաստո-  
նը։

Բոլոր միջոցները ձեռք եյին առնվել, վորակեսի կորվետն  
անշարժ մնար ըրի յերեսին։

Ամեն բանից առաջ պետք եր ճշգրիտ խմանալ, թե վո՞րտեղ  
եր դտնվում արկը։ Ողով լոցված ջրասույզ կամերաները ցած ի-  
ջեցրին։ Ծովի մակերևությոց վեց հազար մետր խորը և զգալի  
ճնշման տակ այդ առարտաները անվտանգ չեյին, վորովհետեւ  
նրանք յենթակա եյին պայմենու, վորի հետեանքը ահուի կի-  
ներ։

Մաստոնը, Բլեմսբերի յեղբայրը, ինժեներ Մերչիդոնը, չը-  
մտածելով այդ վտանգի մասին, տեղափորվեցին ընդուղյա կա-  
մերայում։ Կապիտանը բարձրացավ նավի կամրջակի վրա, հե-  
տեւիլու համար դործողության ընթացքին։ Կորվետի պտուտակն

անջատվեց, այլպիսով նավի մեքենաների ամբողջ ուժը կարող  
եր արագորեն ապարատները բարձրացնել նավի վրա։

Վայրեջին սկսվեց ցերեկվա ժամը մեկն անց քսան հինգ  
շուրեյին։ Կամերան, քաշված՝ ջրով լոցված ուղերժությունով,  
չքացալ ովկիանոսի խորության մեջ։

Այժմ չողենավի սպաների ու նավատիների հոգումը կըրկ-  
նապատկվեց։ Նրանք մտահոգված եյին թե՛ արկում բանտարկ-  
վածների և թե՛ ջրասույզ կամերայի բանտարկյալների մասին։  
Իսկ վերջիններս իրենց սպառնացող վտանգի մասին բոլորովին  
չեյին մտածում և կապած լուսամուտների ապակիներին, ու-  
շաղբությամբ դիտում եյին ջրի զանդվածները, վորոնց միջով  
իղնում եյին ովկիանոսի հատակը։

Վայրեջը շատ արագ կատարվեց։ Ժամը յերկուուր տասնու-  
յոթ րոպէ անց Մաստոնն ու իր ուղեկիցները հասան Խաղաղ  
ովկիանոսի հատակը։

Սակայն նրանք վոչինչ չտևամ, բայցի տմայի անապատից,  
վորին չեր կենդանացնում վոչ ծովային Փլորան, վոչ ել ծովա-  
յին ֆառւան։ Ուժեղ ուժիկառներ ունեցող լամպի լույսով  
նրանք կարողանում եյին տեսնել ջրի մուգ շերտերը բավական  
ընդարձակ տարածության վրա, սակայն արկը վոչ մի տեղ չեր  
ընդումում։

Անհնար են նկարագրել, թե այս հանդուգն ջրասույզները  
ինչպես եյին այրվում անհամբերությունից։

Նրանց կամերան ելեկտրական հաղորդակցությունն ուներ  
կորվետի հետ, նրանք պայմանական նշան տվեն, վորակեսի  
կորվետի հետ։ Նրանք սպառնական մեջ տվեն, վորակեսի  
«Սուսկեհաննա»-ն իրենց կամերան—վոր կախված եր ծովի հա-  
տակից մի քանի մետր բարձրությամբ—տանի մեկ մղոն ամփել  
հեռու։

Նրանք հետազոտեցին ստորջրյա ամբողջ հարթավայրը, ա-  
մեն բոպէ խարվելով տեսողական պատրանքներով։ մի բան,  
վոր նրանց սաստիկ հուսահատեցնում եր։ Սյստեմ՝ մի ժայռ,  
այնտեղ՝ մի բարձրություն նրանց աչքը արկի տեղ եր ընդու-  
նում, սակայն մոտ գնալով՝ տեսնում եյին, վոր սխալվել են։

— Հապա ո՞ւր են, ո՞ւր են նրանք, — բացականչում եր  
Մաստոնը։

Ցեղ ինեղ մարդը բարձրածայն կանչում եր նիկոլի, Բար-

բիկենի, Միշել Արդանի անունները, կարծես թե նրանք կարող եին լսել նրան այդ անթափանցելի ջրային զանդվածում:

Վորոնումն այդպիս շարունակվեց մինչև վոր կամերայում թթվածինը պակասեց: Զրասույզները ստիպված յեղան բարձրանալ ջրի յերեսը:

Վերեքը սկսվեց մոտավորապես յերեկոյան ժամը վեցին և վերջացավ կես դիշերի մոտ:

— Վաղը կվերսկսենք, — ասաց Մաստոնը, վորք դնելով նավի տախտակամածի վրա:

— Այո՛, վաղը, — պատասխանեց կապիտան Բլեմսբերին: Պետք է մի այլ տեղում վնասուել:

— Այո՛:

Մաստոնը դեռևս չեր կասկածում հաջողության մասին, սակայն նրա ընկերները ավելի սառնարյուն մտածելով, գիտակցում եյին, թե ինչպիսի դժվար գործ եյին ձեռնարկել: Այն, ինչ չեշտ եր թվում Սան-Ֆրանցիսկոյում, այստեղ — բայց ովեհանոսի վրա — դրեթե անհնար եր թվում:

Հաջորդ որը, դեկտեմբերի 24-ին, չնայած նախորդ որվա հոգնության, նորից սկսեցին վորոնումները: Կորվետը ավելի առաջացավ դեպի արևմուտք և ողով լցված կամերան միւնույն հետազոտիչներին նորից իջեցրեց ովկիանոսի խորքը:

Ամբողջ որն անցավ անողուտ վորոնումներով: Ծովի հատակը ամայի յեր:

Նույնպիսի ապարդյուն որեր յեղան նաև ամսի 25-ը և 26-ը:

Կարելի յեր հուսահատվել: Դժբախտ ուղևորներն արդեն քանվեց որ բանտարկված եյին արկում... ի՞նչ դրության մեջ եյին նրանք: Գուցե արդեն չնչահեղձ եյին լինում:

Դեկտեմբերի 28-ին, յերկու որվա վորոնումներից հետո բոլոր հույսերը կորած եյին: Այդ արկը մի փոքրիկ մասնիկ եր ծովի անհունության մեջ: Պետք եր հրաժարվել ապարդյուն վորոնումներից:

Սակայն Մաստոնը հետ դառնալու մասին լսել անդամ չեր ուղում: Նա չեր կամենում տեղից շարժվել, առանց իր բարեկամների գերեղմանը դանելու:

Բայց կապիտան Բլեմսբերին չեր կարող յերկար մնալ և

հակառակ հարգարժան քարտուղարի բողոքներին, նա կարգադրեց պատրաստ լինել վերադառնալու համար:

Դեկտեմբերի 29-ին, առավոտյան ժամը իննին կորվետը նորից ճամբար ընկալ դեպի Սան-Ֆրանցիսկոյի ծովածոցը:

Սուալույան ժամը տասն եր: «Սուկեհաննա»-ն չատ արագ չեր գնում, կարծես չուղենալով այդ ճախորդ տեղից հեռանալ: Հանկարծ ծովը դիտող նավաստին բացականչեց.

— Մի լողակ, քամու տակ, մեր ուղղությամբ:

Շողենավի վրա գտնվողների հայցքն ուղղվեց դեպի ցույց տրված կողմը: Դիտակների միջոցով տեսան, վոր նկատված առարկան խապահ նման եր լողակի, վորը դնում են ծովախոր շերի կամ գետերի անցքերում:

Սակայն, ի՞նչ անբացատրելի տարորինակություն, այդ լողակի դադաթին մի դրոշակ եր ծածանվում: Լողակը փայլում արեկի ճառագայթների տակ, կարծես նրա պատերը արծաթից լինելին:

Կապիտան Բլեմսբերին, Մաստոնը, թնդանոթային ակումբի պատվիրակները բարձրացել եյին նավի վերնահարկը և ուշադրությամբ դիտում եյին ալիքների վրա տատանվող այդ առարկան:

Կորվետը հետզհետե մոտենում եր նրան:

Մի սարսուռ անցավ բոլոր ներկաների մարմնով:

Դրոշակն ամերիկյան եր:

Այդ ժամանակ ի՞նչ վոր մոնչյուն լսվեց և հարգարժան Մաստոնը հանկարծ կոճղի նման գետին թալալվեց: Մոռանալով, վոր իր աջ ձեռքի տեղ յերկաթե մի ճանկ եր, նա ի՞նք իր ճակատին մի սոսկալի հարված եր տվել:

Բոլորը նրա մոտ վազեցին և բարձրացնելով ուշի բերին:

Ի՞նչ յեղան նրա առաջին խոսքերը:


— Ա՛չ, ի՞նչ տիմարներ, ի՞նչ ապուչներ ենք մենք:

— Բայց ի՞նչ կա, ի՞նչ պատահեց, — բացականչեցին չորս կողմից:

— Ի՞նչ կա՞...

— Բացատրեց վերջապես:

— Հասկացե՞ք, հիմարի գլուխներ, վոր արկի քաշը ընդանը ութ տոնն ե, — դոռաց ահուկի ճայնով քարտուղարը:



Մակույկը քիչ մոտեցավ արկին

— Հետո՞ ինչ:

— Հետո այս, վոր նա դուքս և մզում քսան ութ տոնն ջուր, և հետեւաբար նա պետք է մնա զրի յերեսին:

Պետք եր լսել, թե լնչպիսի չեշտ դրեց հարգելի քարտուղարը այդ «մնա» բառի վրա:

Հարգարժան քարտուղարը միանդամայն իրավացի յեր: Շուգենավիր վրա գտնվող այդ բոլոր գիտնականները մոռացել եյին այն հիմնական որենքը, վորի համաձայն արկը, անկման հետեւանքով ովկիանոսի հատակն ընկղմվելուց հետո, պետք է նորից բարձրանար նրա յերեսը:

Այդպիսով արկն այժմ հանդիսաւ լողում եր ծովի ալիքների վրա:

Իսկույն նավակներ իջեցրին ծովը. նրանցից մեկում նստեցին Մաստոնն ու իր բարեկամները:

Հուզումը հասել եր ծայրահեղ աստիճանի: Բոլորի սրտերը բարախում եյին, յերբ նավակները մոտենում եյին արկին: Խոր լոռություն տիրեց: Արկի լուսամուտներից մեկը բաց եր: Ապակիների կտորտանքները, վորոնք մնացել եյին չոջանակի մեջ, ցույց եյին տալիս, վոր լուսամուտը ջարդվել եր:

Այժմ այդ լուսամուտը ծովի մակերեսույթից մեկուկես մետր բարձր եր:

Այն մակույկը, վորի մեջ նստած եր Մաստոնը, քեփ մոտեցավ արկին: Մաստոնը նետվեց դեպի ջարդված լուսամուտը...

Հենց նույն բոպեյին լովեց Արդանի ուրախ և զրնկուն ձայնը հաւաքականորեն աղաղակում եր.

— Սպիտակ, սպիտակ, Բարբիկեն, դուք տարվեցիք:  
Բարբիկենը, Աբդանն ու Նիկոլը դոմինո եյին խաղում:

## ՎԵՐՋ

Ընթերցողը հիշում է, թե հասարակությունը ինչպիսի հուզմունքով և համակրանքով ճամբու յեր դրել յերեք ուղևորներին գեղի Լուսին թռչելիս, ուստի և կարող է պատկերացնել, թե ինչպիսի հուզմունքով ու համակրանքով վողջունեց նրանց վերադարձը:

Բոլորի ցանկությունն եր տեսնել ու լսել այն մարդկանց, վորոնք յեղել եյին անծանոթ աշխարհում:

Բարբիկենը, Արդանն ու Նիկոլը, Թնդանոթային ակումբի անդամների ուղեկցությամբ անմիջապես մեկնեցին Բալտիմոր, վորտեղ նրանց ընդունեցին աննկարագրելի խանդավառությամբ:

Բարբիկենի ուղերության հուշերը իսկույն գնվեցին չտեսնելիքած բարձր գնով և հանձնվեցին տպագրության:

Նրանց վերադարձից յերեք որ հետո արդեն նրանց ճամբորդության բոլոր մանրամասնությունները հայտնի եյին ամենքին:

Բարբիկենի և իր ուղեկիցների կատարած դիտողությունները հնարավորություն տվին ստուգելու այն բոլոր թեսրիաները, վորոնք գոյություն ունեյին Յերկրի արբանյակի նկատմամբ: Այժմ արդեն հայտնի յեր, թե ինչպիսի յենթադրություններ պետք եր դեն դցել, ինչպիսիներն ընդունել այդ լուսատույի, նրա ծագման և բնակիլության նկատմամբ: Դժվար եր վիճել ոյնպիսի դիտնականների հետ, վորոնք «Ճիխո» լեռը տեսել եյին քառասուն կիլոմետր տարածությունից. դժվար եր առարկել նրանց, վորոնց հայացքը թափանցել եր «Պլատոն» կրկեսի խորխորատները... Նրանք վորոշ խմասով իրավունք ունեյին իրենց

որենքները թելադրելու այն դիտությանը, վորը գրագվում եր լուսնային աշխարհով: Նրանք իրավունք ունեյին ասելու յեթե նույնիսկ Լուսինը մի ժամանակ բնակված է յեղել, բայց ներկայումս Լուսինը անբնակելի յե:

Թնդանոթային ակումբը իր հոչակալուր անդամի և նրա ընկերների վերադարձը տոնելու համար վորոշեց մի խնջույք սարքել, բայց այնպիսի մի խնջույք, վոր արժանի լիներ թե՛ այդ խիզախ ուղեկորներին և թե՛ ամերիկյան ժողովրդին, այնպիսի մի խնջույք, վորին կարողանային մասնակցել բոլոր ամերիկացիները:

Յերկաթուղային բոլոր կայարաններում, վորոնք գարդարկած եյին նույնանման դրոշակներով, պատրաստվեցին խնջույքի սեղաններ: Վորոշված ժամին, ելեկտրական ժամացույցների միջոցով, վորոնք վայրկաններն եյին խփում, Միացյալ Նահանգների բնակչությունը հրավիրում եր տեղ բոնել այդ ճոխ սեղանների շուրջը:

Չորս որ շարունակ, հունվարի 5-ից մինչև 9-ը, բոլոր կը նայցները կանգ առան և բոլոր զծերը ազատ մնացին այնպես, ինչպես լինում ե կիրակի որերը Անգլիայում և Ամերիկայում:

Միայն մի շողեքարչ, վորին կցված եր պատվո մի վագոն, իրավունք ուներ շրջել Միացյալ Նահանգների յերկաթուղիներով:

Այդ շողեքարչում, բացի մեքենավարից ու հնոցապանից, հասուկ չնորհով, իրավունք եր արված տեղ գրավել նաև թշնդանոթային ակումբի հարգարժան քարտուղար Մաստոնին:

Պատվո վագոնը հատկացված եր Թնդանոթային ակումբի նախագահ Բարբիկենին, կապիտան Նիկոլին և Մէշել Արդանին:

Մեքենավարի սուլիչով գնացքը հեռացավ Բալտիմորի կայարանից այնպիսի խանդավառ բացականչությունների տակ, վորոնք հասուկ են ամերիկացիներին:

Տոնի հերոսները թռչում եյին մի քաղաքից մյուսը ժամը ութսուն մղոն արագությամբ, իրենց ճանապարհի վրա հանդիպելով խնջույքի սեղանների շուրջը հավաքված ամբողջ բնակչությանը, վոր նրանց դիմավորում ու չնորհավորում եր համակրանքի և հիացմունքի ուրախ բացականչություններով:

Այդպիսով, նրանք շրջեցին Միացյալ Նահանգների արևելյան

մասը՝ Պենսելվանիա, Կոննեկտիկուտ, Մասաչուզետ, Վերմոնտ, Մեն և Նոր-Բրաунինգթոն նահանգները, Հյուսիսը և արևմուտքը անցան Նյու-Յորքի, Ուոյնոյի, Միչիգանի և Վիسկոնսինի վրա-յով. դեպի հարավ դնացին և անցան Իլլինոյսը, Միսսուրին, Արկանզասը, Տեխասը և Լուիզիանան. յեղան հարավ-արեեւէր, անցան Ալաբաման ու Ֆլորիդան, Գեորգիան և յերկու Կարոլի-նաները, կրկին վեր բարձրացան և անցան Տեննեսին, Կենտուկ-կին, Վիրջինիան, Ինդիանան, ապա Վաշինգտոնից անցնելով, վերադարձան Բարտիմոր:

Ամբողջ չորս որ Միացյալ Նահանգները, կարելի յե առել,  
նրանց վողջունում եր անվերջ «ուռուա»-ներով:

Ապոթեոզն արժանի յեր այդ յերեք հերոսներին, վորոնց հին դարերում առասպելն անշուշտ աստվածների տեղ կը ասեր:

Ի՞նչ գործնական արդյունք ունեցավ դեպի Լուսին կատարված այդ ուղևորության փորձը։ Միթե հնարավոր ե յերբեք կանոնավոր հաղորդակցություն հաստատել Լուսնի հետ։ Արդյո՞ք կարելի կլինի նախադնացության հատուկ մի տեսակ հիմնել արեգակնային աշխարհի հետ հաղորդակցելու համար։ Հնարավո՞ր ե մի մոլորակից թռչել մյուսը—Յուլիսերից՝ Մերկուր, մի աստղից՝ մյուսը—Բևեռայինից դեպի Սիրոս։ Փոխադրության Ի՞նչպիսի միջոց հնարավորություն կտա այցելու բոլոր այն լուսատուները, վորոնք ցըլած են յերկնակամարի վրա։

Դժվար է պատասխանել այս հարցին, սակայն աչքի առաջ ունենալով անդլո-սաքսոն ցեղի հնարագիտությունն ու ձեռներեցությունը, վոչ վոք չե զարմանա, յեթե ամերիկացիները փորձեն ուստաղութել Բարբեկենի փորձի արդյունքները:

Մեր ուղեսորների վերադարձից վորոշ ժամանակ անց լույս  
տեսան «Միջազգային Հաղորդակցության ազգային ընկերու-  
թյան» հայտարարությունները—մի ընկերություն, վոր ուներ  
հարյուր միլիոն դոլարի կապիտալ և բաց երթողել հարյուր  
հազար ակցիա: Ընկերության նախագահն եր Բարբիկենը, փոխ  
նախագահ՝ Նիկոլ, Կարչության քարտուղար՝ Մաստոնը,  
իսկ հաղորդակցության սպասարկման ղերեկտոր՝ Միշել Ար-  
դանը:

Միացյալ Նահանգների Հասարակությունը մեծ համակրան-

քով վերաբերվեց այդ ձեռնարկին, բայց ամեն ինչ նախատեսելով, այսինքն նկատի ունենալով՝ անհաջողության հնարավորությունը և ընկերության սնանկացումը, գործնական և կանխատես ամերիկացիները նախոպոք ընտրեցին լիկվիդացիոն միհանձնաժողով, դատավոր կոմիսարի և դորժավարի պահպանությամբ;

ԴԵՊԻ ԼՈՒՍԻՆ ՑԱՆԿՊԱՐՀ ՈՐԴԵԼՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԸ

## 1. Ժյուլ Վեննի նախորդները

Այս վեպի լույս տեսնելու ժամանակից անցել ե արդեն մոտ  
70 տարի, բայց և այնպես նա մնում է վորսկես միջմոլորակային  
թոփչքի գաղափարները հրապուրիչ գիտական-ֆանտաստիկ վե-  
պի ձեռով մշակելու մի չգերազանցված նմուշ։ Ասում են,  
վոր գաղափարների աշխարհում, ինչպես նաև կենդանի եյակների  
աշխարհում, ինքնակամ գոյացում չի լինում, այլ կա միայն ե-  
վոլուցիա։ նոր գաղափարը միշտ զարգանում է առաջուց հայտ-  
նըված ուրիշ գաղափարներից։ Յեթե այդ կիրառելի յե գրական  
յերկերի գաղափարների նկատմամբ ընդհանրապես, ապա Ժյուլ  
Վեննի «Յերկրից գեպի լուսին» վեպը, անկասկած, բացա-  
ռություն է կազմում։ Նրան նախորդող յերկերի մեջ մենք չենք  
դանում մի յերկ, վորի գաղափարը թեկուղ հեռավոր նմանու-  
թյուն ունենա այս վեպի հիմնական մտքի հետ։

Դեպի Լուսին ճանապարհորդելու ֆանտաստիկ նկարագրությունները, վորոնք դրված են Ժյուլ Վեռնից առաջ, կազմված են բոլորովին վոչ այն ռեալ, գիտական վորով, վորով այնքան վորոշակի տարբերվում են «Յերկրից դեպի Լուսին» մետա:

Մի փոքր կանգ առնենք Ժյուլ Վեռնի այդ նախորդների վրա, վորպեսզի համոզվենք, թե վորքան մեծ և տարբերությունը Ժյուլ Վեռնի բարեկամունքներից—դիտական ձեր և ուրիշ շատ հեղինակների անապատասխանաւությամբ միջներ:

Ժամանակի տեսակետից առաջին երկը, վորը խոսում և  
նման նյութի մասին, յերկան և գալիս մեր թվականության  
մատ II դարում և պատկանում է հույն զբող լուկիան Ստեփ-

սատցուն։ Իր յերգիծական գլուխածքներից մեկում նա պատմում է, վոր ծովային նախարկության ժամանակ մըրբիկը հանկարծ իր նավի վրա ընկալ և նրան քաշեց-տարապի յերեք հազար ստաղեա բարձրության վրա։ Այդ մոմենտից սկսած՝ նավը սլանում եր յերկնքի միջով և յոթ որ թափառելուց հետո հասակ կլոր և վայլուն մի կղզու դա հենց կուտինն եր... Ինչպես տեսնում ենք, այստեղ չկա գիտական ճշմարտանմանության ստվերն ան- դամ։

Մեր ժամանակի ընթերցողի համար նույնքան անհեթեթ և  
նաև խպանական գրող Դոմինիկ Գոռզալեսի դեպի Լուսին ճա-  
նապարհորդելու յեղանակը («Լուսնի աշխարհ» 1648թ.): Նա  
պատմում է, վոր ինքը մեր արքանյակին հասել ե (և հետ և  
վերադարձել) վայրենի կարասիների միջոցով. ճանապարհորդու-  
թյունը տեսել ե 12 որ:

Դրանից վոչ շատ առաջ լույս տեսած «Խատողություններ առ  
աշխարհի և այլ ժողորակների մասին» անդըլքեն գրքի (1640 թ.)  
հեղինակ յեպիսկոպոս Վիլկինսը նույնպես խորը չի մտածում  
պեղի լուսին թուչելու յեղանակի մասին։ «Հարկավոր և — ա-  
սում և նա, — կամ սեփական թևեր պատրաստել և ընդորինակել  
թուզունների թոփչքը, կամ վեր բարձրանալ հսկա թուչունների  
կոնակին նստած, վորոնք, ինչպես պատմում են, զտնվում են  
Մադալասքարում (մոռա?) կամ, վերջապես, կառուցել թուզող  
կառք, նման այն թուզող փայտե աղասինուն, վոր մի ժամանակ  
պատրաստել եր Արքիլուեսը<sup>1)</sup>։

Ճյուղ Վեռնի քանչքարավոր հայրենակից, նշանավոր յարդիկ ծաբան Սիրանո Դը-Բէրժերակը իր «Ճանապարհորդություն զեպի Լուսին» գրքում (1649) կիրառել է հետեւյալ յեղանակը. իր շուրջը կապել ե բաղմաթիվ սրվակներ, վորոնց արեգակն այնքան ուժեղ ե տաքացրել, վոր զբանք գեպի իրեն և ձգել ճանապարհորդեղ հետ միասին, ճիշտ այնպես, ինչպես արեգակի ճառագայթի ները գեպի իրենց են ձգում ամպերը (?). Նա նույնիսկ չափեց ավելի արագ և թռել և ուղևորվել ե վոչ թե դեպի Լուսին. այլի գեպի Արեգակ. հարկ ե լինում ջարդելու մի քանի սրվակ, մյուլ գեպի Արեգակ. հարկ ե լինում ջարդելու մի քանի սրվակ, վորապեսդի չափակորպի թռիչքի սրընթացությունը...»

Ահավասիկ դեպի Լուսին թռչելու մի ուժից յեղանակ

<sup>1)</sup> Մեր թվականությունից առաջ IV դարի հույն մաթեմատիկոս

վոր նկարագրել ե Սիբանոն։ «Յես, — կը ում և նա, — հրամայեցի պատրաստել յերկաթե մի թեթև սայլակ։ մտնելով նրա մեջ և տեղադրովելով, յես սկսեցի դեպի վերև նետել մի մազնիսական գնդակ։ Յերկաթե սայլակն անմիջապես վեր բարձրացավ։ Իսկ յերբ յես մոտեցա այն տեղին, դեպի ուր ճգում եր ինձ գնդակը, յես նորից այն վերև նետեցի։ Գնդակի հաճախակի վերնետումերից և սայլակի բարձրացումներից հետո յես մոտեցա այն վայրին, վորտեղից սկսվեց իմ անկումը լուսնի վը բա . . .»։

Դժվար չե ցույց տալ նման յեղանակի Փիզիկական անհնարինությունը; Մեծ ջանքով մաղնիսական դնդակը վեր նետելով (սայլակի նկատմամբ յեղած ձգողությունը հաղթահարելու համար), ուղևորը անխուսափելիորեն դեպի ցած ե հրում սայլակը: Իսկ յերբ այնուհետև գումարը և սայլակը նորից իրար են մոտենում փոխադարձ ձգողության հետևանքով, նրանք միայն վերապառնում են իրենց սկզբնական տեղերը: Պարզ է, վոր այս յեղանակով վերև բարձրանալն անկարելի յէ:

Վորքա՞ն հեռու յեն այս անհիմն յեղազանքներն ու հնարքներն այն տեխնիկական հստակ դաշտափարից, վորը Ժյուլ Վեննի վեպի հիմքն ե կազմում:

Միակ հեղինակը, վոր կարողացել ե իսկապես ազդել Ժյուլ  
Վեռնի վրա, յեղել ե անցյալ գարի առաջին կեսի ամերիկացի  
տաղանդավոր գրող Եգալար Պոն: Մենք դիտենք, վոր Փրանսացի  
վիպասանը յեղել ե իր ամերիկյան յեղբայրակցի տաղանդի ջերմ  
յերկրագուռ և իր յերկերից մեկը նույնիսկ նրան ե նվիրել:  
Ժյուլ Վեռնի «Սառցե սփինք» վերնագրով վեպը վոչ այլ ինչ  
է, յեթե վոչ ե. Պոի «Արտուր Պիմի արկածները» վիպակի շա-  
րունակությունը: XIX դարի յերեսնական թվականներին լույս  
տեսավ ե. Պոի «Հանս Պֆաալի անորինակ արկածները» վերնագ-  
րով գիտա-ֆանտաստիկական հետաքրքիր պատմվածքը, վորտեղ  
նկարագրվում ե ճանապարհորդությունը դեպի Լուսին: Սակայն  
այս յերկը կարող եր ազդել Ժյուլ Վեռնի միայն պատմելու ձե-  
մի, այլ վոչ թե նրա վեպի գաղափարի վրա, մի գաղափար,  
վորը միանգամայն ինքնուրույն ե: Արդարեւ, դեպի Լուսին  
թուչելու համար ամերիկացի գրողի հնարած յեղանակը շատ չի  
տարրերվում նրա նախորդների միամիտ յերազանքներից. այդ

մի պունդ ե՝ լցված այնպիսի դազով, «վորի խտությունը մոտ  
37,4 անդամ ավելի պակաս ե, քան ջրածնի խտությունը»։  
Դադի ներքեւ մասում տեղի ունեցող վառողի ուժեղ պայմանը  
ուղ բարձրացրեց ապարատը, վորից հետո վերջինս սկսեց սրբն-  
թաց բարձրանալ միշտ դեպի վեր, վորովհետեւ, հեղինակի ասե-  
լով, նուրացած մթնոլորտն անհամեմատ ավելի հեռուն ե տա-  
րածվում տիեզերական տարածության մեջ, քան յենթադրում  
են գիտնականները։ Վերջապես, Լուսնի ձգողությունը հաղթեց  
Յերկը ձգողությանը և չուտով դունդն ընկալ մեր արբանյակի  
մակերեսութիւնի վրա։

Այստեղ արգեն մենք ամելի զգույշ վերաբերությունք ունենալու դեպքում դեպքի դիտական փաստերը և բնության որենքները, քան Եղիշեցի նախորդների մոտ։ Հեղինակը դիտե, վոր դատարկության մեջ ողապարհելը չի կարող բարձրանալ. ուստի (հակառակ ասողաբարչիների պնդումներին) Ե. Պոն հայտարարում է, վոր տիեզերական տարածությունը լցված է մի նոսր դազով, իսկ ուղապարհելը լցնելու համար հնարում է վերին աստիճանի մի թեթև դադ (ջրածնից 37 անգամ թեթե), վորը, սակայն, դություն չունի և չի կապող ունենալ։

2. Կարելի՞ յե արդյոք թնդանորառումը դեպի Լուսին հետեւ

Այժմ դիմենք Ժյուլ Վեռնի վեպին։ Այն տարին, 1865-րդ տարին, յերբ լույս տեսավ «Յերկրից դեպի Լուսին» վեպի առաջին մասը, առանձնապես բեղմնակոր տարի յերել Փան-տաստիկ ճանապարհորդությունների համար գեպի մոլորակները։ Այդ տարիվա վետրվար ամսին Փարիզում լույս տեսավ Քրամախացի Հռչակավոր զորդ Ալեքսանդր Դյումայի (Հոր) «Ճա-նապարհորդությունը դեպի Լուսին» վերնադրով գիրքը, վոր-


Դունակությամբ։ Մայիսին հրատարակվեց «Մերկուրի բնակչը» վերնագրով Փանոսաստիկ վեոլը—մի յերկ, վորը դիտական տեսակետից նախորդներից ավելի լավ է։

Տարվելով գրական ընդհանուր հոսանքով, Ժյուլ Վեռնը զբաղվեց հենց նույն թեմայով և ապագա սերնդին վորապես ժառանգություն թողեց մի այնպիսի հրաշալի յերկ, վորապիսին չի ունեցել վոչ միայն Ժյուլ Վեռնի նախորդներից վորեւ մեկը, այլ և չեն ունեցել նրա հետառրդիները հետագա գրականության մեջ; Նրա հաջողակ հետեւրդները — գերմանացի վիպասան Կուրտ Լասվիցը և անդլիացի Հերբերտ Ուելլսը — միջմոլորակացին թուիչքների համար ոգտվում են զուտ ֆանտաստիկ միջուցվ՝ ձգողության չենթարկվող (Լասվից) կամ նրանից պաշտպանվող նյութով (Ուելլս): Ժյուլ Վեռնն իր ֆանտաստիկ վեպն ստեղծել ե, եյալես, առանց դիմելու ֆանտաստիկ միջոցների, առանց հնարելու վոչ մի այնպիսի բան, վորը գոյություն չունի բնության մեջ կամ տեխնիկայի արսենալում: Նա միայն վարպետորեն համակցել ե գիտության և տեխնիկային ծանոթ միջոցները: Նրա սրամիտ հնարքները զարմացնում են միաժամանակ և իրենց անսպասելիությամբ, և իրենց ճշմարտանմանությամբ: Ահա այս և Ժյուլ Վեռնի արմատական տարբերությունը նրա նախորդներից և նմանվողներից և այսուղ ենրա ստեղծագործության հսկայական կրթիչներ, անսակութային:

Ժյուլ Վեռնի թեմե ու դիմարթ գրելաձեւ կարող ե առաջացնել այն անհիմն կասկածը, վոր իբր թե նա անփույթ ե վերաբերվել իր յերկերի գիտական կողմին։ Սակայն, այդ այլպես չե։ «Յերկրից դեպի Լուսին» վեպի գիտական հիմունքը շատ խնամքով է մտածված։ Այս վեպը լիովին կանգնած ե յեղել իր ժամանակի աստղաբաշխական գիտելիքների մակարդակի վրա։ Հեղինակը վոչ մի հանցանք չունի, վոր 70 տարվա ընթացքում դիտությունն առաջ ե գնացել և վեպի մեջ ցրված գիտական տեղեկություններից շատերը ներկարւմ հնագեր են։

ժամերը սերկայում և հացել են։  
Ժյուլ Վեռնի այս վեպի հիմնական զաղափարն այն է, վոր  
գեպի կուսին ե ուղարկվում մի վիթխարի թնդանոթառումք։  
Մինչև այդ վոչ վոք նման նախաղիծ չի առաջադրել գրականու-  
թյան մեջ։— մեզ չի հաջողվել գոնե գրա վերաբերյալ վորեն  
ցուցում գտնել, — այնպես վոր գեպի կուսին թնդանոթառումք

ուղարկելու դադարիարն ամբողջովին ինքնուրույն է ժյուլ  
Վեռնի մոտ։ Այդ նախագիծն այն աստիճան ուսանելի յէ, վորն  
ավելի մարդամասն քննարկության և արժանի։ Յեզ, ամենից  
առաջ, հետաքրքր է պարզել, թէ ի՞նչն է նրանում իրազործե-  
լի և ի՞նչը՝ բոլորովին անիրազործելի։



Նկար Ա 1


Թհղանոթի՝ չափավոր արագությամբ արձակած ոռումբը թռչում և ձ կամ  
ուղիով և ընկնում Ցերկրի վրա։ Առաջին վայրկյանին արագությունն  
ութ կիլոմետր լինելու դեպքում ոռումբը թռչում և յերկրային մակերևույթի  
զուգահեռական և ուղիով և դեպի թնդանոթն և վերադառնում մյուս կողմից։  
Արագությունն ել ալիքի մեծ լինելու դեպքում ոռումբը թռչում և ուղիով  
և ընդմիշտ հեռանում և Ցերկրից։

Կարելի՞ յէ արդյոք այնքան հեռու նետել առարկան, և  
նա յերեք հետ չվերադառնա: Առաջին հայացքից այս բան  
անհնարին ե թվում. մենք շարունակ տեսնում ենք, վոր ինչ-  
պիսի արագությամբ ել նետելու լինենք առաջկան, նա ուշ կամ  
կանուխ հետ ե ընկնում: Սակայն մեխանիկան սովորեցնում ե,  
վոր այդ յերեռութը սպատառում ե համեմատարար այնպիսի  
չափակոր արագությունների գեպքում, վորոնք մատչելի յեն  
մեր տեխնիկական միջոցներին: Յեթև նետված մարմնի սկզբու-  
նական արագությունը բավական մեծ ե, ապա նա կարող ե և  
չվերադառնալ: Մենք այժմ կբացարենք այս յերեռութը:

Յենթագրենք, թե զորևե բարձր լեռնան վրա կը դու  
թնդանոթ, զորը կրակում և հորիզոնական ուղղությամբ։ Յե-  
թե ոսմբը թնդանոթից թռչի վոչ մեծ արագությամբ, ապա  
նա կդժի Յերկրին Հենվող ավելի կամ պակաս կոր աղեղ. այս-  
պիսի արագությամբ նետված ոսմբը կվերադառնա և կընկնի

Եերկրի վրա, թնդանոթից շատ կամ քիչ հեռավորությամբ։ Ինչ չափով վոր ավելանում է ոռումքի արագությունը, ոռույն չափով եւ գնալով ավելի շեղ եւ գառնում նրա ուղին և, վերջապես, վորոշ արագության դեպքում այդ ուղին նույն կորությունն եւ ստանում, վորապիսին ունի Ցերկրի մակերևույթը։ Ի՞նչ կպատահի այն ժամանակ ոռումքի հետ։ Նա կակտի սլանալ Ցերկրի մակերևույթի վրայից և չի մոտենա նրան ու չի հեռանա նրանից, քանի դեռ լրիվ շրջան չի ոծել յերկրազնդի շուպ-ջը և դեպի թնդանոթը չի վերադարձել հետեւ կողմից։ Իսկ յեթե մինչ այդ հեռացվի թնդանոթը, ապա ավարտելով մի շրջան, ոռումքը կդժի յերկրորդ, հետո յերրորդ շրջան և այլն։ Յեվ յեթե չլիներ ողը, վորը գանդաղեցնում է ոռումքի արագությունը (որինակ, յեթե լեռը մթնոլորտից ավելի վեր բարձրանալ), այսպիսի ոռումքը հավատենապես կպտտվեր մեր մուրակի շուրջը, առանց յերբեք նրա վրա ընկնելու։

Մեխանիկան ապացուցել է, վոր այդ կլինի այն ժամանակ, յերբ սումբը թնդանոթից արձակվի մի վայրկյանում ութ կիլոմետր արագությամբ։ Այսպես ուրեմն թնդանոթից հորիզոնական ուղղությամբ և մի վայրկյանում ութ կիլոմետր արագությամբ արձակված սումբը, ոդի դիմագրությունը չինելու դեպքում, հավիտենապես պատվելու յե յերկրագնդի շուրջը։



Թեսդա ն լումետը արագությամբ արձակված ոռումքը շըջաններ և զծում յերկրա-  
գնդի շուրջը:

սակել ելիպսը կարող է ինչքան ասես ոռոմբը Հետացնել Յերկ-  
րեց։ Յեկ, վերջապես, առաջին վայրկյանում արագությունը  
և կրծմետր լինելու դեպքում ոռոմբը կշարժվի արգեն վոչ-  
փակ կոր դժով (պարաբոլով), առանց յերբեք դեպի յելակետը  
վերադառնալու։

Ինչպես տեսնում ենք, ոռումը թնդանոթից զայլ է՝ արձակելը տեսականորեն հնարավոր է։ Դրա համար անհրաժեշտ է — մթնոլորտի բացակայության դեսպում՝ ոռումը մետել մի վայրկյանում՝ մոտ 11 կիլոմետր սկզբնական արագությամբ, իսկ մթնոլորտի առկայության դեպքում՝ եւ բավելի մեծ արագությամբ։

Ժյուլ Վեռնն ել հենց ողբարձութել ե այս տասական  
վորությունը, վրապիսին նրանից առաջ վոչ վոք գլխի չի ըն-  
կել կիրառելու միջմոլորակային թուիչքի համար; Նա շատ լավ  
է մշակել այդ գաղափարը. թնդանոթառումբը վեպի կուսին ար-  
ժակելու հնարավորության դեմ կա միայն մի զործնական ու-  
ռարկություն. այն սկզբնական արագությունը, վոր ժամանա-  
կակից թնդանոթները փոխանցում են արկերին, չի հասնում  
վերոհիշյալ սահմանին— մի վայրկյանում 11 կիլոմետրի: Սա-  
կայն այդ բանը տեխնիկայի հարց ե: Համաշխարհային պա-  
տերազմից վոչ այնքան առաջ հրանոթային արկերի սկզբնական  
արագությունն ընդամենը 500 մետր ե յեղել: Պատերազմի  
սկզբներին այդ արագությունը հասավ արդեն 700 մետրի. ովա-  
տերազմի վերջերին գերմանացիները Փարիզը ոմբակոծում եյին  
120 կիլոմետր հեռավորությունից, ոռումքերին հաղորդելով  
յերկու հաղար մետր սկզբնական արագություն: Ճշմարիտ ե,  
վաստակյին թնդանոթը յերբեք չի կարողանա արկն արձակել մի  
վայրկյանում 11 կիլոմետր արագությամբ: Սակայն, յեթե հա-  
վատալու լինենք մամուլի տեղեկություններին, ապա Ֆրան-  
սիայում մշակված ե ելեկտրական թնդանոթի մի նախազիծ,  
ովորի ոռումքան արձակվելու յե մի վայրկյանում հինգ հա-  
շուստ վորի ոռումքան արձակվելու յե մի վայրկյանում հինգ հա-  
շուստ մետր սկզբնական արագությամբ. այսպիսի հրանոթով հը-  
ղար մետր սկզբնական արձակվելու վորեւե կետից ոմբակոծել մեր ամ-  
նարավոր կլինի յերկրագնդի վորեւե կետից ոմբակոծել մեր ամ-  
բանարավոր կլինի յերկրագնդի վորեւե կետից ոմբակոծել մեր ամ-  
բանարավոր կլինի յերկրագնդի վորեւե կետից ոմբակոծել մեր ամ-  
բանարավոր կլինի յերկրագնդի վորեւե կետից ոմբակոծել մեր ամ-

Մի խոսքով, քանի վոր խնդիրը վերաբերում է ոռւմբի  
դեպի Լուսին արձակելուն, ապա Ժյուլ Վեռնի նախադիմը տես-  
սականորեն ճիշտ կարելի յէ համարել: Նույնիսկ ողի դիմադր-  
ության դժվարին հարցը, ող, վորն այդքան խոչըր արագու-  
թյան ժամանակ ամենառեժեղ խոչընդոտը կհանդիսանա ոռւմբի  
շարժմանը, կդանդաղեցնի նրա ընթացքը և կշիկացնի կեղևը, —  
նույնիսկ այդ հարցն ել, թերևս, կարող ե լուծվել՝ թնդանոթը  
հինգ հազար մետր բարձրության վրա տեղափորելու և սկըզբ-  
նական արագությունը անհրաժեշտ չափով ավելացնելու միջա-  
ցով: Սակայն, այստեղ առաջանում են յուրահատուկ դժվարու-  
թյուններ, վորոնք մենք կքննարկենք հաջորդ պարբերում:

3. Իրազործելիք՝ յեւ արդյոք ժյուլ վեռնի նախագիծը

ՄԵՆՔ արդեն մտտնանշեցինք, վոր թնդանոթառումբը դեպի Լուսին արձակելու զաղափարն ինքնըստինքյան անիրազործելի չեւ և չի պարունակում մի այնակախ բան, վոր հակասի մեխանիկայի որենքներին։ (ՅԵթե նման ձեռնարկում մեր ուժերից վեր և տեխնիկայի արդի գրության պատճառով, ապա ամենայն հավանականությամբ, այդ կիրազործի ապագայում։

Բայց մենք դիտմամբ առայժմ չքննարկեցինք այն մյուս  
հարցը, թե արդյոք հնարավո՞ր ե թնդանոթառումբով կենդանի  
մարդիկ փոխադրել գեղի լուսինը: Ժյուլ Վեռնը պնդում է,  
վոր այդ հնարավոր ե: Այժմ կտեսնենք, սակայն, վոր կարիք  
ել չկա մտածելու այսպիսի նախազծի իրադորժելի լինելու մա-  
սին:

Դժվարությունը, այն ել անհաղթահարելի դժվարությունը կայանում է հետեւյալում։ Յենթադրենք, թե ոռմբը հրսկայական կոլումբիակի վողանցքով ոլացել է չափաղանց արագ, վորովհետև կարողացել է այդ ճանապարհին իր արագությունը 0-ից հասցնել մինչև 16 հազար մետրի։ Վոչ բարդ հաշվի միջոցով կարելի յէ համոզվել, վոր հրանոթի խողովակում ոռմբի շարժումը կտևի ընդամենը 1,40 վայրկյան։ այդ կարծ ակնթարթում արագությունը այդքան ահռելի չափերով աճել է։ Պարզ է, վոր արագության աճումը շատ սրբնթաց պետք է լինի։ Հետո ե հաշվել արագության վայրկենական աճումը— այն, ինչ մեխանիկայի մեջ կոչվում է «արագացում»։ յէթե 1/40 վայրկյանում արագությունն ափելացել է 0-ից մինչև

16 Հաղար մետք, ասլա մի լրիվ վայրկյանում նա կածեր՝ 40  
անդամ, այսինքն՝ մի վայրկյանում կհասներ 640 հաղար մետ-  
ք:

Կրակոցի այս հետեւանքներից չի կարելի բուռադուլ նախազգուշական միջոցներով, վորոնք նկարագրված են վեպություններում: Զըսային բուռփերը կարող եր ճնշումը թուլացնել վոչ ավելի, քան ամենաշատը կես տոկոսով: Վորպեսզի հնարավոր լինի մինչև անվտանգության աստիճան պակասեցնել արագության աճման սրբնթացությունը, դրա համար հարկավոր կլիներ թնդանոթը յերկարացնել մինչև մի քանի հարյուր կիլոմետր՝ արագությունը արագությունը կամեր ավելի յերկար ճանապարհոյն գեպը արագությունը՝ ամենաշատը: Սակայն, իհարկե, չի վրա, այսինքն՝ ամելի աստիճանաբար: Սակայն, իհարկե, այսպիսի թնդանոթի կառուցումն անիրազործելի յէ: Ահա թե ինչու միանդամայն անիրազանալի յէ թնդանոթառումբի միջնինչու մոլորակներ ճամբորդելը:

4. Միջմոլորակային բնիչքի ժամանակակից նախագծերը

Ներկայումս գիտությունն ինչպես և պատասխանում այն հարցերին, վոր դնում և ժյուլ Վեռնն իր վեպի վերջին երրում:

«Արդյոք Հնաբավորություն կա՞ յերբեմցն պահանջում կարագություն հաստատելու լուսնի հետ։ Հնաբավոր և ար-

դյոք մի մոլորակից մյուսը, Յուլիտերից Մերկուրի, աստղից աստղ թոշել: Փոխադրության ինչպիսի՞ յեղանակ հնարավորություն կտա այցելելու այս լուսատուներին»:

Այն ժամանակ, յերբ զրվեց այս վեպը, ավելի քան կես դաշտավաճ, վոչ մի պատասխան չեր կարելի տալ այս հարցերին: Բայց մեր որերին այլ ե իրերի գրությունը: Ճիշտ ե, ժամանակակից տեխնիկան դեռ ի վիճակի չե իրականացնելու միջմոլորակային թոփչքը, բայց այս զրավիչ խնդրի լուծման ուղին արդեն գտնված ե: Ներկայումս կարելի յե հաստատ ասել, վոր «Լուսնի հետ կանոնավոր հաղորդակցությունը» անպայման հնարավոր կրառանա յերբեքցե: Այն միջոցը, վորի ողնությամբ կարելի կլինի հասնել այդ, մեզ նույնպես հայտնի յե:

Այն ապարատը, վորը յերբեքցե մարդկանց Յերկրից լուսին ե տեղափոխելու, վոչ թե թնդանոթն ե, այլ վիթխարի մեծությամբ և այդ նպատակի համար հատկապես սարքավորված երթին ե (ռակետա): Հրթիռի շարժման առանձնահատկությունը, վորը տարբերում ե նրան թնդանոթառումը թոփչքից, ամենից առաջ կայանում ե նրանում, վոր հրթիռով ամենաբարձր արագությունը ձեռք ե բերվում վոչ թե մի ակնթարթում, վոչ թե վայրկյանի հարյուրորդական մասում, այլ անհամեմատ ավելի յերկար ժամանակամիջոցում: Արագության աճումն անհամեմատ ավելի համաշաբաթ վնելու չնորհիվ հրթիռի «արագացումը» շատ ավելի պակաս ե լինում, քան հրանոթային արկի «արագացումը», և դրանով իսկ վերացվում են ճանապարհորդներ ուղարկելու ժամանակ տեղի ունեցող զնցման մահացու հետևանքները: Հրթիռի մի ուրիշ արժեքավոր առանձնահատկությունն այն ե, վոր նա կարող ե տեղափոխվել արագությունը վերցնելով բացարձակ դատարկության մեջ:

Ինչքան յերկար այրմի հրթիռի լիցքը, ինչքան շատ դաշտ արտահուն նրանից, այնքան ավելի մեծ արագություն ե կուտակում նա: Նախորդ վայրկյանին ստացված արագության վրա ավելանում ե հաջորդ վայրկյանում զարդացող արագությունը. բացի դրանից, վառելիքի պաշարն ինչքան շատ այրմի, հրթիռի զանդվածն այնքան ավելի կփռքրանա, և հրթիռը դազերի միենույն ճնշումից ավելի մեծ արագություն ե ձեռք:

բերում: Իսկ յեթե պայթուցիկ դագերը չատ արագ արտահուն, ապա այրումը վերջանալիս հրթիռն ընդունակ ե զգալի արագություն կուտակելու: Կարելի յե հաշվել, թե վո՞ր վառելիքը ի՞նչ քանակությամբ պետք ե այրմի տվյալ կշիռ ունեցող հրթիռում, վորպեսզի վերջինս կարողանա ցանկացած արագությունը կուտակել: Նման հաշվիներ անելու հնարավորությունը

տվող կախումը սահ-

մանվել ե դեռ 30

տարի առաջ վերջերս

մահացած մեր հայրե-

նակից կ. Ե. Ցիոլկով-

սկու կողմից և կոչ-

վում ե «Ցիոլկովսկու

հավասարում»: Այդ

կախումը ամուր հիմք

ե տալիս հաստատե-

լու, վոր հարմար վա-

ռելիք ընտրելու դեպ-

քում անպայման կա-

րելիք յե հասնել աստ-

դային ճանապար-

հորդության համար

պահանջվող արագու-

թյան:

Զպիտք ե կարծել

վոր ամենից ավելի

լավ ե հրթիռը լըց-

նել խիստ պայթուցիկ

նյութերով: Աստղա-

թիռի համար վառո-

ղը սաստիկ վտան-

գավոր ե վառվելիք

նրա ամբողջ պաշարը

կարող ե միանգամից

պայթել և վոչնչաց-

նել միջմոլորակային

նավը:

### ԴԱՏՅԱՆ

ՎԱՐՈՒՄ

կա մի ուրիշ պատճառ ևս, վորը պրլում ե հրաժարվել վառողից և ուրիշ նյութեր դանել՝ աստղաթիւը լցնելու համար: Հակառակ տարածված կարծիքի, պայթուցիկ նյութերը այրվելիս ալիքի քիչ ններգիս յեն արտադրում, քան, որինակ, այնպիսի այրվող նյութերը, ինչպես ջրածինը, նալթը, բենզինը, վորոնք այրվում են թթվածնի մեջ:

Ահա թե ինչու հրթիւային նավեր— աստղաթիւներ— հնարողները հրաժարվում են վառողի և ընդհանրապես պայթուցիկ նյութերի գործածությունից և նախատեսում են միայն ոդտարդել այսպիսի նյութեր, ինչպես հեղուկացած ջրածինը, նավթը, բենզինը, սպիրտը, վորոնք այրվում են հեղուկացած թթվածնով (ջրածին և թթվածին պետք ե վերցնել հեղուկ),



Կ. Ե. Ցուլկովսկի


այլ վոչ թե դադանման վիճակով, վորպեսզի հարկ չլինի ծանր և հաստ պատեր ունեցող ռեզերվուարներ ոդտարդելու):

Այսպիսի «հեղուկային» հրթիւներն արդեն պատրաստվել

են հրթիւային թռիչքի աշխատողների կողմից և շատ անդամներ փորձարկվել են: Նոր հրթիւների այդ նմուշները ապագա հրթիւային նավերի փոքր մողեներ են միայն: Նրանց յերկարությունը մոտ յերկու մետր է: Մեխանիզմն արդեն այնքան լազ է մշակված, վոր հրթիւը հիմնավի կերպով վեր և բարձրագույն մասում գտնվող պարաշյուտը կերպով բաց և անում իր վերին մասում գտնվող պարաշյուտը և այդ ծածկոցի վրա հենված՝ հրթիւային դատարկված պատյանը սահունորեն ներքև է իջնում: Վայրեղը տեղի յեւ ունեցանց վնասվածքների, այնպես վոր վերադարձող հրթիւնում առանց լեզնել և նորից լեզնել և նորից թողնել, շատ անգամ ու կարելի յեւ նորից լեզնել և նորից թողնել, շատ անգամ կրկնելով միևնույն հրթիւի բարձրացումը:

Իսկ մենք ինչպես պետք ե պատկերացնենք հրթիւային թռիչքի հետագա զարգացումը: Կարելի յեւ նախատեսել չորս հետեւյալ ետապները:

Մոտակա ետապը կլինի խոշոր հրթիւների պատրաստումը՝ հետազոտելու համար (առանց մարդու) մթնոլորտի այն բարձր շերտերը, վորոնք անմատչելի յեն ուրիշ միջոցներով: Այս ապարատը համեմատաբար եժան կնատի, և, պետք ե կարծել, վոր աշխարհի բոլոր ողերեւութարանական կայանները ձեռք կբերեն այդպիսի բարձրաթուիչ հրթիւներ:



«Հեղուկային» հրթիւի կտրվածքն ըստ Կ. Ե. Ցուլկովսկու

Հրթիւային գործի խորհրդային աշխատողների դյուտարարական ջանքերի մոտակա նպատակն ե՝ յուրացնել մթնոլորտի ամենաբարձր շերտերը, այսպես կոչված սորատոսֆերը, վոր ավելի բարձր ե, քան այն սահմանները, ուր ընդունակ են բարձրանալու ստրատոստատոնները:

Դատելով նրանց ստացած արդյունքներից, պետք է կարծել, զարգացնելու հաջողությունը:

Յերկրորդ ետապը՝ դա հեռազնաց փոստային հրթիռներն են։ Հեղուկային հզոր հրթիռների միջոցով փոստի փոխադրումը կարող է կատարվել մինչև այժմ դեռ չլսված արագությամբ։ Այս տվյալները մի քանի այնպիսի դեերի համար, վորոնք կարող են սպասարկվել նման փոստով։

## ԲԵՐՄԻՆ—ՓԱՐԻՊ 5 ըռակեցում

Florin - L. J. M. - 3 n p p 25 »

βενιζέλος—Συλλογή 40

և ընդհանրապես յերկրագնդի վորեւե կետում— մի ժամից պակաս։ Փոստային հրթիռի կշիռը հինգ տոնն լինելու դեսպօւմ նա կկարողանա այնքան նամակներ վերցնել իր հետ, վոր յուրաքանչյուր նամակի առաքման արժեքը հազիվ մի քանի կոպեկ կլինի։ Այնինչ նամակների փոխադրությունը հրթիռով ավելի արագ է կատարվում, քան հեռադրի աշխատանքը։ Յեթե մի քանի հազար նամակների բովանդակությունը բառ առ բառ հաղորդվի Ամերիկային, ապա հեռազբի համար կպահանջվեր մի քանի որ։ Իսկ հրթիռը դրանք ովկիանոսի վրայով կփոխադրեր կես ժամում։ Պարզ է, վոր այսպիսի փոստի կազմակերպումը նույնպես շահավետ զործ կլինի։ Շատ կարճ հեռավորությունների համար հրթիռային փոստն արդեն իրադորձված է Ավստրիական Արպերում։


Յերբորդ Ետավը— դա հեռագնաց պիլոտային հրթիւն է՝  
ովկիանոսների վրայով չափազանց արագ ճանապարհորդելու  
համար։ Այստեղ փոխադրության արագությունը նույնքան ե,  
վորքան փոստային հրթիւնների համար, այսինքն՝ կը հաշվով  
1 ժամում տասը հազար կիլոմետր։ Այսպիսի անհավատալի ա-  
րագությունը հնարավոր ե այն պատճառով, վոր «հրթիւա-  
պլանը» թռչում ե վոչ թե խիս մթնոլորտով, այլ, գոնե, իր  
ճանապարհի մեծ մասն անցնում ե շատ բարձր, ողի արտասո-  
վոր նոսր շերտերում, վորոնք վոչ մի արգելք չեն ներկայաց-  
նում արագ տեղափոխության համար։

Զորբորդ ետապը՝ զա լուսնի շուրջը թռչելը և գեղի Յէրկիր վերադառնան ե։ Այս թփում ե չափազանց անսպասելի

մի անցում՝ Ամերիկա թռչելուց դեպի Լուսին թռչելուն անցնելը։ Մինչև Ամերիկա ընդամենը վեց-վոր հազար կիլոմետր է, այսինքն՝ 60 անգամ ավելի պակաս, քան մինչև Լուսին։ Բայց յեթե տեղափոխությունը կատարվի անող տարածության մեջ, ապա ճանապարհի գժվարությունները կիլոմետրի թվով չեն կարելի չափել։ Միջաւատղային տարածություններում լիովին յերեկան ե գալիս իներցիայի որենքը, վորի չորրորդիվ մի անգամ շարժման մեջ գրված մարմինը շարունակում է ինքնիրեն առաջ շարժվել անփոփոխ արագությամբ։ Այսպիսի շարժումը պահանջնելու համար վոչ մի եներգիա չի պահանջվում, — միևնույն պահանջնը վեց հազար կիլոմետր ե թռչում, թե 6 միլիոն կի-ե՝ մարմինը վեց հազար կիլոմետր ե թռչում, թե 6 միլիոն կի-լոմետր։ Դեպի Լուսին թռչելու ժամանակը կեներգիան ծախսվելու յե մրայն յերկրային ձգողությունը հաղթահարելու համար, բայց ձգողությունն զգալի չափով պետք ե հաղթահարվի նաև ովկիանոսի վրայով մի ժամանակ 10 հազար կիլոմետր արագությամբ թռչելու ժամանակ։ Ուստի չպետք ե զարմանալ, վոր դեպի Լուսին թռչելու համար վառելիքի ծախսն ընդամենը յերկու անգամ ե ավելի լինում, քան դեպի Ամերիկա թռչելու համար (մենք խոսում ենք մեկ անգամ կատարվող թռիչքի մասին)։ Ահա թե ինչու ովկիանոսի վրայով թռչելուց հետո յերթական քայլը հանդիսանում ե արդեն Լուսային ճանապարհորդությունը։

Դությունը։  
Ի՞նչ ե հաջորդելու լուսնային թը-  
ռիչքից հետո։ Առանց կուսնի վրա  
իջնելու նրա շուրջը թռչելուց հետո,  
հառկանալի յե, վոր անհրաժեշտ կլինի Սարք՝ մեծ հրթիւը բաց  
թռիչք կատարել կուսնի վրա իջնելու թողնելու համար։  
Համար։ Այդ անհամեմատ ավելի բարդ ձեռնարկում է, քան

Համար : Այդ անհամեստ ուղարկութեա



Լուսնի չուրջը թուչելը, թեկուղ և շատ մոտիկ տարածության  
վրա: Թռչելով Լուսնի շուրջը, հրթիռը համարյա չի կորցնում  
կուտակված արագությունը, ուստի բավական և միայն փոխել  
այդ հրթիռի թուիչքի ուղղությունը, զորպեսզի շատ ան-  
նշան քանակությամբ վառելիք ծախսելով նրա ճանապարհն  
ուղղվի դեպի Յերկիրը: Ուրիշ բան և վայրեջքի ժամանակի:  
Լուսնի մակերևույթի վրա իջնելու համար հրթիռն անխռուա-  
փելիորեն պետք ե զրկվի ամբողջ կուտակված արագությունից,  
այլապես վորեե տեղի զարնվելիս՝ նա ջարդուփչուր կլինի: Իսկ  
հայտնի յէ, վոր շարժվող մարմինը կանդնեցնելու համար պա-  
հանջվում ե ծախսել նույնքան եներգիա, վորքան վոր ծախսվել  
և այդ մարմինը շարժման մեջ դնելու համար: Այդ նշանակում  
ե, վոր հրթիռը Լուսնի վրա իջնելու ժամանակ հարկավոր և  
չափեց ալելի շատ վառելիք այրել: Հետևաբար, Յերկիրց մեկ-  
նելիս հրթիռային նավը իր հետ պետք ե վերցնի համապատաս-  
խան քանակությամբ վառելիքի պաշար: Սակայն մեր ասածի  
վրա դեռ չի հաշված վառելիքի այն ամբողջ պաշարը, վոր  
հրթիռը պետք ե վերցնի իր հետ լուսնային թուիչք կատարելու  
ժամանակ: Զեռանանք ասել, վոր դեռ ելի վառելիք պետք  
կլինի ծախսել Լուսնից վերադառնալիս: ԶԵ՞ վոր Լուսնը ևս  
դեպի իրեն և ձգում բոլոր մարմինները, թեև ավելի թույլ չա-  
փով, քան Յերկիրը: Վերջապես, չորրորդ անդամ պետք կլինի  
վառելիք ծախսել, վորպեսզի անվտանգ վայրեջք կատարվի Յեր-  
կիրի վրա և հրթիռը ջարդվի նրա մակերևույթին դիպչելիս:  
Դուք տեսնում եք, վոր վայրեջքով դեպի Լուսին թուչելն ան-  
համեմատ ավելի բարդ ե, քան անվայրեջք թուիչքը:

Յերբ կատարվեն առաջին թոփքները դեպի Լուսին, իր ժամանակին կղրվի նաև զեպի հեռավոր մոլորակներ, զեպի Վեներան և Մարս ճանապարհորդելու հարցը :

Թե ինչպէս պետք է իրազորձվի այդ, գետ վաղ և քննարկել, թեև հաշվված են արդեն այդպիսի թուչքների մարդուանելն ու ժամկետները:

Այժմ կանգ առնենք նաև այն հարցի վրա, վորն, անկաս-  
կած, ծագել և արգեն ընթերցողի մտքում. արդյոք վորքա՞ն  
շուտ կարելի յե սպասել թեկուզ լուսային թոփչեթ իրականա-  
ցումը: Այդ մասին իր կարծիքը հայտնել և հրթիռների հմուտ

ամերիկացի պրոֆ. Գոգիարդը, վորը հնագել ու  
բործարկել ե իր գյուտի հեղուկային հրթիռը (ողբախտաբար  
աս խիստ դադանի յե պահում իր հրթիռների կառուցվածքի  
մանրամասնությունները, վորովհետեւ աշխատում ե ԱՄՆ-ի  
առաջնական գերատեսչության առաջդրանքներով): Ահա նրա  
խոսքերը:

«Ինչ վերաբերում է այս հարցին, ի՞նչ է շահութակ կարող ել տեղի ունենալ Հրթիռի առաջումը դեպի Լուսեատում ապագա յև այլ բանն իրագործելի յև համարում դեռ ներսին, ապա յև այլ բանն իրագործելի յև համարում դեռ կայութամ ապրող սերնդի համար։ Իմ կատարած՝ Հրթիռի փորձնական հաջող գործարկումը Վոչմեծ բարձրությամբ՝ ցույց տվեց ինձ, թէ ինչպես պետք ե կառուցվի նման (լուսնային) Հրթիռը՝ հաջող գործողության համար»։

Յեթև հիշենք, թե ինչքան արագ ոսկեւ յաջման վեհական առաջնակ տեսակ է դեկապարվող ողանավարկությունը և հաշվի առնենք տեխ-  
նիկայի զարդացման ամելի բարձր աստիճանը մեր որերում, ա-  
պա իրավունք ունենք կողմնակից լինելու ամերիկացի գիտնա-  
կանի այն վստահությանը, թե տնտեսական նպաստավոր պայ-  
մաններում հրթիռային թուիչքն ևս կարող է զարդանալ վոչ պա-  
հաս արագ տեմպերում։

կաս արագ տեսպիրուն։  
Այս թե ինչպիսի ուղիով և ընթացել սրբաւուն է ու  
թռիչքի գաղափարի տեխնիկական զարգացումը, մի գաղա-  
փար, վոր առաջին անդամ հղացել և ժյուլ Վեռնը «Յերկ-  
պից դժվարի լուսին» վեպում։ Այդ նովատակին վերջնակա-  
նապես հասնելուց առաջ դեռ քիչ ջանք չի պահանջվում։ Առա-  
ջիկա աշխատանքների դժվարությունները թեև հսկայական են,  
բայց վո՞չ բնավ անհաղթահարելի։ Ժամանակակից տեխնիկան  
հասել և այն դրության, վոր յերբ խնդիրը տեսականորեն լուծ-  
ված ե, ապա վաղ թե ուշ նա կտանա իր գործնական իրակա-  
նացումը։

Տեխնիկան — դա Արքիմեդյան այս շահութ է, և զգում միայն հենակետի՝ Յերկիրը բարձրացնելու համար։ Հենակետը դանված է, և լծակը յերբեկցի հանդես կրերէ իր հղոր ներդրությունը։



Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ա Հ Թ Յ Ո Ւ Խ Ն

Դւռի 1.	Ցերեկոյան ժամը տասն անց քսան ըստելից մինչև	
	տասն անց քառասուն յոթ ըստել	3
» II.	Առաջին կես ժամը	11
» III.	Ուղևորները հանդիսաւ տեղովորվում են	25
» IV.	Միքիչ հանրահաշիվ	34
» V.	Արբանյակի թաղումը	42
» VI.	Հարցեր և պատասխաններ	50
» VII.	Արբեցման մի ըստել	78
» VIII.	Հավասար ձգողականության կետի վրա	69
» IX.	Շեղման հետևանքը	
» X.	Դիտութիւններ	80
» XI.	Լուսնի ծովերը	87
» XII.	Լուսնի մակերեսութիւն	92
» XIII.	Լուսնային դաշտանկարներ	95
» XIV.	Ցերեք հարյուր հիսուն չորսուկես ժամ տևող դիշեր	104
» XV.	Հիպերբոլ թե պարաբոլ	113
» XVI.	Հարավային կիսագունդը	123
» XVII.	«Ճիխո» խառնարանը	130
» XVIII.	Կարեռ հարցեր	134
» XIX.	Պայքար անհնարինի դեմ	140
» XX.	«Սուսկեհաննայի խորաչափութերը»	147
» XXI.	Մաստոնը նորից հայտնվում է	155
» XXII.	Փրկության գործը	162
» XXIII.	Վերջ	170
» Տա. Գերելման—Դեպի Լուսին ճանապարհորդելու նախադիմերը (սուսերներից թարգման Վ. Ավագյան)	178	
		182

1

Թարգմանիչ՝ Ա. Տիրատուրյան  
Պատ. Խմբագիր՝ [redacted]

ՎՖ 3297. Պատվեր 617. Տիրամ 4000. Տպագրական  
12½ մամուլ Մեկ մամուլում 35520 նշան Հեղինակային 10¼ մամուլ Ստորագրված և տպագրության 15/1 1941 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 63

11359



1997